

ՔԻՄԻԱՅԻ

ԹԵՍՏԱՅԻՆ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ

ՇՏԵՄԱՐԱՆ

I

ՄԱՍ



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2012

Հաստատված է Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից

ՀՏԴ 373.1 : 54
ԳՄԴ 74.2 + 24
Ք 542

Խմբագիրներ՝ **Լիդա Սահակյան**
Տարիել Ղոչիկյան
Համբարձում Խաչատրյան

Աշխատանքների համակարգող՝ **Գյուլնարա Փալիկյան**

Հեղինակներ՝ **Լիդա Սահակյան** (մ. գ. դ., պրոֆեսոր, ԵՊԲՀ)
Տարիել Ղոչիկյան (ք. գ. դ., պրոֆեսոր, ԵՊՀ)
Համբարձում Խաչատրյան (ք. գ. դ., պրոֆեսոր, ԵՊՀ)
Գյուլնարա Փալիկյան (ք. գ. թ., ԳԹԿ)
Ժաննա Սարգսյան (ք. գ. թ., ԵՊՀ, Ա Շիրակացու անվ. ճեմարան)
Զեփյուռ Կարապետյան (ք. գ. թ., Վաղարշապատի Մ. Գորկու անվ.
թիվ 5 ավագ դպր.)
Նինա Հոբոսյան (ք. գ. թ., Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ, Երևանի
Խ. Աբովյանի անվ. թիվ 84 հիմնական դպր.)
Գոհար Ներսիսյան («Այբ» ավագ դպրոց)
Սամվել Վարդապետյան (ք. գ. թ., դոցենտ, ԵՊՀ)
Առլիկ Խաչատրյան (ք. գ. թ., դոցենտ, ԵՊՀ)
Կարինե Ավետիսյան (ք. գ. թ., ԿԱԻ)

Ք 542 Քիմիայի թեստային առաջադրանքների շտեմարան/ Հեղ. խումբ.— Եր.: Զանգակ,
2012.— 412 էջ:

ՀՏԴ 373.1 : 54
ԳՄԴ 74.2 + 24

ISBN 978-9939-68-107-8

© Հեղինակային խումբ, 2012
© «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ, 2012

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կառավարության և ԿԳ նախարարության կրթական քաղաքականության իրականացման շրջանակներում ներկայացվում է «Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարանը՝ նախատեսված հիմնական և ավագ դպրոցների սովորողների, նախորդ տարիների շրջանավարտների, միասնական և պետական ավարտական քննություններին նախապատրաստվողների, ինչպես նաև քիմիա դասավանդող ուսուցիչների համար: Շտեմարանը կարող է օգտագործվել նաև ուսումնական տարվա ընթացքում՝ ընթացիկ ստուգողական թեստային աշխատանքներ անցկացնելու, սովորողների գիտելիքների մակարդակի ստուգման և գնահատման համար: Ժողովածուն ուսուցիչներին կօգնի օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու ուսումնական գործընթացի արդյունքների վերաբերյալ և բարելավելու առարկայի ուսուցման ձևերն ու եղանակները: Ուսումնական ձեռնարկը հարմար է նաև սովորողների գիտելիքների յուրացման մակարդակի ինքնաստուգման և ինքնագնահատման համար:

Շտեմարանում ընդգրկված են հանրակրթական դպրոցի «Քիմիա» առարկայի ծրագրային նյութերին համապատասխանող և դասընթացի գրեթե բոլոր բաժիններին վերաբերող առաջադրանքներ: Այն համապատասխանում է «Պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց»-ին:

Նախատեսվում է, որ պետական ավարտական և միասնական քննությունների թեստերում ընդգրկվելու են միայն շտեմարանում առկա առաջադրանքներ:

Սույն ձեռնարկը շտեմարանի առաջին մասն է, որը պարունակում է մոտ 3000 թեստային առաջադրանք և կազմված է երեք գլխից:

Երրորդ գլխի առաջադրանքները՝ «Պնդումների փունջը», նորույթ են և 2013 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստերում չեն ընդգրկվի: Դրանք կընդգրկվեն արտաքին ընթացիկ գնահատման և հաջորդ տարիների քննական թեստերում:

Մտղթում ենք հաջողություն

ԲԱԺԻՆ

1

ԹԵՍԱՑՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ

Առաջին գլխում ներառված են միայն ընտրովի պատասխանով առաջադրանքներ:

Առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է չորս պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Դրանք կատարված են համարվում, եթե քննություն հանձնողի ընտրած պատասխանի համարը համընկնում է ճիշտ պատասխանի համարին:

Պատասխանների ձևաթղթում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում, տրված է չորս վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանի համարն ընտրելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «X» նշանը (տես նկ. 1): Օրինակ՝ 2-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 3-րդն է:

	1	2	3
1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
3	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

նկ.1

Հաշվարկներում պետք է օգտագործել հարաբերական ստոմային զանգվածների կլորացված արժեքները, բացի բլորից՝ 35,5:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻՄԻԱ

1.1. ՔԻՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1.1. Ատոմամոլեկուլային ուսմունք

1. Ո՞րն է բաց թողած բառը.

Այն, ինչից կազմված է ֆիզիկական մարմինը, կոչվում է _____:

- 1) ատոմ 2) մոլեկուլ 3) նյութ 4) բյուրեղավանդակ

2. Քանի նյութ է ներկայացված հետևյալ բառակապակցություններում.

պղնձե թաս, սառցե դրյակ, պղնձե կուժ, ալյումինե կաթսա, ռետինե գնդակ, ջրի կաթիլ.

- 1) 6 2) 5 3) 4 4) 3

3. Թվարկվածներից ո՞րն է քիմիական միացություն.

- 1) օդը 2) օդին 3) էթանոլը 4) գարեջուրը

4. Ի՞նչ ֆիզիկական հատկություններով են իրարից տարբերվում ջուրը և քացախաթթուն.

- ա) գույնով գ) ագրեգատային վիճակով
բ) եռման ջերմաստիճանով դ) հալման ջերմաստիճանով

- 1) ա, բ 2) բ, դ 3) ա, գ 4) գ, դ

5. Ո՞րն է սովորական պայմաններում պինդ նյութ.

- 1) պղինձը 2) սնդիկը 3) թթվածինը 4) ջուրը

6. Հետևյալ նյութերից ո՞րն է սենյակային ջերմաստիճանում անգույն, բնորոշ հոտով, ջրի հետ անսահմանափակ խառնվող, թթու համով հեղուկ.

- 1) հանքային ջուրը 3) սիլիկաթթուն
2) սպիրտը 4) քացախաթթուն

7. Սենյակային ջերմաստիճանում հետևյալ նյութերից որո՞նք են գազային վիճակում.

- ա) սոդա դ) կերակրի աղ է) նավթ ժ) թթվածին
բ) քացախ ե) ազոտ ը) մեթան
գ) բենզոլին զ) էթանոլ թ) կավիճ

- 1) ա, բ, ե 2) գ, դ, զ, ժ 3) դ, գ, է, ը 4) ե, ը, ժ

8. Սենյակային ջերմաստիճանում հետևյալ նյութերից որոնք են հեղուկ վիճակում.

- | | | | |
|----------------|------------|-------------|------------|
| ա) չհանգած կիր | գ) բենզոլ | ե) ազոտ | |
| բ) էթանոլ | դ) սոդա | զ) գլիցերին | |
| 1) ա, բ, ե | 2) գ, դ, զ | 3) ա, դ, ե | 4) բ, գ, զ |

9. Որոնք են բաց թողած բառերը.

Պարզ են կոչվում այն նյութերը, որոնք կազմված են միևնույն

- | | |
|------------------------|----------------------|
| 1) տարրի մոլեկուլներից | 3) թվով նեյտրոններից |
| 2) տարրի միջուկներից | 4) տարրի ատոմներից |

10. Ո՞ր արտահայտությունը *ճիշտ* չէ թթվածին պարզ նյութի համար.

- 1) մասնակցում է ֆոտոսինթեզին
- 2) վատ է լուծվում ջրում
- 3) մտնում է օքսիդների բաղադրության մեջ
- 4) ստացվում է ջրի քայքայումից

11. Ո՞ր զույգում են միայն պարզ նյութերի անվանումներ.

- | | |
|---------------------|--------------------|
| 1) գրաֆիտ և սիլան | 3) ծծումբ և կարբին |
| 2) ալմաստ և ամոնիակ | 4) ազոտ և մեթան |

12. Թվարկվածներից որոնք են բարդ նյութեր.

- | | | | |
|---------------|------------------|----------------------|----------------|
| ա) կարբին | գ) պիրիտ | ե) ամոնիակ | է) սնդիկ |
| բ) օզոն | դ) գիպս | զ) ածխածնի(II) օքսիդ | ը) երկաթարջասպ |
| 1) ա, բ, ե, զ | 2) գ, դ, ե, զ, ը | 3) ա, գ, դ, զ, ը | 4) ա, բ, դ, է |

13. Ո՞ր շարքում են միայն պարզ նյութերի բանաձևեր.

- | | |
|---|---|
| 1) Si, Na ₂ O, HBr, Mg | 3) P ₄ , O ₃ , Ca, Ba |
| 2) AgNO ₃ , H ₂ O ₂ , O ₂ , KOH | 4) NaOH, Cl ₂ , K ₂ O, H ₂ O |

14. Ո՞ր ոչմետաղը բնության մեջ *չի հանդիպում* պարզ նյութի ձևով.

- | | | | |
|-------------|----------|-------------|----------|
| 1) ածխածինը | 2) ֆտորը | 3) թթվածինը | 4) ազոտը |
|-------------|----------|-------------|----------|

15. Հետևյալ երևույթներից որոնք են քիմիական.

- | | | | |
|---------------------|---------------------------------|---------------|------------|
| ա) ջրի գոլորշացումը | դ) երկաթի ժանգոտվելը | | |
| բ) մոմի այրվելը | ե) ջրի քայքայվելը | | |
| գ) օծանելիքի ցնդելը | զ) տաքացնելիս պղնձալարի սևանալը | | |
| 1) ա, բ, գ, դ | 2) բ, գ, դ | 3) բ, դ, ե, զ | 4) ա, գ, դ |

16. Ո՞ր շարքի երևույթներն են քիմիական.

- 1) ջրի գոլորշացումը և երկաթի ժանգոտումը
- 2) պղնձալարի հալվելը և մոմի այրվելը
- 3) ջրի քայքայվելը և օծանելիքի ցնդելը
- 4) ժանգի առաջանալը և բենզինի բռնկվելը

17. Հետևյալ գործընթացներից որո՞նք են քիմիական.

- ա) հեղուկ օդից ազոտի ստացումը
- բ) մագնեզիումի այրումը թթվածնում
- գ) յոդի սուբլիմացումը
- դ) սողայի փոխազդեցությունը աղաթթվի հետ
- ե) երկաթի ժանգոտումը
- զ) նավթի թորումը
- է) նավթի կրեկինգը

- 1) ա, բ, գ, դ
- 2) բ, դ, ե, է
- 3) բ, դ, ե, գ
- 4) ա, բ, գ, զ

18. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Մոլեկուլները ֆիզիկական երևույթների ընթացքում _____ :

- 1) փոփոխության չեն ենթարկվում
- 2) քայքայվում են
- 3) կիսվում են
- 4) փոխազդում են

19. Ո՞րն է քիմիապես բաժանելի մասնիկ.

- 1) ջրի մոլեկուլը
- 2) ${}^1_1\text{H}$ իզոտոպը
- 3) ատոմի միջուկը
- 4) երկաթի ատոմը

20. Որո՞նք են բաց թողած բառերը հետևյալ արտահայտությունում.

Քիմիական փարրը _____ նույն լիցքն ունեցող _____ փեռակ է:

- 1) ատոմի, մասնիկների
- 2) էլեկտրոնների, ատոմների
- 3) միջուկի, մոլեկուլների
- 4) միջուկի, ատոմների

21. Ի՞նչ չի կարող ցույց տալ N քիմիական նշանը.

- 1) ազոտ տարրի մեկ ատոմ
- 2) ազոտ տարրի մեկ մոլ ատոմ
- 3) ազոտ տարրի հարաբերական ատոմային զանգված
- 4) ազոտ նյութի հարաբերական մոլեկուլային զանգված

22. Հետևյալ հասկացություններից որո՞նք են ճիշտ երկաթ քիմիական տարրի վերաբերյալ.

- ա) ստանում են երկաթի օքսիդները վերականգնելով
- բ) կարգաթիվը 26 է
- գ) հարաբերական ատոմային զանգվածը 56 է
- դ) ատոմի էլեկտրոնային թաղանթը կազմված է 4 շերտից

- ե) էլեկտրահաղորդիչ է
- զ) մեծ կիրառություն ունի տեխնիկայում

- 1) բ, գ, զ 2) ա, ե, զ 3) բ, գ, դ 4) ա, դ, ե

23. Ո՞ր բառակապակցությունն է բաց թողած հետևյալ սահմանման մեջ.

Մոլեկուլը նյութի փոքրագույն մասնիկն է, որը պահպանում է Կոմպլեքս նյութի _____:

- 1) հիմնական ֆիզիկական հատկությունները
- 2) որոշ քիմիական հատկություններ
- 3) ն ֆիզիկական, ն քիմիական հատկությունները
- 4) հիմնական քիմիական հատկությունները

24. Մոլեկուլի վերաբերյալ ճիշտ է.

- 1) ունի նույն որակական կազմը՝ անկախ ստացման եղանակից
- 2) պահպանվում է քիմիական ռեակցիաների ընթացքում
- 3) քայքայվում է քիմիական ռեակցիաների ընթացքում
- 4) նյութի հիմնական քիմիական հատկությունների կրողն է

25. Ո՞ր արտահայտությունն իմաստ չունի.

- 1) հինգ մոլեկուլ 2) կես ատոմ 3) մեկ ատոմ 4) կես մոլ

26. Որի համար քիմիական բանաձև չի կարող գրվել.

- 1) գլյուկոզի 2) օդի 3) սախարոզի 4) սոդայի

27. Ո՞ր պնդումներն են ճիշտ խառնուրդների վերաբերյալ.

- ա) չունեն հաստատուն քանակական բաղադրություն
- բ) միշտ անգույն են
- գ) բաղադրամասերը կարելի է բաժանել ֆիզիկական եղանակներով
- դ) կարող են գտնվել տարբեր ագրեգատային վիճակներում
- ե) ունեն հաստատուն քանակական բաղադրություն

- 1) ա, գ, դ 2) ա, բ, գ 3) գ, դ, ե 4) բ, դ, ե

28. Ո՞ր խառնուրդների բաղադրիչները կարելի է բաժանել թորման եղանակով.

- ա) շաքարի և կերակրի աղի ջրային լուծույթի
- բ) ամոնիումի նիտրիտի ջրային լուծույթի
- գ) ացետոնի ջրային լուծույթի
- դ) ացետոնի սպիրտային լուծույթի
- ե) քացախաթթվի ջրային լուծույթի
- զ) նավթի

- 1) ա, բ, գ, դ 2) բ, գ, դ, ե 3) ա, բ, ե, գ 4) գ, դ, ե, զ

29. Ո՞րն է նյութի զանգվածային բաժինը խառնուրդում.

- 1) նյութի քանակի հարաբերությունը խառնուրդի բաղադրամասերի քանակների գումարին
- 2) նյութի զանգվածի հարաբերությունը խառնուրդի զանգվածին
- 3) խառնուրդի բաղադրամասերի քանակների գումարի հարաբերությունը նյութի քանակին
- 4) խառնուրդի զանգվածի հարաբերությունը նյութի զանգվածին

30. Համապատասխանեցրե՛ք խառնուրդը և դրա բաղադրիչների բաժանման եղանակը.

<i>խառնուրդ</i>	<i>Բաժանման եղանակ</i>
ա) բենզոլ և ացետոն	1) բյուրեղացում
բ) բարիտաջուր	2) մագնիսի ազդեցություն
գ) երկաթի և ցինկի փոշիներ	3) թորում
դ) աղ և ավազ	4) լուծում և գտում
	5) գոլորշացում

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա1, բ2, գ3, դ4 | 3) ա3, բ5, գ2, դ4 |
| 2) ա4, բ1, գ5, դ3 | 4) ա3, բ4, գ2, դ1 |

31. Ո՞րն է բարդ նյութ.

- | | | | |
|------------|----------|------------|------------|
| 1) ալմաստը | 2) ոսկին | 3) գրաֆիտը | 4) էթանոլը |
|------------|----------|------------|------------|

32. Քանի՞ գ.ա.մ. է 10 գրամը.

- | | | | |
|-------------------------|-------------------------|-------------------------|-------------------------|
| 1) $1,66 \cdot 10^{23}$ | 2) $6,02 \cdot 10^{24}$ | 3) $1,66 \cdot 10^{27}$ | 4) $6,02 \cdot 10^{23}$ |
|-------------------------|-------------------------|-------------------------|-------------------------|

33. Հետևյալ գրառումներից ո՞րն է ճիշտ.

- | | | | |
|-----------------------|-----------------|-------------------|--------------------------|
| 1) $A_r(H) = 1$ գ/մոլ | 2) $M(H_2) = 2$ | 3) $A_r(Cu) = 64$ | 4) $M_r(O_2) = 32$ գ/մոլ |
|-----------------------|-----------------|-------------------|--------------------------|

34. Որքան է ազոտի մեկ ատոմի զանգվածը (գ).

- | | | | |
|--------------------------|--------------------------|-------------------------|-------|
| 1) $2,33 \cdot 10^{-23}$ | 2) $2,33 \cdot 10^{-26}$ | 3) $6,02 \cdot 10^{23}$ | 4) 14 |
|--------------------------|--------------------------|-------------------------|-------|

35. Որքան է ալյումինի մեկ ատոմի զանգվածը (կգ).

- | | | | |
|-------|--------------------------|--------------------------|-------------------------|
| 1) 27 | 2) $4,48 \cdot 10^{-26}$ | 3) $4,48 \cdot 10^{-23}$ | 4) $6,02 \cdot 10^{23}$ |
|-------|--------------------------|--------------------------|-------------------------|

36. Որքան է ալյումինի մեկ իոնի զանգվածը (գ.ա.մ.).

- | | | | |
|-------|--------------------------|--------------------------|-------|
| 1) 27 | 2) $4,48 \cdot 10^{-26}$ | 3) $4,48 \cdot 10^{-23}$ | 4) 24 |
|-------|--------------------------|--------------------------|-------|

37. Որքան է օզոնի մեկ մոլեկուլի զանգվածը (գ.ա.մ.).

- | | | | |
|-------|-------|--------------------------|--------------------------|
| 1) 16 | 2) 48 | 3) $2,66 \cdot 10^{-23}$ | 4) $7,98 \cdot 10^{-23}$ |
|-------|-------|--------------------------|--------------------------|

38. Ո՞ր տարրի ատոմի զանգվածն է $2,66 \cdot 10^{-23}$ գ.

- 1) ծծմբի 2) թթվածնի 3) ազոտի 4) նեոնի

39. Ո՞ր նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածն է 44.

- 1) H_2O 2) CuO 3) CO_2 4) H_2S

40. Որքան է ծանր ջրի (D_2O) մեկ մոլեկուլի զանգվածը (գ).

- 1) 18 2) 20 3) $2,99 \cdot 10^{-23}$ 4) $3,32 \cdot 10^{-23}$

41. Քանի՞ գ.ա.մ–ով է տարբերվում պերքլորական թթվի մեկ մոլեկուլի զանգվածը հիպոքլորային թթվի մեկ մոլեկուլի զանգվածից.

- 1) 16 2) 32 3) 48 4) 71

42. Ո՞ր նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածներն են հավասար.

- ա) մեթան ե) ածխածնի(IV) օքսիդ
բ) էթան գ) ազոտ
զ) էթեն է) ազոտի(IV) օքսիդ
ը) ածխածնի(II) օքսիդ
- 1) գ, դ, ե 2) ե, է 3) գ, դ, զ 4) ա, բ, զ

43. Քանի՞ անգամ է յոդաջրածնի մեկ մոլեկուլի զանգվածը մեծ թթվածնի մեկ մոլեկուլի զանգվածից.

- 1) 128 2) 8 3) 32 4) 4

44. Ո՞ր երևույթի հետևանքով է պարզ նյութերի թիվը մեծ քիմիական տարրերի թվից.

- 1) իզոմերիայի 3) հոմոլոգիայի
2) ալոտրոպիայի 4) իզոմորֆիզմի

45. Ինչպե՞ս է կոչվում քիմիական տարրերի մի քանի պարզ նյութերի ձևով հանդես գալու երևույթը.

- 1) ալոտրոպիա 3) սուբլիմացիա
2) ադսորբցիա 4) իզոմերիա

46. Ո՞ր շարքում են միայն մեկ տարրի ալոտրոպ ձևափոխություններ.

- 1) ալմաստ, օզոն, ֆուլերեն 3) ալմաստ, գրաֆիտ, կորունդ
2) գրաֆիտ, կարբոնոնդ, ֆուլերեն 4) ալմաստ, գրաֆիտ, ֆուլերեն

47. Ինչպե՞ս են անվանվում թթվածին քիմիական տարրի ալոտրոպ ձևափոխությունները.

- 1) ազոտ և ամոնիակ
 2) թթվածին և արգոն
 3) նեոն և արգոն
 4) թթվածին և օդոն

48. Ո՞ր պնդումներն են ճիշտ ածխածնի ալոտրոպ ձևափոխությունների վերաբերյալ.

- ա) տարբերվում են բյուրեղավանդակի կառուցվածքով
 բ) ունեն նույն խտությունը
 գ) տարբերվում են քիմիական ակտիվությամբ
 դ) ունեն նույն կարծրությունը
 ե) ունեն նույն որակական բաղադրությունը

- 1) ա, գ, դ 2) ա, բ, ե 3) բ, դ 4) ա, գ, ե





49. Թվարկված նյութերից (սենյակային ջերմաստիճանում) որոնցում են միջմասնիկային հեռավորությունները շատ անգամ գերազանցում մասնիկների սեփական չափերը.

- ա) CO_2 բ) $CaCO_3$ գ) O_2 դ) Cu ե) CH_4
 1) ա, գ, ե 2) բ, գ, ե 3) ա, բ, դ 4) գ, դ, ե

50. Թվարկված նյութերից որո՞նք չունեն մոլեկուլային կառուցվածք.

- ա) Al բ) C_2H_5OH գ) KCl դ) Na_2SO_4 ե) C_5H_{12}
 1) ա, բ 2) բ, դ 3) ա, բ, ե 4) ա, գ, դ

51. Համապատասխանեցրե՞ք բյուրեղավանդակի գծապատկերը և նյութի անվանումը.

<i>Բյուրեղավանդակի գծապատկեր</i>		<i>Նյութի անվանում</i>
ա) 	բ) 	1) ալմաստ 2) գրաֆիտ 3) ֆոսֆորեն
գ) 	դ) 	

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3, գ1, դ2 2) ա3, բ1, գ2 3) ա1, բ2, գ3 4) ա1, բ2, գ3

52. Ինչ ֆիզիկական հատկություններով են բնութագրվում մոլեկուլային կառուցվածքով նյութերը.

- 1) համեմատաբար ցածր հալման և եռման ջերմաստիճաններով
- 2) բարձր հալման և եռման ջերմաստիճաններով
- 3) մեծ կարծրությամբ
- 4) մեծ պլաստիկությամբ

53. Ո՞ր հատկությունն է ընդհանուր մեկ մոլեկուլ ջրի և մեկ մոլ ջրի համար.

- 1) եռման ջերմաստիճանը՝ 100°C
- 2) խտությունը՝ 1 գ/սմ^3
- 3) կալցիումի օքսիդի հետ փոխազդեցությունը
- 4) հալման ջերմաստիճանը՝ 0°C

54. Ինչ կառուցվածք ունի կալիումի քլորիդը.

- 1) ատոմային
- 2) մոլեկուլային
- 3) իոնային
- 4) մետաղային

55. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը հետևյալ սահմանման մեջ.

Անկախ սրացման եղանակից և վայրից՝ մոլեկուլային կառուցվածքով մաքուր նյութերն ունեն _____ :

- 1) հաստատուն զանգված
- 2) հաստատուն բաղադրություն
- 3) տարբեր բաղադրություն
- 4) փոփոխական բաղադրություն

56. Հետևյալ քիմիական բանաձևերն ունեցող երկտարր միացություններից որի մոլեկուլում են տարրերի զանգվածային բաժինները հավասար.

- 1) CO
- 2) CO₂
- 3) SO₃
- 4) SO₂

57. Հետևյալ քիմիական բանաձևերով երկտարր միացություններից որի մոլեկուլում են տարրերի մոլային բաժինները հավասար.

- 1) C₂H₂
- 2) C₂H₄
- 3) SO₂
- 4) C₂H₆

58. Ո՞ր զույգ նյութերի հավասար զանգվածներում են պարունակվում նույն թվով ջրածնի ատոմներ.

- 1) H₂O և H₂S
- 2) Cu(OH)₂ և H₂SO₄
- 3) H₃PO₃ և H₃PO₄
- 4) NH₄NO₃ և Ca(H₂PO₄)₂

59. Երկվալենտ մետաղի օքսիդում թթվածնի զանգվածային բաժինը 40 % է: Ո՞րն է օքսիդի քիմիական բանաձևը.

- 1) CaO
- 2) ZnO
- 3) MgO
- 4) BaO

60. Դիոլոմիտը շիկացնելիս ստացվում են կալցիումի օքսիդ, մագնեզիումի օքսիդ և ածխածնի(IV) օքսիդ: Քանի տեսակի քիմիական տարրեր են առկա դիոլոմիտում.

- 1) երկու 2) երեք 3) չորս 4) հինգ

61. Հետևյալ միացություններից ո՞րն է առավել «հարուստ» երկաթով.

- 1) FeO 2) Fe₂O₃ 3) FeS 4) Fe₃O₄

62. Ո՞րն է միացության մոլեկուլում տարրի մոլային բաժինը.

- 1) տարրի ատոմների թվի հարաբերությունը բոլոր ատոմների գումարային թվին
2) տարրի հարաբերական ատոմային զանգվածի հարաբերությունը միացության հարաբերական մոլեկուլային զանգվածին
3) բոլոր ատոմների գումարային թվի հարաբերությունը տարրի ատոմների թվին
4) միացության հարաբերական մոլեկուլային զանգվածի հարաբերությունը տարրի հարաբերական ատոմային զանգվածին

63. Ի՞նչ ընդհանրություն ունեն NH₃ և PH₃ բանաձևեր ունեցող մոլեկուլները.

- 1) մոլային զանգվածները նույնն են
2) ջրածին տարրի զանգվածային բաժինը դրանցում նույնն է
3) որակական կազմը նույնն է
4) ջրածին տարրի մոլային բաժինը նույնն է

64. Ո՞րն է երկաթի այն օքսիդի բանաձևը, որում երկաթի զանգվածային բաժինը 0,7 է.

- 1) FeO 2) Fe₃O₄ 3) Fe₂O₃ 4) FeO₂

65. Ո՞րն է ածխաջրածնի քիմիական բանաձևը, եթե դրանում ածխածնի մոլային բաժինը 0,25 է.

- 1) C₂H₆ 2) C₃H₈ 3) C₄H₈ 4) C₄H₁₀

66. Ո՞րն է քիմիական միացության բանաձևը, որում երկաթ և թթվածին տարրերի զանգվածների հարաբերությունը 7 : 3 է.

- 1) FeO 2) FeO₃ 3) Fe₂O₃ 4) Fe₃O₄

67. Ո՞րն է ֆոսֆորի օքսիդի քիմիական բանաձևը, որում ֆոսֆոր տարրի մոլային բաժինը 0,4 է, իսկ մեկ մոլեկուլի զանգվածը՝ $3,65 \cdot 10^{-22}$ գ.

- 1) P₂O₃ 2) P₄O₆ 3) P₂O₅ 4) P₄O₁₀

68. Որքան է ծծմբի մոլային բաժինը ծծմբի այն օքսիդում, որում տարրերի զանգվածային բաժինները հավասար են.

- 1) 0,33 2) 0,67 3) 0,25 4) 0,75

69. Ո՞ր տարրի զանգվածային բաժինն է առավել մեծ կալիումի ռոդանիդում (KSCN).

- 1) K 2) S 3) C 4) N

70. Ո՞ր օքսիդում է թթվածնի զանգվածային բաժինն առավել մեծ.

- 1) CO₂ 2) NO₂ 3) SO₂ 4) SnO₂

71. Նյութի քանակի վերաբերյալ ո՞ր պնդումը *ճիշտ* է:

Նյութի քանակը _____ :

- 1) նյութի զանգվածի հարաբերությունն է իր մոլային զանգվածին
2) գազային նյութի ծավալի հարաբերությունն է մոլային ծավալին
3) կառուցվածքային միավորների թվի հարաբերությունն է Ավոգադրոյի թվին
4) նյութի զանգվածի հարաբերությունն է իր զբաղեցրած ծավալին

72. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը նյութի մոլային զանգվածի սահմանման մեջ.

Նյութի մոլային զանգվածը _____ :

- 1) մեկ մոլեկուլի զանգվածն է
2) պրոտոնների և նեյտրոնների զանգվածների գումարն է
3) մեկ ատոմի զանգվածն է
4) մեկ մոլ քանակությամբ նյութի զանգվածն է

73. Ո՞ր շարքում են նշված նախ՝ մոլային զանգվածի, ապա՝ նյութաքանակի չափման միավորներ.

- 1) լ/մոլ; գ 2) գ/մոլ; լ 3) գ/մոլ; մոլ 4) գ/մոլ; գ.ա.մ.

74. Նշված զանգվածներով ո՞ր զույգ նյութերի քանակներն են նույնը.

- 1) 22 գ CO₂ և 20 գ MgO 3) 35 գ SO₂ և 27 գ HCl
2) 71 գ Cl₂ և 27 գ H₂O 4) 14 գ KOH և 49 գ H₂SO₄

75. Որքան է ջրածնի ²H իզոտոպի մոլային զանգվածը (գ/մոլ).

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

76. Որքան է $1,204 \cdot 10^{24}$ թվով ծծմբի ատոմների զանգվածը (գ).

- 1) 8 2) 12 3) 32 4) 64

77. Ինչ զանգվածով (գ) ծծմբային գազում է պարունակվում այնքան ատոմ, որքան ատոմ պարունակվում է 48 գ մեթանում.

- 1) 80 2) 160 3) 320 4) 400

78. Ինչ քանակով (մոլ) ածխածնի(II) օքսիդում են պարունակվում այնքան մոլեկուլներ, որքան 72 գ ջրում.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

79. Հետևյալ նյութաքանակներով միացություններից որի զանգվածն է առավել մեծ.

- 1) 4 մոլ CO 3) 2 մոլ LiCl
2) 2 մոլ HF 4) 5 մոլ CH₄

80. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Մեկական մոլ թթվածնում և օդնում միատեսակ պայմաններում պարունակվում են

- 1) նույն թվով ատոմներ 3) նույն թվով մոլեկուլներ
2) թթվածնի նույն զանգվածը 4) տարբեր թվով մոլեկուլներ

81. Քանի անգամ պետք է CH₄-ի ծավալը մեծ լինի O₂-ի ծավալից (ն. պ.), որպեսզի դրանք ունենան միևնույն զանգվածը.

- 1) 1,5 2) 2 3) 2,5 4) 3

82. Որքան է մոլեկուլների թիվը 32 գ ծծմբի(IV) օքսիդում.

- 1) $6,02 \cdot 10^{23}$ 2) $1,82 \cdot 10^{24}$ 3) $3,01 \cdot 10^{23}$ 4) $5,03 \cdot 10^{24}$

83. Որքան է քլորի $1,204 \cdot 10^{24}$ թվով մոլեկուլների զանգվածը (գ).

- 1) 7,1 2) 35,5 3) 71 4) 142

84. Հետևյալ քանակությամբ նյութերից որո՞ւմ են պարունակվում առավել մեծ թվով մոլեկուլներ.

- 1) 2 մոլ ազոտ 3) 132 գ ածխաթթու գազ
2) 22,4 լ ջրածին (ն. պ.) 4) 0,018 լ ջուր (ն. պ.)

85. Հետևյալ քանակությամբ նյութերից որո՞ւմ են պարունակվում առավել մեծ թվով ատոմներ.

- 1) 2 մոլ մեթան 3) 96 գ օդն
2) 6 գ ջրածին 4) 54 գ ջուր

86. Ինչ զանգվածով (գ) մեթանում կպարունակվի նույնքան մոլեկուլ, որքան 32 գ ծծմբի(IV) օքսիդում.

- 1) 32 2) 16 3) 8 4) 64

87. Քանի ատոմ է պարունակում 72 գ օդնը.

- 1) $2,709 \cdot 10^{23}$ 2) $9,024 \cdot 10^{23}$ 3) $1,204 \cdot 10^{24}$ 4) $2,709 \cdot 10^{24}$

88. Քանի՞ ատոմ է պարունակում 49 գ ծծմբական թթուն.

- 1) $6,02 \cdot 10^{23}$ 2) $3,01 \cdot 10^{24}$ 3) $2,107 \cdot 10^{23}$ 4) $2,107 \cdot 10^{24}$

89. Քանի՞ ատոմ է պարունակում ֆոսֆորի մոլեկուլը, եթե նրա գոլորշու խտությունն ըստ ջրածնի 62 է.

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

90. Ո՞ր պնդումն է ճիշտ.

ա) V խմբի գլխավոր ենթախմբի բոլոր տարրերի բարձրագույն օքսիդացման աստիճանը +5 է

բ) V խմբի գլխավոր ենթախմբի բոլոր տարրերի առավելագույն վալենտականությունը հավասար է 5-ի

- 1) երկուսն էլ ճիշտ են 3) ճիշտ է միայն ա-ն
2) երկուսն էլ սխալ են 4) ճիշտ է միայն բ-ն

91. Թթուների դր զույգի հիմնայնությունը և մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը չեն համընկնում.

- 1) $H_2C_2O_4$, H_3PO_4 3) $C_{17}H_{35}COOH$, H_2SO_4
2) H_3PO_3 , $H_4P_2O_7$ 4) CH_3COOH , H_3PO_3

92. Քանի՞ տեսակի տարրերի ատոմներից են կազմված հետևյալ նյութերը՝ գրաֆիտ, սիլան, կարբորոնդ և ֆոսֆերեն.

- 1) մեկ 2) երկու 3) երեք 4) չորս

93. Օզոնի $6,02 \cdot 10^{25}$ մոլեկուլների զանգվածը քանի՞ անգամ է մեծ թթվածնի $3,01 \cdot 10^{24}$ մոլեկուլների զանգվածից.

- 1) 1,5 2) 20 3) 30 4) 48

94. Քանի՞ մոլեկուլ է պարունակում 0,25 մոլ ածխաթթու գազը.

- 1) $1,505 \cdot 10^{23}$ 2) $6,02 \cdot 10^{23}$ 3) $3,01 \cdot 10^{23}$ 4) $1,204 \cdot 10^{23}$

95. Նշված քանակներով դր գազն է ավելի շատ ատոմ պարունակում.

- 1) 0,7 մոլ ջրածին 3) 6 մոլ օզոն
2) 1,5 մոլ հելիում 4) 4 մոլ մեթան

96. 25-ական գ զանգվածով հետևյալ պարզ նյութերից որի՞ նյութաքանակն է առավել մեծ.

- 1) Al 2) Na 3) Mg 4) Si

97. Ինչպե՞ս կփոխվի գլանում մխոցի տակ գտնվող հելիումի ատոմների թիվը ծավալը երկու անգամ փոքրացնելիս.

- 1) երկու անգամ կմեծանա
 2) երկու անգամ կփոքրանա
 3) չորս անգամ կմեծանա
 4) կմնա անփոփոխ

98. Ո՞ր նյութի 10 գ զանգվածով նմուշում մոլեկուլների թիվը առավել մեծ կլինի.

- 1) H₂O 2) NH₃ 3) CH₄ 4) HF

99. Ազոտի օքսիդներից որի՞ գոլորշու խտությունն է ըստ մեթանի 5,75.

- 1) NO 2) N₂O 3) NO₂ 4) N₂O₄

100. Համապատասխանեցրե՞ք տարբեր նյութերի հետ թթվածնի փոխազդեցության ռեակցիաներում ելանյութերի ու ստացված արգասիքների բանաձևերը.

<i>Ելանյութ</i>	<i>Արգասիք</i>
ա) P + O ₂ =	1) Al ₂ O ₃
բ) Si + O ₂ =	2) P ₂ O ₅
գ) Al + O ₂ =	3) SiO ₂
դ) Fe + O ₂ =	4) Al ₂ O
	5) Fe ₃ O ₄
	6) P ₂ O ₄

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ3, գ4, դ5
 2) ա2, բ3, գ1, դ5
 3) ա6, բ3, գ4, դ5
 4) ա6, բ3, գ1, դ5

101. Ո՞րն է S⁰ → S⁺⁴ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարումը.

- 1) 2SO₂ + O₂ = 2SO₃
 2) S + 2H₂SO₄ = 3SO₂ + 2H₂O
 3) S + 3F₂ = 3SF₆
 4) S + 6HNO₃ = H₂SO₄ + 6NO₂ + 2H₂O

102. Ո՞րն է (NH₄)₂CO₃ + HCl → ուրվագրին համապատասխանող ռեակցիայի գազային վերջանյութում դրական և բացասական օքսիդացման աստիճան ունեցող տարրերի զանգվածների հարաբերությունը.

- 1) 1 : 2 2) 3 : 4 3) 3 : 8 4) 8 : 3

103. Որո՞նք են NH₄NO₃ $\xrightarrow{t^\circ}$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի գազային վերջանյութում դրական և բացասական օքսիդացման աստիճան ունեցող տարրերի կարգաթվերը համապատասխանաբար.

- 1) 4 և 7 2) 7 և 4 3) 8 և 7 4) 7 և 8

104. Ո՞րն է $Mg_3N_2 + H_2O \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի գազային վերջանյութի մոլեկուլում պրոտոնների թիվը.

- 1) 17 2) 12 3) 10 4) 7

105. Ո՞րն է $Al_4C_3 + H_2O \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի գազային վերջանյութի խտությունը (գ/լ, ն. պ.).

- 1) 16 2) 8 3) 22,4 4) 0,71

106. Ո՞րն է $Fe_3O_4 + HCl \xrightarrow{t^\circ} \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման գործակիցների գումարային թիվը.

- 1) 8 2) 10 3) 16 4) 18

107. Ինչ զանգվածային հարաբերությամբ պետք է վերցնել n -թվով ածխածնի ատոմ պարունակող ալկանը և թթվածինը, որպեսզի այրումն ընթանա անմնացորդ.

- 1) $7n + 1 / 24n + 8$ 3) $7n + 1 / 12n + 4$
2) $7n / 12n + 4$ 4) $7n / 24n + 8$

108. Ինչ մոլային հարաբերությամբ պետք է վերցնել n -թվով ածխածնի ատոմ պարունակող ալկանը և թթվածինը, որպեսզի այրումն ընթանա անմնացորդ.

- 1) $2 : (3n + 1)$ 2) $n : (3n + 1)$ 3) $4 : (3n + 1)$ 4) $1 : (3n + 1)$

109. Ո՞ր շարքում են միայն մետաղական տարրերի քիմիական նշաններ.

- 1) Na, Cu, Fe, Al 3) Zn, C, K, Si
2) Hg, S, Au, Al 4) Hg, Cu, H, Au

110. Որո՞նք են բաց թողած բառերը հետևյալ նախադասությունում.

Յուրաքանչյուր փոքր պարբերությունում կարգաթվի մեծացմանը զուգընթաց փարրերի (բացառությամբ ազնիվ գազի) ատոմային շառավիղը _____ է, ոչմետաղային հատկությունը _____ :

- 1) մեծանում, թուլանում 3) փոքրանում, ուժեղանում
2) մեծանում, ուժեղանում 4) փոքրանում, թուլանում

111. Որո՞նք են բաց թողած բառերը հետևյալ նախադասությունում.

Գլխավոր ենթախմբերում կարգաթվի մեծացմանը զուգընթաց փարրերի ատոմային շառավիղը _____ է, մետաղային հատկությունը _____ :

- 1) մեծանում, թուլանում 3) փոքրանում, ուժեղանում
2) մեծանում, ուժեղանում 4) փոքրանում, թուլանում

112. Համապատասխանեցրե՛ք նյութի քիմիական բանաձևը և դրանում մեծ մոլային բաժին ունեցող տարրի կարգաթիվը.

Նյութի բանաձև	Տարրի կարգաթիվ
ա) NO ₂	1) 16
բ) C ₂ H ₆	2) 1
գ) MnCl ₂	3) 8
դ) P ₂ S ₃	4) 17
	5) 6

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ2, գ4, դ3
 2) ա3, բ5, գ2, դ1
 3) ա3, բ5, գ4, դ1
 4) ա3, բ2, գ4, դ1

113. Համապատասխանեցրե՛ք նյութի քիմիական բանաձևը և դրանում առավել մեծ հարբերական էլեկտրաբացասականություն ունեցող տարրի մոլային բաժինը.

Նյութի բանաձև	Մոլային բաժին
ա) HClO ₃	1) 0,14
բ) OF ₂	2) 0,80
գ) CH ₃ NH ₂	3) 0,20
դ) CaH ₂	4) 0,67
	5) 0,60

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա5, բ4, գ1, դ3
 2) ա5, բ4, գ5, դ2
 3) ա5, բ4, գ1, դ4
 4) ա2, բ4, գ1, դ2

114. Համապատասխանեցրե՛ք ածխածին և ջրածին տարրերի զանգվածների հարաբերությունը և ածխաջրածնի պարզագույն բանաձևը.

Զանգվածների հարաբերություն	Պարզագույն բանաձև
ա) 12 : 1	1) CH ₄
բ) 4 : 1	2) CH
գ) 6 : 1	3) C ₂ H ₃
դ) 3 : 1	4) CH ₃
	5) CH ₂

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ4, գ5, դ1
 2) ա2, բ4, գ5, դ2
 3) ա5, բ4, գ5, դ1
 4) ա2, բ4, գ1, դ1

115. Համապատասխանեցրե՛ք քիմիական տարրի նշանը և դրա բարձրագույն օքսիդի հիդրատի ընդհանուր բանաձևը.

<i>Տարրի քիմիական նշան</i>	<i>Օքսիդի հիդրատի ընդհանուր բանաձև</i>
ա) Cu	1) ROH
բ) Li	2) R(OH) ₂
գ) Al	3) H ₂ RO ₄
դ) S	4) H ₃ RO ₃
	5) HRO ₃

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա2, բ1, գ4, դ4 | 3) ա3, բ1, գ4, դ3 |
| 2) ա2, բ1, գ4, դ3 | 4) ա2, բ1, գ4, դ5 |

116. Համապատասխանեցրե՛ք քրոմի օքսիդացման աստիճանը և նյութի բանաձևը.

<i>Օքսիդացման աստիճան</i>	<i>Նյութի բանաձև</i>
ա) +6	1) CrO
բ) +3	2) Cr(OH) ₃
գ) +2	3) H ₂ CrO ₄
դ) 0	4) Cr

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա3, բ2, գ1, դ4 | 3) ա3, բ4, գ2, դ1 |
| 2) ա2, բ4, գ1, դ3 | 4) ա1, բ2, գ3, դ4 |

1.1.1. Ատոմամոլեկուլային ուսմունք

Համարը	Պատաս- խանք	Համարը	Պատաս- խանք	Համարը	Պատաս- խանք	Համարը	Պատաս- խանք
1	3	30	3	59	3	88	4
2	3	31	4	60	3	89	4
3	3	32	2	61	1	90	3
4	2	33	3	62	1	91	4
5	1	34	1	63	4	92	3
6	4	35	2	64	3	93	3
7	4	36	1	65	1	94	1
8	4	37	2	66	3	95	4
9	4	38	2	67	2	96	2
10	3	39	3	68	1	97	4
11	3	40	4	69	1	98	3
12	2	41	3	70	1	99	4
13	3	42	3	71	4	100	2
14	2	43	4	72	4	101	2
15	3	44	2	73	3	102	3
16	4	45	1	74	1	103	4
17	2	46	4	75	2	104	3
18	1	47	4	76	4	105	4
19	1	48	4	77	3	106	3
20	4	49	1	78	3	107	1
21	4	50	4	79	1	108	1
22	3	51	1	80	3	109	1
23	4	52	1	81	2	110	3
24	2	53	3	82	3	111	2
25	2	54	3	83	4	112	4
26	2	55	2	84	3	113	3
27	1	56	4	85	1	114	1
28	4	57	1	86	3	115	2
29	2	58	2	87	4	116	1

1.1.2. Ատոմի կառուցվածքը: Միջուկ: Էլեկտրոն

1. Ո՞րն է սելենի հիմնական վիճակում գտնվող ատոմի արտաքին էներգիական մակարդակի էլեկտրոնային բանաձևը.

- 1) $3s^2 3p^4$ 2) $2s^2 2p^4$ 3) $4s^2 4p^4$ 4) $3s^2 3p^6$

2. Որո՞նք են հիմնական վիճակում գտնվող ատոմի $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^3$ էլեկտրոնային բանաձև ունեցող տարրի գազային ջրածնային միացության և բարձրագույն օքսիդի բանաձևերը.

- 1) H_2S և SO_3 2) NH_3 և N_2O_5 3) PH_3 և P_2O_5 4) CH_4 և CO_2

3. Ո՞րն է հիմնական վիճակում գտնվող ատոմի RO_2 բարձրագույն օքսիդ ունեցող տարրի արտաքին էներգիական մակարդակի էլեկտրոնային բանաձևը.

- 1) $ns^2 np^1$ 2) $ns^2 np^2$ 3) $ns^2 np^3$ 4) $ns^2 np^5$

4. Ո՞րն է Se^{2-} իոնի արտաքին էներգիական մակարդակի էլեկտրոնային բանաձևը.

- 1) $3s^2 3p^2$ 2) $2s^2 2p^5$ 3) $3s^2 3p^4$ 4) $4s^2 4p^6$

5. Քանի՞ էլեկտրոն կա քրոմի հիմնական վիճակում գտնվող ատոմի երրորդ էներգիական մակարդակում.

- 1) 2 2) 6 3) 10 4) 13

6. Ո՞րն է սիլիցիումի հիմնական վիճակում գտնվող ատոմի էլեկտրոնային բանաձևը.

- 1) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^1$ 3) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^2$
2) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^3$ 4) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^4$

7. Ո՞ր տարրի ատոմը գրգռված վիճակում կունենա 6 կենտ էլեկտրոն.

- 1) ծծմբի 3) ֆոսֆորի
2) ածխածնի 4) թթվածնի

8. Ո՞ր ատոմի հիմնական վիճակին է համապատասխանում $4s^2 4p^2$ էլեկտրոնային բանաձևը.

- 1) ալյումինի 3) գերմանիումի
2) ազոտի 4) արծաթի

9. Քվանտային թվերի ո՞ր արժեքներով է բնութագրվում 3d ենթամակարդակում գտնվող էլեկտրոնը.

- 1) $n = 3, l = 0$ 2) $n = 3, l = 1$ 3) $n = 2, l = 1$ 4) $n = 3, l = 2$

10. Ո՞րն է երրորդ էներգիական մակարդակում ատոմային օրբիտալների ընդհանուր թիվը.

- 1) 4 2) 5 3) 7 4) 9

11. Քվանտային թվերի դ՞ր արժեքներով է բնութագրվում 4d ենթամակարդակում գտնվող էլեկտրոնը.

- 1) $n = 4, l = 2$ 2) $n = 4, l = 3$ 3) $n = 4, l = 1$ 4) $n = 4, l = 0$

12. Ո՞րն է $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^4$ էլեկտրոնային բանաձևով X տարրի բարձրագույն օքսիդի բանաձևը.

- 1) X_2O_3 2) XO_3 3) X_2O_5 4) X_2O_7

13. Ո՞րն է $1s^2 2s^2 2p^3$ էլեկտրոնային բանաձևով X տարրի ցնդող ջրածնային միացության բանաձևը.

- 1) HX 2) H_2X 3) XH_3 4) XH_4

14. Ի՞նչ է բնութագրում օրբիտալային(l) քվանտային թիվը.

- 1) օրբիտալի ուղղորդվածությունը ստրաժության մեջ
2) օրբիտալի ձևը
3) էլեկտրոնի զանգվածը
4) էլեկտրոնների թիվը տվյալ օրբիտալում

15. Ո՞րն է ատոմային օրբիտալների ընդհանուր թիվը չորրորդ էներգիական մակարդակի d ենթամակարդակում.

- 1) 10 2) 16 3) 7 4) 5

16. Ո՞րն է ատոմի էլեկտրոնային բանաձևը, եթե դրա միջուկը պարունակում է 19 պրոտոն.

- 1) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 3d^1 4s^2$ 3) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 3d^2 4s^1$
2) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 4s^1$ 4) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 3d^5 4s^2$

17. Ո՞րն է պրոտոնների գումարային թիվը ազոտի(IV) օքսիդի մեկ մոլեկուլում.

- 1) 15 2) 16 3) 22 4) 23

18. Ո՞ր մեծությունն է նույնը հետևյալ մասնիկներում՝ Ar, K^+ և Cl^- .

- 1) պրոտոնների թիվը 3) նեյտրոնների թիվը
2) էլեկտրոնների թիվը 4) զանգվածը

19. Նշված տարրերից դրը և ջրածնային միացությունում, և բարձրագույն օքսիդում ունի վալենտականության նույն արժեքը.

- 1) քլորը
2) արսենը
3) սիլիցիումը
4) սելենը

20. Ինչ մասնիկի է վերածվում ծծմբի ատոմը՝ միացնելով երկու էլեկտրոն.

- 1) թթվածնի իզոտոպի
2) նեոնի ատոմի
3) սուլֆիդ իոնի
4) ածխածնի ատոմի

21. Հետևյալ տարրերից որի բարձրագույն օքսիդի բանաձևն է RO_3 , եթե նրա ցնդող ջրածնային միացության մեջ այդ տարրի զանգվածային բաժինը 97,53 % է.

- 1) ծծմբի
2) սելենի
3) տելուրի
4) պոլոնիումի

22. Համապատասխանաբար քանի՞ պրոտոն և նեյտրոն է պարունակում ^{131}Xe իզոտոպի ատոմի միջուկը.

- 1) 100 պրոտոն և 31 նեյտրոն
2) 54 պրոտոն և 67 նեյտրոն
3) 54 պրոտոն և 77 նեյտրոն
4) 77 պրոտոն և 54 նեյտրոն

23. Ինչի է հավասար պրոպանի մեկ մոլեկուլում բոլոր ատոմների պրոտոնների ընդհանուր թիվը.

- 1) 7
2) 26
3) 44
4) 144

24. Ատոմային օրբիտալի դր տեսակներն են հաջորդաբար ներկայացված հետևյալ պատկերներով.



- 1) p, d, p
2) s, p, հիբրիդային
3) s, հիբրիդային, p
4) d, հիբրիդային, p

25. Համապատասխանեցրեք քիմիական տարրերի նշանները և էլեկտրոնային բանաձևերը.

Տարրի նշան	Էլեկտրոնային բանաձև
ա) He	1) $1s^2 2s^2 2p^2$
բ) C	2) $1s^2 2s^2 2p^5$
գ) P	3) $1s^2$
դ) Cl	4) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^5$
	5) $1s^2 2s^2 2p^6$
	6) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^3$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ3, գ6, դ4
2) ա3, բ2, գ5, դ4
3) ա3, բ1, գ5, դ2
4) ա3, բ1, գ6, դ4

26. Ո՞ր տարրի ատոմին է համապատասխանում էլեկտրոնների 2, 8, 3 բաշխումն ըստ էներգիական մակարդակների.

- 1) Be 2) B 3) Al 4) P

27. Ո՞ր մասնիկներով է պայմանավորված ատոմի գրեթե ողջ զանգվածը.

- 1) միայն էլեկտրոններով 3) պրոտոններով և էլեկտրոններով
2) պրոտոններով և նեյտրոններով 4) նեյտրոններով և էլեկտրոններով

28. Ո՞րն է բաց թողած արտահայտությունը:

Ատոմների միջուկներում պրոտոնների թվի համեմատ նեյտրոնների թիվը _____ :

- 1) միշտ փոքր է 3) միշտ հավասար է
2) միշտ մեծ է 4) հիմնականում մեծ է կամ հավասար

29. Ո՞րն է մագնեզիում-24 իզոտոպի միջուկում պրոտոնների թիվը.

- 1) 24 2) 12 3) 11 4) 13

30. Ի՞նչ է ցույց տալիս իզոտոպի զանգվածային թիվը.

- 1) պրոտոնների և էլեկտրոնների գումարային թիվը
2) միջուկի լիցքի մեծությունը
3) պրոտոնների և նեյտրոնների գումարային թիվը
4) նեյտրոնների և էլեկտրոնների գումարային թիվը

31. Ի՞նչ է ցույց տալիս գլխավոր քվանտային թիվը.

- 1) ատոմի զանգվածային թիվը 3) էներգիական մակարդակի համարը
2) միջուկում պրոտոնների թիվը 4) էլեկտրոնային ամպի ձևը

32. Ինչի՞ է հավասար տարրի բարձրագույն օքսիդացման աստիճանը, եթե նրա ցնդող ջրածնային միացության բանաձևը RH_3 է.

- 1) +3 2) +4 3) +5 4) +6

33. Ո՞ր շարքում են բոլորը d-տարրեր.

- 1) Be, Mg, Sc 3) Zn, Hg, Au
2) Bi, Cu, Ti 4) Se, Cr, Mg

34. Ո՞րն է կենտ էլեկտրոնների առավելագույն թիվը բրոմի գրգռված վիճակում գտնվող ատոմի արտաքին էներգիական մակարդակում.

- 1) 1 2) 2 3) 5 4) 7

35. Ո՞րն է ջրածնի բոլոր իզոտոպների միջուկը ներկայացնող դրական տարրական մասնիկը.

- | | |
|--------------|------------|
| 1) էլեկտրոնը | 3)ատոմը |
| 2) նեյտրոնը | 4) պրոտոնը |

36. Հետևյալ իզոտոպներից որո՞ւմ է նեյտրոնների թիվը 2 անգամ գերազանցում էլեկտրոնների թիվը.

- | | | | |
|-------------------|------------------------|-----------------------|-----------------------|
| 1) ${}^3\text{H}$ | 2) ${}^{201}\text{Hg}$ | 3) ${}^{22}\text{Ne}$ | 4) ${}^{80}\text{Br}$ |
|-------------------|------------------------|-----------------------|-----------------------|

37. Ո՞ր ռեակցիաներում է փոխվում ատոմի միջուկի լիցքը.

- | | |
|----------------------------|---------------|
| 1) օքսիդացման–վերականգնման | 3) միջուկային |
| 2) միացման | 4) փոխանակման |

38. Ո՞ր մասնիկում է պարունակվում 18 էլեկտրոն.

- | | | | |
|--------------------|------------------|--------------------|-----------------|
| 1) S^{+4} | 2) Cl^0 | 3) P^{-3} | 4) S^0 |
|--------------------|------------------|--------------------|-----------------|

39. Ո՞րն է ${}_{13}^{27}\text{Al} + {}_1^2\text{H} \rightarrow$ միջուկային ռեակցիայի հավասարման աջ մասը.

- | | | | |
|--|--|--|---|
| 1) ${}_2^4\text{He} + {}_{12}^{25}\text{Mg}$ | 2) ${}_2^4\text{He} + {}_{14}^{29}\text{Si}$ | 3) ${}_2^4\text{He} + {}_{12}^{24}\text{Mg}$ | 4) ${}_1^1\text{H} + {}_{14}^{29}\text{Si}$ |
|--|--|--|---|

40. Ո՞ր գծապատկերն է համապատասխանում ավելի փոքր իոնացման էներգիայով տարրի ատոմի.

- | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|----------------------|----------------------|------------|------------|----|----|--|--|---|----------------------|------------|------------|------------|----|----|--|--|
| 1) <table border="1" style="display: inline-table; border-collapse: collapse; text-align: center;"><tr><td style="padding: 2px;">$\uparrow\downarrow$</td><td style="padding: 2px;">$\uparrow\downarrow$</td><td style="padding: 2px;">\uparrow</td><td style="padding: 2px;">\uparrow</td></tr><tr><td style="padding: 2px;">2s</td><td colspan="3" style="padding: 2px;">2p</td></tr></table> | $\uparrow\downarrow$ | $\uparrow\downarrow$ | \uparrow | \uparrow | 2s | 2p | | | 3) <table border="1" style="display: inline-table; border-collapse: collapse; text-align: center;"><tr><td style="padding: 2px;">$\uparrow\downarrow$</td><td style="padding: 2px;">\uparrow</td><td style="padding: 2px;">\uparrow</td><td style="padding: 2px;">\uparrow</td></tr><tr><td style="padding: 2px;">2s</td><td colspan="3" style="padding: 2px;">2p</td></tr></table> | $\uparrow\downarrow$ | \uparrow | \uparrow | \uparrow | 2s | 2p | | |
| $\uparrow\downarrow$ | $\uparrow\downarrow$ | \uparrow | \uparrow | | | | | | | | | | | | | | |
| 2s | 2p | | | | | | | | | | | | | | | | |
| $\uparrow\downarrow$ | \uparrow | \uparrow | \uparrow | | | | | | | | | | | | | | |
| 2s | 2p | | | | | | | | | | | | | | | | |
| 2) <table border="1" style="display: inline-table; border-collapse: collapse; text-align: center;"><tr><td style="padding: 2px;">$\uparrow\downarrow$</td><td style="padding: 2px;">\uparrow</td><td style="padding: 2px;">\uparrow</td><td style="padding: 2px;"></td></tr><tr><td style="padding: 2px;">2s</td><td colspan="3" style="padding: 2px;">2p</td></tr></table> | $\uparrow\downarrow$ | \uparrow | \uparrow | | 2s | 2p | | | 4) <table border="1" style="display: inline-table; border-collapse: collapse; text-align: center;"><tr><td style="padding: 2px;">$\uparrow\downarrow$</td><td style="padding: 2px;">\uparrow</td><td style="padding: 2px;"></td><td style="padding: 2px;"></td></tr><tr><td style="padding: 2px;">2s</td><td colspan="3" style="padding: 2px;">2p</td></tr></table> | $\uparrow\downarrow$ | \uparrow | | | 2s | 2p | | |
| $\uparrow\downarrow$ | \uparrow | \uparrow | | | | | | | | | | | | | | | |
| 2s | 2p | | | | | | | | | | | | | | | | |
| $\uparrow\downarrow$ | \uparrow | | | | | | | | | | | | | | | | |
| 2s | 2p | | | | | | | | | | | | | | | | |

41. Ո՞րն է II խմբի գլխավոր ենթախմբի տարրերի արտաքին էներգիական մակարդակի էլեկտրոնային բանաձևը.

- | | | | |
|---------------|-----------|-----------|---------------|
| 1) ns^2np^1 | 2) ns^2 | 3) ns^1 | 4) ns^1np^1 |
|---------------|-----------|-----------|---------------|

42. Ո՞ր շարքում են միայն s-տարրեր.

- | | | | |
|--------------|-------------|--------------|-------------|
| 1) H, Na, Be | 2) He, P, F | 3) Zn, Li, O | 4) Si, C, F |
|--------------|-------------|--------------|-------------|

43. Ո՞ր մեծություններով են տարբերվում տվյալ տարրի իզոտոպները.

- | | | | |
|---------------------|----------------------|---------|---------|
| ա) զանգվածային թվով | գ) նեյտրոնների թվով | | |
| բ) պրոտոնների թվով | դ) էլեկտրոնների թվով | | |
| 1) ա, բ | 2) գ, բ | 3) ա, գ | 4) ա, դ |

44. Ո՞ր մասնիկում է պրոտոնների թիվը փոքր էլեկտրոնների թվից.

- | | | | |
|------------------|---------------------|-------|-------|
| 1) Br^- | 2) Ca^{2+} | 3) Cl | 4) Ca |
|------------------|---------------------|-------|-------|

45. Հետևյալ մասնիկներից որի զանգվածն է առավել մեծ.

- 1) պրոտոնի 2) նեյտրոնի 3) α -մասնիկի 4) էլեկտրոնի


46. Համապատասխանեցրե՞ք տարրի ատոմի հիմնական վիճակի էլեկտրոնային բանաձևը և անվանումը.

Էլեկտրոնային բանաձև	Անվանում
ա) $1s^2 2s^2 2p^6$	1) սիլիցիում
բ) $1s^2 2s^2 2p^6 3s^2$	2) նեոն
գ) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^5$	3) արգոն
դ) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^2$	4) մագնեզիում
	5) քլոր
	6) ֆտոր

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ1, գ6, դ5 3) ա2, բ4, գ5, դ1
2) ա2, բ4, գ5, դ3 4) ա2, բ3, գ4, դ5

47. Ո՞րն է հետևյալ միջուկային ռեակցիայի հավասարման աջ մասում բացակայող մասնիկը.



- 1) էլեկտրոնը 2) պրոտոնը 3) նեյտրոնը 4) α -մասնիկը

48. Համապատասխանեցրե՞ք էներգիական մակարդակի համարը և դրանում էլեկտրոնների առավելագույն թիվը.

Էներգիական մակարդակի համար	Էլեկտրոնների առավելագույն թիվ
ա) 1	1) 8
բ) 2	2) 32
գ) 3	3) 2
դ) 4	4) 18
	5) 50

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ1, գ2, դ5 3) ա1, բ5, գ4, դ2
2) ա3, բ1, գ4, դ2 4) ա1, բ2, գ3, դ4

49. Որքան է ջրածին տարրի զանգվածային բաժինը (%) մեթանի՝ CH_3D , մոլեկուլում.

- 1) 25 2) 29,4 3) 70,6 4) 80

50. Ո՞րն է օրբիտալների թիվը երրորդ էներգիական մակարդակի p ենթամակարդակում.

- 1) 1 2) 9 3) 3 4) 6

51. Քանի՞ թափուր օրբիտալ է առկա 14 կարգաթվով տարրի հիմնական վիճակում գտնվող երրորդ էներգիական մակարդակում.

- 1) 14 2) 4 3) 6 4) 8

52. Ո՞րն է քիմիական տարրի կարևորագույն բնութագիրը.

- 1) հարաբերական ատոմային զանգվածը 3) պարբերության համարը
2) միջուկի լիցքը 4) խմբի համարը

53. Հետևյալ քիմիական բանաձևերով արտահայտված երկտարր միացություններից որո՞ւմ է տարրերի էլեկտրոնային բանաձևը նույնը.

- 1) NaCl 2) Li_3N 3) CaS 4) $MgBr_2$

54. Քանի՞ չզույգված էլեկտրոն է առկա 17 կարգաթվով տարրի հիմնական վիճակում գտնվող ատոմում.

- 1) 1 2) 3 3) 5 4) 7

55. Քանի՞ չզույգված էլեկտրոն է առկա 17 կարգաթվով տարրի ատոմում երկրորդ գրգռված վիճակում.

- 1) 1 2) 3 3) 5 4) 7

56. Ո՞ր շարքում են ներկայացված 24 կարգաթվով տարրի պարբերության համարը, խմբի համարը, էլեկտրոնների թիվն ատոմի արտաքին էներգիական մակարդակում համապատասխանաբար.

- 1) 1, 4, 6 2) 6, 4, 2 3) 4, 6, 1 4) 4, 6, 2

57. Գլխավոր և օրբիտալային քվանտային թվերի ինչ արժեքներով է բնութագրվում կալիումի ատոմի վալենտային էլեկտրոնը.

- 1) 4 և 3 2) 4 և 0 3) 1 և 3 4) 4 և 1

58. Օրբիտալային քվանտային թվի ինչ արժեքներով են բնութագրվում մագնեզիումի գրգռված ատոմի վալենտային էլեկտրոնները.

- 1) 2 և 3 2) 4 և 0 3) 1 և 2 4) 0 և 1

59. Ո՞ր մասնիկում է պրոտոնների թիվը էլեկտրոնների թվից մեծ.

- 1) Na^+ 2) Cl^- 3) Cu 4) H_2O

60. Ինչ զանգվածով (գ) պրոտոն է պարունակվում 51 գ ալյումինի օքսիդում.

- 1) 27 2) 102 3) 50 4) 25

61. Ո՞ր էլեկտրոնային բանաձևն է ճիշտ հիմնական վիճակում գտնվող ատոմի համար.

- 1) $3s^23p^43d^0$ 2) $3s^23p^33d^1$ 3) $3s^13p^33d^2$ 4) $3s^23p^23d^2$

62. Մեթանի մոլեկուլներից ո՞րն է պարունակում հավասար թվով պրոտոններ և նեյտրոններ.

- 1) $^{12}\text{C}^1\text{H}_4$ 2) $^{13}\text{C}^2\text{H}_4$ 3) $^{12}\text{C}^1\text{H}_2^2\text{H}_2$ 4) $^{13}\text{C}^1\text{H}^2\text{H}_3$

63. Ո՞րն է բաց թողած բառը.

12 գրամ ածխածնում պարունակվող _____ թիվը $6,02 \cdot 10^{23}$ է:

- 1) պրոտոնների 3) ատոմների
2) նեյտրոնների 4) էլեկտրոնների

64. Ո՞րն է բաց թողած բառը.

31 գրամ սպիտակ ֆոսֆորում պարունակվող _____ թիվը $1,505 \cdot 10^{23}$ է:

- 1) պրոտոնների 3) ատոմների
2) նեյտրոնների 4) մոլեկուլների

65. Ո՞ր քիմիական տարրի առաջին և վերջին էներգիական մակարդակներում են առկա նույն թվով էլեկտրոններ.

- 1) Li 2) Na 3) B 4) Mg

66. Քանի՞ նեյտրոն է պարունակվում ^{56}Fe իզոտոպի միջուկում.

- 1) 26 2) 30 3) 36 4) 56

67. Պարբերական համակարգում ո՞ր մեծությանն է համապատասխանում տարրի ատոմում էլեկտրոնների թիվը.

- 1) պարբերությունների թվին 3) շարքերի թվին
2) խմբերի թվին 4) կարգաթվին

68. Առավելագույնը քանի՞ էլեկտրոն կարող է պարունակել երրորդ էներգիական մակարդակը.

- 1) 2 2) 8 3) 18 4) 36

69. Քանի՞ կենտ էլեկտրոն է առկա հիմնական վիճակում գտնվող Sc-ի ատոմում.

- 1) մեկ 2) երկու 3) երեք 4) չորս

70. Ո՞ր իոնն է առավել մեծ թվով տարրական մասնիկներ պարունակում.

- 1) $^{32}\text{S}^{2-}$ 2) $^{24}\text{Mg}^{2+}$ 3) $^{27}\text{Al}^{3+}$ 4) $^{65}\text{Zn}^{2+}$

71. Ո՞րն է տարրի քիմիական նշանը, եթե դրա զանգվածային թիվը 2,5 անգամ մեծ է պրոտոնների թվից, իսկ նեյտրոնների թիվը 78 է.

- 1) I 2) Te 3) Xe 4) Cr

72. Ո՞րն է տարրի նշանը, եթե դրա ատոմն ունի երկու էներգիական մակարդակ և արտաքին մակարդակում՝ մեկ էլեկտրոն.

- 1) Li 2) Na 3) K 4) Rb

73. Հետևյալ բանաձևերով դ՞ր ջուրն է բնության մեջ առավել տարածված.

- 1) T_2^{17}O 2) D_2^{16}O 3) D_2^{17}O 4) T_2^{18}O

74. Ատոմի զանգվածը $2,1809 \cdot 10^{-22}$ գ է, իսկ ատոմում էլեկտրոնների թիվը՝ 54: Ո՞րն է այդ տարրի ատոմում նեյտրոնների թիվը.

- 1) 74 2) 75 3) 76 4) 77

75. Ո՞րն է տարրի նշանը, եթե էլեկտրաչեզոք ատոմի միջուկը պարունակում է 44 նեյտրոն, և նեյտրոնների թիվը 1,294 անգամ մեծ է էլեկտրոնների թվից.

- 1) S 2) Se 3) Te 4) As

76. Ո՞ր էլեկտրոնային բանաձևերն են համապատասխանում ծծմբի ատոմի հիմնական և գրգռված վիճակներին.

- ա) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^4$ գ) $1s^2 2s^2 2p^6 3s^1 3p^2 3d^2$
բ) $1s^2 2s^2 2p^6 3s^1 3p^3 3d^2$ դ) $1s^2 2s^2 2p^5 3s^2 3p^5$

- 1) ա, բ 2) բ, գ 3) ա, դ 4) բ, դ

77. Ո՞րն է սիլիցիումի ատոմի գրգռված վիճակում դատարկ օրբիտալների թիվը արտաքին էներգիական մակարդակում.

- 1) 1 2) 3 3) 4 4) 5

78. Ո՞ր մասնիկում է էլեկտրոնների թիվը երկուսով ավելի պրոտոնների թվից.

- 1) NO_3 2) SO_4^{2-} 3) TeO_2 4) Ca^{2+}

79. Յոդի սկզբնական քանակի դ՞ր մասն է (%) քայքայվում 24 օրում, եթե ^{131}I նուկլիդի կիսատրոհման պարբերությունը 8 օր է.

- 1) 87,5 2) 75,0 3) 50,0 4) 25,0

1.1.2. Ատոմի կառուցվածքը: Միջուկ: Էլեկտրոն

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	28	4	55	3
2	3	29	2	56	3
3	2	30	3	57	2
4	4	31	3	58	4
5	4	32	3	59	1
6	3	33	3	60	4
7	1	34	4	61	1
8	3	35	4	62	4
9	4	36	1	63	3
10	4	37	3	64	4
11	1	38	3	65	4
12	2	39	1	66	2
13	3	40	4	67	4
14	2	41	2	68	3
15	4	42	1	69	1
16	2	43	3	70	4
17	4	44	1	71	2
18	2	45	3	72	1
19	3	46	3	73	2
20	3	47	1	74	4
21	2	48	2	75	2
22	3	49	2	76	1
23	2	50	3	77	4
24	3	51	3	78	2
25	4	52	2	79	1
26	3	53	3		
27	2	54	1		

1.1.3. Քիմիական տարրերի հատկությունների փոփոխության պարբերական բնույթը

1. Տարրերի ատոմների հետևյալ բնութագրերից ո՞րն է պարբերաբար փոխվում պարբերական համակարգում կարգաթվի աճմանը զուգընթաց.
 - 1) նեյտրոնների թիվը
 - 2) հարաբերական ատոմային զանգվածը
 - 3) էլեկտրոնների թիվն արտաքին էներգիական մակարդակներում
 - 4) ատոմում էներգիական մակարդակների թիվը
2. Հետևյալ տարրերից ո՞րն է իր քիմիական հատկություններով առավել նման կալիումին.
 - 1) կալցիումը
 - 2) ցինկը
 - 3) սկանդիումը
 - 4) ցեզիումը
3. Ի՞նչ է ցույց տալիս պարբերական համակարգում պարբերության համարը.
 - 1) էլեկտրոնային շերտերի թիվը
 - 2) էներգիական ենթամակարդակների թիվը
 - 3) էլեկտրոնների թիվը
 - 4) օրբիտալների թիվը
4. Ո՞րն է երկրորդ և երրորդ պարբերությունների տարրերի մետաղային հատկությունների թուլացման պատճառը կարգաթվի մեծացմանը զուգահեռ.
 - 1) միջուկի հետ էլեկտրոնի կապի թուլանալը
 - 2) ատոմային շառավղի մեծանալը
 - 3) ատոմային շառավղի փոքրանալը
 - 4) իոնացման էներգիայի փոքրանալը
5. Ըստ տրված էլեկտրոնային բանաձևերի՝ ո՞ր տարրն է քիմիապես առավել ակտիվ.
 - 1) $1s^2 2s^2 2p^6 3s^2$
 - 2) $1s^2 2s^2 2p^6$
 - 3) $1s^2 2s^1$
 - 4) $1s^2 2s^2 2p^6 3s^1$
6. Հետևյալ տարրերի ատոմներից ո՞րն ունի առավել մեծ շառավիղ.
 - 1) ազոտը
 - 2) ծարիրը
 - 3) ֆոսֆորը
 - 4) արսենը
7. Հետևյալ իոններից ո՞րն ունի առավել փոքր շառավիղ.
 - 1) K^+
 - 2) Ca^{2+}
 - 3) S^{2-}
 - 4) Cl^-
8. Ո՞ր շարքում են տարրերը դասավորված ըստ ատոմային շառավիղների աճի.
 - 1) Li, Be, B
 - 2) N, P, As
 - 3) Ca, Mg, Be
 - 4) Na, Al, Mg

9. Ո՞ր շարքում են տարրերի ատոմային շառավիղները նախ փոքրանում, ապա մեծանում.

- 1) Cl, Br, F 2) F, Cl, Br 3) Br, I, Cl 4) Cl, F, Br

10. Ո՞րն է քիմիական տարրերի շառավիղների մեծացման պատճառը պարբերական համակարգի գլխավոր ենթախմբերում կարգաթվի մեծացմանը զուգընթաց.

- 1) էլեկտրոնային շերտերի ավելացումը
2) միջուկի լիցքի մեծացումը
3) միջուկում պրոտոնների ավելացումը
4) միջուկում նեյտրոնների թվի մեծացումը

11. Ո՞ր շարքում են տարրերը դասավորված էլեկտրաբացասականության նվազման կարգով.

- 1) Mg, Si, P, S 2) F, C, Br, I 3) N, Br, I, B 4) Li, Be, S, H

12. Ո՞րն է արտահայտության ճիշտ շարունակությունը.

Գլխավոր ենթախմբի տարրերի ատոմների իոնացման էներգիան հակադարձ համեմատական է ատոմների _____:

- 1) էլեկտրաբացասականությանը 3) էլեկտրոնային խնամակցությանը
2) շառավիղին 4) օքսիդիչ հատկությանը

13. Ո՞ր շարքում են տարրերը դասավորված ըստ դրանց առաջացրած պարզ նյութերի մետաղական հատկությունների ուժեղացման.

- 1) Na, Mg, Al 2) Ca, Sr, Ba 3) K, Mg, Be 4) Rb, Sr, Cs

14. Ինչպե՞ս են փոխվում տարրերի մետաղական հատկությունները Na–Mg–Al շարքում.

- 1) ուժեղանում են 3) ուժեղանում են, ապա թուլանում
2) թուլանում են 4) թուլանում են, ապա ուժեղանում

15. Ինչպե՞ս են փոխվում տարրերի մետաղական հատկությունները Na–K–Rb շարքում.

- 1) ուժեղանում են 3) ուժեղանում են, ապա թուլանում
2) թուլանում են 4) թուլանում են, ապա ուժեղանում

16. Լրացրե՛ք բաց թողած բառը(երը):

Կովալենտային կապի երկարությունը HF–HCl–HBr–HI մոլեկուլներում ձախից աջ _____:

- 1) փոքրանում է 3) չի փոխվում
2) մեծանում է 4) մեծանում է, ապա փոքրանում

17. Ինչպե՞ս է փոխվում կովալենտային կապի բևեռայնությունը HF–HCl–HBr–HI մոլեկուլներում ձախից աջ.

- | | |
|----------------|------------------------------|
| 1) փոքրանում է | 3) փոքրանում է, ապա մեծանում |
| 2) մեծանում է | 4) մեծանում է, ապա փոքրանում |

18. Ինչպե՞ս են փոխվում HF–HCl–HBr–HI նյութերի ջրային լուծույթների թթվային հատկությունները.

- | | |
|-----------------|-------------------------------|
| 1) փոքրանում են | 3) փոքրանում են, ապա մեծանում |
| 2) մեծանում են | 4) մեծանում են, ապա փոքրանում |

19. Ո՞ր մետաղի օքսիդն է օժտված առավել ուժեղ հիմնային հատկությամբ.

- | | | | |
|-------|-------|-------|-------|
| 1) Fe | 2) Ni | 3) Ca | 4) Cd |
|-------|-------|-------|-------|

20. Լրացրե՞ք բաց թողած բառերը հետևյալ արտահայտությունում.

Ալկալիական մետաղների օքսիդներին համապատասխան հիդրատների (հիդրօքսիդների) _____ շտապի մեծացման հետ _____ է:

- | | |
|----------------------------------|---------------------------------|
| 1) գույնը, մգանում | 3) լուծելիությունը, փոքրանում |
| 2) երկտոցման աստիճանը, փոքրանում | 4) երկտոցման աստիճանը, մեծանում |

21. Ինչպե՞ս են փոխվում հալոգենաջրածինների HF–HCl–HBr–HI շարքում վերականգնիչ հատկությունները.

- | | |
|-----------------|-----------------------------------|
| 1) փոքրանում են | 3) չի փոխվում |
| 2) մեծանում են | 4) նախ մեծանում են, ապա փոքրանում |

22. Ինչպե՞ս է փոխվում ջրածնային միացությունների PH₃–H₂S–HCl շարքում թթվի ուժը դրանց ջրային լուծույթներում.

- | | |
|----------------|----------------------------------|
| 1) փոքրանում է | 3) չի փոխվում |
| 2) մեծանում է | 4) նախ մեծանում է, ապա փոքրանում |

- 1) Mg^{2+} , Ni^{2+} , Ca^{2+} , Cu^{2+} 3) Ni^{2+} , Mg^{2+} , Cu^{2+} , Ca^{2+}
2) Ca^{2+} , Mg^{2+} , Ni^{2+} , Cu^{2+} 4) Cu^{2+} , Ca^{2+} , Ni^{2+} , Mg^{2+}

20. Հետևյալ մետաղներից որի ստանդարտ էլեկտրոդային պոտենցիալի արժեքն է առավել փոքր.

- 1) Zn 2) Mg 3) Ca 4) Ba

21. Ո՞ր շարքի բոլոր մետաղները չեն օքսիդանում H^+ իոններով.

- 1) Fe, Zn, Pt 2) Na, Ni, Au 3) Cu, Ag, Hg 4) Cr, Mo, Ca

22. Ինչպե՞ս կփոխվի երկաթե թիթեղի զանգվածը, եթե այն պղնձի(II) սուլֆատի լուծույթի մեջ ընկղմելիս վերականգնվի 208 գ պղինձ.

- 1) կպակասի 26 գրամով 3) կփոքրանա 2 անգամ
2) կմեծանա 2 անգամ 4) կավելանա 26 գրամով

23. Ինչպե՞ս են փոխվում համապատասխանաբար K, Ca, Al, Cr տարրերի օքսիդացման աստիճանները դրանց բարձրագույն օքսիդներում.

- 1) մեծանում են 3) փոքրանում են
2) նախ մեծանում են, ապա փոքրանում 4) նախ փոքրանում են, ապա մեծանում

24. Քանի՞ էլեկտրոն է առկա հիմնական վիճակում գտնվող երկաթ տարրի համապատասխանաբար Fe^0 , Fe^{2+} և Fe^{3+} մասնիկների 3d ենթամակարդակներում.

- 1) 4, 5, 6 2) 5, 4, 6 3) 6, 6, 5 4) 4, 5, 5

25. Ո՞ր շարքի օքսիդներն են դասավորված ըստ հիմնային հատկությունների ուժեղացման.

- 1) MnO , MnO_2 , Mn_2O_7 3) MgO , Na_2O , Al_2O_3
2) CrO_3 , Cr_2O_3 , CrO 4) Fe_2O_3 , FeO , Al_2O_3

26. Ո՞ր ֆիզիկական հատկություններն են առավել բնորոշ մետաղական պարզ նյութերին.

- ա) մետաղական փայլը ե) մոլեկուլային բյուրեղավանդակը
բ) փխրունությունը գ) ջերմա- և էլեկտրահաղորդականությունը
զ) կռելիությունը է) թափանցիկությունը
ը) հեղուկ ագրեգատային վիճակը
- 1) ա, գ, զ 2) բ, դ, է 3) ա, գ, է 4) գ, ե, զ

27. Որո՞նք են բաց թողած բառերը.

Որքան _____ է մեդաղի իոնացման էներգիան, այնքան _____ է դրա քիմիական ակտիվությունը:

- 1) մեծ, մեծ 2) փոքր, փոքր 3) փոքր, մեծ 4) փոքր, չնչին

28. Ո՞ր շարքի մետաղներն ունեն արտաքին էներգիական մակարդակի $4s^1$ էլեկտրոնային բանաձևը.

- 1) K, Ca, Ga, Cu 2) K, Ga, Cr, Cu 3) K, Cr, Cu 4) Sc, Ga, Br

29. Ո՞ր շարքի մետաղներն են դասավորված ըստ էլեկտրաբացասականության նվազման.

- 1) Fe, Al, Au 2) Au, Cu, Ag 3) Cu, Ag, Fe 4) Ti, Sc, Ca

30. Ինչպե՞ս են փոխվում ատոմների շառավիղները Na, Mg, Al մետաղների շարքում.

- 1) փոքրանում են, ապա մեծանում 3) մեծանում են, ապա փոքրանում
2) փոքրանում են 4) մեծանում են

31. Ո՞ր շարքի բոլոր պարզ նյութերում է առկա մետաղային կապ.

- 1) Sn, P, Pb 2) Cu, Os, Fe 3) Hf, Pt, Si 4) Na, V, B

32. Ո՞ր շարքի բոլոր մետաղները կփոխազդեն աղաթթվի հետ.

- 1) Sr, Ag, Pb 2) Cu, Ba, Ca 3) Mg, Pt, Sn 4) Mg, Zn, Fe

33. Ո՞ր զույգի կատիոններն են դասավորված ըստ ջրային լուծույթում օքսիդացնող ուժի նվազման.

- 1) H^+ և Mg^{2+} 2) Mg^{2+} և Fe^{2+} 3) Cu^{2+} և Au^{2+} 4) H^+ և Hg^{2+}

34. Ո՞ր շարքի զույգ նյութերի փոխազդեցությունից մետաղի օքսիդացման աստիճանը կմեծանա.

- ա) Cu_2S և O_2 բ) FeS և HCl գ) FeS_2 և O_2 դ) Fe_3O_4 և CO
 1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) ա, գ

35. Հետևյալ աղերից որո՞նք կարելի է ստանալ մետաղի և համապատասխան նոսր թթվի փոխազդեցությունից.

- ա) $Fe_2(SO_4)_3$ բ) $AlCl_3$ գ) $CuBr_2$ դ) $AgNO_3$
 1) ա, բ, գ 2) ա, գ, դ 3) բ, գ 4) բ, դ

2.1.1. Մետաղական կապ: Մետաղներ: I-III խմբի գլխավոր ենթախմբի և բոլոր երկրորդական ենթախմբերի մետաղների բնութագիրը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	1	13	3	25	2
2	2	14	3	26	1
3	3	15	2	27	3
4	1	16	3	28	3
5	4	17	2	29	4
6	4	18	2	30	2
7	1	19	2	31	2
8	2	20	4	32	4
9	3	21	3	33	1
10	4	22	4	34	4
11	2	23	1	35	4
12	3	24	3		

2.1.2. Ալկալիական մետաղներ, ֆիզիկական և քիմիական հատկությունները


1. Ո՞րն է աղերից ալկալիական մետաղների ստացման հիմնական եղանակը.

- 1) ջերմային քայքայումը
2) հալույթի էլեկտրոլիզը
3) լուծույթի էլեկտրոլիզը
4) հիդրոլիզը

2. Բոցը դեղին գունավորող մետաղի ո՞ր աղը աղաթթվով մշակելիս կանջատվի 50 % զանգվածային բաժնով ծծումբ պարունակող օքսիդ.

- 1) Na_2SO_4 2) K_2SO_3 3) Na_2SO_3 4) KHSO_3

3. Ո՞րն է A նյութի բանաձևը փոխարկումների հետևյալ շղթայում.



- 1) N_2 2) CO 3) CO_2 4) CH_4

4. Ի՞նչ զանգվածով (գ) լուծույթ կստացվի 4,6 գ նատրիումի և 100 գ ջրի փոխազդեցությունից.

- 1) 104,0 2) 104,2 3) 104,4 4) 104,6

5. Ո՞ր նյութը կգոյանա 5,6 % զանգվածային բաժնով կալիումի հիդրօքսիդի 200 գ լուծույթի մեջ 6,72 լ (ն. պ.) ածխածնի(IV) օքսիդ անցկացնելիս.

- 1) CH_3COOK 2) KHCO_3 3) HCOOK 4) K_2CO_3

6. Բոցը մանուշակագույն գունավորող մետաղի ո՞ր աղը աղաթթվով մշակելիս կանջատվի 50 % զանգվածային բաժնով ծծումբ պարունակող օքսիդ.

- 1) K_2SO_4 2) K_2SO_3 3) Na_2SO_3 4) K_2S

7. Հետևյալ մետաղներից որո՞նք կփոխազդեն ազոտի հետ.

- ա) Na բ) Mg գ) Ag դ) Cu
1) ա, բ 2) բ, գ 3) ա, դ 4) գ, դ

8. Ի՞նչ նյութեր են առաջանում ալկալիական ու հողալկալիական մետաղների և ջրի փոխազդեցությունից.

- 1) աղ և թթվածին 3) աղ և ջրածին
2) օքսիդ և ջրածին 4) ալկալի և ջրածին

9. Հետևյալ հիմնային օքսիդներից ո՞րը կփոխազդի ջրի հետ.

- 1) K_2O 2) Ag_2O 3) CuO 4) FeO

10. Կալիումի քլորիդի և քլորատի σ գ զանգվածով հավասարամոլային խառնուրդը տաքացրել են բաց անոթում MnO_2 կատալիզատորի առկայությամբ, և ստացել են b գ պինդ մնացորդ: Ո՞րն է զանգվածների փոխհարաբերությունը.

- 1) $a = b$ 2) $b > a$ 3) $a > b$ 4) $b \gg a$

11. Ո՞ր շարքի նյութերն են առաջանում նատրիումի հիդրօքսիդի սառը լուծույթի մեջ քլոր անցկացնելիս.

- 1) $NaCl$ և $NaClO$ 3) $NaCl$ և $NaClO_3$
2) $NaCl$ և H_2O 4) $NaClO_3$ և H_2

12. Ո՞րն է կերակրի աղի ջրային լուծույթի էլեկտրոլիզն ավարտվելուց հետո լուծույթում ստացված նյութի բանաձևը.

- 1) H_2O 2) $NaCl$ 3) $NaOH$ 4) HCl

13. Ո՞ր նյութի ջրային լուծույթի էլեկտրոլիզի ընթացքում է տեղի ունենում ջրի անոդային օքսիդացում.

- 1) $CaBr_2$ 2) $NaCl$ 3) $NaNO_3$ 4) KCl

14. Ո՞ր գույզ նյութերը կանջատվեն իներտ էլեկտրոդների վրա կալիումի նիտրատի ջրային լուծույթի էլեկտրոլիզից.

- 1) KOH և H_2 2) K և H_2 3) KOH և O_2 4) H_2 և O_2

15. Հետևյալ աղերից որի՞ լուծույթը կպարունակի առավել մեծ քանակությամբ հիդրօքսոնիում իոններ.

- 1) K_2SO_4 2) K_2CO_3 3) NH_4Cl 4) K_3PO_4

16. Հետևյալ նյութերից համապատասխան պայմաններում որո՞նք կփոխազդեն ալյումինի օքսիդի հետ.

- ա) K_2SO_4 բ) H_2O գ) KOH դ) Na_2CO_3
1) ա, բ 2) գ, դ 3) ա, գ 4) բ, դ

17. Ո՞ր պնդումներն են ճիշտ բոլոր ալկալիական մետաղների վերաբերյալ.

- ա) s-տարրեր են
բ) դյուրահալ և ծանր մետաղներ են
գ) միացություններում ցուցաբերում են +1 օքսիդացման աստիճան
դ) թթվածնում այրվելով՝ առաջացնում են X_2O բանաձևով նյութեր
ե) ատոմների արտաքին էներգիական մակարդակում առկա է մեկ էլեկտրոն
1) ա, բ, դ 2) ա, գ, ե 3) բ, գ, դ 4) գ, դ, ե

18. Ո՞րն է առավել ակտիվ մետաղի էլեկտրոնային բանաձևը.

- 1) $1s^2 2s^2 2p^6 3s^1$ 2) $1s^2 2s^1$ 3) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^1$ 4) $1s^2 2s^2$

19. Ո՞ր շարքի նյութերն են ստացվում ալկալիական մետաղների նիտրիդների և ջրի փոխազդեցությունից.

- 1) ալկալի և ջրածին
2) ալկալի և ամոնիակ
3) ալկալի և ազոտ
4) աղ և ջրածին

20. Ջրային լուծույթում դ՞ր նյութի և նատրիումի հիդրօքսիդի փոխազդեցությունից կգոյանա նատրիումի սուլֆիտ.

- 1) SO_3 2) H_2SO_4 3) H_2S 4) SO_2

21. Հետևյալ աղերից որը կքայքայվի համեմատաբար ցածր ջերմաստիճանում.

- 1) $NaHCO_3$ 2) $NaClO_3$ 3) $NaNO_3$ 4) Na_2SO_3

22. Ո՞րն է բարիումի քլորիդի լուծույթի և անհրաժեշտ քանակով նատրիումի հիդրօքսիդի փոխազդեցության հետևանքով առաջացած նստվածքի հեռացումից հետո լուծույթում մնացած նյութերի մոլային զանգվածների գումարային թիվը.

- 1) 36,5 2) 58,5 3) 95 4) 233

23. Ինչ աղեր կառաջանան լուծույթում CO , CO_2 , O_2 և NO_2 գազերի հավասարամոլային խառնուրդը ավելցուկով կալիումի հիդրօքսիդի լուծույթի մեջ անցկացնելիս.

- 1) $KHCO_3$ և KNO_3
2) KNO_3 և K_2CO_3
3) KNO_2 և $KHCO_3$
4) KNO_3 և $HCOOK$

24. Հետևյալ մետաղներից որը չի ստացվի ալյումինաջերմային եղանակով.

- 1) Cr 2) Mn 3) Fe 4) Na

25. Ո՞ր նյութը չի փոխազդի նատրիումի հիդրօքսիդի հետ.

- 1) NH_4Cl 2) $NaNO_3$ 3) $NaHCO_3$ 4) NaHS

26. Որքան է նատրիումի օքսիդի և ջրի միացման ռեակցիայի հավասարման գործակիցների գումարը.

- 1) 4 2) 3 3) 6 4) 5

27. Համապատասխանեցրե՞ք հայտանյութը և ակալալու լուծույթում դրա գունավորումը.

Հայտանյութ	Գույնը ակալալու ջրային լուծույթում
1) լակմուս	ա) դեղին
2) ֆենոլֆտալեին	բ) կապույտ
3) մեթիլնարնջագույն	գ) մորու կարմիր դ) անգույն

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1գ, 2ա, 3բ 2) 1բ, 2գ, 3ա 3) 1բ, 2ա, 3ա 4) 1ա, 2բ, 3գ

28. Ո՞ր միափուլ փոխարկումն է հնարավոր իրագործել սենյակային ջերմաստիճանում՝ ակալալու ջրային լուծույթ կիրառելով.

- 1) $\text{NaCl} \rightarrow \text{Na}_2\text{CO}_3$ 3) $\text{Al}(\text{OH})_3 \rightarrow \text{Al}_2\text{O}_3$
 2) $\text{CH}_3\text{COONa} \rightarrow \text{CH}_4$ 4) $\text{CuSO}_4 \rightarrow \text{Cu}(\text{OH})_2$

29. Ինչ զանգվածով (գ) կալիումի օքսիդի կհամապատասխանի 4 % պոտաշ պարունակող 3 կգ մոխիրը.

- 1) 81,74 2) 94,74 3) 138,05 4) 120,00

30. Ցեզիումի ատոմի վալենտային էլեկտրոնը գլխավոր և օրբիտալային քվանտային թվերի ինչ արժեքներով է բնութագրվում.

- 1) 6 և 3 2) 6 և 0 3) 6 և 5 4) 6 և 1

31. Ո՞ր ուրվագրերն են համապատասխանում $\text{H}^+ + (\text{OH})^- = \text{H}_2\text{O}$ կրճատ իոնային հավասարմանը.

- ա) $\text{NaOH} + \text{CH}_3\text{COOH} \rightarrow$ գ) $\text{CsOH} + \text{HNO}_3 \rightarrow$
 բ) $\text{KOH} + \text{HClO}_4 \rightarrow$ դ) $\text{NH}_4\text{OH} + \text{HCl} \rightarrow$
 1) ա, բ 2) ա, դ 3) բ, գ 4) գ, դ

32. Ո՞ր նյութերի և կալիումի հիդրօքսիդի փոխազդեցության ռեակցիան է միացման.

- ա) CuSO_4 բ) P_2O_5 գ) SO_2 դ) N_2O
 1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) ա, դ

33. Ինչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին կանջատվի 0,5 մոլ կալիումի պերօքսիդի և ավելցուկով ածխածնի(IV) օքսիդի փոխազդեցությունից.

- 1) 8,4 2) 5,6 3) 2,8 4) 1,12

34. Ինչ նյութ(եր) է(են) անջատվում անոդի վրա նատրիումի հիդրօքսիդի հալույթի էլեկտրոլիզից.

- 1) միայն ջուր
2) միայն թթվածին
3) ջուր և թթվածին
4) մետաղական նատրիում

35. Համապատասխանեցրե՛ք աղի անվանումը և հիդրոլիզի առաջին փուլի կրճատ իոնային հավասարումը.

Անվանում	Հավասարում
ա) նատրիումի սուլֆիտ	1) $\text{SO}_3^{2-} + \text{H}_2\text{O} = \text{HSO}_3^- + \text{OH}^-$
բ) նատրիումի սուլֆիդ	2) $\text{CO}_3^{2-} + \text{H}_2\text{O} = \text{HCO}_3^- + \text{OH}^-$
գ) նատրիումի կարբոնատ	3) $\text{HSO}_3^- + \text{H}_2\text{O} = \text{H}_2\text{SO}_3 + \text{OH}^-$
	4) $\text{HCO}_3^- + \text{H}_2\text{O} = \text{H}_2\text{CO}_3 + \text{OH}^-$
	5) $\text{S}^{2-} + \text{H}_2\text{O} = \text{HS}^- + \text{H}^+$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ1, գ4
2) ա1, բ3, գ5
3) ա3, բ5, գ4
4) ա1, բ5, գ2

36. Ո՞ր միացության ջրային լուծույթի և կալիումի հիդրօքսիդի փոխազդեցությունից նստվածք կանջատվի.

- 1) NaCl
2) NH_4Cl
3) CuCl_2
4) BaCl_2

37. Ո՞ր նյութի հետ չի փոխազդի կալիումի կարբոնատը ջրային լուծույթում.

- 1) ազոտական թթվի
2) նատրիումի սուլֆատի
3) ածխածնի(IV) օքսիդի
4) աղաթթվի

38. Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի ելանյութերը և վերջանյութերը.

Ելանյութ	Վերջանյութ
ա) $\text{NaOH} + \text{CO}_2$ (ալկոլոլ)	1) $2\text{NaOH} + \text{H}_2$
բ) 2NaOH (ալկոլոլ) + CO_2	2) $\text{Na}_2\text{CO}_3 + \text{H}_2\text{O}$
գ) $2\text{Na} + 2\text{H}_2\text{O}$	3) NaHCO_3
դ) $\text{NaOH} + \text{HCl}$	4) $\text{NaCl} + \text{H}_2\text{O}$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ2, գ1, դ4
2) ա3, բ2, գ4, դ1
3) ա2, բ1, գ3, դ4
4) ա1, բ2, գ3, դ4

39. Միացություններում ինչ օքսիդացման աստիճան են ցուցաբերում ալկալիական մետաղները.

- 1) -1
2) +1
3) +2
4) +3

40. Ինչպիսիք քիմիական կապ կառաջանա 11 և 9 կարգաթվերով տարրերի ատոմների միջև.

- 1) կովալենտային բևեռային
- 2) կովալենտային ոչ բևեռային
- 3) իոնային
- 4) մետաղային

41. Քիմիական ռեակցիաների որ դասին է պատկանում կալիումի և ջրի փոխազդեցության ռեակցիան.

- 1) միացման, ջերմակլանիչ
- 2) տեղակալման, ջերմակլանիչ
- 3) տեղակալման, ջերմանջատիչ
- 4) միացման, ջերմանջատիչ

42. Ո՞ր շարքում են սովորական պայմաններում ազոտի հետ փոխազդող ալկալիական մետաղի նշանը և ստացվող միացության հարաբերական մոլեկուլային զանգվածը.

- 1) Li և 35
- 2) Na և 83
- 3) K և 130
- 4) Rb և 269

43. Ո՞ր շարքի բոլոր օքսիդները կփոխազդեն կալիումի հիդրօքսիդի հետ.

- 1) CuO, SiO₂, TiO, Ag₂O
- 2) Al₂O₃, P₂O₅, SO₃, ZnO
- 3) P₂O₃, NO, K₂O, Al₂O₃
- 4) N₂O, CO, CuO, MnO₂

44. Ինչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ կառաջանա 9,2 գ նատրիումը ջրում լուծելիս.

- 1) 8
- 2) 12
- 3) 16
- 4) 32

2.1.2. Ալկալիական մետաղներ, ֆիզիկական և քիմիական հատկությունները

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	16	2	31	3
2	3	17	2	32	2
3	3	18	1	33	2
4	3	19	2	34	3
5	2	20	4	35	4
6	2	21	1	36	3
7	1	22	3	37	2
8	4	23	2	38	1
9	1	24	4	39	2
10	3	25	2	40	3
11	1	26	1	41	3
12	3	27	2	42	1
13	3	28	4	43	2
14	4	29	1	44	3
15	3	30	2		

**2.1.3. Հողալկալիական մետաղներ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները:
Ջրի կոշտությունը և դրա վերացման եղանակները**

1. Հետևյալ մետաղներից որոնք են հողալկալիական.

- ա) Be բ) Mg գ) Ca դ) Sr ե) Ba զ) Ra
 1) ա, բ, ե 2) ա, բ, գ, դ 3) գ, դ, ե, զ 4) բ, գ, ե

2. Կալցիումի հիդրօքսիդ պարունակող հետևյալ համակարգերից որի անվանումն է կրակաթ.

- 1) թափանցիկ ջրային լուծույթը
 2) ջրային սուսպենզիան
 3) խառնուկը կաթում
 4) կալցիումի օքսիդի հետ չոր խառնուրդը

3. Կալցիումի կարբոնատի ջրային սուսպենզիան թափանցիկ լուծույթի վերածելու համար հետևյալ նյութերից որոնք պետք է օգտագործել.

- ա) CO₂ բ) NaOH գ) HCl դ) CO ե) K₂CO₃ զ) HNO₃
 1) ա, գ, զ 2) ա, գ, ե 3) ա, դ 4) գ, զ

4. Հետևյալ ռիզոնանսները կարող են համատեղ գոյություն ունենալ միևնույն ջրային լուծույթում.

- 1) Ca²⁺ և SO₃²⁻ 2) Ca²⁺ և PO₄³⁻ 3) Mg²⁺ և CO₃²⁻ 4) Mg²⁺ և HCO₃⁻


5. Քանի տոկոսով կնվազի կալցիումի կարբոնատի զանգվածը այն 1000 °C-ում շիկացնելիս.

- 1) 40 2) 22 3) 44 4) 100

6. Հետևյալ իոններից որն է մտնում քլորոֆիլի մոլեկուլի բաղադրության մեջ.

- 1) Fe²⁺ 2) Mg²⁺ 3) Co²⁺ 4) Zn²⁺

7. Ինչ գործընթաց է արտահայտում հետևյալ ուրվագիրը.



- 1) ջրի մանրէագերծում 3) ջրի կոշտության ավելացում
 2) ջրի գունավորում 4) ջրի կոշտության վերացում

8. Ո՞րն է հողալկալիական մետաղների ատոմների արտաքին էներգիական մակարդակի էլեկտրոնային բանաձևը.

- 1) 1s² 2) ns² 3) ns²np² 4) ns²np⁶nd²

9. Հետևյալ նյութերից որոնց հետ կարող է փոխազդել կալցիումը.

- ա) H_2 բ) H_2O գ) S դ) $Ca(OH)_2$ ե) HCl զ) CO
1) ա, բ, գ, դ 2) բ, գ, զ 3) գ, դ, ե 4) ա, բ, գ, ե

10. Ինչ նյութեր են առաջանում կալցիումի հիդրիդի և ջրի փոխազդեցությունից.

- 1) աղ և ջուր 3) ալկալի և ջրածին
2) աղ և ջրածին 4) ալկալի և թթվածին

11. Հետևյալ նյութերից որը կարող է լուծվել նատրիումի հիդրօքսիդի ջրային լուծույթում.

- 1) $Ca(OH)_2$ 2) $Zn(OH)_2$ 3) $Ba(OH)_2$ 4) $Fe(OH)_2$

12. Ո՞ր նյութն(երն) է (են) ստացվում բարիումի օքսիդի և ջրի փոխազդեցությունից.

- 1) ալկալի և ջրածին 3) աղ և թթվածին
2) ալկալի և թթվածին 4) միայն ալկալի

13. Փոխարկումների հետևյալ շղթայում X նյութը կարող է լինել.



- 1) $Mg(OH)_2$ 2) MgO 3) $MgSO_4$ 4) Mg

14. Հետևյալ նյութերից որի հետ է փոխազդում կալցիումի հիդրօքսիդը.

- ա) CO_2 բ) HNO_3 գ) KCl դ) $Mg(OH)_2$ ե) Cl_2 զ) Na_2CO_3
1) ա, դ, գ, ե 2) գ, դ, ե, զ 3) բ, գ, դ, զ 4) ա, բ, ե, զ

15. Հետևյալ մետաղներից որը չեն ստանում ալյումինաջերմային եղանակով.

- 1) W 2) Cr 3) Fe 4) Ca

16. Հետևյալ որ զույգ նյութերի լուծույթներն իրար խառնելիս նստվածք կառաջանա.

- ա) NaOH և HCl գ) Na_2CO_3 և $CaCl_2$
բ) $BaCl_2$ և Na_2SO_4 դ) $Ba(NO_3)_2$ և KOH
1) բ, գ 2) բ, դ 3) ա, դ 4) ա, բ

17. Ինչ նյութեր են առաջանում կալցիումի կարբիդի և ջրի փոխազդեցությունից.

- 1) $Ca(OH)_2$ և C_2H_2 3) $Ca(OH)_2$ և H_2
2) $Ca(OH)_2$ և CH_4 4) CaO և CO_2

18. Ինչ նյութեր են անջատվում էլեկտրոդների վրա բարիումի նիտրատի ջրային լուծույթի էլեկտրոլիզի ժամանակ.

- 1) Ba և NO_2 2) Ba և H_2 3) H_2 և O_2 4) O_2 և NO_2

19. Ֆոսֆորական պարարտանյութերի որակի համեմատումը կատարում են՝ ըստ դրանցում ֆոսֆորի(V) օքսիդի «պարունակության»: Որքան է ֆոսֆորի(V) օքսիդի զանգվածային բաժինը(%) կալցիումի երկհիդրոֆոսֆատում՝ $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2$.

- 1) 30,3 2) 47,9 3) 45,8 4) 60,7

20. Հետևյալ օքսիդներից որոնք կարող են փոխազդել.

- ա) BaO և CrO_3 գ) MgO և Na_2O
բ) MgO և CrO դ) BaO և SiO_2
1) ա, բ 2) բ, գ 3) ա, դ 4) գ, դ

21. Ինչ զանգվածով (գ) ջուր կծախսվի 28 գ չհանգած կիրը «հանգցնելու» համար.

- 1) 5 2) 7 3) 9 4) 8

22. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի 2 մոլ մագնեզիումի կարբոնատի և ավել-ցուկով վերցրած աղաթթվի փոխազդեցությունից.

- 1) 22,4 2) 33,6 3) 44,8 4) 56

23. Ո՞ր պնդումներն են ճիշտ.

- ա) կրաջուրը կալցիումի հիդրօքսիդի թափանցիկ լուծույթն է
բ) կրաջուր է կոչվում կալցիումի հիդրօքսիդի սպիտակ սուսպենզիան
գ) կալցիումի օքսիդի և ջրի փոխազդեցությունն անվանում են կրի մարում
1) ա, բ 2) բ, գ 3) ա, գ 4) ա, բ, գ


24. Ո՞րն է 60 գ սիլիցիումի(IV) օքսիդի և 48 գ մագնեզիումի փոխազդեցությունից առաջացած խառնուրդը ջրի հետ տաքացնելիս ստացված նոր նյութի բանաձևը.

- 1) MgO 2) SiH_4 3) $\text{Mg}(\text{OH})_2$ 4) H_2SiO_3

25. Ինչ զանգվածով (գ) կեսջրյա գիպս կարելի է ստանալ 258 գ բնական գիպսի մասնակի ջրազրկումից.

- 1) 136 2) 204,5 3) 217,5 4) 290

26. Ո՞րն է կալցիում պարունակող X_1 և X_2 նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարային թիվը փոխարկումների հետևյալ շղթայում.



27. Հետևյալ նյութերից որի օգնությամբ է հնարավոր վերացնել ջրի մնայուն կոշտությունը.

- 1) Na_2SO_4 2) NaCl 3) Na_3PO_4 4) NaNO_3

28. Ո՞ր աղով պայմանավորված է ջրի մնայուն կոշտությունը.

- 1) MgSO_4 2) CaSO_4 3) CaCl_2 4) $\text{Ca}(\text{HCO}_3)_2$

29. Ինչ զանգվածով (գ) «մեռած» գիպս կստացվի 344 գ բնական գիպսից.

- 1) 136 2) 204 3) 272 4) 290

30. Ո՞ր մետաղի 19,2 գ զանգվածով նմուշը կփոխազդի 8,96 լ (ս. պ.) թթվածնի հետ՝ օքսիդ առաջացնելով.

- 1) բարիում 2) մագնեզիում 3) ստրոնցիում 4) կալցիում

31. Որքան է $\text{Ca}(\text{HCO}_3)_2 + \text{Ca}(\text{OH})_2 \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման աջ մասում նյութերի քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

32. Որքան է $\text{Mg} + \text{Nb}_2\text{O}_5 \xrightarrow{t} \dots\dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 8 2) 6 3) 14 4) 13

33. Որո՞նք են բաց թողած բառերը.

Երկրորդ խմբի գլխավոր ենթախմբի տարրերի հիդրօքսիդների հիմնային հատկություններն ապոմային համարի մեծացմանը զուգընթաց ուժեղանում են, քանի որ R-O-H մոլեկուլներում R-ի շառավիղը _____ է, և R-O կապի էներգիան _____ է:

- 1) մեծանում, փոքրանում 3) փոքրանում, փոքրանում
2) մեծանում, մեծանում 4) փոքրանում, մեծանում

34. Ինչ քանակով (մոլ) պրոտոն է առկա տարրի օքսիդի մեկ մոլում, եթե այդ տարրի ատոմի միջուկում պարունակվում է 12 պրոտոն.

- 1) 23 2) 21 3) 20 4) 27

35. Ինչ գույնով են ներկում բոցը համապատասխանաբար նատրիումի, կալիումի և կալցիումի միացությունները.

- 1) դեղին, մանուշակագույն, աղյուսակարմիր
2) մանուշակագույն, դեղին, աղյուսակարմիր
3) դեղին, աղյուսակարմիր, մանուշակագույն
4) դեղին, մանուշակագույն, դեղնականաչ

36. Հետևյալ նյութերից որի օգնությամբ է հնարավոր տարբերել կալցիումի կարբոնատի, կալցիումի օքսիդի և կալցիումի սուլֆատի սպիտակ փոշիները.

- 1) աղաթթվի
2) ջրի
3) լակմուսի
4) NaOH-ի ջրային լուծույթի

37. Որքան է $\text{Ca} + \text{N}_2 \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 6
2) 3
3) 4
4) 5

38. Ո՞րն է $\text{Ca} + \text{C} \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի արգասիքի մեկ մոլեկուլում ոչ բևեռային կովալենտային կապերի թիվը.

- 1) 6
2) 3
3) 4
4) 5

39. Համապատասխանեցրե՞ք միացությունների տեխնիկական անվանումները և քիմիական բանաձևերը.

Անվանումներ	Բանաձևեր
ա) բնական գիպս	1) $\text{CaSO}_4 \cdot 0,5\text{H}_2\text{O}$
բ) մեռած գիպս	2) $\text{CaSO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$
գ) կեսջրյա գիպս	3) CaSO_4

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ1, գ3
2) ա2, բ3, գ1
3) ա3, բ1, գ2
4) ա3, բ2, գ1

40. 14,2 գ զանգվածով հետևյալ աղերից որն է պարունակում $9,03 \cdot 10^{23}$ ատոմ.

- 1) $(\text{HCOO})_2\text{Mg}$
2) $(\text{HCOO})_2\text{Ca}$
3) $(\text{CH}_3\text{COO})_2\text{Mg}$
4) $(\text{CH}_3\text{COO})_2\text{Ca}$

41. Ջրի և հետևյալ նյութերից որի փոխազդեցությունից կգոյանա ամենաթեթև գազը.

- 1) Ca_3N_2
2) Ca_3P_2
3) CaC_2
4) CaH_2

42. Ինչ զանգվածով (գ) Ca^{2+} -իոններն են պարունակվում կալցիումի նիտրատի լուծույթի մեկ լիտրում, որի 100 միլիլիտրը 0,2 մոլ աղ է պարունակում.

- 1) 8
2) 18
3) 28
4) 80

43. Արդյունաբերության մեջ ինչ եղանակով են ստանում հողալկալիական մետաղները.

- 1) ալյումինաջերմային
2) ջրամետաղարտադրական
3) էլեկտրամետաղարտադրական
4) մետաղաջերմային

44. Հետևյալ աղերից որի՞ բաղադրության մեջ է քլորի զանգվածային բաժինն առավել մեծ.

- 1) $MgCl_2$ 2) $CaCl_2$ 3) $SrCl_2$ 4) $BaCl_2$

45. Ո՞րն է բարիումի ատոմի վալենտային շերտի էլեկտրոնային բանաձևը.

- 1) $3s^23p^64s^2$ 2) $4s^24p^64d^2$ 3) $5s^2$ 4) $6s^2$

46. Ինչպե՞ս է փոխվում հողալկալիական մետաղների վերականգնող հատկությունը կարգաթվի աճմանը զուգընթաց.

- 1) թուլանում է 3) նախ փոքրանում է, ապա մեծանում
2) ուժեղանում է 4) նախ մեծանում է, ապա փոքրանում

**2.1.3. Հողալկալիական մետաղներ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները:
Ջրի կոշտությունը և դրա վերացման եղանակները**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	17	1	33	1
2	2	18	3	34	3
3	1	19	4	35	1
4	4	20	3	36	1
5	3	21	3	37	4
6	2	22	3	38	2
7	4	23	3	39	2
8	2	24	3	40	3
9	4	25	3	41	4
10	3	26	4	42	4
11	2	27	3	43	3
12	4	28	4	44	1
13	2	29	3	45	4
14	4	30	2	46	2
15	4	31	3		
16	1	32	4		

2.1.4. Ալյումին և երկաթ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները

- Ո՞ր կատիոնի էլեկտրոնային բանաձևն է $1s^2 2s^2 2p^6$.
1) B^{3+} 2) Al^{3+} 3) Fe^{3+} 4) Ga^{3+}
- Որքան է զանգվածի կորուստը (%) ալյումինի հիդրօքսիդը շիկացնելիս.
1) 17,6 2) 34,6 3) 65,4 4) 100
- Ո՞ր նյութն է անջատվում անոդի վրա երկաթի(III) քլորիդի ջրային լուծույթի էլեկտրոլիզի ընթացքում.
1) թթվածին 2) երկաթ 3) քլոր 4) ջրածին
- Ինչ ծավալով (լ, ն. ս.) գազ կստացվի 13,5 գ ալյումինի և ավելցուկով վերցրած ալկալու լուծույթի փոխազդեցությունից.
1) 8,4 2) 11,2 3) 16,8 4) 22,4
- Որքան է B^- անիոնում տարրերի հարաբերական ատոմային զանգվածների գումարը՝ ըստ $Al(OH)_3 + B^- = AlO_2^- + 2H_2O$ կրճատ իոնային հավասարման.
1) 16 2) 17 3) 32 4) 34
- Ինչ ծավալով (լ, ն. ս.) քլորի հետ կարող է միանալ 14 գ երկաթը տաքացման պայմաններում.
1) 1,4 2) 2,8 3) 5,6 4) 8,4
- Ո՞ր տարրն ունի $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 3d^6 4s^2$ էլեկտրոնային բանաձևը.
1) Fe 2) Mn 3) Co 4) Ni
- Ո՞ր զույգ նյութերի փոխազդեցության է համապատասխանում հետևյալ կրճատ իոնային հավասարումը. $H^+ + Al(OH)_3 = Al^{3+} + 3H_2O$.
1) $Al(OH)_3 + H_2CO_3$ 3) $Al(OH)_3 + HCl$
2) $Al(OH)_3 + H_2SiO_3$ 4) $Al(OH)_3 + H_2S$
- Ջրային լուծույթում որ նյութի և երկաթի միջև է ընթանում տեղակալման ռեակցիա.
1) $CuSO_4$ 2) $MgSO_4$ 3) $CaCl_2$ 4) KNO_3

10. Ինչ նյութեր են առաջանում ալյումինի կարբիդի հիդրոլիզից.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) $Al(OH)_3$ և C_2H_6 | 3) $Al(OH)_3$ և C_2H_2 |
| 2) Al_2O_3 և CH_4 | 4) $Al(OH)_3$ և CH_4 |

11. Ո՞ր նյութը կփոխազդի երկաթի(III) սուլֆատի ջրային լուծույթի հետ.

- | | |
|-----------------------|---------------------|
| 1) երկաթի(III) օքսիդը | 3) քլորը |
| 2) երկաթը | 4) պղնձի(II) օքսիդը |


12. Ալյումինի և ալյումինի օքսիդի a գ խառնուրդը տաքացրել են բաց տիգելի մեջ և նորից կշռել: Պինդ մնացորդի զանգվածը կազմել է b գ: Ինչպիսին է այդ զանգվածների հարաբերակցությունը.

- | | | | |
|------------|------------|------------|--------------|
| 1) $a = b$ | 2) $a > b$ | 3) $a < b$ | 4) $a \gg b$ |
|------------|------------|------------|--------------|

13. Ո՞ր իներտ գազը և Al^{3+} կատիոնն ունեն նույն էլեկտրոնային բանաձևը.

- | | | | |
|-------|-------|-------|-------|
| 1) He | 2) Ne | 3) Ar | 4) Kr |
|-------|-------|-------|-------|

14. Որքան է քանակաչափական գործակիցների գումարը հետևյալ ուրվագրով օքսիդացման-վերականգնման ռեակցիայում.



- | | | | |
|------|------|------|------|
| 1) 9 | 2) 8 | 3) 4 | 4) 5 |
|------|------|------|------|

15. Ո՞ր պնդումն է սխալ ալյումինի օքսիդի վերաբերյալ.

- 1) լուծվում է ջրում
- 2) փոխազդում է նոսր թթուների հետ
- 3) երկդիմի է
- 4) ստացվում է $Al(OH)_3$ -ի ջերմային քայքայումից

16. Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների ելանյութերը և վերջանյութերը.

Ելանյութ	Վերջանյութ
ա) $Al_4C_3 + H_2O$	1) $AlCl_3 + CCl_4$
բ) $Al_4C_3 + HCl$	2) $AlCl_3 + H_2$
գ) $Al_2O_3 + HCl$	3) $Al(OH)_3 + CH_4$
դ) $Al + HCl$	4) $AlCl_3 + CH_4$
	5) $AlCl_3 + H_2O$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա5, բ1, գ2, դ3 | 3) ա3, բ1, գ2, դ5 |
| 2) ա3, բ4, գ5, դ2 | 4) ա5, բ2, գ1, դ4 |

17. Որքան է $\text{FeSO}_4 + \text{KMnO}_4 + \text{H}_2\text{SO}_4 \rightarrow \text{Fe}_2(\text{SO}_4)_3 + \text{K}_2\text{SO}_4 + \text{MnSO}_4 + \text{H}_2\text{O}$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 16 2) 20 3) 36 4) 38

18. Համապատասխանեցրե՛ք նյութերի անվանումները և բանաձևերը.

Անվանում	Բանաձև
ա) շիբ	1) Al_2O_3
բ) կորունդ	2) $\text{Al}_2\text{O}_3 \cdot 2\text{SiO}_2 \cdot 2\text{H}_2\text{O}$
գ) կաոլինիտ	3) $\text{Al}_2\text{O}_3 \cdot n \text{H}_2\text{O}$
դ) բոքսիտ	4) $\text{KAl}(\text{SO}_4)_2 \cdot 12\text{H}_2\text{O}$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.


- 1) ա4, բ2, գ1, դ3 3) ա4, բ1, գ2, դ3
 2) ա3, բ2, գ4, դ1 4) ա2, բ3, գ1, դ4

19. Որքան է հետևյալ ուրվագրով օքսիդացման–վերականգնման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.



- 1) 58 2) 24 3) 26 4) 28

20. Ո՞րն է վերականգնիչ նյութի գործակիցն ըստ հետևյալ ուրվագրով օքսիդացման–վերականգնման ռեակցիայի հավասարման.



- 1) 10 2) 8 3) 6 4) 5

21. Հետևյալ նյութերից որո՞նց հետ փոխազդելիս երկաթի(III) թլորիդը կցուցաբերի օքսիդիչ հատկություններ.

- ա) Fe բ) H_2S գ) Cu դ) NaOH ե) KSCN

- 1) ա, բ, գ 2) բ, գ, դ 3) գ, դ, ե 4) ա, գ, ե

22. Ինչպիսին է ալյումինի թլորիդի ջրային լուծույթի միջավայրը.

- 1) հիմնային 2) թթվային 3) չեզոք 4) թույլ հիմնային

23. Ինչ զանգվածով (գ) $\text{Al}(\text{OH})_3$ պետք է քայքայել 1,02 գ Al_2O_3 ստանալու համար.

- 1) 1,56 2) 2,56 3) 3,56 4) 4,56

24. Որքան է $\text{Cl}_2 + \text{FeCl}_2 \rightarrow \dots\dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 5 2) 3 3) 4 4) 7

25. Ո՞րն է X նյութը $\text{FeCl}_2 \rightarrow X \rightarrow \text{Fe}(\text{NO}_3)_3$ փոխարկումների շղթայում.

- 1) FeO 2) Fe 3) $\text{Fe}(\text{OH})_3$ 4) FeBr_3

26. Որո՞նք են համապատասխանաբար X և Y նյութերը փոխարկումների հետևյալ շղթայում.



- 1) FeCl_2 և FeCl_3 3) $\text{Fe}(\text{NO}_3)_3$ և Fe_2O_3
2) $\text{Fe}(\text{OH})_3$ և Fe_2O_3 4) $\text{Fe}_2(\text{SO}_4)_3$ և FeSO_4

27. Որքան է $\text{Fe} + \text{FeCl}_3 \rightarrow \dots\dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 4 2) 3 3) 6 4) 5

28. Ո՞ր շարքի իոններին է նման ալյումինի իոնն իր էլեկտրոնային կառուցվածքով.

- 1) Cl^- , K^+ , Ca^{2+} 2) Br^- , Na^+ , Mg^{2+} 3) F^- , Na^+ , Mg^{2+} 4) F^- , Na^+ , Ca^{2+}

29. Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ կփոխազդի ալյումինի հիդրօքսիդը.

- 1) CaSO_4 , H_3PO_4 , SO_2 3) CuSO_4 , H_2SO_4 , CO_2
2) NaOH , HNO_3 , H_2SO_4 4) Na_2SO_4 , $\text{Fe}(\text{OH})_3$, P_2O_5

30. Որքան է $\text{Cu} + \text{FeCl}_3 \rightarrow \dots\dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 5 2) 3 3) 4 4) 6

31. Ո՞ր մասնիկի և Fe^{3+} իոնի էլեկտրոնային կառուցվածքներն են նույնը.

- 1) Ar 2) Cr^{2+} 3) Mn^{2+} 4) Br^-

32. Ինչպե՞ս է փոխվում երկաթի օքսիդների հիդրատների հիմնային հատկությունը երկաթի օքսիդացման աստիճանի՝ $\text{Fe}^{+2} \rightarrow \text{Fe}^{+3} \rightarrow \text{Fe}^{+6}$ աճմանը զուգընթաց.

- 1) նախ նվազում է, ապա աճում 3) նվազում է
2) աճում է 4) նախ աճում է, ապա նվազում

33. Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ կփոխազդի երկաթի(III) քլորիդը.

- 1) MgO , HCl , H_2SO_4 3) AgNO_3 , Cu , NaOH
2) Mg , HNO_3 , Cl_2 4) Cu SO_4 , $\text{Ca}(\text{OH})_2$, CO_2

34. Ինչ նյութեր կարող են լինել X-ը և Y-ը փոխարկումների հետևյալ շղթայում.



- 1) FeCl_3 և FeCl_2 3) Fe_2O_3 և $\text{Fe}_2(\text{SO}_4)_3$
2) $\text{Fe}(\text{NO}_3)_3$ և Fe_2O_3 4) $\text{Fe}_2(\text{SO}_4)_3$ և $\text{Fe}(\text{OH})_3$

35. Մետաղներից ո՞րն է միացություններում ցուցաբերում հիմնականում հաստատուն օքսիդացման աստիճան.

- 1) Mn 2) Fe 3) Al 4) Cr

36. Ո՞րը ալյումինի բնական միացությունն է.

- 1) կավը 3) դաշտային սպաթը
2) բոքսիտը 4) դյուրալյումինը

37. Ո՞ր շարքի բոլոր նյութերը կփոխազդեն երկաթի(III) օքսիդի հետ.

- 1) HCl, Al, CuO 3) H₂, NH₃, CH₄
2) CH₄, CO, O₂ 4) H₂SO₄, Na₂CO₃, Cu

38. Ալյումինի և ո՞ր ազդանյութի փոխազդեցությունը ջրածնի անջատմամբ չի ընթանում.

- 1) ջրի 3) ծծմբական թթվի նոսր լուծույթի
2) աղաթթվի 4) խիտ ազոտական թթվի (տաքացնելիս)

39. 2,7 գ ալյումինը լուծել են ավելցուկով վերցրած նատրիումի հիդրօքսիդի լուծույթում և անջատված ջրածինն այրել են քլորի ավելցուկում: Ի՞նչ նյութաքանակով (մոլ) և ո՞ր նյութն է առաջացել.

- 1) 0,1 մոլ H₂ 2) 0,3 մոլ HCl 3) 0,15 մոլ Cl₂ 4) 0,15 մոլ HCl

40. Ջրում չլուծվող երկաթի դեղնասպիտակավուն միացությունը խոնավ օդում արագ օքսիդանում է՝ վերածվելով գորշ նյութի: Ո՞րն է այդ դեղնասպիտակավուն միացության բանաձևը.

- 1) Fe₃O₄ 2) Fe(OH)₂ 3) FeCl₃ 4) Fe₂(SO₄)₃

41. Ո՞ր միացության մեջ է երկաթի զանգվածային բաժինն ամենամեծը.

- 1) FeO 2) Fe₂O₃ 3) FeS 4) Fe₃O₄

42. Ո՞ր նյութի և նոսր ծծմբական թթվի փոխազդեցությունից կառաջանա երկաթի(II) սուլֆատ.

- 1) Fe₂(SO₄)₃ 2) Fe₂O₃ 3) FeCl₃ 4) Fe

43. Ալյումինի քանի՞ ատոմ է պարունակվում 25,5 գ ալյումինի օքսիդում.

- 1) 0,5 2) 6,02 · 10²³ 3) 3,01 · 10²³ 4) 1

44. Ո՞րն է $\text{Al} + \text{H}_2\text{SO}_{4(\text{կ})} \rightarrow \text{SO}_2 + \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի ընթացքում վերականգնման արդյունքում ստացվող նյութի քանակաչափական գործակիցը.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

45. Որքան է $\text{NaAlO}_2 \rightarrow \text{AlCl}_3$ փոխարկմանը համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 10 2) 8 3) 9 4) 5

46. Ո՞րն է երկաթի օքսիդի բանաձևը, եթե դրանում երկաթ տարրի ատոմների մոլային բաժինը 40 % է.

- 1) FeO 2) Fe₃O₄ 3) FeO₃ 4) Fe₂O₃

2.1.4. Այլումին և երկաթ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	17	3	33	3
2	2	18	3	34	1
3	3	19	1	35	3
4	3	20	1	36	4
5	2	21	1	37	3
6	4	22	2	38	4
7	1	23	1	39	2
8	3	24	1	40	2
9	1	25	2	41	1
10	4	26	1	42	4
11	2	27	3	43	3
12	3	28	3	44	2
13	2	29	2	45	3
14	1	30	4	46	4
15	1	31	3		
16	2	32	3		

**2.1.5. Մետաղների ստացման եղանակները: Կոռոզիա:
Համաձուլվածքներ: Չուզուն և պողպատ**

1. Ջրային միջավայրում երկաթը էլեկտրաքիմիական կոռոզիայից պաշտպանելու համար ի՞նչ մետաղի հետ պետք է հպման մեջ դնել.

- 1) Ag 2) Cu 3) Ni 4) Mg

2. Ինչպե՞ս են անվանում պղնձի ստացման եղանակն ըստ հետևյալ ռեակցիայի հավասարման. $Cu_2O + CO = 2Cu + CO_2$.

- 1) ջրամետաղարտադրություն 3) էլեկտրամետաղարտադրություն
2) հրամետաղարտադրություն 4) մետաղաջրային

3. Ո՞ր մետաղի հետ պետք է հպման մեջ դնել երկաթե իրը՝ այն կոռոզիայից պաշտպանելու համար.

- 1) Au 2) Cu 3) Pb 4) Al

4. Ո՞ր մետաղը չի ենթարկվում թթվածնային կոռոզիայի.

- 1) Al 2) Sn 3) Pt 4) Ni



5. Ո՞ր տարրի քանակությամբ է պայմանավորված թուջի և պողպատի հիմնական տարբերությունը.

- 1) C 2) Br 3) Cu 4) Ni

6. Որքան է պղնձի զանգվածային բաժինը (%) բրոնզում, որի 15,18 գ նմուշը (Cu–Sn) աղաթթվով մշակելիս ստացվել է 0,448 Լ ջրածին.

- 1) 16,32 2) 21,08 3) 42,04 4) 84,32

7. Ո՞րն է X նյութը հետևյալ ուրվագրերին համապատասխանող ռեակցիաներում.



- 1) FeO 2) FeCl₂ 3) Fe 4) Fe₂O₃

8. Ո՞ր մետաղներն են ստացվում ալյումինաջերմային եղանակով.

- 1) Cr, V 2) Fe, Na 3) W, K 4) Cu, Li

9. Ո՞ր մետաղի հետ հպումը կնպաստի երկաթի էլեկտրաքիմիական կոռոզիային.

- 1) Mg 2) Al 3) Zn 4) Ni

10. Ո՞ր պնդումը *ճիշտ* է մետաղների կոռոզիայի վերաբերյալ.

- 1) պղնձի հետքեր պարունակող երկաթե իրի կոռոզիան թթվային միջավայրում ուղեկցվում է կաթոդի ջրածնային ապարևեռացմամբ
- 2) պղնձի հետքեր պարունակող երկաթե իրի կոռոզիան չեզոք միջավայրում ուղեկցվում է կաթոդի թթվածնային ապարևեռացմամբ
- 3) երկաթե իրը կոռոզիայից պաշտպանելու համար կիրառում են անագ և կապար
- 4) երկաթե իրը կոռոզիայից պաշտպանելու համար կիրառում են քրոմ և մագնեզիում

11. Ո՞ր մետաղն է հնարավոր ստանալ ջրամետաղարտադրության եղանակով.

- 1) Na
- 2) Ca
- 3) Cu
- 4) Li

12. Ո՞ր նյութը կարելի է օգտագործել օքսիդներից մետաղը վերականգնելու համար.

- 1) H₂O
- 2) Cl₂
- 3) CO₂
- 4) H₂

13. Ո՞ր մետաղը չի կարող կիրառվել կոռոզիայից երկաթի պրոտեկտորային պաշտպանության ժամանակ.

- 1) Zn
- 2) Al
- 3) Cu
- 4) Mg

14. Ինչպե՞ս են անվանում ըստ զանգվածի 80 % պղնձից և 20 % նիկելից կազմված համաձուլվածքը.

- 1) բրոնզ
- 2) մելքիր
- 3) արույր
- 4) մալաքիտ

15. Ո՞ր շարքի մետաղներից յուրաքանչյուրի հետ հպումը կարագացնի երկաթի էլեկտրաքիմիական կոռոզիան.

- 1) Cu, Ni, Zn
- 2) Zn, Mg, Al
- 3) Ag, Ag, Mg
- 4) Cu, Ag, Au

16. Ո՞ր մետաղի հետ հպումը կպաշտպանի երկաթը էլեկտրաքիմիական կոռոզիայից.

- 1) Ag
- 2) Au
- 3) Zn
- 4) Cu

17. Ո՞ր մետաղը կարելի է ստանալ իր օքսիդից հրամետաղարտադրության եղանակով՝ որպես վերականգնիչ օգտագործելով գազային ջրածին.

- 1) Cu
- 2) Ca
- 3) Ba
- 4) Na

18. Որո՞նք են բաց թողած բառակապակցությունները.

Ամենացածր ջերմաստիճանը դոմնային վառարանի _____ մասում է, որտեղ և կադարվում է _____ :

- 1) վերևի, առաջին վերականգնումը
- 2) ներքևի, առաջին վերականգնումը
- 3) ներքևի, վերջին վերականգնումը
- 4) վերևի, վերջին վերականգնումը

19. Ո՞րն է բաց թողած բառը.

Այն հանքանյութերն ու ապարները, որոնք պարունակում են արդյունաբերական սպացման համար պիտանի մետաղներ, անվանում են _____ :

- 1) հանքահորեր
- 2) ջրաքարեր
- 3) հողաքարեր
- 4) հանքաքարեր

20. Համապատասխանեցրե՛ք հրամետաղարտադրության եղանակով մետաղների ստացման ռեակցիաների ելանյութերը և այդ ռեակցիաների հավասարումների քանակաչափական գործակիցների գումարային թիվը.

Երանյութեր	Գործակիցների գումար
1) $WO_3 + H_2$	ա) 6
2) $TiCl_4 + Mg$	բ) 8
3) $Cr_2O_3 + Al$	գ) 4
4) $FeO + C$	դ) 5

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1ա, 2բ, 3գ, 4գ
- 2) 1բ, 2ա, 3ա, 4գ
- 3) 1բ, 2գ, 3ա, 4դ
- 4) 1ա, 2բ, 3գ, 4ա

21. Ո՞ր մետաղի հետ հպումը կարագացնի երկաթի էլեկտրաքիմիական կոռոզիան.

- 1) Mg
- 2) Mn
- 3) Zn
- 4) Ag

22. Ո՞ր նյութերն են օգտագործվում էլեկտրամետաղագործական եղանակով ալյումին ստանալիս.

- 1) ալյումինի հիդրօքսիդ, կրիոլիտ, նիկել
- 2) ալյումինի հիդրօքսիդ, ալկալի, գրաֆիտ
- 3) ալյումինի օքսիդ, կրիոլիտ, գրաֆիտ
- 4) ալյումինի քլորիդ, ջուր, գրաֆիտ

23. Ո՞րն է վերականգնիչի գործակիցը ալյումինաջերմային եղանակով երկաթի հարուկից երկաթի ստացման ռեակցիայի հավասարման մեջ.

- 1) 3
- 2) 6
- 3) 8
- 4) 9

24. Ո՞ր թթվում ամբողջությամբ «կլուծվի» պղնձի և արծաթի համաձուլվածքը.

- 1) նոսր ծծմբական
- 2) ազոտական
- 3) ֆոսֆորական
- 4) ֆտորաջրածնական

25. Երկաթի և հիմնականում դ՞ր տարրի համաձուլվածքն է պողպատը.

- 1) քրոմ
- 2) մոլիբդեն
- 3) ածխածին
- 4) սիլիցիում

26. Ո՞ր գազով հագեցած ջրային լուծույթում երկաթի կոռոզիան կընթանա առավել արագ.

- 1) ջրածին
- 2) թթվածին
- 3) ածխածնի(II) օքսիդ
- 4) ծծմբի(IV) օքսիդ

27. Ո՞ր ուրվագրով ռեակցիայի արդյունքում է ծծմբի պարունակությունը նվազում թուջից պողպատ ստանալիս.

- 1) $FeS + CaSiO_3 \rightarrow$
- 2) $FeS + O_2 \rightarrow$
- 3) $FeS + CO_2 \rightarrow$
- 4) $FeS + SiO_2 \rightarrow$

28. Ի՞նչ դեր է կատարում ալյումինը մետաղների ստացման ալյումինաջերմային եղանակում.

- 1) օքսիդիչի
- 2) վերականգնիչի
- 3) կատալիզատորի
- 4) պրոմոտորի

29. Ո՞ր մետաղը *հնարավոր չէ* ստանալ ալյումինաջերմային եղանակով.

- 1) Na
- 2) Cu
- 3) Fe
- 4) Mn

30. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Թուջը արդյունաբերության մեջ սպանում են _____:

- 1) դոմնային վառարանում
- 2) մարտենյան վառարանում
- 3) ջերմափոխանակիչում
- 4) հպումային սարքում

2.1.5. Մետաղների ստացման եղանակները: Կոռոզիա: Համաձուլվածքներ: Չուգուն և պողպատ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	4	11	3	21	4
2	2	12	4	22	3
3	4	13	3	23	3
4	3	14	2	24	2
5	1	15	4	25	3
6	4	16	3	26	4
7	3	17	1	27	2
8	1	18	1	28	2
9	4	19	4	29	1
10	3	20	2	30	1

2.2. ՈՉՄԵՏԱՂՆԵՐ

2.2.1. Ոչմետաղներ: Ջրածին, ջուր, հալոգեններ

1. Ո՞ր միացություններում է ջրածնի օքսիդացման աստիճանը -1 .

ա) KH բ) CH_4 գ) NH_3 դ) LiH

1) բ, գ 2) ա, դ 3) բ, գ 4) ա, բ

2. Ինչ տարրական մասնիկներ է պարունակում տրիտիումի մեկ ատոմը.

1) 1 պրոտոն և 2 էլեկտրոն 3) 2 պրոտոն և 1 էլեկտրոն
2) 1 պրոտոն, 1 էլեկտրոն և 2 նեյտրոն 4) 1 պրոտոն, 2 էլեկտրոն և 1 նեյտրոն

3. Ջրածնի նմուշը պարունակում է $2,0$ գ ^1H և $4,0$ գ ^2H ատոմներ: Որքան է ջրածնի հարաբերական ատոմային զանգվածն այդ նմուշում.

1) 1,0 2) 1,5 3) 2,0 4) 2,5

4. Ո՞ր պնդումներն են ճիշտ ոչմետաղային տարրերի վերաբերյալ.

ա) դրսևորում են միայն օքսիդիչ հատկություն
բ) դրսևորում են միայն վերականգնիչ հատկություն
գ) դրսևորում են վերօքս երկակիություն՝ բացառությամբ ֆտորի
դ) ոչմետաղային տարրերին համապատասխանող պարզ նյութերը լինում են ն՝ գազային, ն՝ հեղուկ, ն՝ պինդ ագրեգատային վիճակներում

1) ա, բ 2) ա, գ 3) բ, դ 4) գ, դ

5. Ո՞րն է Տիեզերքում ամենատարածված տարրը.

1) թթվածինը 2) ջրածինը 3) ածխածինը 4) ազոտը

6. Ինչպե՞ս է փոխվում ջրածին տարրի մոլային բաժինը երկրորդ պարբերության (լիթիումից ֆտոր) տարրերի ջրածնային միացություններում.

1) մեծանում է 3) նախ մեծանում է, ապա փոքրանում
2) փոքրանում է 4) նախ փոքրանում է, ապա մեծանում

7. Որո՞նք են մոլեկուլային բյուրեղավանդակով միացություններ.

ա) LiH բ) CH_4 գ) NH_3 դ) CaH_2 ե) H_2S զ) NaH

1) ա, բ, գ 2) ա, դ, գ 3) բ, գ, ե 4) դ, ե, գ

8. Որո՞նք են ատոմային բյուրեղավանդակով պարզ նյութեր.

- ա) $C_{\text{ալմաստ}}$ գ) S_8 ե) I_2 է) $P_{\text{կարմիր}}$
բ) P_4 դ) Si զ) B լ) Br_2

- 1) բ, գ, է, լ 2) ա, դ, գ, է 3) բ, դ, գ, լ 4) ա, գ, է, լ

9. Ո՞րն է $H_2 + Na \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայում օքսիդիչի մեկ մոլեկուլի ընդունած էլեկտրոնների թիվը.

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

10. Որքա՞ն է $H_2 + Fe_2O_3 \rightarrow Fe + \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 6 2) 8 3) 4 4) 9

11. Ջրածնի ստացման եղանակներից ո՞րն է լաբորատոր.

- 1) $2H_2O + CH_4 = CO_2 + 4H_2$ 3) $Zn + H_2SO_4 = ZnSO_4 + H_2$
2) $H_2O + C = CO + H_2$ 4) $CH_4 = C + 2H_2$

12. Քանի՞ մոլ պրոտոն է բաժին ընկնում ջրածնին 2,5 մոլ մեթանում.

- 1) 4 2) 10 3) 16 4) 25

13. Ինչպե՞ս է փոխվում ջրի խտությունը $+0,5^\circ C$ -ից մինչև $+50^\circ C$ տաքացնելիս.

- 1) մեծանում է 3) նախ մեծանում է, ապա փոքրանում
2) փոքրանում է 4) նախ փոքրանում է, ապա մեծանում

14. Ի՞նչ առավելագույն զանգվածով (գ.ա.մ.) ջրի մոլեկուլ կստացվի 1H , 2H , 3H , ^{16}O , ^{17}O , ^{18}O իզոտոպների զուգակցումից.

- 1) 18 2) 26 3) 20 4) 24

15. Ինչպե՞ս են անվանում ջրածնի և թթվածնի 2:1 ծավալային հարաբերությամբ խառնուրդը.

- 1) ճահճագազ 2) շմոլ գազ 3) շառաչող գազ 4) կոքսագազ

16. Ո՞ր արտահայտությունն է ճիշտ ջրածին պարզ նյութի վերաբերյալ.

- ա) անհոտ, անգույն, ամենաթեթև գազն է
բ) մեծ քանակությամբ պարունակվում է օդում և հանքերում

- 1) ճիշտ է միայն ա-ն 3) երկուսն էլ ճիշտ են
2) ճիշտ է միայն բ-ն 4) երկուսն էլ սխալ են

17. Ինչպե՞ս են անվանում շիկացած կոքսի և ջրի փոխազդեցությունից ստացված գազային խառնուրդը՝ $C + H_2O = CO + H_2$.

- 1) ճահճագազ
2) ջրագազ
3) գեներատորային գազ
4) բնական գազ

18. Ի՞նչ նյութ է ստացվում տաքացման պայմաններում ծծմբի և ջրածնի փոխազդեցությունից.

- 1) ծծմբային գազ
2) ծծմբածաղիկ
3) ծծմբաջրածին
4) ծծմբածխածին

19. Ինչպե՞ս է փոխվում ջրածին տարրի օքսիդացման աստիճանը փոխարկումների հետևյալ շղթայում. $MeH \rightarrow H_2 \rightarrow H_2S$.

- 1) 0; -1; +1
2) -1; +1; 0
3) +1; 0; +2
4) -1; 0; +1

20. Ո՞ր շարքում են ոչմետաղները դասավորված ըստ օքսիդիչ հատկությունների մեծացման.

- 1) S-N-Cl-O-F
2) N-S-O-Cl-F
3) F-O-Cl-N-S
4) F-S-N-O-Cl

21. Ո՞րն է V խմբի գլխավոր ենթախմբի ոչմետաղների ջրածնային միացությունների ընդհանուր բանաձևը.

- 1) XH_5
2) XH_3
3) XH_2
4) XH

22. Համապատասխանեցրե՛ք մասնիկը և դրա էլեկտրոնային բանաձևը.

Մասնիկ	Էլեկտրոնային բանաձև
ա) H^+	1) $1s^1$
բ) H^-	2) $1s^0$
գ) H^0	3) $1s^2$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ2, գ3
2) ա2, բ3, գ1
3) ա3, բ2, գ1
4) ա2, բ1, գ3

23. Ջրածնի ստացման եղանակներից ո՞րն է լաբորատոր.

- 1) ցինկի և աղաթթվի փոխազդեցությունը
2) մեթանի կոնվերսիան
3) ածխածնի կոնվերսիան ($C + H_2O \xrightarrow{t}$)
4) մեթանի պիրոլիզը

24. ${}^6_3Li + {}^1_0n \rightarrow \alpha + \dots$ միջուկային ռեակցիայի հավասարման մեջ ո՞րն է բաց թողած մասնիկը.

- 1) էլեկտրոնը
2) դեյտերիումը
3) տրիտիումը
4) պրոտիումը

25. Հետևյալ նյութերից որո՞ւմ է ջրածնի զանգվածային բաժինն առավել մեծ.

- 1) H_2O 2) H_2O_2 3) HCl 4) LiH

26. Ո՞րն է հիմնական վիճակում հալոգենների արտաքին էներգիական մակարդակի ընդհանուր էլեկտրոնային բանաձևը.

- 1) ns^2np^4 2) ns^2np^5 3) ns^2np^3 4) ns^2np^6

27. Ո՞ր հալոգենն է առավել ուժեղ օքսիդիչ.

- 1) F_2 2) Cl_2 3) Br_2 4) I_2

28. Ո՞ր հալոգենի մոլեկուլում են միջմոլեկուլային փոխազդեցություններն ավելի ուժեղ.

- 1) At_2 2) Cl_2 3) Br_2 4) I_2

29. Ո՞ր շարքի նյութերն են ստացվում կալիումի քլորիդի ջրային լուծույթի էլեկտրոլիզից.

- 1) HCl, O_2, KOH 2) Cl_2, H_2, KOH 3) K, Cl_2, H_2 4) HCl, Cl_2, O_2

30. Ո՞ր նյութի հետ կարող է փոխազդել քլորը.

- 1) $FeCl_2$ 2) $CuCl_2$ 3) $FeCl_3$ 4) $AlCl_3$

31. Ո՞րն է հալոգենիդ իոնների (բացի F^- իոնից) հայտաբերման ազդանյութը.

- 1) կալիումի նիտրատը 3) նատրիումի հիդրօքսիդը
2) արծաթի նիտրատը 4) մանգանի(IV) օքսիդը

32. Ո՞րն է բաց թողած նյութի մոլային զանգվածը (գ/մոլ) հետևյալ ռեակցիայի հավասարման մեջ. $2NaCl + \dots = Na_2SO_4 + 2HCl$.

- 1) 36,5 2) 58,5 3) 98 4) 142

33. Ո՞ր նյութերի փոխազդեցության ռեակցիայի կրճատ իոնային հավասարումն է $Ag^+ + Br^- = AgBr$.

- 1) $AgCl$ և KBr 3) $AgNO_3$ և $MgBr_2$
2) $AgNO_3$ և Br_2 4) Ag_2O և HBr


34. Քլորի թթվածնային թթուներից ո՞րն է ամենաուժեղ օքսիդիչը.

- 1) $HClO_2$ 2) $HClO_3$ 3) $HClO_4$ 4) $HClO$

35. Ո՞ր ռեակցիայում է քլորը ցուցաբերում և՛ օքսիդիչ, և՛ վերականգնիչ հատկություններ.



36. Ո՞րն է օքսիդացմանը մասնակցած վերականգնիչ նյութի քանակն ըստ հետևյալ ուրվագրով հավասարման.



1) 4

2) 5

3) 8

4) 10

37. Կերակրի աղի ո՞ր զանգվածային բաժնով (%) լուծույթն են անվանում ֆիզիոլոգիական.

1) 0,9

2) 0,4

3) 1,2

4) 2,5

38. Ո՞ր նյութի մոլեկուլում *չեն համընկնում* քլորի վալենտականության և օքսիդացման աստիճանների թվային արժեքները.

1) քլորաջրածին

3) ֆոսֆորի(III) քլորիդ

2) ֆոսֆորի(V) քլորիդ

4) գազային քլոր

39. Ինչ ծավալով (լ, ն. պ.) քլոր է անհրաժեշտ կալիումի յոդիդի 15 % զանգվածային բաժնով 4150 գ ջրային լուծույթից յոդը ամբողջությամբ դուրս մղելու համար.

1) 44

2) 42

3) 40

4) 38

40. Քլորաջրածնի և յոդաջրածնի խառնուրդի հարաբերական խտությունն ըստ ջրածնի 55 է: Որքան է քլորաջրածնի ծավալային բաժինն (%) այդ խառնուրդում.

1) 19,7

2) 80,3

3) 22,4

4) 78,6

41. Ո՞ր պնդումներն են ճիշտ տարրերի F-Cl-Br-I շարքի ատոմների վերաբերյալ.

ա) վալենտային էլեկտրոնների թիվը մեծանում է

բ) էլեկտրոնային շերտերի թիվը մեծանում է

գ) էլեկտրաբացասականությունը մեծանում է

դ) օքսիդիչ հատկությունն ուժեղանում է

ե) շառավիղը մեծանում է



1) բ, ե

2) ա, գ

3) բ, գ

4) դ, ե

42. Ո՞ր ռեակցիայում է Cl_2 պարզ նյութը դրսևորում միայն վերականգնիչ հատկություն.



43. Ո՞րն է $I_2 + Al \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման վերջանյութի քանակաչափական գործակիցը.

- 1) 6 2) 3 3) 4 4) 2

44. Հետևյալ պարզ նյութերից որո՞նք անմիջականորեն *չեն փոխազդում* քլորի հետ.

ա) O_2 , բ) S, գ) Fe, դ) Ne, ե) N_2 , զ) Zn, է) Cu, ը) H_2

- 1) ա, բ, գ 2) դ, ե, է 3) ա, բ, ե 4) բ, է, ը




45. Որքան է $Cl_2 + KOH \xrightarrow{20^\circ C} \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայում օքսիդացման արգասիքի հարաբերական մոլեկուլային զանգվածը.

- 1) 90,5 2) 74,5 3) 122,5 4) 36,5



46. Որքան է $Cl_2 + KOH \xrightarrow{20^\circ C} \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայում վերականգնման արգասիքի հարաբերական մոլեկուլային զանգվածը.

- 1) 90,5 2) 74,5 3) 122,5 4) 36,5

47. Ո՞րը անհամամասնական վերօքս ռեակցիայի ուրվագիր *չէ*.



48. Ո՞րն է վերօքս ռեակցիայի ուրվագիր.



49. Ո՞րն է օքսիդիչ նյութը $HCl + Al \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայում.

- 1) HCl 2) H_2 3) Al 4) $AlCl_3$

50. Ո՞ր հալոգենիդ իոնը *հնարավոր չէ* հայտաբերել արծաթի նիտրատով.

- 1) I^- 2) Br^- 3) Cl^- 4) F^-

51. Ո՞ր մետաղների հետ է աղաթթուն փոխազդում.

ա) Au

գ) Ag

ե) Cu

է) Hg

թ) Pt

բ) Fe

դ) Zn

զ) Al

ը) Mg

ժ) Na

1) ա, գ, ե, է, ժ

2) բ, գ, ե, է, թ

3) ա, գ, ե, է, ը, թ

4) բ, դ, գ, ը, ժ

52. Համապատասխանեցրե՛ք թթուների քիմիական բանաձևերն ու անվանումները.

<i>Բանաձև</i>	<i>Անվանում</i>
ա) HCl	1) քլորային
բ) HClO	2) քլորական
գ) HClO ₂	3) քլորաջրածնական
դ) HClO ₃	4) պերքլորական
ե) HClO ₄	5) հիպոքլորային

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) ա3, բ5, գ1, դ2, ե4 | 3) ա3, բ5, գ1, դ4, ե2 |
| 2) ա1, բ2, գ3, դ4, ե5 | 4) ա2, բ3, գ4, դ5, ե1 |

53. Հետևյալ աղերից ո՞րն ավելի մեծ չափով կհիդրոլիզվի միևնույն կոնցենտրացիայով լուծույթներում.

- 1) NaClO₃ 2) NaClO₂ 3) NaClO 4) NaClO₄

54. Ջրի ո՞ր հատկություններն են պայմանավորված ջրածնային կապերով.

- ա) փոխազդեցությունը որոշ մետաղների հետ
 բ) եռման ջերմաստիճանը
 գ) ջերմունակությունը
 դ) փոխազդեցությունը որոշ ոչմետաղների հետ

- 1) ա, բ 2) բ, գ, դ 3) բ, գ 4) ա, բ, դ

55. Ո՞ր միացություններում է քլորը ցուցաբերում համապատասխանաբար նվազագույն և բարձրագույն օքսիդացման աստիճաններ.

- 1) HCl և POCl₃ 3) Cl₂O₇ և ClF
 2) CCl₄ և HClO₄ 4) ClF₅ և ICl

56. Ո՞ր ոչմետաղի օքսիդիչ հատկություններն են առավել ուժեղ արտահայտված.

- 1) ֆտոր 2) ծծումբ 3) ազոտ 4) ջրածին

57. Ո՞րն է $^{56}\text{Fe} + ^1_0\text{n} \rightarrow ^1_0\text{p}$ միջուկային ռեակցիայի արգասիք հանդիսացող X տարրի բարձրագույն օքսիդի բանաձևը.

- 1) XO 2) XO₂ 3) XO₃ 4) X₂O₇

58. Ո՞ր պարզ նյութն է կարմրագորշ, գարշահոտ, շուտ ցնդող հեղուկ.

- 1) ֆտորը 2) բրոմը 3) քլորը 4) յոդը

59. Ո՞ր օքսիդի և KOH-ի փոխազդեցությունից կգոյանա KRO₄ բաղադրությամբ աղ.

- 1) RO 2) RO₃ 3) R₂O₅ 4) R₂O₇

60. Ո՞ր շարքի բոլոր նյութերն են փոխազդում աղաթթվի հետ.

- 1) Zn, Fe(OH)₃, NaNO₃ 3) CuO, KOH, Na₂CO₃
2) K₂O, Ag, Cu(OH)₂ 4) AgNO₃, KBr, NH₃

61. Ո՞ր նյութերն են փոխազդում աղաթթվի հետ.

- ա) Fe(OH)₃ բ) CaCO₃ գ) BaSO₄ դ) FeS ե) CuS
1) ա, բ, գ 2) բ, դ, ե 3) բ, գ, ե 4) ա, բ, դ

62. Ո՞ր էլեկտրոնային բանաձևն է համապատասխանում R₂O₇ բաղադրությամբ բարձրագույն օքսիդ առաջացնող տարրին.

- 1) [He]2s²2p⁵ 2) [Ne]3s²3p⁵ 3) [Ar]3d⁶4s² 4) [Ar]3d³4s²

63. Հետևյալ միացություններից որի հետ չի փոխազդում աղաթթուն.

- 1) NaOH 2) CO₂ 3) Fe 4) CuO

64. Հետևյալ տարրերից որի ոչմետաղային հատկություններն են առավել ցայտուն արտահայտված.

- 1) անագի 2) գերմանիումի 3) սիլիցիումի 4) ածխածնի

65. Ո՞րն է սովորական պայմաններում ջրի հեղուկ վիճակում գտնվելու պատճառը.

- 1) իոնային կապերի առկայությունը
2) ջրածնային կապերի առկայությունը
3) իոն-դիպոլային փոխազդեցությունները
4) կովալենտային ոչ բևեռային կապերի առկայությունը

66. Համապատասխան պայմաններում դ՞ր նյութի հետ կարող է փոխազդել ջրածինը.

- 1) ծանր մետաղների օքսիդների 3) ալկանների
2) թթուների 4) ալկալիների

67. Որքան է 44,8 մ³ (ս. պ.) ծավալով ջրածնի նյութաքանակը (մոլ).

- 1) 2000 2) 500 3) 1003 4) 4000

68. Ջրի և նատրիումի փոխազդեցությունից դ՞ր նյութերն են առաջանում.

- 1) Na₂O₂ և H₂ 2) NaOH և H₂ 3) Na₂O և H₂ 4) NaOH և H₂O

69. Ո՞ր նյութերի մոլեկուլների միջև կարող են առաջանալ ջրածնային կապեր.

- ա) սպիրտներ, բ) ջուր, գ) ալդեհիդներ, դ) կարբոնաթթուներ, ե) էսթերներ
1) ա, գ, դ 2) ա, բ, դ 3) բ, գ, ե 4) գ, դ, ե

70. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ջրածին կանջատվի 13 գ ցինկի և ավելցուկով վերցրած աղաթթվի փոխազդեցությունից.

- 1) 22,4 2) 11,2 3) 6,72 4) 4,48

71. Ո՞ր տարրի ատոմին է համապատասխանում էներգիական մակարդակներում էլեկտրոնների 2, 8, 18, 7 դասավորությունը.

- 1) քլոր 2) բրոմ 3) ֆտոր 4) յոդ

72. Աղաթթվի և մանգանի(IV) օքսիդի փոխազդեցությունից անջատվել է 11,2 լ (ն. պ.) քլոր: Ինչ քանակով (մոլ) քլորաջրածին է փոխազդել.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

73. Ո՞ր նյութերը կփոխազդեն նատրիումի հիդրիդի հիդրոլիզից ստացված նյութի լուծույթի հետ.

- ա) $\text{Ca}(\text{OH})_2$ բ) $\text{Zn}(\text{OH})_2$ գ) CO_2 դ) K_2SO_4
 1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) ա, դ

74. Ինչո՞վ են նման Li^+ և H^- իոնները.

- 1) միջուկի լիցքով 3) շառավղով
 2) նեյտրոնների թվով 4) էլեկտրոնների թվով

75. Ո՞ր նյութերի և ջրի փոխազդեցությունից է օքսիդ առաջանում.

- ա) Na բ) Fe գ) C դ) Ca
 1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) ա, դ

76. Համապատասխանեցրե՞ք միացության բանաձևը և դրանում հալոգենի օքսիդացման աստիճանը.

<i>Միացության բանաձև</i>	<i>Օքսիդացման աստիճան</i>
ա) HCl	1) +1
բ) HBrO	2) -1
գ) OF ₂	3) +7
դ) NaClO ₂	4) +3
	5) +5

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ2, գ4, դ1 3) ա2, բ1, գ2, դ4
 2) ա2, բ1, գ4, դ3 4) ա4, բ2, գ4, դ5


77. Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների ձախ և աջ մասերը.

Ձախ մաս	Աջ մաս
ա) $\text{KOH} + \text{Cl}_2 \xrightarrow{20^\circ\text{C}}$	1) $\text{KCl} + \text{KClO}_3 + \text{H}_2\text{O}$
բ) $\text{KOH} + \text{Cl}_2 \xrightarrow{100^\circ\text{C}}$	2) FeCl_3
գ) $\text{Fe} + \text{Cl}_2 \rightarrow$	3) FeCl_2
դ) $\text{MnO}_2 + \text{HCl} \rightarrow$	4) $\text{MnCl}_2 + \text{Cl}_2 + \text{H}_2\text{O}$
	5) $\text{KCl} + \text{KClO} + \text{H}_2\text{O}$
	6) $\text{MnCl}_4 + \text{H}_2\text{O}$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ5, գ3, դ4
 2) ա5, բ1, գ3, դ6
 3) ա5, բ1, գ2, դ4
 4) ա1, բ5, գ2, դ6

78. Հետևյալ ռեակցիայի հավասարման մեջ ո՞րն է բաց թողած նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը.



- 1) 81 2) 179 3) 98 4) 158

79. Ո՞րն է բաց թողած լիցքի մեծությունը.

Մերադրաների հետ առաջացրած երկրարթ միացություններում հալոգենները ցուցաբերում են _____ օքսիդացման աստիճան:

- 1) -1 2) +3 3) -3 4) +7

80. Ո՞ր քլորիդի ջրային լուծույթում լակմուսը կստանա կարմիր գույն.

- 1) BaCl_2 2) ZnCl_2 3) LiCl 4) KCl

81. Համապատասխանեցրե՛ք նյութի քիմիական բանաձևը և դրանում քլորի օքսիդացման աստիճանը.

Քիմիական բանաձև	Քլորի օքսիդացման աստիճան
ա) $\text{Ca}(\text{ClO})_2$	1) +7
բ) NH_4ClO_4	2) -1
գ) $\text{C}_6\text{H}_5\text{NH}_3\text{Cl}$	3) +1
դ) Cl_2	4) +3
	5) 0

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ2, գ3, դ1
 2) ա4, բ1, գ4, դ3
 3) ա3, բ1, գ2, դ5
 4) ա3, բ4, գ4, դ5

82. Որքան է հետևյալ հավասարման ձախ մասում բացակայող նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը. $2\text{KCl} + \dots = \text{K}_2\text{SO}_4 + 2\text{HCl}$

1) 81

2) 179

3) 98

4) 158

2.2.1. Ոչմետաղներ: Զրածին, ջուր, հալոգեններ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	29	2	57	4
2	2	30	1	58	2
3	2	31	2	59	4
4	4	32	3	60	3
5	2	33	3	61	4
6	3	34	4	62	2
7	3	35	3	63	2
8	2	36	2	64	4
9	2	37	1	65	2
10	4	38	4	66	1
11	3	39	2	67	1
12	2	40	1	68	2
13	3	41	1	69	2
14	4	42	2	70	4
15	3	43	4	71	2
16	1	44	3	72	1
17	2	45	1	73	2
18	3	46	2	74	4
19	4	47	3	75	2
20	1	48	1	76	3
21	2	49	1	77	3
22	2	50	4	78	1
23	1	51	4	79	1
24	3	52	1	80	2
25	4	53	3	81	3
26	2	54	3	82	3
27	1	55	2		
28	2	56	1		

2.2.2. Թթվածնի ենթախումբ: Թթվածին և ծծումբ

1. Թթվածնի ստացման հետևյալ եղանակներից որն է լաբորատոր.

- 1) հեղուկ օդի թորումը
- 2) կալիումի պերմանգանատի քայքայումը
- 3) օզոնի քայքայումը
- 4) նատրիումի պերօքսիդի և ածխածնի(IV) օքսիդի փոխազդեցությունը

2. Թթվածնի ստացման հետևյալ եղանակներից որն է արդյունաբերական.

- 1) KClO_3 -ի ջերմային քայքայումը կատալիզատորի առկայությամբ
- 2) KMnO_4 -ի ջերմային քայքայումը
- 3) հեղուկ օդի թորումը
- 4) HgO -ի ջերմային քայքայումը

3. Հետևյալ բանաձևով որ միացությունում է ծծմբի օքսիդացման աստիճանը բացասական.

- 1) MgSO_4
- 2) H_2SO_3
- 3) KHS
- 4) $\text{Al}_2(\text{SO}_4)_3$

4. Թթվածին տարրի քանի՞ ատոմ է առկա 0,5 մոլ օզոնում.

- 1) $9,03 \cdot 10^{23}$
- 2) $1,806 \cdot 10^{24}$
- 3) $1,204 \cdot 10^{24}$
- 4) $2,408 \cdot 10^{23}$

5. Ինչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին է անհրաժեշտ 5,4 գ ալյումինի օքսիդացման համար.

- 1) 1,12
- 2) 2,24
- 3) 3,36
- 4) 4,48

6. Որքան է մեկական մոլ թթվածնի և հելիումի խառնուրդի խտությունն ըստ ջրածնի.

- 1) 5
- 2) 8
- 3) 9
- 4) 10

7. Ո՞ր ուրվագրին համապատասխան ռեակցիայում է թթվածինը հանդես գալիս որպես վերականգնիչ.

- 1) $\text{NO} + \text{O}_2 \rightarrow \text{NO}_2$
- 2) $\text{Au}_2\text{O}_3 \rightarrow \text{Au} + \text{O}_2$
- 3) $\text{Cu} + \text{O}_2 \rightarrow \text{CuO}$
- 4) $\text{I}_2 + \text{H}_2\text{O}_2 \rightarrow \text{HIO}_3 + \text{H}_2\text{O}$

8. Ինչո՞վ է պայմանավորված թթվածնի համեմատ օզոնի առավել ուժեղ օքսիդիչ հատկությունը.

- 1) մոլային զանգվածի մեծությամբ
- 2) քայքայվելիս ատոմային թթվածնի անջատմամբ
- 3) յուրահատուկ հոտով
- 4) մոլեկուլի կայունությամբ

9. Հետևյալ տարրերից որն է առաջացնում RO_3 ընդհանուր բանաձևով բարձրագույն օքսիդ.

- 1) Sn 2) Sr 3) Te 4) Sb

10. Որո՞նք են պարբերական համակարգի VI խմբի գլխավոր ենթախմբի տարրերի ջրածնային միացության և բարձրագույն օքսիդին համապատասխանող թթվի ընդհանուր բանաձևերը.

- 1) H_2R և H_2RO_3 2) H_2R և H_2RO_4 3) RH_3 և H_2RO_3 4) RH_3 և H_2RO_4

11. Ո՞րն է թթվածին քիմիական տարրի ալոտրոպ ձևափոխություն.

- 1) ազոտը 2) ալմաստը 3) գրաֆիտը 4) օզոնը

12. Ո՞ր ոչմետաղն է բնության մեջ հանդիպում ազատ վիճակում.

- 1) սիլիցիումը 2) ծծումբը 3) քլորը 4) ֆոսֆորը

13. Որքան է H^+ իոնների կոնցենտրացիան (մոլ/լ) H_2SO_4 -ի 0,01 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթում, եթե թթուն և՛ առաջին, և՛ երկրորդ փուլերով լրիվ է դիսոցված.

- 1) 0,02 2) 0,01 3) 0,005 4) 0,001

14. Ո՞ր նյութի մոլեկուլում է թթվածին տարրը ցուցաբերում դրական օքսիդացման աստիճան.

- 1) BaO 2) H_2SO_4 3) Na_2O_2 4) OF_2

15. Որքան է ${}^2\text{H}$ (դեյտերիումի) և ${}^{18}\text{O}$ իզոտոպների առաջացրած ջրի հարաբերական մոլեկուլային զանգվածը.

- 1) 22 2) 20 3) 19 4) 18

16. Ի՞նչ է կատարվում Բերթոլեյի աղի կշռանքը մանգանի(IV) օքսիդի առկայությամբ տաքացնելիս.

- 1) քայքայվում է առանց գազի անջատման
2) քայքայվում է՝ անջատելով թթվածին
3) փոփոխության չի ենթարկվում
4) ենթարկվում է ինքնաօքսիդացման–ինքնավերականգնման

17. Հետևյալ գործընթացներից որը կարելի է կիրառել լաբորատորիայում թթվածին ստանալու համար.

- 1) պղնձի(II) հիդրօքսիդի քայքայում
2) հեղուկ օդի թորում
3) ջրածնի պերօքսիդի քայքայում
4) նատրիումի հիդրօքսիդի հալույթի էլեկտրոլիզ

18. Հետևյալ գազերից որն է այրվում թթվածնում.

- 1) ջրածինը 2) ազոտը 3) քլորը 4) հելիումը

19. Ո՞րն է հիմնական վիճակում քալկոգենների ատոմների արտաքին էներգիական մակարդակի էլեկտրոնային բանաձևը.

- 1) ns^2np^4 2) ns^2np^5 3) ns^2np^3 4) ns^2np^6

20. Ինչպե՞ս է փոխվում քալկոգենների էլեկտրաբացասականությունը կարգաթվի մեծացմանը զուգընթաց.

- 1) մեծանում է օրինաչափորեն
2) փոքրանում է օրինաչափորեն
3) մեծանում է ոչ օրինաչափ
4) փոքրանում է ոչ օրինաչափ

21. Ծծումբ պարունակող թթուներից որն է օժտված միայն օքսիդիչ հատկությամբ.

- 1) H_2S 2) H_2SO_3 3) H_2SO_4 4) $H_2S_2O_3$

22. Ո՞րն է վերականգնիչի գործակիցն ըստ $S + HNO_{3(լիմ)} \rightarrow SO_2 + NO_2 + H_2O$ օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարման.

- 1) 4 2) 2 3) 1 4) 3

23. Հետևյալ գազերից որն է այրվում թթվածնում.

- 1) ածխաթթու գազը 2) արգոնը 3) քլորը 4) ազոտիլենը

24. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) օդոն է անհրաժեշտ 1,08 գ արծաթն օքսիդացնելու համար.

- 1) 0,224 2) 2,24 3) 4,48 4) 0,112

25. Ո՞րն է կատալիզորդի առկայությամբ ընթացող ռեակցիայի հավասարում.

- 1) $H_2 + S = H_2S$ 3) $2SO_2 + O_2 = 2SO_3$
2) $H_2S + Cl_2 = S + 2HCl$ 4) $2H_2S + 3O_2 = 2SO_2 + 2H_2O$

26. Ո՞րն է վերականգնիչի գործակիցը հետևյալ ուրվագրով վերօքս ռեակցիայի հավասարման մեջ՝ $FeSO_4 + KMnO_4 + H_2SO_4 \rightarrow Fe_2(SO_4)_3 + \dots$

- 1) 5 2) 8 3) 10 4) 12

27. Ո՞ր նյութերի միջև տեղի ունեցող փոխազդեցությունն է արտահայտվում $S^{2-} + 2H^+ = H_2S$ կրճատ իոնական հավասարմամբ.

- 1) ZnS և HCl 3) Na_2S և HCl
2) $CuCl_2$ և H_2S 4) KOH և H_2S

28. Ինչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին կստացվի 7,5 % չքայքայվող խառնուկներ պարունակող 52,973 գ Բերթոլեյի աղը մանգանի(IV) օքսիդի առկայությամբ տաքացնելիս.

- 1) 6,72 2) 13,44 3) 17,92 4) 28

29. Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ կփոխազդի խիտ ծծմբական թթուն.

- 1) Ba(OH)₂, Si, BaCl₂ 3) Na₂CO₃, C, NaCl
2) SiO₂, Zn, CuS 4) H₂SO₃, Fe, HNO₃

30. Հետևյալ մետաղներից որի հետ չի փոխազդում նոսր H₂SO₄-ը.

- 1) Fe 2) Ag 3) Mg 4) Zn

31. Որքան է 20 % չքայքայվող խառնուկներ պարունակող 3 տոննա պիրիտից ստացվող ծծմբի(IV) օքսիդի ծավալը (մ³, ն. պ.).

- 1) 560 2) 672 3) 448 4) 896

32. Ո՞րն է 4,48 լ (ն. պ.) ծծմբի(IV) օքսիդում պարունակվող թթվածին տարրի ատոմների թիվը.

- 1) 2,408 · 10²³ 2) 1,206 · 10²³ 3) 6,02 · 10²³ 4) 4,816 · 10²³

33. Ինչ քանակով և ինչ նյութ է ստացվում 39,2 գ ծծմբի(VI) օքսիդի և 16 գ նատրիումի հիդրօքսիդի փոխազդեցությունից.

- 1) 0,4 մոլ նատրիումի սուլֆատ
2) 0,4 մոլ նատրիումի հիդրոսուլֆատ
3) 0,2 մոլ նատրիումի սուլֆատ
4) 0,8 մոլ նատրիումի հիդրոսուլֆատ

34. Հետևյալ նյութերից որն է ծծմբական թթվի արտադրության հումքը.

- 1) Գլաուբերի աղը
2) գիպսը
3) երկաթի կոլչեդանը
4) պղնձարջասալը

35. Ո՞ր ռեակցիայում է ծծմբի(IV) օքսիդը ցուցաբերում օքսիդիչ հատկություն.

- 1) SO₂ + 2H₂O + Cl₂ = H₂SO₄ + 2HCl
2) SO₂ + 2NaOH = Na₂SO₃ + H₂O
3) SO₂ + 2H₂S = 3S + 2H₂O
4) SO₂ + H₂O = H₂SO₃

36. Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի ձախ և աջ մասերը.

Ձախ	Աջ
ա) Ba(OH) ₂ + H ₂ S →	1) BaS + H ₂
բ) Ba(OH) ₂ + SO ₂ →	2) BaSO ₄ + H ₂ O
գ) Ba(OH) ₂ + SO ₃ →	3) BaS + 2H ₂ O
	4) BaSO ₃ + H ₂ O
	5) BaSO ₃ + H ₂

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|---------------|---------------|
| 1) ա3, բ4, գ5 | 3) ա1, բ3, գ5 |
| 2) ա1, բ5, գ2 | 4) ա3, բ4, գ2 |

37. Ո՞ր պնդումներն են ճիշտ ծծմբաջրածնի համար.

- ա) սուր հեղձուցիչ հոտով գազ է
բ) օդից ծանր է 3,5 անգամ
գ) ստացվում է կալցիումի սուլֆիդի և աղաթթվի փոխազդեցությունից
դ) ջրային լուծույթը ուժեղ էլեկտրոլիտ է
- | | | | |
|---------|---------|---------|---------|
| 1) ա, բ | 2) բ, գ | 3) գ, դ | 4) ա, գ |
|---------|---------|---------|---------|

38. Որքան է ծծմբի զանգվածային բաժինը (%) SO₂ + Cl₂ + 2H₂O → 2HCl + ... ռեակցիայի հավասարման մեջ բաց թողած նյութում.

- | | | | |
|----------|----------|----------|----------|
| 1) 32,65 | 2) 35,05 | 3) 16,32 | 4) 48,97 |
|----------|----------|----------|----------|

39. Որքան է վերականգնման գործընթացին մասնակցած օքսիդիչի նյութի քանակը հետևյալ ուրվագրով՝ Mg + H₂SO₄_{խիտ} → H₂S + ..., ռեակցիայի հավասարման մեջ.

- | | | | |
|------|------|------|------|
| 1) 5 | 2) 4 | 3) 3 | 4) 1 |
|------|------|------|------|

40. Առավելագույնը քանի՞ չզույգված (կենտ) էլեկտրոն կարող է լինել ծծմբի ատոմում.

- | | | | |
|------|------|------|------|
| 1) 8 | 2) 6 | 3) 4 | 4) 2 |
|------|------|------|------|

41. Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ կփոխազդի խիտ ծծմբական թթուն.

- | | |
|--|--|
| 1) CuO, Si, BaCl ₂ | 3) Cu, NaOH, C |
| 2) CO ₂ , Zn, SrSO ₄ | 4) Cr ₂ O ₃ , Au, KNO ₃ |

42. Ո՞րը ծծմբական թթվի աղ չէ.

- | | |
|------------------|------------------|
| 1) անգլիական աղը | 3) պոտաշը |
| 2) գիպսը | 4) Գլաուբերի աղը |

43. 13 գ ցինկը հալել են 3,2 գ ծծմբի հետ և խառնուրդը մշակել աղաթթվի ավելցուկով: Որքան է ստացված գազային խառնուրդի հարաբերական խտությունն ըստ թթվածնի.

- 1) 0,3725 2) 0,4825 3) 0,2255 4) 0,5625

44. Որքան է ծծմբի(IV) օքսիդի և ծծմբաջրածնի միջև ընթացող ռեակցիայի հավասարման աջ մասի գործակիցների գումարը.

- 1) 3 2) 5 3) 2 4) 6

45. Ո՞ր շարքի իոններով կհայտաբերվեն սուլֆիտ իոնները ջրային լուծույթում.

- 1) H^+ , OH^- 2) Ba^{2+} , Na^+ 3) OH^- , Ba^{2+} 4) H^+ , Ba^{2+}

46. Որո՞նք են բաց թողած բառերը հետևյալ արտահայտությունում.

Կատալիզորդները նյութեր են, որոնք _____ են քիմիական ռեակցիայի _____:

- 1) մեծացնում, ջերմեֆեկտը 3) մեծացնում, արագությունը
2) փոքրացնում, ջերմեֆեկտը 4) փոքրացնում, արագությունը

47. Հետևյալ ռեակցիաներից որո՞ւմ է ջրածնի պերօքսիդը դրսևորում միայն վերականգնիչ հատկություն.

- 1) $2H_2O_2 = 2H_2O + O_2$
2) $H_2O_2 + 2KI + H_2SO_4 = I_2 + K_2SO_4 + 2H_2O$
3) $5H_2O_2 + 2KMnO_4 + 3H_2SO_4 = 5O_2 + 2MnSO_4 + K_2SO_4 + 8H_2O$
4) $4H_2O_2 + PbS = PbSO_4 + 4H_2O$

48. Ո՞րն է ծծմբի մոլեկուլի քիմիական բանաձևը, եթե դրա 2 մոլի զանգվածը 512 գ է.

- 1) S_2 2) S_4 3) S_6 4) S_8

49. Որքան է $S + H_2SO_{4(լս)} \rightarrow SO_2 + \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 3 2) 8 3) 7 4) 9

50. Որքան է ծծմբաջրածնի ոչ լրիվ այրման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 7 2) 8 3) 9 4) 10

51. Համապատասխանեցրե՞ք ծծումբ պարունակող թթուների քիմիական բանաձևերը և չեզոք աղերի անվանումները.

<i>Թթուների բանաձևեր</i>	<i>Աղերի անվանումներ</i>
ա) H_2SO_3	1) սուլֆատներ
բ) H_2S	2) հիդրոսուլֆատներ
գ) H_2SO_4	3) սուլֆիդներ
	4) հիդրոսուլֆիդներ
	5) սուլֆիտներ
	6) հիդրոսուլֆիտներ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ5, գ1 2) ա5, բ3, գ1 3) ա6, բ4, գ2 4) ա4, բ6, գ2

52. Քանի՞ էլեկտրոնային զույգ է պատկերվում ջրածնի պերօքսիդի մոլեկուլի էլեկտրոնային բանաձևում.

- 1) 7 2) 18 3) 9 4) 8

53. Որքան է նոսր ծծմբական թթվի և երկաթի(II) օքսիդի փոխազդեցության ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 4 2) 5 3) 11 4) 12

54. Որքան է նոսր ծծմբական թթվի և երկաթի(II, III) օքսիդի (երկաթի հարուկի) փոխազդեցության ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 14 2) 8 3) 11 4) 10

55. Քանի՞ մոլեկուլ բյուրեղաջուր է պարունակվում պղնձարջասպի մեկ մոլեկուլում.

- 1) 7 2) 5 3) 10 4) 6

56. Քանի՞ մոլեկուլ բյուրեղաջուր է պարունակում նատրիումի սուլֆատի բյուրեղա-հիդրատներից մեկը՝ Գլաուբերի աղը, եթե դրա մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը 6-ով մեծ է թթվածնի ատոմների թվից.

- 1) 5 2) 8 3) 10 4) 7

57. Ինչ զանգվածով (գ) Բերթոլեյի աղի քայքայումից ստացված թթվածինը կբավարարի 4,8 գ ծծումբն այրելու համար.

- 1) 122,5 2) 12,25 3) 0,1 4) 0,15

58. Ո՞րն է Se և S տարրերի ատոմների տարբերությունը.

- 1) շառավղի մեծությունը
2) վալենտային էլեկտրոնների թիվը
3) բարձրագույն օքսիդի բանաձևը
4) ջրածնային միացության բանաձևը

59. Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ է փոխազդում ծծմբի(VI) օքսիդը.

- 1) H_2O , $Ca(OH)_2$, K_2O
2) BaO , KOH , P_2O_5
3) $NaOH$, H_2O , CO_2
4) Na_2O , $Ba(OH)_2$, HCl

60. Ո՞ր միացության մոլեկուլում ծծումբն ունի նույն օքսիդացման աստիճանն, ինչ որ թթվածինը՝ պերօքսիդներում.

- 1) CuS
2) Cu_2S
3) FeS_2
4) Na_2S

61. Որո՞նք են $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^4$ էլեկտրոնային բանաձևն ունեցող քիմիական տարրի գազային ջրածնային միացության և բարձրագույն օքսիդի բանաձևերը.

- 1) H_2S և SO_3
2) NH_3 և N_2O_5
3) H_2S և SO_2
4) CH_4 և CO_2

62. Ո՞ր էլեկտրոնային բանաձևերն են համապատասխանում ծծմբի ատոմի հիմնական և երկրորդ գրգռված վիճակներին.

- ա) $[Ne]3s^2 3p^4$
բ) $[Ne]3s^1 3p^3 3d^2$
գ) $[Ne]3s^1 3p^2 3d^2$
դ) $1s^2 2s^2 2p^5 3s^2 3p^5$
1) ա, բ
2) բ, գ
3) ա, դ
4) բ, դ

63. Ո՞ր նյութերի հետ է փոխազդում նոսր ծծմբական թթուն.

- ա) $NaCl$
բ) Cu
գ) Fe
դ) $Ba(NO_3)_2$
1) ա, բ
2) ա, դ
3) գ, դ
4) բ, դ

64. Ո՞ր նյութի օգնությամբ կարելի է տարբերել աղաթթուն ծծմբական թթվի լուծույթից.

- 1) սննդի սոդայի
2) բարիումի հիդրօքսիդի
3) կալիումի հիդրօքսիդի
4) պղնձի հիդրօքսիդի

65. Ո՞ր նյութի ջրային լուծույթի օգնությամբ կարելի է տարբերել $MgSO_4$, $Al_2(SO_4)_3$, K_2SO_4 և $(NH_4)_2SO_4$ չոր աղերը.

- 1) HCl
2) KNO_3
3) $BaCl_2$
4) $NaOH$


66. Ո՞ր շարքի միացություններն են դասավորված ծծմբի օքսիդացման աստիճանի նվազման կարգով.

- 1) H_2S , SO_2 , S
2) $Al_2(SO_4)_3$, Na_2SO_3 , S
3) $CaSO_4$, S , $(NH_4)_2SO_3$
4) $CuSO_4$, $(NH_4)_2SO_4$, H_2S

67. Ո՞ր նյութի հետ է միանում ծծումբը սենյակային ջերմաստիճանում.

- 1) Hg 2) Fe 3) H₂ 4) O₂

68. Որքան է հետևյալ ուրվագրով ընթացող ռեակցիայի հավասարման վերջանյութերի քանակաչափական գործակիցների գումարը.



- 1) 2 2) 3 3) 5 4) 7

69. Ո՞ր պարզ նյութերի հետ կփոխազդի թթվածինը.

ա) Cl₂, բ) P, գ) C, դ) Al, ե) Ag

- 1) գ, դ, ե 2) բ, դ, ե 3) ա, բ, գ 4) բ, գ, դ

70. Որքանով կավելանա պինդ նյութի զանգվածը (գ) 10,8 գ ալյումինն ավելցուկով թթվածնում լրիվ այրելիս.

- 1) 4,8 2) 9,6 3) 10,8 4) 40,8

2.2.2. Թթվածնի ենթախումբ: Թթվածին և ծծումբ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	25	3	49	2
2	3	26	3	50	1
3	3	27	3	51	2
4	1	28	2	52	1
5	3	29	3	53	1
6	3	30	2	54	3
7	2	31	4	55	2
8	2	32	1	56	3
9	3	33	2	57	2
10	2	34	3	58	1
11	4	35	3	59	1
12	2	36	4	60	3
13	1	37	4	61	1
14	4	38	1	62	1
15	1	39	4	63	3
16	2	40	2	64	2
17	3	41	3	65	4
18	1	42	3	66	2
19	1	43	4	67	1
20	2	44	2	68	3
21	3	45	4	69	4
22	3	46	3	70	2
23	4	47	3		
24	4	48	4		

2.2.3. Ազոտի ենթախումբ: Ազոտ և ֆոսֆոր

1. Ո՞րն է համապատասխանաբար էլեկտրոնների և պրոտոնների թիվը NO_3^- իոնում.

- 1) 14 և 48 2) 15 և 48 3) 31 և 32 4) 32 և 31

2. Էլեկտրոնների քանի՞ զույգ է պատկերված ազոտի մոլեկուլի էլեկտրոնային բանաձևում.

- 1) 2 2) 3 3) 5 4) 10

3. Ո՞ր նյութերի հետ կարող է փոխազդել ազոտը համապատասխան պայմաններում.

- ա) Ag բ) Li գ) O_2 դ) Ca ե) Cl_2

- 1) բ, գ, դ 2) ա, գ, ե 3) ա, բ, դ 4) բ, գ, ե

4. Ի՞նչ կառուցվածք ունի ամոնիակի մոլեկուլը.

- 1) գծային 2) բրգաձև 3) հարթ 4) գնդաձև

5. Որքան է ազոտի զանգվածային բաժինն ալյումինի նիտրատում.

- 1) 0,066 2) 0,197 3) 0,213 4) 0,128

6. Որքան է ազոտի վալենտականությունն ամոնիումի իոնում.

- 1) 5 2) 4 3) 3 4) 2

7. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի ըստ հետևյալ ռեակցիայի հավասարման՝
 $\text{Cu} + 4\text{HNO}_{3(\text{տիտ})} = \text{Cu}(\text{NO}_3)_2 + 2\text{NO}_2 + 2\text{H}_2\text{O}$, եթե ազոտական թթվի 10 մոլ/լ կոնցենտրացիայով 0,1 լ լուծույթը փոխազդի անհրաժեշտ քանակով վերցրած պղնձի հետ.

- 1) 0,56 2) 1,12 3) 11,2 4) 22,4

8. Որքան է զանգվածի կորուստը (%) AgNO_3 աղի ջերմային քայքայումից.

- 1) 36,47 2) 27,06 3) 9,41 4) 4,71

9. Ո՞ր տարրի ատոմն է պարունակում այնքան էլեկտրոն, որքան պարունակվում է ամոնիակի մոլեկուլում.

- 1) նեոն 2) թթվածին 3) ծծումբ 4) ածխածին

10. Ազոտի որ օքսիդով է պայմանավորված «աղվեսի պոչ» անվանումը.

- 1) N_2O_5 2) NO_2 3) N_2O_3 4) NO

11. Հետևյալ թթուներից որն է երկհիմն.

- 1) H_3PO_3 2) HPO_3 3) H_3PO_4 4) $\text{H}_4\text{P}_2\text{O}_7$

12. Ո՞ր շարքի բոլոր նյութերի մոլեկուլներում է ազոտ տարրը ցուցաբերում նույն օքսիդացման աստիճանը.

- 1) NO_2 , KNO_3 , NH_3 3) N_2H_4 , NO , NaNO_2
2) NH_4Cl , NaNO_3 , NO_2 4) Ca_3N_2 , NaCN , NH_4Cl

13. Որքան է գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ), եթե այն ստացվել է պղնձի և նոսր ազոտական թթվի փոխազդեցությունից գոյացած գազային նյութը հավասար ծավալով թթվածնի հետ խառնելիս.

- 1) 31,3 2) 39,3 3) 41,3 4) 46,3

14. Ո՞ր նիտրատի ջերմային քայքայումից թթվածին չի անջատվում.

- 1) NH_4NO_3 2) KNO_3 3) $\text{Cu}(\text{NO}_3)_2$ 4) AgNO_3

15. Ի՞նչ հիբրիդային վիճակում է գտնվում ազոտ տարրի ատոմն ամոնիումի իոնում.

- 1) dsp^2 2) sp 3) sp^3 4) sp^2

16. Ո՞ր շարքի նյութերում են համընկնում ազոտի օքսիդացման աստիճանի և վալենտականության թվային արժեքները.

- 1) NH_3 , N_2 , NaNO_3 3) N_2 , NH_4NO_3 , N_2O_5
2) NH_4NO_3 , N_2O , N_2O_3 4) N_2O_3 , NaNO_2 , HNO_2

17. Ինչպե՞ս են լաբորատորիայում ազոտ ստանում.

- 1) հեղուկ օդի թորմամբ
2) ամոնիումի քլորիդի և նատրիումի նիտրիտի խառնուրդի տաքացմամբ
3) ամոնիումի նիտրատի և նատրիումի քլորիդի փոխազդեցությամբ
4) ամոնիակի քայքայմամբ

18. Ո՞ր պնդումներն են ճիշտ ազոտ գազի համար.

- ա) անգույն, անհամ, անհոտ գազ է
բ) օդից ծանր է 1,5 անգամ
գ) ալկալիական մետաղների հետ փոխազդեցությունից առաջացնում է նիտրիդներ
դ) հեշտությամբ փոխազդում է թթվածնի հետ
ե) ջրում լավ լուծվող գազ է

- 1) ա, բ 2) գ, դ 3) դ, ե 4) ա, գ

19. Ինչ քանակով (մոլ) ազոտ կարելի է ստանալ 56 լ (ն. պ.) օդից (օդում ազոտի ծավալային բաժինն ընդունել 80 %).

- 1) 5 2) 3 3) 2 4) 4

20. Որքան է ամոնիակի կատալիտիկ օքսիդացման ռեակցիայի հավասարման բոլոր գործակիցների գումարը.

- 1) 17 2) 15 3) 19 4) 12

21. Հետևյալ աղերից որը կփոխազդի ն թթվի, ն ալկալու լուծույթի հետ.

- 1) ամոնիումի կարբոնատը 3) նատրիումի սիլիկատը
2) նատրիումի կարբոնատը 4) նատրիումի քլորիդը

22. Հետևյալ օքսիդներից որը աղ չի առաջացնում.

- 1) N_2O 2) N_2O_3 3) N_2O_5 4) NO_2

23. Ո՞ր շարքում են 3,76 գ պղնձի(II) նիտրատի քայքայումից ստացված ազոտի օքսիդի բանաձևն ու ծավալը (լ, ն. պ.).

- 1) NO և 2,24 2) NO_2 և 1,12 3) NO և 4,48 4) NO_2 և 0,896

24. Ո՞ր շարքի բոլոր նիտրատներն են բորակներ (սելիտրաներ).

- 1) KNO_3 , $NaNO_3$, NH_4NO_3
2) $Cu(NO_3)_2$, $Hg(NO_3)_2$, $AgNO_3$
3) $Fe(NO_3)_3$, $Al(NO_3)_3$, $Cr(NO_3)_3$
4) $Ca(NO_3)_2$, $Ba(NO_3)_2$, $Mg(NO_3)_2$

25. Քանի՞ կովալենտային կապ է առկա օրթոֆոսֆորական թթվի մեկ մոլեկուլում.

- 1) 9 2) 7 3) 8 4) 6

26. Ո՞րն է V խմբի գլխավոր ենթախմբի տարրերի ատոմների արտաքին էներգիական մակարդակի ընդհանուր էլեկտրոնային բանաձևը.

- 1) ns^2np^4 2) ns^2np^5 3) ns^2np^3 4) ns^2np^6

27. Ինչ նյութաքանակով (մոլ) ամոնիակ է հնարավոր ստանալ 4,48 մ³ (ն. պ.) օդում պարունակվող ազոտից (ազոտի ծավալային բաժինն օդում ընդունել 80 %).

- 1) 160 2) 320 3) 400 4) 800

28. Ինչ կապեր են առկա ամոնիակի մոլեկուլում.

- 1) երկու π և մեկ σ 2) երկու σ և մեկ π 3) երեք σ 4) երեք π

29. 3,6 գ զանգվածով երկվալենտ մետաղի և ազոտի փոխազդեցությունից առաջացել է 4,44 գ նիտրիդ: Ո՞րն է այդ նիտրիդի բանաձևը.

- 1) K_3N 2) Ca_3N_2 3) AlN 4) Sr_3N_2

30. Ամոնիումի իոնում ինչ մեխանիզմով են առաջացել կովալենտային կապերը.

- 1) 2 փոխանակային, 1 դոնորակցեպտորային
2) 1 փոխանակային, 3 դոնորակցեպտորային
3) 3 փոխանակային, 1 դոնորակցեպտորային
4) միայն փոխանակային

31. Ո՞ր պարարտանյութում է ազոտի զանգվածային բաժինն ամենամեծը.

- 1) NH_4NO_3 2) KNO_3 3) $(NH_4)_2SO_4$ 4) $(NH_2)_2CO$

32. Ո՞րն է ամոնիակի այրման ռեակցիայի ուրվագիրը.

- 1) $NH_3 + O_2 \rightarrow NO + H_2O$ 3) $NH_3 + O_2 \rightarrow N_2 + H_2O$
2) $NH_3 \rightarrow N_2 + H_2$ 4) $NH_3 + HNO_3 \rightarrow NH_4NO_3$

33. Ինչ դեր ունի ազոտի ատոմը ամոնիակի և թթուների փոխազդեցության ժամանակ.

- 1) էլեկտրոնային ամպի ակցեպտոր
2) էլեկտրոնային զույգի դոնոր
3) էլեկտրոնային ամպի դոնոր և ակցեպտոր
4) պրոտոնի դոնոր

34. Ո՞ր նյութն է առաջանում ամոնիակի այրումից.

- 1) NO_2 2) NO 3) N_2 4) N_2O_3

35. Ո՞րն է ազոտական թթվի ստացման արտադրական եղանակի վերջին փուլի ուրվագիրը.

- 1) $N_2O_3 + H_2O \rightarrow$ 3) $NO_2 + H_2O + O_2 \rightarrow$
2) $NaNO_3 + H_2SO_4 \rightarrow$ 4) $N_2O_5 + H_2O \rightarrow$

36. Որքան է ազոտի(IV) օքսիդից ազոտական թթվի ստացման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 8 2) 9 3) 10 4) 11

37. Մետաղների զույգերն են նոսր ազոտական թթվի հետ փոխազդելիս առաջացնում համապատասխանաբար NO և NH_4NO_3 .

- ա) Cu և Ca բ) Cu և Pb գ) Cu և Ag դ) Ag և Mg
1) ա, դ 2) ա, բ 3) գ, դ 4) բ, դ

38. Ո՞ր ազոտի օքսիդներն են փոխազդում ալկալու հետ առանց ազոտի օքսիդացման աստիճանի փոփոխության.

- 1) N_2O_3, N_2O_5 2) NO, NO_2 3) NO_2, N_2O_4 4) N_2O_3, N_2O

39. Հետևյալ աղերից որի վրա խիտ H_2SO_4 ավելացնելիս և պղնձե լար ընկղմելիս գորշ գազ կանջատվի.

- 1) NH_4Cl 2) $(NH_4)_2CO_3$ 3) $NaNO_3$ 4) K_3PO_4

40. Ո՞ր ուրվագրին համապատասխանող ռեակցիայի արգասիքն է օրթոֆոսֆորական թթուն.

- 1) $Ca_3P_2 + H_2O \rightarrow$ 3) $PH_3 + HCl \rightarrow$
 2) $P_2O_3 + H_2O \rightarrow$ 4) $P + HNO_3 + H_2O \rightarrow$

41. Ո՞ր նյութն է առաջանում ֆոսֆորի(V) օքսիդի և սառը ջրի փոխազդեցությունից.

- 1) H_3PO_4 2) H_3PO_3 3) $H_4P_2O_7$ 4) HPO_3

42. Համապատասխանեցրե՛ք միացության բանաձևը և դրանում ֆոսֆորի օքսիդացման աստիճանը.

Բանաձև	Օքսիդացման աստիճան
ա) HPO_3	1) +1
բ) H_3PO_3	2) +3
գ) H_3PO_2	3) +5
դ) $H_4P_2O_7$	4) -1
	5) -3


Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ3, գ1, դ3 3) ա5, բ4, գ3, դ1
 2) ա3, բ2, գ1, դ3 4) ա3, բ2, գ4, դ5

43. Ո՞ր միացություններում է ֆոսֆորի օքսիդացման աստիճանը նույնը.

- 1) Ca_3P_2 և H_3PO_4 3) P_2O_3 և P_2O_5
 2) KH_2PO_4 և KPO_3 4) H_3PO_4 և H_3PO_3

44. Ո՞ր թթվի գրաֆիկական պատկերն է ստորև բերված.



- 1) ֆոսֆորային
 2) օրթոֆոսֆորական
 3) երկֆոսֆորական
 4) մետաֆոսֆորական

45. Ո՞ր շարքում է օրթոֆոսֆորական թթվի լուծույթին աստիճանաբար կալիումի հիդրօքսիդի ջրային լուծույթ ավելացնելիս ստացվող աղերի ճիշտ հաջորդականությունը.

- 1) K_3PO_4 , KH_2PO_4 , K_2HPO_4 3) KH_2PO_4 , K_3PO_4 , K_2HPO_4
2) K_2HPO_4 , KH_2PO_4 , K_3PO_4 4) KH_2PO_4 , K_2HPO_4 , K_3PO_4

46. Ֆոսֆորը և մագնեզիումը տաքացրել են, իսկ ստացված արգասիքը՝ հիդրոլիզել: Որքան է անջատված գազի հարաբերական խտությունն ըստ ջրածնի.

- 1) 27 2) 7 3) 17 4) 37

47. Ո՞րն է ֆոսֆորի առավելագույն օքսիդացման աստիճանը.

- 1) +6 2) +5 3) +3 4) +4

48. Հետևյալ աղերից որո՞նք են հիդրոֆոսֆատներ.

- ա) Na_3PO_4 բ) Na_2HPO_4 գ) $(NH_4)_2HPO_4$ դ) KH_2PO_4
1) ա, գ 2) բ, գ 3) բ, դ 4) ա, դ

49. Համապատասխանեցրե՛ք միացության քիմիական բանաձևը և անվանումը.

Բանաձև	Անվանում
ա) $Ca(NO_2)_2$	1) կալցիումի նիտրատ
բ) $Ca(NO_3)_2$	2) կալցիումի նիտրիդ
գ) Ca_3N_2	3) կալցիումի նիտրիտ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ3, գ2 2) ա3, բ1, գ2 3) ա3, բ2, գ1 4) ա2, բ3, գ1

50. Համապատասխանեցրե՛ք միացության քիմիական բանաձևը և դրանում ազոտի օքսիդացման աստիճանը.

Բանաձև	Օքսիդացման աստիճան
ա) $Ca(NO_2)_2$	1) -2
բ) $Ca(NO_3)_2$	2) -3
գ) Ca_3N_2	3) +3
դ) $(NH_4)_2SO_4$	4) +2
ե) CH_3NH_3Cl	5) +5

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ5, գ2, դ2, ե1 3) ա3, բ5, գ2, դ1, ե1
2) ա3, բ5, գ2, դ2, ե2 4) ա3, բ5, գ2, դ2, ե3

51. Որո՞նք են երեք կենտ էլեկտրոն ունեցող III պարբերության հիմնական վիճակում գտնվող տարրի ատոմի ցնդող ջրածնային միացության և բարձրագույն օքսիդի բանաձևերը համապատասխանաբար.

- 1) RH_2 և RO_2 2) RH_3 և R_2O_5 3) H_2R և RO_3 4) HR և R_2O_7

52. Սպիտակ ֆոսֆորի (P_4) մոլեկուլում որքան են ֆոսֆորի վալենտականությունը և օքսիդացման աստիճանը.

- 1) IV և 0 2) III և -3 3) III և 0 4) IV և -3

53. Ո՞ր միացություններում է առկա +5 օքսիդացման աստիճանով ոչմետաղի ատոմ.

- ա) $\text{H}_4\text{P}_2\text{O}_7$ բ) H_3PO_2 գ) HPO_3 դ) $\text{H}_2\text{S}_2\text{O}_7$

- 1) ա, գ 2) բ, գ 3) բ, դ 4) ա, դ

54. Ո՞ր երկու միացություններում է ֆոսֆոր տարրի օքսիդացման աստիճանը նույնը.

- 1) BaHPO_4 և Ba_3P_2 3) $\text{Ca}_2\text{P}_2\text{O}_7$ և $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2$

- 2) $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2$ և Ca_3P_2 4) KH_2PO_3 և Ca_3P_2

55. Սենյակային ջերմաստիճանում ջրի մեջ նախ լուծել են 1 մոլ ֆոսֆորի(V) օքսիդ, ապա 4 մոլ ամոնիակ: Որքան է լուծույթում գոյացած նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը.

- 1) 97 2) 115 3) 132 4) 149

56. Հետևյալ գազերից որը կարելի է չորացնել ֆոսֆորի(V) օքսիդով.

- ա) HCl բ) NH_3 գ) CH_3NH_2 դ) CH_4 ե) C_2H_2

- 1) բ, գ 2) ա, դ, ե 3) բ, դ, ե 4) ա, գ

57. Լուծույթում 2 մոլ ֆոսֆորի(V) օքսիդի և 6 մոլ նատրիումի հիդրօքսիդի փոխազդեցությունից որ աղն(երն) է(են) ստացվում և ի՞նչ նյութաքանակով.

- 1) NaH_2PO_4 և Na_2HPO_4 , 2-ական մոլ 3) NaH_2PO_4 և Na_3PO_4 , 2-ական մոլ

- 2) NaH_2PO_4 , 3 մոլ 4) Na_2HPO_4 , 4 մոլ

58. Հիմնական վիճակում ֆոսֆորի ատոմում քանի թափուր օրբիտալ է առկա.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

59. Հետևյալ նյութերից որո՞նց հետ է փոխազդում ֆոսֆորի(V) օքսիդը.

- ա) O_2 բ) C գ) H_2O դ) CO_2 ե) CaO

- 1) ա, գ, ե 2) ա, բ, դ 3) բ, դ, ե 4) բ, գ, ե

60. Ո՞ր երկու աղերի խառնուրդն է ամոֆոսը.

- 1) $\text{NH}_4\text{H}_2\text{PO}_4$, $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2$ 2) $\text{NH}_4\text{H}_2\text{PO}_4$, $(\text{NH}_4)_2\text{HPO}_4$
3) $(\text{NH}_4)_2\text{HPO}_4$, CaHPO_4 4) $\text{NH}_4\text{H}_2\text{PO}_4$, KNO_3

61. Ի՞նչ զանգվածով (գ) ածխածին է անհրաժեշտ 15,5 գ ֆոսֆոր ստանալու համար՝ ըստ հետևյալ ուրվագրի. $\text{P}_2\text{O}_5 + \text{C} \rightarrow \text{P} + \text{CO}$.

- 1) 15 2) 12 3) 9 4) 6

62. Ի՞նչ զանգվածով և ո՞ր աղը կառաջանա ջրային լուծույթում 49 գ H_3PO_4 -ը 20 գ նատրիումի հիդրօքսիդով չեզոքացնելիս.

- 1) 71 գ Na_2HPO_4 3) 60 գ NaH_2PO_4
2) 142 գ Na_2HPO_4 4) 120 գ NaH_2PO_4

63. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) և ո՞ր գազն է ստացվել 40 լ (ն. պ.) ամոնիակը շիկացրած պղնձի(II) օքսիդի վրայով անցկացնելիս.

- 1) 40, N_2O 2) 20, NO 3) 20, N_2 4) 40, NO_2

64. Ո՞րն է հասարակ սուլպերֆոսֆատի քիմիական բանաձևը.

- 1) $(\text{NH}_4)_2\text{HPO}_4$ 3) $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2$
2) $\text{CaHPO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$ 4) $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2 + 2\text{CaSO}_4$

2.2.3. Ազոտի ենթախումբ: Ազոտ և ֆոսֆոր

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	4	23	4	45	4
2	3	24	1	46	3
3	1	25	3	47	2
4	2	26	3	48	2
5	2	27	2	49	2
6	2	28	3	50	2
7	3	29	2	51	2
8	1	30	3	52	3
9	1	31	4	53	1
10	2	32	3	54	3
11	1	33	2	55	3
12	4	34	3	56	2
13	3	35	3	57	1
14	1	36	4	58	4
15	3	37	1	59	4
16	4	38	1	60	2
17	2	39	3	61	1
18	4	40	4	62	3
19	3	41	4	63	3
20	3	42	2	64	4
21	1	43	2		
22	1	44	1		

2.2.4. Ածխածնի ենթախումբ: Ածխածին և սիլիցիում

- Ո՞րն է ատոմի միջուկում 6 պրոտոն պարունակող տարրի էլեկտրոնային բանաձևը.
1) $1s^22s^22p^4$ 2) $1s^22s^22p^2$ 3) $1s^22s^22p^1$ 4) $1s^22s^22p^3$
- Հետևյալ նյութերից որի ջերմային քայքայման արգասիքներն են և հիմնային, և թթվային օքսիդներ.
1) արծաթի նիտրատի 3) նատրիումի նիտրատի
2) կալցիումի կարբոնատի 4) սնդիկի նիտրատի
- Ո՞ր տարրի միացություններն են կարբիդները.
1) սիլիցիում 2) ածխածին 3) ջրածին 4) ազոտ
- Ո՞ր շարքում է նախ ^{12}C , ապա ^{13}C իզոտոպների միջուկների կառուցվածքը.
1) 6p, 12n և 6p, 13n 3) 12p, 6n և 13p, 7n
2) 6p, 6n և 6p, 7n 4) 12p, 12n և 13p, 13n
- Ինչպիսիք և ինչ թվով կապեր են առկա ածխածնի(II) օքսիդի մոլեկուլում, և քանիսն են դրանք.
1) կովալենտային ոչ բևեռային և երկու 3) կովալենտային բևեռային և երկու
2) կովալենտային բևեռային և երեք 4) կովալենտային ոչ բևեռային և երեք
- Հետևյալ նյութերից որի հետ չի փոխազդում ածխածնի(IV) օքսիդը.
1) ջրի 3) կրակաթի
2) ծծմբական թթվի 4) կալցիումի օքսիդի
- Որքան է ածխածնի զանգվածային բաժինը (%) CaCO_3 -ում.
1) 24 2) 12 3) 60 4) 10
- Հետևյալ թթուներից ո՞րն է ամենաթույլը.
1) H_2CO_3 2) H_2SiO_3 3) H_2SO_3 4) H_2SO_4
- Հետևյալ նյութերից ո՞րն է սիլիցիում ստանալու հումքը.
1) լուծելի ապակին 3) ավազը
2) կավը 4) նատրիումի սիլիկատը
- Ինչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին է անհրաժեշտ 20 % չայրվող խառնուկներ պարունակող 150 գ զանգվածով փայտածխի լրիվ այրման համար.
1) 224 2) 448 3) 56 4) 672

11. Ո՞ր պնդումն է ճիշտ ածխածնի(II) օքսիդի վերաբերյալ.

- 1) անտարբեր (աղ չառաջացնող) օքսիդ է
2) դեղին, սուր հոտով գազ է
3) օդից թեթև է 2 անգամ
4) չի այրվում

12. Հետևյալ նյութերից որի՞ հետ կարող է փոխազդել ածխածնի(IV) օքսիդը համապատասխան պայմաններում.

- 1) K_2CO_3 2) HCl 3) H_2SO_4 4) SiO_2

13. Ինչպե՞ս են անվանում ածխածնի(II) օքսիդի և ջրածնի խառնուրդը.

- 1) ածխաթթու գազ 3) շմոլ գազ
2) սինթետիկ գազ 4) ճահճագազ

14. Ո՞ր պնդումն է ճիշտ ածխաթթվի վերաբերյալ.

- 1) միահիմն ուժեղ թթու է
2) առաջացնում է միայն չեզոք աղեր
3) փոխազդում է ալկալիների հետ
4) առաջացրած բոլոր աղերը լուծելի են

15. Որքան է պինդ նյութի զանգվածի (գ) կորուստը 7,8 գ ամոնիումի հիդրոկարբոնատը բաց անոթում շիկացնելիս.

- 1) 7,8 2) 3,6 3) 2,2 4) 4,4

16. Նատրիումի կարբոնատի բյուրեղահիդրատի 11,44 գ նմուշի ջրազրկումից ստացվել է 4,24 գ անջուր աղ: Որքան է բյուրեղահիդրատի մոլային զանգվածը (գ/մոլ).

- 1) 106 2) 196 3) 286 4) 178

17. Ո՞ր զույգ տարրերի ատոմներն արտաքին էներգիական մակարդակում ունեն նույն թվով վալենտային էլեկտրոններ.

- 1) C և Si 2) Pb և Bi 3) O և N 4) He և Ne

18. Քանի՞ գրամով կպակասի 9,6 գ ամոնիումի կարբոնատի զանգվածն այն ջերմային քայքայման ենթարկելիս.

- 1) 11,2 2) 9,6 3) 19,2 4) 14,4

19. Հետևյալ պարզ նյութերից որը չի փոխազդում թթվածնի հետ.

- 1) ալմաստը 2) քլորը 3) գրաֆիտը 4) սիլիցիումը

20. Ո՞ր նյութերը հաջորդաբար կառաջանան կրաջրի մեջ ածխածնի(IV) օքսիդ անցկացնելիս.

- 1) $CaCO_3$ և $Ca(HCO_3)_2$ 3) $CaCO_3$ և CaO
2) $Ca(HCO_3)_2$ և $CaCO_3$ 4) $Ca(HCO_3)_2$ և CaO

21. Հետևյալ թթուներից որը կարելի է օգտագործել՝ կալցիումի կարբոնատից ածխածնի(IV) օքսիդ ստանալու համար.

- 1) ծծմբական թթու 2) սիլիկաթթու 3) աղաթթու 4) ածխաթթու

22. Ինչ կկատարվի, եթե թորած ջուր և մի քանի կաթիլ լակմուս պարունակող երկու միանման փորձանոթներից մեկի մեջ անցկացվի ածխածնի(IV) օքսիդ, իսկ մյուսի մեջ ավելացվի ակտիվացրած ածխի փոշի.

- 1) երկու լուծույթներն էլ կգունազրկվեն
2) երկու լուծույթներն էլ կներկվեն վարդագույն
3) առաջին լուծույթը կդառնա վարդագույն, իսկ երկրորդը կգունազրկվի
4) երկու լուծույթներն էլ կմնան մանուշակագույն

23. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Ածխածնի(IV) օքսիդի առավել մեծ քանակ կարացվի մեկ մոլ նստրիումի հիդրոկարբոնատը _____:

- 1) բարձր ջերմաստիճանում տաքացնելիս
2) աղաթթվի հետ փոխազդելիս
3) կրաքարի ջրային սուսպենզիայի հետ խառնելիս
4) կրակաթի հետ խառնելիս

24. Ո՞ր պնդումն է ճիշտ ածխածնի(II) օքսիդի վերաբերյալ.

- 1) ալկալիների հետ փոխազդելիս առաջացնում է կարբոնատներ
2) մոլեկուլում ածխածինը երկվալենտ է
3) մետաղների օքսիդներից վերականգնում է մետաղները
4) հաճելի հոտով դարչնագույն գազային նյութ է

25. Ինչպե՞ս է փոխվում ածխածնի(IV) օքսիդի և ջրային գոլորշու խառնուրդի ծավալն այն առանց օդի մուտքի շիկացած կոքսի վրայով անցկացնելիս.

- 1) մեծանում է 3) մնում է անփոփոխ
2) փոքրանում է 4) կրկնապատկվում է

26. Ո՞ր քիմիական ռեակցիայում է ածխածինը ցուցաբերում միայն վերականգնիչ հատկություն.

- 1) $3C + 4Al = Al_4C_3$ 3) $C + H_2O = CO + H_2$
2) $3C + CaO = CaC_2 + CO$ 4) $C + 2H_2 = CH_4$

27. Հետևյալ կարբիդներից որն է փոխազդում ջրի հետ՝ մեթան առաջացնելով.

- 1) CaC_2 2) SiC 3) Al_4C_3 4) Ag_2C_2

28. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի կալցիումի օքսիդն ածխի հետ շիկացնելիս, եթե ռեակցիայի պինդ արգասիքի զանգվածը 32 գ է.

- 1) 5,6 2) 11,2 3) 16,8 4) 22,4

29. Ո՞ր քիմիական ռեակցիայում է ածխածնի ատոմ պարունակող նյութը ցուցաբերում օքսիդիչ հատկություն.

- 1) $3\text{CO} + \text{Fe}_2\text{O}_3 = 2\text{Fe} + 3\text{CO}_2$ 3) $\text{CO} + \text{Cl}_2 = \text{COCl}_2$
2) $\text{CO}_2 + 2\text{Mg} = 2\text{MgO} + \text{C}$ 4) $\text{CaCO}_3 + \text{H}_2\text{O} + \text{CO}_2 = \text{Ca}(\text{HCO}_3)_2$

30. Ո՞ր զույգ նյութերից յուրաքանչյուրի հետ կփոխազդեն ածխածնի(IV) և սիլիցիումի(IV) օքսիդները համապատասխան պայմաններում.

- 1) H_2O , KOH 2) Na_2CO_3 , C 3) HCl , NaOH 4) $\text{Ca}(\text{OH})_2$, O_2

31. Ո՞ր հատկանիշներով են տարբերվում ածխածնի(IV) և սիլիցիումի(IV) օքսիդները.

- ա) ագրեգատային վիճակով
բ) բյուրեղավանդակի տեսակով
գ) համապատասխան թթուների հիմնայնությամբ
դ) միացությունների նույն դասին պատկանելությամբ

- 1) ա, դ 2) բ, գ, դ 3) ա, բ, դ 4) ա, բ

32. Հետևյալ ուրվագրերին համապատասխան ռեակցիաներից դժող չի ընթանա.

- 1) $\text{CO}_2 + \text{Na}_2\text{CO}_3 + \text{H}_2\text{O} \rightarrow$ 3) $\text{CO}_2 + \text{C} \rightarrow$
2) $\text{CO}_2 + \text{NaHCO}_3 \rightarrow$ 4) $\text{CO}_2 + \text{NaOH} \rightarrow$

33. Ո՞ր նյութերի հետ կարող է փոխազդել ածխածնի(II) օքսիդը համապատասխան պայմաններում.

- ա) Fe_3O_4 բ) NaCl գ) $\text{H}_2\text{SO}_{4(\text{տաք})}$ դ) H_2
1) գ, դ 2) ա, դ 3) ա, գ, դ 4) ա, բ, գ

34. Ո՞րն է սիլիցիումի և նատրիումի հիդրօքսիդի ջրային լուծույթի փոխազդեցության ռեակցիայի կրճատ իոնային հավասարումը.

- 1) $\text{Si} + 4\text{H}^+ = \text{Si}^{4+} + 2\text{H}_2$ 3) $\text{Si} + 6\text{OH}^- = \text{SiO}_3^{2-} + 3\text{H}_2\text{O}$
2) $\text{Si} + 2\text{Na}^+ + 4\text{OH}^- = \text{Na}_2\text{SiO}_3 + 2\text{H}_2$ 4) $\text{Si} + 2\text{OH}^- + \text{H}_2\text{O} = \text{SiO}_3^{2-} + 2\text{H}_2$

35. Ինչ թվով քլորի ատոմ է պարունակում հրդեհները հանգցնելու համար օգտագործվող և 92,2 % զանգվածային բաժին քլոր պարունակող ածխածնի միացությունը.

- 1) 2 2) 3 3) 4 4) 6

36. Քանի չզույգված (կենտ) էլեկտրոն է առկա ածխածնի և սիլիցիումի գրգռված ատոմներում համապատասխանաբար.

- 1) 4 և 2 2) 4 և 4 3) 2 և 4 4) 2 և 2

37. Ինչ բյուրեղավանդակ ունի ալմաստը.

- 1) իոնային 3) ատոմային
2) մոլեկուլային 4) մետաղային

38. Ո՞րն է վերականգնիչ նյութի գործակիցը հետևյալ ուրվագրով վերօքս ռեակցիայում՝ $C + Al \rightarrow \dots$.

- 1) 3 2) 4 3) 2 4) 1

39. Ինչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին կծախսվի 24 գ ածխածինն այրելիս, եթե ռեակցիայի ընթացքում գոյանում է ածխածնի(IV) և (II) օքսիդների հավասարամոլային խառնուրդ.

- 1) 44,8 2) 33,6 3) 22,4 4) 11,2

40. Ո՞ր նյութի հետ կփոխազդի աղաթթուն համապատասխան պայմաններում.

- 1) $CaSO_4$ 2) $MgCl_2$ 3) $Mg(NO_3)_2$ 4) $CaCO_3$

41. Սիլիցիումի դր միացությունն է առաջանում թթվածնի միջավայրում սիլանն այրելիս.

- 1) սիլիկաթթու 3) կարբոնունդ
2) սիլիցիումի(IV) օքսիդ 4) սիլիցիում

42. Ինչպիսին է $NaHCO_3$ –ի ջրային լուծույթի միջավայրը.

- 1) թթվային 2) հիմնային 3) չեզոք 4) ուժեղ թթվային

43. Քանի գրամով կփոքրանա 200 գ $KHCO_3$ աղի զանգվածը այն մինչև հաստատուն զանգված շիկացնելիս.

- 1) 200 2) 100 3) 62 4) 31

44. Ո՞ր նյութը կստացվի նատրիումի կարբոնատի լուծույթն ածխածնի(IV) օքսիդով հագեցնելիս.

- 1) բյուրեղային սոդա 3) կալցինացված սոդա
2) խմելու սոդա 4) կաուստիկ սոդա

45. Կրաջրի մեջ դանդաղ ածխածնի(IV) օքսիդ անցկացնելիս ինչ երևույթ կնկատվի.

- 1) կգոյանա չանհետացող պղտորություն
- 2) կգոյանա որոշ ժամանակ անց անհետացող պղտորություն
- 3) կանջատվի գունավոր նստվածք
- 4) ընդհանրապես չի առաջանա պղտորություն

46. Ո՞ր մետաղի և 2,8 գ սիլիցիումի փոխազդեցությունից կստացվի 30,2 գ զանգվածով սիլիցիդ.

- 1) Ca
- 2) Mg
- 3) Ba
- 4) Sr

47. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի 3,5 գ սիլիցիումի և ավելցուկով կալիումի հիդրօքսիդի ջրային լուծույթի փոխազդեցությունից.

- 1) 1,4
- 2) 2,8
- 3) 5,6
- 4) 11,2

48. Ո՞ր նյութի օգնությամբ կարելի է իրարից տարբերել K_2SiO_3 -ի և K_2CO_3 -ի չոր նմուշները.

- 1) $Ca(OH)_2$
- 2) $CaCl_2$
- 3) HCl
- 4) CO_2

49. Ջրային լուծույթում ո՞ր նյութի հետ չի փոխազդում K_2SiO_3 -ը.

- 1) $Ca(OH)_2$
- 2) CO_2
- 3) HCl
- 4) $NaNO_3$

50. Միմյանցից ինչո՞վ են տարբերվում ածխածնի(IV) օքսիդը և սիլիցիումի(IV) օքսիդը.

- ա) պինդ վիճակում բյուրեղավանդակի տեսակով
- բ) ածխածնի և սիլիցիումի օքսիդացման աստիճանով
- գ) ածխածնի և սիլիցիումի վալենտականությամբ
- դ) ջրում լուծելիությամբ

- 1) ա, բ
- 2) գ, դ
- 3) ա, դ
- 4) բ, գ

51. Ո՞ր նյութերն են օգտագործվում հասարակ (պատուհանի) ապակի ստանալու համար.

- ա) ավազ
- բ) կալցիինացված սոդա
- գ) հեղուկ ապակի
- դ) կրաքար
- ե) կաուստիկ սոդա

- 1) ա, բ, գ
- 2) գ, դ, ե
- 3) ա, բ, դ
- 4) բ, գ, ե

52. Ո՞ր նյութը կառաջանա թթվածնի միջավայրում սիլանն այրելիս.

- 1) սիլիկաթթու
- 2) սիլիցիումի(IV) օքսիդ
- 3) կարբոնոնդ
- 4) սիլիցիումի(II) օքսիդ

53. Ո՞ր պնդում(ներ)ն է(են) ճիշտ սիլիկաթթվի վերաբերյալ.

- ա) միահիմն ուժեղ թթու է
- բ) երկհիմն թույլ թթու է
- գ) լուծույթից անջատվում է դոնդողանման նստվածքի ձևով
- դ) լուծույթում ամբողջությամբ դիսոցված է

- 1) ա, բ 2) բ, դ 3) բ, գ 4) ա, բ, գ

54. Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների ուրվագրերի ծախս և աջ մասերը.

Ճախ մաս	Աջ մաս
ա) $\text{SiO}_2 + \text{Mg}_{(\text{ավելցուկ})} \rightarrow$	1) $\text{MgO} + \text{Si}$
բ) $\text{SiO}_2 + \text{Na}_2\text{CO}_3 \rightarrow$	2) $\text{MgO} + \text{Mg}_2\text{Si}$
գ) $\text{SiO}_2 + \text{HF} \rightarrow$	3) $\text{SiF}_4 + \text{H}_2\text{O}$
	4) $\text{Na}_2\text{SiO}_3 + \text{CO}_2$
	5) $\text{SiH}_4 + \text{OF}_2$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ4, գ5 2) ա2, բ4, գ5 3) ա2, բ4, գ3 4) ա1, բ4, գ5

55. Ո՞ր նյութերի հետ կփոխազդի սիլիցիումի(IV) օքսիդը համապատասխան պայմաններում.

- ա) նատրիումի կարբոնատ դ) աղաթթու
- բ) ջուր ե) ածուխ
- գ) ֆտորաջրածնային թթու

- 1) ա, բ, գ 2) բ, գ, դ 3) գ, դ, ե 4) ա, գ, ե

56. Ո՞ր մետաղի սիլիկատն է ջրում լուծվում.

- 1) նատրիումի 2) կալցիումի 3) մագնեզիումի 4) բարիումի

57. Ո՞ր ռեակցիաներն են ընթանում ապակու արտադրությունում.

- ա) $\text{SiO}_2 + \text{Na}_2\text{CO}_3 = \text{Na}_2\text{SiO}_3 + \text{CO}_2$
- բ) $\text{Na}_2\text{SiO}_3 + 2\text{HCl} = 2\text{NaCl} + \text{H}_2\text{SiO}_3$
- գ) $\text{H}_2\text{SiO}_3 = \text{H}_2\text{O} + \text{SiO}_2$
- դ) $\text{SiO}_2 + \text{CaCO}_3 = \text{CaSiO}_3 + \text{CO}_2$

- 1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) ա, դ

58. Ըստ զանգվածի 73,7% CaO և 26,3% SiO₂ պարունակող պորտլանդցեմենտի նմուշում որքան է բաղադրամասերի մոլային հարաբերությունը.

- 1) 2 : 1 2) 1 : 1 3) 3 : 1 4) 1 : 2

59. Ո՞ր նյութով է հնարավոր տարբերել կալիումի սիլիկատի և նատրիումի կարբոնատի ջրային լուծույթները.

- 1) BaCl_2 2) $\text{Ca}(\text{NO}_3)_2$ 3) HCl 4) Na_2SO_4

60. Ո՞ր կարբոնատը չի ենթարկվում ջերմային քայքայման.

- 1) CaCO_3 2) MgCO_3 3) $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ 4) Na_2CO_3

61. Որքան է $\text{Fe}_3\text{O}_4 + \text{CO} \rightarrow \text{Fe} + \dots$ ուրվագրով ռեակցիայի հավասարման բանակաշարական գործակիցների գումարը.

- 1) 8 2) 12 3) 13 4) 10

62. Ո՞րն է $\text{Si} + \text{KOH} + \text{H}_2\text{O} \rightarrow \dots$ ուրվագրով ռեակցիայի հավասարման մեջ վերականգնման հետևանքով ստացված նյութի գործակիցը.

- 1) 1 2) 3 3) 2 4) 4

63. Որո՞նք են բաց թողած բառերը.

Սիլիցիումը բարձր ջերմաստիճանում կալցիումի հետ առաջացնում է _____, որի և աղաթթվի փոխազդեցության արդյունքում անջատվում է _____ գազային նյութը.

- 1) սիլիկատ, սիլան 3) սիլիցիդ, ջրածին
2) սիլիցիդ, սիլան 4) սիլիկատ, ջրածին

64. Միանման պայմաններում ո՞ր աղն ավելի խոր հիդրոլիզի կենթարկվի.

- 1) Na_2CO_3 2) Na_2SO_3 3) Na_2SiO_3 4) Na_3PO_4

65. Ո՞ր շարքի միացություններն են դասավորված սիլիցիումի ատոմի օքսիդացման աստիճանի աճման կարգով.

- 1) $\text{Na}_2\text{SiO}_3, \text{SiO}_2, \text{SiO}$ 3) $\text{Mg}_2\text{Si}, \text{Si}, \text{SiF}_4$
2) $\text{SiO}_2, \text{H}_2\text{SiO}_3, \text{SiF}_4$ 4) $\text{Si}, \text{H}_2\text{SiO}_3, \text{H}_4\text{SiO}_4$

66. Ո՞րն է կարբորունդի պարզագույն բանաձևը.

- 1) CaC_2 2) Al_4C_3 3) SiC 4) Mg_2Si

67. Ո՞ր նյութերի փոխազդեցության է համապատասխանում կրճատ իոնային հավասարման հետևյալ աջ մասը $\dots \rightarrow (\text{SiO}_3)^{2-} + \text{H}_2\text{O}$.

- 1) $\text{SiO}_2 + \text{KOH} \rightarrow$ 3) $\text{K}_2\text{SiO}_3 + \text{NaOH} \rightarrow$
2) $\text{Si} + \text{Mg} \rightarrow$ 4) $\text{Si} + \text{NaOH} + \text{H}_2\text{O} \rightarrow$

68. Հետևյալ նյութերից որի հետ է սիլիցիումը որպես օքսիդիչ փոխազդում.

- 1) թթվածնի 2) ածխածնի 3) մագնեզիումի 4) ալկալու

69. Ո՞ր տարրերի օքսիդներից է ապակին ստանում տարբեր գունային երանգներ.

- 1) s 2) p 3) f 4) d

70. Ո՞ր զույգ տարրերն են և՛ բարձրագույն օքսիդում, և՛ ջրածնային միացությունում ցուցաբերում միևնույն վալենտականությունը.

- 1) N և P 2) C և Si 3) F և Br 4) O և S

71. Ո՞ր շարքում են $Ne3s^23p^2$ էլեկտրոնային բանաձևն ունեցող տարրի բարձրագույն օքսիդի և ջրածնական միացության բանաձևերը.

- 1) RO_2 և RH_4 2) R_2O_5 և RH_3 3) RO_3 և H_2R 4) R_2O_7 և HR

72. Հետևյալ նյութերից որն է առաջանում կարբոնատներն ու հիդրոկարբոնատները թթվով մշակելիս.

- 1) C 2) CH_4 3) CO 4) CO_2

2.2.4. Ածխածնի ենթախումբ: Ածխածին և սիլիցիում

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	25	1	49	4
2	2	26	3	50	3
3	2	27	3	51	3
4	2	28	2	52	2
5	2	29	2	53	3
6	2	30	2	54	3
7	2	31	4	55	4
8	2	32	2	56	1
9	3	33	2	57	4
10	1	34	4	58	3
11	1	35	3	59	3
12	1	36	2	60	4
13	2	37	3	61	2
14	3	38	2	62	3
15	1	39	2	63	2
16	3	40	4	64	3
17	1	41	2	65	3
18	2	42	2	66	3
19	2	43	3	67	1
20	1	44	2	68	3
21	3	45	2	69	4
22	3	46	3	70	2
23	2	47	3	71	1
24	3	48	3	72	4

ԳԼՈՒԽ 3. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ

3.1. ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Հետևյալ պնդումներից որոնք են ճիշտ.

- ա) օրգանական քիմիան ածխաջրածինների ու դրանց ածանցյալների քիմիան է
 բ) օրգանական քիմիան ածխածնի բոլոր միացությունների քիմիան է
 գ) ածխածինն օրգանական միացություններում քառավալենտ է
- 1) ա, գ 2) բ, գ 3) ա, բ, գ 4) ա, բ

2. Ո՞ր նյութերի մոլեկուլներն են պարունակում միայն sp^3 հիբրիդացված ածխածնի ատոմներ.

- ա) էթանոլ, բ) էթիլեն, գ) մեթիլբրոմիդ, դ) մեթան, ե) ացետիլեն, զ) պրոպանալ
- 1) ա, բ, գ 2) ա, գ, դ 3) բ, դ, ե 4) բ, գ, զ

3. Ո՞րն է sp^2 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը 3-մեթիլ-պենտադիեն-1,4 ածխաջրածնի մոլեկուլում.

- 1) 3 2) 4 3) 2 4) 5

4. Համապատասխանեցրե՛ք միացությունները և միջդասային իզոմերները.

<i>Միացություն</i>	<i>Միջդասային իզոմեր</i>
1) բութին-1	ա) բութեն-1
2) մալթոզ	բ) սախարոզ
3) պրոպեն	գ) գլյուկոզ
4) քացախաթթու	դ) բութադիեն-1,3
	ե) ցիկլոպրոպան
	զ) մեթիլֆորմիատ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1ա, 2գ, 3ե, 4զ 2) 1դ, 2բ, 3ա, 4ե 3) 1դ, 2գ, 3ե, 4զ 4) 1դ, 2բ, 3ե, 4զ

5. Համապատասխանեցրե՛ք նյութերի բանաձևերը և հնարավոր բոլոր իզոմերների թվերը.

<i>Բանաձև</i>	<i>Իզոմերների թիվ</i>
1) C_4H_8	ա) 2
2) C_3H_6	բ) 4
3) C_5H_{12}	գ) 6
4) C_4H_{10}	դ) 3

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1գ, 2ա, 3դ, 4ա 2) 1ա, 2բ, 3գ, 4դ 3) 1գ, 2դ, 3ա, 4բ 4) 1ա, 2բ, 3գ, 4զ

6. Ո՞ր զույգ նյութերն են հոմոլոգներ.

- 1) էթանոլ և էթանոլիոլ
- 2) էթան և էթեն
- 3) ցիկլոբութան և բութեն
- 4) քացախաթթու և մրջնաթթու

7. Որո՞նք են բաց թողած բառերը.

Պրոպանալը և ացետոնը _____ :

- 1) հոմոլոգներ են
- 2) բազմակի կապի իզոմերներ են
- 3) միջդասային իզոմերներ են
- 4) երկրաչափական իզոմերներ են

8. Ո՞ր շարքի բոլոր նյութերն են ցիկլոհեքսանի իզոմերներ.

- 1) մեթիլցիկլոպենտանը, 1,1- երկմեթիլցիկլոբութանը, հեքսեն-2-ը
- 2) 1,2-երկմեթիլցիկլոբութանը, 2-մեթիլպենտեն-1-ը, 2-մեթիլպենտանը
- 3) 1,1,2-եռմեթիլցիկլոպրոպանը, 2-մեթիլպենտեն-2-ը, հեքսանը
- 4) 1,2,3-եռմեթիլցիկլոպրոպանը, 3-մեթիլպենտեն-1-ը, 3-մեթիլպենտանը

9. Նույն թվով ածխածնի ատոմներ պարունակող հետևյալ զույգերից որո՞նք են իզոմերներ.

- 1) ալկադիենը և ալկենը
- 2) ալկանը և ցիկլոալկանը
- 3) կարբոնաթթուն և էսթերը
- 4) միատոմ սպիրտը և էսթերը

10. Ո՞ր նյութն է ն-հեքսանի կառուցվածքային իզոմերը.

- 1) 3- էթիլպենտան
- 2) 2-մեթիլպրոպան
- 3) 2,2-երկմեթիլպրոպան
- 4) 2,2-երկմեթիլբութան

11. Ո՞ր նյութն է մեթիլցիկլոպենտանի իզոմեր.

- 1) ն-պենտան
- 2) ն-հեքսան
- 3) հեքսեն-1
- 4) հեքսին-1

12. Ինչպե՞ս են անվանվում այն միացությունները, որոնց մոլեկուլներն իրարից տարբերվում են մեկ կամ մի քանի CH₂ խմբերով.

- 1) իզոտոպներ
- 2) իզոբարներ
- 3) հոմոլոգներ
- 4) իզոմերներ

13. Համապատասխանեցրե՞ք հիբրիդացման տեսակը և հիբրիդային օրբիտալում s-օրբիտալի մասնաբաժինը (%).

<i>Հիբրիդացման տեսակ</i>	<i>s-օրբիտալի մասնաբաժին (%)</i>
1) sp ³	ա) 25
2) sp ²	բ) 50
3) sp	գ) 33,33
	դ) 70

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1ա, 2դ, 3բ
- 2) 1բ, 2ա, 3դ
- 3) 1բ, 2գ, 3ա
- 4) 1ա, 2գ, 3բ

14. Ո՞ր միացության մոլեկուլում են ածխածնի ատոմները sp^3 հիբրիդային վիճակում.

- 1) C_2H_2 2) C_2H_4 3) C_2H_6 4) C_6H_6

15. Ինչի՞ է հավասար sp^3 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը բութեն-2-ի մոլեկուլում.

- 1) 3 2) 4 3) 2 4) 5

16. Ի՞նչ հիբրիդային վիճակում են ածխածնի ատոմները 2,2-երկմեթիլբութանի մոլեկուլում.

- 1) sp^3 2) sp^2 3) ն sp^2 , ն sp 4) ն sp^2 , ն sp^3

17. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Հիբրիդացումը պտոմային օրբիտալների _____ ըստ _____ և ձևի:

- 1) հավասարեցումն է, էներգիայի 3) դասավորվածությունն է, ձևի
 2) ուղղորդվածությունն է, էներգիայի 4) բևեռացումն է, ձևի

18. Ի՞նչ հիբրիդային վիճակում են ածխածնի ատոմներն ալկինների մոլեկուլներում՝ բացառությամբ ացետիլենի.

- 1) sp 2) sp, sp^3 3) sp^2 4) sp, sp^2

19. Երկրորդային ածխածնի քանի՞ ատոմ է առկա 2-մեթիլ-3-էթիլպենտանի մոլեկուլում.

- 1) 1 2) 2 3) 4 4) 6

20. Համապատասխանեցրե՞ք նյութերի անվանումները և դրանց մոլեկուլներում երրորդային ածխածնի ատոմների թիվը.

Նյութ	Երրորդային ածխածնի ատոմների թիվ
1) 2,3-երկմեթիլբութան	ա) 1
2) 2-մեթիլբութան	բ) 0
3) 2,2-երկմեթիլպրոպան	գ) 3
4) 2,3,4-տրիմեթիլպենտան	դ) 2

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1դ, 2ա, 3բ, 4գ 3) 1դ, 2բ, 3ա, 4գ
 2) 1ա, 2բ, 3գ, 4դ 4) 1ա, 2գ, 3բ, 4դ

21. Համապատասխանեցրե՛ք նյութի անվանումը և դրա մոլեկուլում π -կապերի թիվը.

Նյութ	π -կապերի թիվ
1) օքսալաթթու	ա) 1
2) ացետալդեհիդ	բ) 3
3) ազոտ	գ) 2
4) հեքսադիեն-1,4	դ) 4

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) 1ա, 2բ, 3դ, 4գ | 3) 1գ, 2դ, 3ա, 4դ |
| 2) 1գ, 2ա, 3գ, 4գ | 4) 1ա, 2բ, 3գ, 4դ |

22. Ո՞ր նյութի մոլեկուլում են առկա միայն σ -կապեր.

- 1) պրոպեն 2) դիվինիլ 3) ցիկլոհեքսան 4) վինիլբրոմիդ

23. Ո՞րն է sp^3 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը ալկալու սպիրտային լուծույթի և 3-բրոմ-2-մեթիլպենտանի խառնուրդի տաքացումից գոյացած ածխաջրածնի մոլեկուլում.

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

24. Հետևյալ նյութերից որի՞ մոլեկուլում է քիմիական կապերի թիվը համընկնում ածխածնի ատոմի օքսիդացման աստիճանի թվային արժեքին.

- 1) մեթան 2) էթան 3) պրոպան 4) բութան

25. Համապատասխանեցրե՛ք նյութի կառուցվածքային բանաձևը և անվանումը.

Բանաձև	Անվանում
1) $\text{CH}_3-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\text{CH}_2-\text{CH}_2-\text{CH}_3$	ա) 2-մեթիլպենտան
2) $\text{CH}_3-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\text{CH}_2-\text{CH}_3$	բ) 2,2-երկմեթիլպրոպան
3) $\text{CH}_3-\underset{\text{CH}_3}{\text{C}}-\text{CH}_3$	գ) 2,3-երկմեթիլպենտան
4) $\text{CH}_3-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\text{CH}_2-\text{CH}_3$	դ) 2-մեթիլբութան
	ե) 2,2-երկմեթիլբութան

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) 1ա, 2գ, 3գ, 4դ | 3) 1ա, 2գ, 3բ, 4դ |
| 2) 1գ, 2դ, 3ա, 4բ | 4) 1բ, 2գ, 3ե, 4դ |


26. Ո՞ր նյութն է ենթարկվում պոլիմերացման.

- 1) բենզոլ 2) մեթանոլ 3) վինիլբենզոլ 4) բութանոլ

27. Հետևյալ նյութերից որի թթվային հատկություններն են առավել ուժեղ արտահայտված.

- 1) էթանոլ 2) մեթանոլ 3) ֆենոլ 4) ացետոն

28. Ներկայացված բանաձևերով նյութերից որն է օժտված թույլ թթվային հատկություններով.



3.1. Քիմիական կառուցվածքի տեսություն

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	1	11	3	21	2
2	2	12	3	22	3
3	2	13	4	23	4
4	4	14	3	24	1
5	1	15	3	25	3
6	4	16	1	26	3
7	3	17	1	27	3
8	1	18	2	28	4
9	3	19	2		
10	4	20	1		

3.2. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ. ԱԼԿԱՆՆԵՐ ԵՎ ՑԻԿԼՈԱԼԿԱՆՆԵՐ

1. Ո՞րն է մոլեկուլում ջրածնի 20 ատոմ պարունակող սահմանային ածխաջրածնի բանաձևը.

- 1) C_9H_{20} 2) $C_{10}H_{20}$ 3) $C_{11}H_{20}$ 4) $C_{13}H_{20}$

2. Ո՞ր շարքում են առաջնային, երկրորդային, երրորդային և չորրորդային ածխածնի ատոմների թվերը 2,2,4-եռմեթիլպենտանի մոլեկուլում համապատասխանաբար.

- 1) 4, 1, 2, 1 2) 5, 1, 2, 1 3) 5, 1, 1, 1 4) 2, 3, 1, 1

3. Հետևյալ բանաձևերով նյութերից որո՞նք են մեթանի հոմոլոգներ.

- ա) C_6H_6 գ) $C_{10}H_{22}$ ե) C_5H_{10} է) C_3H_8
բ) $C_{13}H_{28}$ դ) C_2H_2 զ) C_7H_8 ը) $C_{10}H_{18}$
- 1) բ, գ, է 2) գ, զ, է 3) բ, դ, ե 4) ա, գ, զ

4. Ո՞րն է C_5H_{12} բանաձևն ունեցող իզոմեր ածխաջրածինների թիվը.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

5. Ի՞նչ մասնիկներ են գոյանում օրգանական միացությունների մոլեկուլներում կովալենտային կապի հետերոլիտիկ խզումից.

- 1) ռադիկալներ 3) նույնանուն լիցքով իոններ
2) չեզոք մոլեկուլներ 4) տարանուն լիցքով իոններ

6. Երրորդային ածխածնի քանի՞ ատոմ է առկա 2,2,5,6-քառամեթիլ-4-էթիլ-4-իզոպրոպիլհեպտանի մոլեկուլում.

- 1) 3 2) 4 3) 5 4) 6

7. Երկրորդային ածխածնի քանի՞ ատոմ է առկա 2,2,5,5-քառամեթիլ-4-էթիլհեպտանի մոլեկուլում.

- 1) 2 2) 3 3) 5 4) 6

8. Ո՞ր նյութը կարելի է օգտագործել լաբորատորիայում մեթան ստանալու համար.

- 1) մեթանալ 3) նատրիումի ացետատ
2) մեթանոլ 4) նատրիումի էթիլատ

9. Համապատասխանեցրե՞ք ածխաջրածնի կառուցվածքային և դրա հոմոլոգիական շարքի ընդհանուր բանաձևերը.

Կառուցվածքային բանաձև	Հոմոլոգիական շարքի ընդհանուր բանաձև
ա) $\text{CH}_3 - \text{C}(\text{CH}_3)_2 - \text{CH}_3$	1) C_nH_{2n}
բ) $\text{CH}_3 - \text{CH} = \text{C}(\text{CH}_3) - \text{CH}_3$	2) $\text{C}_n\text{H}_{2n-6}$
գ) $\text{CH}_3 - \text{C} \equiv \text{C} - \text{CH}_2 - \text{CH}_3$	3) $\text{C}_n\text{H}_{2n+2}$
դ) $\text{CH}_3 - \text{C}(\text{CH}_3) = \text{C} - \text{CH} = \text{CH}_2$	4) $\text{C}_n\text{H}_{2n-2}$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ4, գ3, դ1 2) ա3, բ2, գ1, դ4 3) ա4, բ1, գ4, դ2 4) ա3, բ1, գ4, դ4

10. Հետևյալ միացություններից որո՞նք են իզոմերներ.

- | | | | |
|------------------|-----------------------|---------------|------------|
| ա) 2-մեթիլհեքսան | դ) 3-մեթիլհեքսան | | |
| բ) 3-մեթիլհեպտան | ե) 2,4-երկմեթիլհեքսան | | |
| գ) 3-էթիլհեքսան | զ) 2-մեթիլօկտան | | |
| 1) ա, գ, դ | 2) բ, գ, ե | 3) բ, ա, գ, զ | 4) ա, բ, դ |

11. Ո՞ր շարքում են միայն ալկանների անվանումներ.

- 1) բութեն-1, ցիկլոբութան, պրոպեն
- 2) էթեն, բութեն-2, պրոպան
- 3) պրոպան, 2-մեթիլբութան, հեքսան
- 4) մեթան, բութադիեն-1,3, ցիկլոպրոպան

12. Ջրածնի քանի՞ ատոմ է առկա ալկանի մեկ մոլեկուլում, եթե դրանում ածխածնի առաջնային ատոմների թիվը երեք անգամ մեծ է չորրորդային ատոմների թվից, իսկ ածխածնի երկրորդային և երրորդային ատոմներ չկան.

- 1) 8 2) 10 3) 18 4) 26

13. Որքան է σ -կապերի թիվը ալկանի մոլեկուլում, եթե դրանում ածխածնի առաջնային ատոմների թիվը երեք անգամ մեծ է չորրորդային ատոմների թվից, իսկ ածխածնի երկրորդային և երրորդային ատոմներ չկան.

- 1) 8 2) 10 3) 15 4) 25

14. Որքան է ալկանների հոմոլոգիական շարքում երկու հարևան ածխաջրածինների մեկական մոլեկուլներում առկա կովալենտային կապերի թվի տարբերությունը.

- 1) 3 2) 2 3) 4 4) 5

15. Ինչ հիբրիդային վիճակում են ածխածնի ատոմները հեքսանում և ցիկլոհեքսանում համապատասխանաբար.

- 1) sp և sp^2 2) sp^2 և sp^2 3) sp^3 և sp^3 4) sp^3 և sp^2





16. Համապատասխանեցրե՞ք ալկանի անվանումը և բանաձևը.

Անվանում	Բանաձև
ա) ն-հեքսան	1) $CH_3-CH_2-CH_2-CH_2-CH_2-CH_3$
բ) 2-մեթիլպենտան	2) $CH_3-\overset{\overset{H}{ }}{C}-CH_2-CH_2-CH_3$ $ $ CH_3
գ) 2,2-երկմեթիլբութան	3) $H_3C-CH_2-\overset{\overset{H}{ }}{C}-CH_2-CH_3$ $ $ CH_3
դ) 2,3-երկմեթիլբութան	4) $CH_3-\overset{\overset{CH_3}{ }}{C}-CH_2-CH_3$ $ $ CH_3
	5) $CH_3-\overset{\overset{H}{ }}{C}-\overset{\overset{H}{ }}{C}-CH_3$ $ $ $ $ CH_3 CH_3

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ2, գ5, դ4 2) ա1, բ3, գ5, դ4 3) ա2, բ3, գ4, դ5 4) ա1, բ2, գ4, դ5

17. Համապատասխանեցրե՞ք ցիկլոալկանի բանաձևը և անվանումը.

Բանաձև	Անվանում
1) 	ա) 1,2-երկմեթիլցիկլոպրոպան
2) 	բ) 1,2-երկմեթիլցիկլոբութան
3) 	գ) 1,3-երկմեթիլցիկլոպենտան
4) 	դ) 1,1-երկմեթիլցիկլոպրոպան ե) 1,2-երկմեթիլցիկլոպենտան զ) 1,1-երկմեթիլցիկլոպենտան

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1դ, 2բ, 3ե, 4գ 2) 1գ, 2բ, 3գ, 4ա 3) 1դ, 2ա, 3գ, 4ե 4) 1գ, 2բ, 3ե, 4դ

18. Ո՞ր ցիկլոալկանը կստացվի 4-մեթիլ-1,4-երկբրոմպենտանի և մետաղական նատրիումի տաքացումից.

- 1) 1,1-երկմեթիլցիկլոբութան 3) 1,3-երկմեթիլցիկլոբութան
 2) 1,2-երկմեթիլցիկլոբութան 4) մեթիլցիկլոպենտան

19. Քանի զույգ էլեկտրոն է պատկերվում իզոբութանի մոլեկուլի էլեկտրոնային բանաձևում.

- 1) 26 2) 13 3) 10 4) 3

20. Ո՞ր պնդումն է սխալ ցիկլոպրոպանի վերաբերյալ.

- 1) ունի հարթ կառուցվածք
 2) մոլեկուլում առկա են «բանանային» կապեր
 3) ստացվում է 1,3-երկբրոմպրոպանից
 4) ունի կանոնավոր քառանկիստային կառուցվածք

21. Հետևյալ ալկաններից որի՞ եռման ջերմաստիճանն է առավել բարձր.

- 1) 3-մեթիլպենտան 3) 2,3-երկմեթիլբութան
 2) ն-հեքսան 4) 2,2-երկմեթիլբութան

22. Ո՞րն է մոլեկուլում միայն առաջնային և երրորդային ածխածնի ատոմներ պարունակող ալկանի անվանումը, եթե դրա մոլեկուլում առաջնային ածխածնի ատոմների թիվը երկու անգամ մեծ է երրորդային ածխածնի ատոմներից.

- 1) 2-մեթիլբութան 3) 2,3-երկմեթիլպենտան
 2) 2,3-երկմեթիլբութան 4) 2-մեթիլպենտան

23. Ո՞րն է n -թվով ածխածնի ատոմներ պարունակող ալկանում ածխածնի զանգվածային բաժնի որոշման բանաձևը.

- 1) $6n/7n + 1$ 2) $7n/7n + 1$ 3) $7n/7n - 1$ 4) $6n/7n - 3$

24. Ինչ քանակով (մոլ) ջուր է ստացվում 1 մոլ n -թվով ածխածնի ատոմներ պարունակող ալկանի լրիվ այրման արդյունքում.

- 1) $n - 1$ 2) $2n + 2$ 3) $n + 1$ 4) $2n - 1$

25. Ո՞րն է թթվածնի գործակիցը C_nH_{2n+2} ընդհանուր բանաձևն ունեցող ածխաջրածինների լրիվ այրման ռեակցիայի հավասարման մեջ.

- 1) $1,5n + 0,5$ 2) $1,5n$ 3) $1,5n - 0,5$ 4) $1,5n + 1,5$

26. Ո՞ր ցիկլոալկանի և բրոմի միացման արգասիքն է 3-մեթիլ-2,4-երկբրոմպենտանը.

- 1) 1,2-երկմեթիլցիկլոբութան 3) մեթիլցիկլոպենտան
 2) 1,1,2-եռմեթիլցիկլոպրոպան 4) 1,2,3-եռմեթիլցիկլոպրոպան


27. Ալկաններին բնորոշ դր ռեակցիան է ընթանում ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությամբ.

- 1) դեհիդրման 2) այրման 3) քլորացման 4) կրեկինգի

28. Ո՞րն է ալկանների դեհիդրման ռեակցիայի կատալիզատորը.

- 1) նիկելը 3) ալյումինի քլորիդը
2) արծաթը 4) խիտ ծծմբական թթուն

29. Փոխարկումների հետևյալ շղթայում դր նյութերն են ալկաններ.



- 1) A, D 2) B, C 3) A, B 4) C, D

30. Հետևյալ ալկաններից դրը հնարավոր չէ ենթարկել արոմատացման.

- 1) 2,3-երկմեթիլհեքսանը 3) ն-օկտանը
2) 3-էթիլհեքսանը 4) 2,4-երկմեթիլպենտանը

31. Ո՞ր ալկանը հնարավոր չէ ստանալ Վյուրցի եղանակով, բայց Դյունայի եղանակով հնարավոր է.

- 1) էթանը 2) պրոպանը 3) մեթանը 4) օկտանը

32. Ո՞ր շարքում են ցիկլոհեքսանի դեհիդրման կատալիզատորը և օրգանական հնարավոր արգասիքը.

- 1) Pt, բենզոլ 2) Mg, ցիկլոհեքսեն 3) Al_2O_3 , բենզոլ 4) ZnO, բենզոլ

33. Ո՞ր նյութի հետ կփոխազդի մեթանը.

- 1) մետաղական նատրիումի 3) կալիումի պերմանգանատի
2) ջրածնի 4) քլորի

34. Ո՞ր նյութից կարելի է ստանալ ցիկլոբութան.

- 1) 1,2-երկբրոմբութան
2) 1,3-երկբրոմբութան
3) 1,4-երկբրոմբութան
4) 2,2-երկբրոմբութան

35. Ո՞ր ալկանն է ենթարկվել կրեկինգի, եթե վերջանյութերում պարունակվում են միայն բութան և իզոմեր բութենների խառնուրդ.

- 1) օկտան 2) 2-մեթիլհեքսան 3) հեպտան 4) դեկան

3.2. Սահմանային ածխաջրածիններ. ալկաններ և ցիկլոալկաններ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	1	15	3	29	1
2	3	16	4	30	4
3	1	17	1	31	3
4	2	18	1	32	1
5	4	19	2	33	4
6	1	20	4	34	3
7	2	21	2	35	1
8	3	22	2	36	3
9	4	23	1	37	1
10	2	24	3	38	2
11	3	25	1	39	1
12	3	26	4	40	2
13	4	27	3		
14	1	28	1		

3.3. ՉՀԱԳԵՑԱԾ (ԱԼԿԵՆՆԵՐ, ԱԼԿԻՆՆԵՐ, ԱԼԿԱԴԻԵՆՆԵՐ) ԵՎ ԱՐՈՄԱՏԻԿ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ

1. Ո՞ր դասի ածխաջրածիններին է համապատասխանում C_nH_{2n} ընդհանուր բանաձևը.

- 1) ալկաններին 2) ալկեններին 3) արեններին 4) ալկիններին

2. Համապատասխանեցրե՞ք միացության անվանումը և բանաձևը.

Անվանում	Բանաձև
ա) պրոպեն	1) $CH_3 - C(CH_3) = CH - CH_3$
բ) 2-մեթիլբուտեն-2	2) $CH_2 = CH - CH_2 - OCOCH_3$
գ) 1-բրոմբուտեն-2	3) $Br - CH_2 - CH = CH - CH_3$
դ) վինիլացետատ	4) $CH_2 = CH - OCOCH_3$
	5) $CH_3 - CH = CH_2$

Ո՞ր շարքի բոլոր պայրասխաններն են ճիշտ.

- 1) ա5, բ1, գ3, դ4 2) ա5, բ1, գ2, դ3 3) ա1, բ2, գ5, դ4 4) ա2, բ3, գ2, դ1

3. Ալկենների հոմոլոգիական շարքում իրար հաջորդող երկու անդամների մեկական մոլեկուլներում ջրածնի ատոմների գումարային թիվը 11-ով մեծ է ածխածնի ատոմների գումարային թվից: Քանի՞ իզոմեր ալկեն է համապատասխանում փոքր մոլային զանգվածով ալկենին (տարածական իզոմերիան անտեսել):

- 1) 4 2) 5 3) 6 4) 7

4. Երրորդային ածխածնի քանի՞ ատոմ է առկա ալկանի մեկ մոլեկուլում, որը ստացվել է մետաղական նատրիումի հետ պրոպենի և քլորաջրածնի փոխազդեցության արգասիքի տաքացումից.

- 1) 1 2) 3 3) 4 4) 2

5. Ո՞րն է կովալենտային կապերի ընդհանուր թիվը ածխածնի հինգ ատոմ պարունակող ալկենի մոլեկուլում.

- 1) 5 2) 10 3) 15 4) 14

6. Ո՞ր շարքում են հետևյալ միափուլ փոխարկումն իրագործելու համար անհրաժեշտ նյութերն ու պայմանները. $C_nH_{2n+1}Br \rightarrow C_nH_{2n}$.

- 1) $KMnO_4$, (H_2O , $5^\circ C$) 3) H_2SO_4 (խիտ, $140^\circ C$)
2) KOH (ջրային լ-թ) 4) KOH (սպիրտային լ-թ)

7. Հետևյալ միացություններից ո՞րն է 1:1 մոլային հարաբերությամբ $CH_2=CH-CH=CH_2$ և Br_2 նյութերի փոխազդեցության հիմնական արգասիքը.

- 1) 3,4-երկբրոմբուտեն-1 3) 1,4-երկբրոմբուտան
2) 1,2-երկբրոմբուտան 4) 1,4-երկբրոմբուտեն-2

8. Համապատասխանեցրե՞ք ածխաջրածնի բանաձևը և դրանում ածխածնի ատոմի հիբրիդային վիճակը.

Բանաձև	Ածխածնի ատոմի հիբրիդային վիճակ
ա) $\text{CH}_3 - \text{C}(\text{CH}_3)_2 - \text{CH}_3$	1) sp
բ) $\text{C}_6\text{H}_5 - \text{CH} = \text{CH}_2$	2) sp^3
գ) $\text{H} - \text{C} \equiv \text{C} - \text{H}$	3) sp^2
դ) $\text{CH}_2 = \text{CH} - \text{CH} = \text{CH}_2$	4) sp^2 և sp^3

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ4, գ3, դ1 2) ա3, բ2, գ1, դ4 3) ա4, բ1, գ4, դ2 4) ա2, բ3, գ1, դ3

9. Ո՞րն է sp^2 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը էթիլենային ածխաջրածնի մեկ մոլեկուլում.

- 1) 4 2) 3 3) 2 4) 1

10. Ո՞ր շարք են ներառված ածխածնի ատոմների հիբրիդային վիճակները պենտեն-2 ածխաջրածնի՝ $\text{CH}_3 - \text{CH} = \text{CH} - \text{CH}_2 - \text{CH}_3$, մոլեկուլում ձախից աջ.

- 1) sp^3 sp sp sp^2 sp^3 3) sp^3 sp^2 sp^2 sp^3 sp^3
 2) sp^3 sp^2 sp^2 sp^2 sp^3 4) sp^3 sp^2 sp^3 sp^2 sp^3

11. Հետևյալ բանաձևերն ունեցող միացություններից ո՞րն է 2-մեթիլբութեն-1-ի իզոմերը.

- 1) $\text{CH}_3 - \text{C}(\text{CH}_3)_2 - \text{CH}_3$ 3) $\text{CH}_3 - \text{HC} = \text{CH} - \text{CH}_2 - \text{CH}_3$
 2) $\text{CH}_3 - \text{CH} = \text{C}(\text{CH}_3) - \text{CH}_2 - \text{CH}_3$ 4) $\text{CH}_3 - \text{C}(\text{CH}_3) = \text{C} - \text{CH} = \text{CH}_2$

12. Ո՞ր շարքի զույգ միացություններն են իզոմերներ.

- 1) իզոպրեն և բութադիեն-1,3 3) իզոպրեն և պենտադիեն-1,3
 2) վինիլբրոմիդ և պոլիվինիլբրոմիդ 4) ցիկլոբութեն և բութեն-2

13. Հետևյալ միացություններից ո՞րն է պրոպենի և քլորաջրածնի փոխազդեցության հիմնական արգասիքը.

- 1) $\text{CH}_2\text{Cl} - \text{CH} = \text{CH}_2$ 3) $\text{CH}_3 - \text{CHCl} - \text{CH}_3$
 2) $\text{CH}_3 - \text{CH}_2 - \text{CH}_2\text{Cl}$ 4) $\text{CH}_2 = \text{C} = \text{CH}_2$

14. Հետևյալ միացություններից ո՞րն է 2-մեթիլպրոպենի և ջրի միացման հիմնական արգասիքը.

- 1) 2-բութանոլ 3) 2-մեթիլպրոպանոլ-1
 2) 1-բութանոլ 4) 2-մեթիլպրոպանոլ-2

15. Որքան է ալկենի հարաբերական մոլեկուլային զանգվածը, եթե այդ ալկենից և բութանից բաղկացած խառնուրդի միջին մոլեկուլային զանգվածը 34 է.

- 1) 28 2) 42 3) 56 4) 70

16. Ո՞ր պնդումը ճիշտ չէ բութեն-1-ի վերաբերյալ.

- 1) մոլեկուլում բոլոր կապերը համարժեք են
2) իզոմեր է մեթիլցիկլոպրոպանին
3) գունազրկում է բրոմաջուրը
4) գունազրկում է $KMnO_4$ -ի ջրային լուծույթը

17. Որքան է ջրածնի զանգվածային բաժինը (%) պոլիվինիլքլորիդի տարրական օղակում.

- 1) 1,6 2) 3,2 3) 4,8 4) 6,4

18. Հետևյալ նյութերից ո՞րը կատալի կալիումի պերմանգանատի ջրային լուծույթի մեջ պրոպեն անցկացնելիս.

- 1) պրոպանոլ-1 3) պրոպանոլիոլ-1,3
2) պրոպանոլ-2 4) պրոպանոլիոլ-1,2

19. Ո՞ր զույգ ազդանյութերի միջոցով է հնարավոր միմյանցից տարբերել մեթանը, էթենը և էթինը.

- 1) բրոմաջուր և ամոնիակաջուր
2) բրոմաջուր և արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթ
3) կալիումի պերմանգանատի ջրային լուծույթ և բրոմաջուր
4) ամոնիակաջուր և ալկալու սպիրտային լուծույթ

20. Հետևյալ միացություններից ո՞րը կարող է գունազրկել բրոմաջուրը.

- 1) մեթան 2) էթան 3) էթիլեն 4) բութան

21. Ո՞ր դեպքում ջրի միացումը ալկենին կընթանա հակառակ Մարկովնիկովի կանոնի.

- 1) $CH_3 - CH = CH_2$ 3) $CF_3 - CH = CH_2$
2) $CH_3 - CH_2 - CH = CH_2$ 4) $CH_3 - (CH_3)C = CH_2$

22. Ո՞ր զույգ միացությունները կարող են պոլիմերացվել.

- 1) էթիլեն և պրոպան 3) պրոպեն և իզոպրեն
2) բենզոլ և տոլուոլ 4) էթան և քլորոպրեն

23. Ո՞ր շարքի նյութերը կարող են օքսիդանալ կալիումի պերմանգանատի ջրային լուծույթով.

- 1) մեթան, էթան, էթին 3) տոլուոլ, 1-բութեն, էթին
2) էթան, պրոպեն, բենզոլ 4) հեքսան, էթեն, պրոպին

- 3) ֆենոլֆտալեինով
- 4) կալիումի պերմանգանատի ջրային լուծույթով

29. Հետևյալ միացություններից որի և կալիումի հիդրօքսիդի սպիրտային լուծույթի փոխազդեցության արգասիքն է 2,3-երկմեթիլբուտեն-2-ը.

- 1) 2-բրոմ-2,3-երկմեթիլբուտան
- 2) 1-բրոմ-2,3-երկմեթիլբուտան
- 3) 3-բրոմ-2,3-երկմեթիլբուտան
- 4) 2,3-երկբրոմ-2,3-երկմեթիլբուտան

30. Հետևյալ լուծույթներից որը կարելի է օգտագործել էթիլենը և ագետիլենն իրարից տարբերելու համար.

- 1) կալիումի պերմանգանատի (ջրային)
- 2) կալիումի հիդրօքսիդի (սպիրտային)
- 3) արծաթի օքսիդի (ամոնիակային)
- 4) նատրիումի հիդրօքսիդի (ջրային)

31. Ո՞ր շարքում են համապատասխանաբար կալիումի պերմանգանատի ջրային լուծույթով էթիլենի և ագետիլենի օքսիդացման արգասիքները.

- 1) էթանոլ և քացախաթթու
- 2) էթանոլիոլ և քացախաթթու
- 3) էթիլենգլիկոլ և մրջնաթթու
- 4) էթիլենգլիկոլ և թրթնջկաթթու

32. Ո՞ր կաուչուկի մոնոմերն է 2-մեթիլ-1,3-բութադիենը.

- 1) իզոպրենային
- 2) բութադիենային
- 3) քլորոպրենային
- 4) բութադիենստիրոլային

33. Ո՞րն է բնական կաուչուկի կրկնվող տարրական օղակը.

- 1) $-(-\text{CH}_2 - \text{CH} = \text{CH} - \text{CH}_2) -$
- 2) $-(-\text{CH}_2 - \underset{\text{CH}_3}{\text{C}} = \text{CH} - \text{CH}_2) -$
- 3) $-(-\text{CH}_2 - \underset{\text{Cl}}{\text{C}} = \text{CH} - \text{CH}_2) -$
- 4) $-(-\text{CH}_2 = \text{CH} - \text{CH} = \text{CH}_2) -$

34. Ո՞ր ածխաջրածինների ընդհանուր բանաձևի հետ է համընկնում դիենների ընդհանուր բանաձևը.

- 1) ալկանների
- 2) ալկենների
- 3) ալկինների
- 4) ցիկլոալկանների

35. C_5H_8 բանաձևն ունեցող ինչ թվով զուգորդված դիեններ կարող են լինել.

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4

36. Համապատասխանեցրե՛ք ակադիենի տեսակը և ածխաջրածնի անվանումը.

Ակադիենի տեսակ	Ածխաջրածին
1) զուգորդված	ա) պենտադիեն-1,4
2) կուտակված	բ) պրոպադիեն-1,2
3) մեկուսացված	գ) բութադիեն-1,3
	դ) հեքսադիեն-1,4
	ե) պենտադիեն-1,3
	զ) պենտադիեն-1,2

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|---------------------|---------------------|
| 1) 1գ,ե, 2բ,զ, 3ա,դ | 3) 1գ,ե, 2ա,դ, 3բ,զ |
| 2) 1ա,դ, 2գ,ե, 3բ,զ | 4) 1բ,զ, 2ա,դ, 3գ,ե |

37. Ո՞ր բանաձևով է որոշվում n -թվով ածխածնի ատոմներ պարունակող դիենային ածխաջրածնի հարաբերական մոլեկուլային զանգվածը.

- 1) $14n + 2$ 2) $14n$ 3) $14n - 2$ 4) $14n - 6$

38. Ո՞րն է n -թվով ածխածնի ատոմներ պարունակող դիենային ածխաջրածնում ջրածին տարրի զանգվածային բաժնի որոշման բանաձևը.

- 1) $n/7n + 1$ 2) $n/14n - 2$ 3) $n - 1/7n - 1$ 4) $n/7n - 3$

39. Հետևյալ միացություններից ո՞րն է բնական կաուչուկի մոնոմերը.

- 1) տոլուոլ 2) ստիրոլ 3) քլորոպրեն 4) իզոպրեն

40. Հետևյալ գործընթացներից որով է հնարավոր ստանալ բութադիենային կաուչուկ.

- 1) բութանի դեհիդրումով
 2) 2-մեթիլբութանի դեհիդրումով
 3) էթանոլի միաժամանակյա դեհիդրումով և դեհիդրատացումով
 4) բութադիեն-1,3-ի պոլիմերացումով

41. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Վուլկանացումը բարձր ջերմաստիճանում կաուչուկի մշակումն է _____:

- 1) հեղուկ քլորով 3) չափավոր քանակով ծծմբով
 2) բրոմի ավելցուկով 4) թթվածնով հարստացրած օդով

42. Քանի լիտր (ս. պ.) ջրածին է միացել 16,8 լ 1,3-բութադիենին, եթե հայտնի է, որ հիդրումից առաջացած բութանի և բութեն-2-ի խառնուրդը կարող է գունազրկել 800 գ 10 %-անոց բրոմաջուրը.

- 1) 11,2 2) 16,8 3) 22,4 4) 44,8

43. Ո՞ր պնդումն է ճիշտ.

- ա) պրոպանը դեհիդրելիս հաջորդաբար առաջանում են պրոպեն և պրոպին
բ) պրոպենը հիդրատացնելիս առաջանում է պրոպանոլ-2
- 1) երկուսն էլ ճիշտ են
2) երկուսն էլ ճիշտ չեն
3) ճիշտ է միայն ա-ն
4) ճիշտ է միայն բ-ն

44. Հետևյալ նյութերից որի հետ չի փոխազդում ացետիլենը.

- 1) ածխածնի(IV) օքսիդի
2) քլորաջրածնի
3) ջրածնի
4) ջրի

45. Ինչպե՞ս է փոխվում C–C կապի երկարությունը էթան–էթեն–էթին շարքում.

- 1) մեծանում, ապա փոքրանում է
2) փոքրանում, ապա մեծանում է
3) մեծանում է
4) փոքրանում է

46. Ի՞նչ թվով և ինչպիսի՞ կովալենտային կապերով են կապված ածխածնի ատոմները ացետիլենի մոլեկուլում.

- 1) երկու σ , մեկ π
2) մեկ σ , երկու π
3) երեք π
4) երեք σ

47. Ո՞րն է sp^3 հիբրիդային օրբիտալների թիվը պրոպինի մեկ մոլեկուլում.

- 1) 3
2) 4
3) 2
4) 8

48. Որքա՞ն է ածխածին տարրի զանգվածային բաժինը (%) էթիլացետատում.

- 1) 9,1
2) 36,36
3) 37,21
4) 54,55

49. Ո՞րն է փոխարկումների $CaC_2 \rightarrow X \rightarrow C_6H_6$ շղթայում X նյութի և բրոմաջրի ավելցուկի փոխազդեցության արգասիքի հարաբերական մոլեկուլային զանգվածը.

- 1) 186
2) 104
3) 184
4) 346

50. Որքա՞ն է ալկինի մոլային զանգվածը, եթե դրա մեկ մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը 5-ով մեծ է ածխածնի ատոմների թվից.

- 1) 68
2) 96
3) 70
4) 54

51. 3,36 լ (ն. պ.) ացետիլենից ստացել են 2,5 մլ բենզոլ ($\rho = 0,88$ գ/մլ): Որքա՞ն է ռեակցիայի ելքը.

- 1) 20
2) 46,4
3) 56,4
4) 60

52. Ի՞նչ զանգվածով (գ) բենզոլ կստացվի 67,2 լ (ն. պ.) ացետիլենից, եթե ռեակցիան ընթացել է 50 % ելքով.

- 1) 22,4
2) 39
3) 52
4) 78

53. Ինչ զանգվածով (գ) ն-հեպտան է վերածվել տոլուոլի, եթե անջատված ջրածնով քանակապես հիդրվել է 84 գ հեքսեն-1.

- 1) 20 2) 22 3) 25 4) 28

54. Ո՞րն է ածխաջրածնի քիմիական բանաձևը, եթե դրա գոլորշու խտությունն ըստ ջրածնի 46 է.

- 1) C_6H_6 2) C_7H_8 3) C_8H_{10} 4) C_9H_{12}

55. Ո՞րն է 1-բրոմպրոպանից երկփուլ սինթեզով բենզոլի ստացման երկու ռեակցիաների հավասարումների գործակիցների գումարային թիվը.

- 1) 13 2) 10 3) 14 4) 12

56. Համապատասխանեցրե՛ք հոմոլոգիական շարքի ընդհանուր բանաձևը այդ շարքի ներկայացուցչի բանաձևին.

<i>Ընդհանուր բանաձև</i>	<i>Ածխաջրածնի բանաձև</i>
ա) C_nH_{2n}	1) $CH_3 - CH(CH_3) - CH_3$
բ) C_nH_{2n-6}	2) $CH_2 = CH - CH(CH_3) - CH_3$
գ) C_nH_{2n+2}	3) $CH_2 = CH - CH = CH_2$
դ) C_nH_{2n-2}	4) $C_6H_5 - CH_2 - CH_3$
	5) $CH \equiv C - CH = CH_2$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ4, գ3, դ1 2) ա3, բ2, գ1, դ4 3) ա2, բ5, գ4, դ2 4) ա2, բ4, գ1, դ3

57. Ո՞րն է σ -կապերի գումարային թիվը ստիրոլի մոլեկուլում.

- 1) 12 2) 14 3) 15 4) 16

58. Ո՞րն է σ - կապերի գումարային թիվը հեքսաբրոբենզոլի մոլեկուլում.

- 1) 6 2) 7 3) 12 4) 13

59. Ո՞րն է արոմատիկ ածխաջրածնի քիմիական բանաձևը, եթե դրանում sp^2 և sp^3 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների քանակների հարաբերությունը 3 : 1 է.

- 1) C_6H_6 2) C_7H_8 3) C_8H_{10} 4) C_9H_{12}

60. Ո՞րն է երկմեթիլբենզոլի բենզոլային օղակ պարունակող իզոմերների թիվը.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

61. Որքան է ջրածին տարրի ատոմների մոլային բաժինը ստիրոլի մոլեկուլում.

- 1) 6/13 2) 8/15 3) 1/2 4) 1/3

62. Բենզոլի հոմոլոգներից մեկը կիրառվում է ֆենոլ և ացետոն ստանալու համար: Քանի առաջնային ածխածնի ատոմ է առկա այդ հոմոլոգի մեկ մոլեկուլում.

- 1) 3 2) 2 3) 1 4) 4

63. Ո՞ր նյութից *հնարավոր չէ* մեկ փուլով բենզոլ ստանալ.

- 1) C_6H_{14} 2) C_4H_8 3) $CH \equiv CH$ 4) C_6H_{10}


64. Ո՞ր նյութը կարելի է օգտագործել տոլուոլը բենզոլից տարբերելու համար.

- 1) արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթ
2) կալիումի հիդրօքսիդի սպիրտային լուծույթ
3) կալիումի հիդրօքսիդի ջրային լուծույթ
4) կալիումի պերմանգանատի ջրային լուծույթ

65. Ո՞րն է $FeCl_3$ կատալիզատորի առկայությամբ բենզոլի և քլորի փոխազդեցության արգասիքը.

- 1) քլորբենզոլ 3) հեքսաքլորբենզոլ
2) երկքլորբենզոլ 4) հեքսաքլորցիկլոհեքսան

66. Որո՞նք են X_1 և X_2 նյութերն ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



- 1) մեթան և բենզոլ 3) ացետիլեն և բենզոլ
2) ացետիլեն և հեքսան 4) ացետիլեն և ցիկլոհեքսան

67. Հետևյալ հավասարումներին համապատասխանող ռեակցիաներից որն է ընթանում ուլտրամանուշակագույն ճառագայթման ազդեցությամբ.

- 1) $C_6H_6 + 3Cl_2 \rightarrow C_6H_6Cl_6$ 3) $C_6H_6 + HNO_3 \rightarrow C_6H_5NO_2 + H_2O$
2) $C_6H_6 + 3H_2 \rightarrow C_6H_{12}$ 4) $C_6H_6 + Cl_2 \rightarrow C_6H_5Cl + HCl$

68. Որքան է էթենի ծավալային բաժինը (%) էթենի և էթանի 20 լ խառնուրդում, եթե այդ խառնուրդը բրոմաջուր պարունակող սրվակի միջով անցկացնելիս վերջինիս զանգվածն ավելացել է 2,8 գրամով.

- 1) 1,96 2) 2,8 3) 5,6 4) 11,2

3.3. Չհազեցած (ալկեններ, ալկիններ, ալկադիեններ) և արոմատիկ
ածխաջրածիններ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	24	1	47	2
2	1	25	2	48	4
3	2	26	3	49	4
4	4	27	3	50	2
5	3	28	4	51	3
6	4	29	1	52	2
7	4	30	3	53	3
8	4	31	4	54	2
9	3	32	1	55	1
10	3	33	2	56	4
11	3	34	3	57	4
12	3	35	2	58	3
13	3	36	1	59	3
14	4	37	3	60	3
15	1	38	3	61	3
16	1	39	4	62	2
17	3	40	4	63	2
18	4	41	3	64	4
19	2	42	3	65	1
20	3	43	1	66	3
21	3	44	1	67	1
22	3	45	4	68	4
23	3	46	2		

3.4. ՍՊԻՐՏՆԵՐ ԵՎ ՖԵՆՈԼՆԵՐ

1. Ո՞րն է սահմանային միատոմ սպիրտների ընդհանուր բանաձևը.

- 1) $C_nH_{2n-1}OH$ 2) $C_nH_{2n}OH$ 3) C_nH_nOH 4) $C_nH_{2n+1}OH$

2. $C_nH_{2n+2}O$ մոլեկուլային բանաձևը օրգանական միացությունների դր դասի ընդհանուր բանաձևն է.

- 1) ալդեհիդների 3) սպիրտների
2) կարբոնաթթուների 4) էսթերների

3. Հետևյալ միացություններից ո՞րն է մեթանոլի հոմոլոգը.

- 1) էթանդիոլ-1,2 3) պրոպանտրիոլ-1,2,3
2) պրոպանոլ 4) բենզիլսպիրտ

4. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ջրածին կանջատվի 12,4 գ զանգվածով էթիլենգլիկոլի և ավելցուկով մետաղական նատրիումի փոխազդեցությունից.

- 1) 1,12 2) 2,24 3) 4,48 4) 5,6

5. Ո՞րն է 2-մեթիլ-2-բութանոլի բանաձևը.

- 1) $\begin{array}{c} \text{H} \quad \text{H} \\ | \quad | \\ \text{H}_3\text{C}-\text{C}-\text{C}-\text{CH}_3 \\ | \quad | \\ \text{OH} \quad \text{H} \end{array}$ 3) $\begin{array}{c} \text{H} \quad \text{OH} \\ | \quad | \\ \text{H}_3\text{C}-\text{C}-\text{C}-\text{CH}_3 \\ | \quad | \\ \text{CH}_3 \quad \text{H} \end{array}$
2) $\begin{array}{c} \text{H} \quad \text{CH}_3 \\ | \quad | \\ \text{H}_3\text{C}-\text{C}-\text{C}-\text{OH} \\ | \quad | \\ \text{H} \quad \text{CH}_3 \end{array}$ 4) $\begin{array}{c} \text{H} \quad \text{H} \quad \text{H} \\ | \quad | \quad | \\ \text{H}_3\text{C}-\text{C}-\text{C}-\text{C}-\text{CH}_3 \\ | \quad | \quad | \\ \text{OH} \quad \text{H} \quad \text{H} \end{array}$

6. Ո՞ր դեպքում է ճիշտ պատկերված ջրածնային կապերի առաջացումը էթանոլի մոլեկուլների միջև.

- 1) $\text{H}_3\text{C}-\text{H}_2\text{C}-\overset{\text{O}}{\curvearrowright}-\text{H} \dots \text{H} \dots \overset{\text{O}}{\curvearrowleft}-\text{CH}_2-\text{CH}_3$ 3) $\text{H}_3\text{C}-\text{H}_2\text{C}-\overset{\text{O}}{\curvearrowright}-\text{H} \dots \text{H}_3\text{C}-\text{CH}_2-\overset{\text{O}}{\curvearrowleft}-\text{H}$
2) $\text{H}_3\text{C}-\text{H}_2\text{C}-\overset{\text{O}}{\curvearrowright}-\text{H} \dots \text{H} \dots \text{H}-\overset{\text{O}}{\curvearrowleft}-\text{CH}_2-\text{CH}_3$ 4) $\text{H}_3\text{CH}_2\text{C}-\overset{\text{O}}{\curvearrowright} \dots \text{CH}_3-\overset{\text{H}_2}{\text{C}}-\overset{\text{O}}{\curvearrowleft}-\text{H}$

7. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազային վերջանյութ կստացվի գլյուկոզի սպիրտային խմորման ընթացքում 69 գ սպիրտ առաջանալիս.

- 1) 3,36 2) 4,48 3) 33,6 4) 44,8

8. Համապատասխանեցրե՛ք նյութի բանաձևը և անվանումը.

Նյութի բանաձև	Նյութի անվանում
ա) $\text{H}_3\text{C}-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\underset{\text{OH}}{\text{CH}}-\text{CH}_3$	1) 2-մեթիլ-2-բութանոլ 2) 3-մեթիլ-1-բութանոլ 3) 2-մեթիլ-2-պենտանոլ
բ) $\text{H}_3\text{C}-\underset{\text{CH}_3}{\overset{\text{OH}}{\text{C}}}-\text{CH}_2-\text{CH}_3$	4) 2-մեթիլ-1-բութանոլ 5) 3-մեթիլ-2-բութանոլ 6) 2,3-երկմեթիլ-2-բութանոլ
գ) $\text{H}_3\text{C}-\underset{\text{CH}_3}{\overset{\text{OH}}{\text{C}}}-\text{CH}_2-\text{CH}_2-\text{CH}_3$	
դ) $\text{H}_3\text{C}-\underset{\text{OH}}{\overset{\text{CH}_3}{\text{C}}}-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\text{CH}_3$	

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա5, բ1, գ3, դ6 | 3) ա4, բ5, գ3, դ2 |
| 2) ա3, բ6, գ5, դ1 | 4) ա3, բ6, գ1, դ2 |

9. Համապատասխանեցրե՛ք նյութի պատահական և միջազգային անվանումները.

Պատահական անվանում	Միջազգային անվանում
ա) փայտի սպիրտ	1) էթանոլ
բ) գինու սպիրտ	2) մեթանոլ
գ) գլիցերին	3) 1,2,3-պրոպանտրիոլ
դ) էթիլենգլիկոլ	4) 1,2-էթանդիոլ 5) պրոպանոլ-1 6) 1,2-պրոպանդիոլ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա2, բ1, գ3, դ4 | 3) ա4, բ1, գ3, դ6 |
| 2) ա5, բ2, գ6, դ1 | 4) ա2, բ4, գ6, դ4 |

10. Ո՞րն է սահմանային միատոմ սպիրտի բանաձևը, եթե դրանում ածխածնի զանգվածային բաժինը 60 % է.

- 1) $\text{C}_3\text{H}_7\text{OH}$ 2) $\text{C}_2\text{H}_5\text{OH}$ 3) $\text{C}_4\text{H}_9\text{OH}$ 4) $\text{C}_5\text{H}_{11}\text{OH}$

11. Ո՞րն է ֆենոլի մոլեկուլում առկա σ -կապերի թիվը.

- 1) 6 2) 9 3) 12 4) 13

12. Քանի՞ երրորդային սպիրտ կարող է ունենալ $C_6H_{13}OH$ ընդհանուր բանաձևը.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

13. Հետևյալ միացություններից որոնք են երկէթիլէթերի իզոմերներ.

- ա) պրոպանոլ-2 դ) բութանոլ-2
բ) բութանոլ-1 ե) պրոպանոլ-1
գ) 2-մեթիլպրոպանոլ-2

- 1) ա, բ, գ 2) բ, դ, ե 3) ա, գ, դ 4) բ, գ, դ

14. Ո՞րն է $C_4H_{10}O$ բանաձևն ունեցող իզոմեր սպիրտների թիվը.

- 1) 2 2) 3 3) 4 4) 6

15. Ո՞րն է $C_4H_{10}O$ քիմիական բանաձևն ունեցող իզոմեր եթերների թիվը.

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

16. Քանի՞ իզոմեր երկատոմ սպիրտներ ունեն $C_4H_{10}O_2$ ընդհանուր բանաձևը.

- 1) 2 2) 4 3) 6 4) 5

17. Հետևյալ ռեակցիաներից որի՞ հետևանքով չի կարող առաջանալ բազմատոմ սպիրտ.

- 1) $CH_2Cl - CHCl - CH_2Cl + 3KOH$ (ջրային լուծույթ) \rightarrow
2) $CH_2Cl - CH_2OH + KOH$ (ջրային լուծույթ) \rightarrow
3) $CH_2Cl - CH_2Cl + 2KOH$ (սպիրտային լուծույթ) \rightarrow
4) $CH_2Cl - CH_2 - CH_2OH + KOH$ (ջրային լուծույթ) \rightarrow

18. Հետևյալ նյութերից որոնց հետ կփոխազդի էթիլենգլիկոլը.

- 1) նատրիումի հիդրօքսիդ 4) ազոտական թթու
2) քսիլոլ 5) քացախաթթու
3) պղնձի(II) հիդրօքսիդ 6) տոլուոլ

- 1) 1, 3, 4, 5 2) 1, 2, 5 3) 2, 4, 6 4) 3, 4, 5, 6

19. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի 4,6 գ նատրիումի և ավելցուկով վերցրած էթիլսպիրտի փոխազդեցությունից.


- 1) 2,24 2) 4,48 3) 1,12 4) 3,36

20. Փոխարկումների հետևյալ շղթայում ո՞րը կարող է լինել X նյութը.

քլորբենզոլ \rightarrow X \rightarrow պիկրինաթթու

- 1) բենզոլ 2) տոլուոլ 3) ֆենոլ 4) նիտրոբենզոլ

21. Ո՞րը կարող է լինել X նյութը հետևյալ ուրվագրով ռեակցիայում.



- 1) մեթանոլ 2) մեթանալ 3) էթանոլ 4) էթանալ


22. Ո՞ր նյութը կստացվի 1,2-երկքլորպրոպանի լրիվ հիմնային հիդրոլիզից.

- 1) 1-պրոպանոլ 3) պրոպանալ
2) 2-պրոպանոլ 4) 1,2-պրոպանդիոլ

23. Ջրում լավ լուծվող սպիտակ, բյուրեղային, բոցի գույնը մանուշակագույն ներկող Ա նյութի լուծույթի մեջ F գազն անցկացնելիս լուծույթը պղտորվում է, և առաջանում է ջրում քիչ լուծվող, հիմքի լուծույթի հետ հեշտությամբ փոխազդող, բնորոշ հոտով G նյութը, որն օդում դառնում է վարդագույն: Որո՞նք են Ա, F, G նյութերը.

- 1) C₆H₅OK, CO₂, C₆H₅OH 3) C₆H₅ONa, CO₂, C₆H₅OH
2) C₂H₅ONa, H₂, CH₃COH 4) C₂H₅OK, CO₂, C₂H₅OH

24. Փոխարկումների հետևյալ շղթայում որո՞նք են համապատասխանաբար X₁, X₂, X₃ և X₄ օրգանական նյութերը.



- 1) բութան, մեթան, մեթիլքլորիդ, մեթանոլ
2) բութան, պրոպեն, 2-բրոմպրոպան, պրոպանոլ-2
3) բութեն, էթիլեն, էթիլքլորիդ, էթանոլ
4) բութան, պրոպեն, 1-բրոմպրոպան, պրոպանոլ-1

25. Հետևյալ նյութերից որո՞նց հետ կփոխազդի NaOH-ը.

- ա) ֆենոլ դ) ացետալդեհիդ
բ) ացետոն ե) մրջնաթթու
գ) քլորէթան
- 1) ա, բ, ե 2) բ, դ, ե 3) ա, գ, ե 4) ա, գ, դ

26. Ինչ զանգվածով (գ) եռբրոմֆենոլի նստվածք կանջատվի 32,9 գ ֆենոլ պարունակող ջրային լուծույթը բրոմաջրի ավելցուկով մշակելիս.

- 1) 115,85 2) 231,7 3) 57,925 4) 173,77

27. 3,5-երկմեթիլֆենոլը բրոմաջրի հետ փոխազդելիս բենզոլային օղակում որքան ջրածնի ատոմներ կտեղակավվեն բրոմով.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5


28. Հետևյալ նյութերից որը կստացվի մեթանոլը պղնձի առկայությամբ թթվածնով օքսիդացնելիս.

- 1) ածխածնի(IV) օքսիդ 3) մեթանալ
2) քացախաթթու 4) մեթանաթթու

29. Հետևյալ նյութերից որի հետ կփոխազդի մետաղական նատրիումը.

- 1) պրոպան 2) պրոպեն 3) պրոպանալ 4) պրոպանոլ

30. Ո՞ր կառուցվածքային բանաձևում է ճիշտ պատկերված էլեկտրոնային զույգերի տեղաշարժը ֆենոլի մոլեկուլում.



31. Ո՞ր շարքի նյութերն են դասավորված ըստ թթվային հատկությունների ուժեղացման.

- 1) էթանոլ, ֆենոլ, էթիլենգլիկոլ, եռնիտրոֆենոլ
2) էթիլենգլիկոլ, էթանոլ, ֆենոլ, եռնիտրոֆենոլ
3) ֆենոլ, եռնիտրոֆենոլ, էթիլենգլիկոլ, էթանոլ
4) էթանոլ, էթիլենգլիկոլ, ֆենոլ, եռնիտրոֆենոլ


32. Ո՞ր նյութը կստացվի պրոպանալը հիդրելիս.

- 1) պրոպան 3) պրոպանոլ-1
2) պրոպանաթթու 4) պրոպանոլ-2

33. Ո՞ր պնդումն է ճիշտ.

- ա) էթիլենի հիդրատացումից ստացվում է էթանոլ
բ) էթանոլը պղնձի(II) օքսիդով օքսիդացնելիս ստացվում է էթանալ
- 1) ճիշտ է միայն ա-ն 3) երկուսն էլ ճիշտ են
2) ճիշտ է միայն բ-ն 4) երկուսն էլ սխալ են

34. Փոխարկումների հետևյալ շղթայում զրո կարող է լինել X նյութը.



- 1) էթանալ 2) պրոպանալ 3) պրոպանոլ-1 4) պրոպանոլ-2

35. Ինչ զանգվածով (գ) էթանոլ է փոխազդել մետաղական նատրիումի հետ, եթե ռեակցիայի հետևանքով անջատվել է 11,2 լ (ն. պ.) ջրածին.

- 1) 11,5 2) 23 3) 34,5 4) 46

36. Համապատասխան պայմաններում ընթացող զրո փոխազդեցության հետևանքով է մեթանոլ ստացվում.

- 1) էթիլենի հիդրատացումը 3) CO-ի և H₂-ի փոխազդեցությունը
2) ացետիլենի հիդրատացումը 4) ֆորմալդեհիդի օքսիդացումը

37. Ո՞ր նյութը կարող է օգտագործվել էթանոլը գլիցերինից տարբերելու համար.

- 1) ջուր 3) պղնձի(II) հիդրօքսիդ
2) նատրիում 4) արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթ

38. Ո՞ր նյութը կստացվի ֆենոլի և ավելցուկով բրոմաջրի փոխազդեցությունից.

- 1) 1-բրոմֆենոլ 2) երկբրոմֆենոլ 3) եռբրոմֆենոլ 4) եռբրոմբենզոլ

39. Հետևյալ նյութերից որի հետ կփոխազդի ֆենոլը.

- 1) NaCl 2) Br₂ 3) KNO₃ 4) C₂H₅OH

40. Ո՞ր նյութի և պղնձի(II) օքսիդի փոխազդեցությունից է ստացվում ալդեհիդ.

- 1) մեթիլպրոպանոլ-2 3) պրոպանոլ-1
2) բութանոլ-2 4) պրոպանոլ-2

41. Որքան է ածխածնի զանգվածային բաժինը (%) պրոպանոլում.

- 1) 40 2) 60 3) 75 4) 80

42. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի 47 գ ֆենոլի և ավելցուկով վերցրած մետաղական նատրիումի փոխազդեցությունից.

- 1) 2,8 2) 5,6 3) 11,2 4) 22,4

43. Համապատասխանեցրե՛ք փոխազդող նյութերը և ռեակցիաների վերջանյութերը.

Փոխազդող նյութեր	Ռեակցիայի վերջանյութեր
ա) $C_6H_5OH + NaOH \rightarrow$	1) $C_6H_5ONa + H_2$
բ) $CH_3CH_2OH + CuO \xrightarrow{t}$	2) $CH_3CH=O + H_2O + Cu$
գ) $CH_3CH_2OH + Na \rightarrow$	3) $CH_3COOH + H_2O + Cu$
դ) $C_6H_5OH + Na \rightarrow$	4) $CH_3CH_2ONa + H_2$
	5) $C_6H_5ONa + H_2O$
	6) $CH_3CH_2ONa + H_2O$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա5, բ3, գ6, դ1 2) ա1, բ2, գ6, դ5 3) ա1, բ3, գ6, դ5 4) ա5, բ2, գ4, դ1

44. Ո՞րն է առավել ուժեղ թթվային հատկություններով օժտված նյութը.

- 1) ֆենոլ 2) ջուր 3) գլիցերին 4) իզոպրոպանոլ

45. Ո՞րն է C_6H_6O բանաձևն ունեցող նյութը, եթե դա փոխազդում է և՛ նատրիումի, և՛ նատրիումի հիդրօքսիդի հետ, իսկ բրոմաջրի ազդեցությամբ փոխարկվում է $C_6H_6Br_3O$ նյութի.

- 1) ֆենոլ 2) հեքսանոլ-1 3) երկարապիլեթեր 4) հեքսին-3-ոլ-2

46. Հիմնականում ի՞նչ նյութ կստացվի 2-մեթիլբրոբանոլ-2-ը դեհիդրատացման, այ-նուհետև հիդրատացման ենթարկելիս.

- 1) 2-մեթիլբրոբանոլ-3 3) 3-մեթիլբրոբանոլ-2
2) 2-մեթիլբրոբանոլ-1 4) 2-մեթիլբրոբանոլ-2

47. Ո՞ր սպիրտների օքսիդացումից կստացվի ալդեհիդ.

- ա) պրոպանոլ-2 դ) պրոպանոլ-1
բ) էթանոլ ե) 2-մեթիլպրոպանոլ-1
գ) 2-մեթիլպրոպանոլ-2 զ) բութանոլ-2
1) բ, դ, ե 2) ա, բ, գ 3) գ, դ, ե 4) ա, գ, զ

48. Հետևյալ սպիրտներից որի՞ դեհիդրատացումից կստացվի սիմետրիկ ալկեն.

- 1) բութանոլ-2 3) մեթիլպրոպանոլ-1
2) բութանոլ-1 4) մեթիլպրոպանոլ-2

49. Թթվածնի քանի՞ ատոմ է առկա 2,4,6-եռնիտրոֆենոլի մեկ մոլեկուլում.

- 1) 1 2) 3 3) 6 4) 7

50. Ո՞ր շարքի նյութերն են դասավորված ըստ թթվային հատկությունների ուժեղացման.

- 1) էթանոլ, ֆենոլ, գլիցերին
2) էթանոլ, գլիցերին, ֆենոլ
3) ֆենոլ, գլիցերին, էթանոլ
4) էթանոլ, ֆենոլ, մեթանոլ

51. Քանի՞ նյութի են համապատասխանում *պրոպեն, ֆենոլ, պրոպիլեն, կարբոլաթթու, էթանոլ, գինու սպիրտ, էթիլսպիրտ, գլիցերին, պրոպանտրիոլ-1,2,3* անվանումները.

- 1) 3
2) 4
3) 5
4) 9

52. Ո՞ր շարքի նյութերը կստացվեն էթիլսպիրտից մեկ փուլով.

- 1) C_2H_4 , $C_2H_5OC_2H_5$, $CH_3COOC_2H_5$
2) C_2H_4 , $C_2H_5OC_2H_5$, C_4H_{10}
3) $C_2H_5OC_2H_5$, CH_4 , $CH_3COOC_2H_5$
4) $C_2H_5OC_2H_5$, CH_4 , C_4H_{10}

53. Պրոպին $\xrightarrow{H_2} X \xrightarrow{H_2O} Y$ ուրվագրով փոխարկումների շղթայում Y նյութի մեկ մոլեկուլում ինչ թվով մեթիլ խմբեր են առկա.

- 1) 0
2) 1
3) 2
4) 3

54. Ո՞ր պնդումներն են ճիշտ սահմանային միատոմ սպիրտների վերաբերյալ.

- ա) առաջնային սպիրտների օքսիդացումից առաջանում են ալդեհիդներ
բ) երկրորդային սպիրտների օքսիդացումից առաջանում են կետոններ
գ) սպիրտների միջմոլեկուլային դեհիդրատացումից առաջանում են էսթերներ

- 1) ա, գ
2) բ, գ
3) ա, բ
4) ա, բ, գ

3.4. Սպիրտներ և ֆենոլներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	4	20	3	39	2
2	3	21	2	40	3
3	2	22	4	41	2
4	3	23	1	42	2
5	2	24	2	43	4
6	1	25	3	44	1
7	3	26	1	45	1
8	1	27	2	46	4
9	1	28	3	47	1
10	1	29	4	48	1
11	4	30	2	49	4
12	2	31	4	50	2
13	4	32	3	51	2
14	3	33	3	52	1
15	3	34	4	53	3
16	3	35	4	54	3
17	3	36	3		
18	1	37	3		
19	1	38	3		

3.5. ԱԼԴԵՀԻԴՆԵՐ ԵՎ ԿԱՐԲՈՆԱԹԹՈՒՆԵՐ

1. Ո՞րն է հազեցած ալդեհիդների ընդհանուր բանաձևը.

- 1) $C_nH_{2n}O_2$ 2) $C_nH_{2n}O$ 3) $C_nH_{2n+2}O$ 4) $C_nH_{2n+2}O_2$

2. Հետևյալ նյութերից ո՞րն է պենտանալի հոմոլոգ.

- 1) պենտեն 2) պենտանոլ 3) պրոպանալ 4) պրոպանոլ

3. Ո՞ր ռեակցիան է պայմանավորված ալդեհիդների մոլեկուլներում առկա π - կապով.

- 1) տեղակալման 2) քայքայման 3) հիդրման 4) այրման

4. Ո՞ր ալդեհիդի մոլեկուլում է ածխածնի sp^3 և sp^2 հիբրիդային օրբիտալների թվերի հարաբերությունը 4 : 1.

- 1) էթանալ 2) պրոպանալ 3) բութանալ 4) պենտանալ

5. Ո՞ր շարքի բոլոր նյութերում է առկա կարբոնիլային խումբ.

- 1) ֆենոլ, տոլուոլ, բենզոլ
 2) էթանոլ, էթանալ, քացախաթթու
 3) մրջնալդեհիդ, մրջնաթթվի մեթիլէսթեր, ացետոն
 4) ացետոն, ացետալդեհիդ, գլիցերին

6. Համապատասխանեցրե՛ք ալդեհիդի անվանումը և դրա օքսիդացման արգասիքի բանաձևը.

Անվանում	Բանաձև
ա) էթանալ	1) CH_3COOH
բ) մեթանալ	2) $C_2H_4(OH)_2$
գ) բութանալ	3) C_2H_5COOH
դ) պրոպանալ	4) $HCOOH$
	5) C_3H_7COOH


Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ2, գ5, դ3 2) ա2, բ4, գ2, դ3 3) ա1, բ4, գ5, դ3 4) ա2, բ4, գ5, դ2

7. Սահմանային ածխաջրածինների ո՞ր ածանցյալներն ունեն $C_nH_{2n}O_2$ ընդհանուր բանաձևը.

- 1) կարբոնաթթուները 3) ալդեհիդները
 2) սպիրտները 4) դիոլները

8. Ո՞ր բանաձևում է ճիշտ պատկերված էլեկտրոնային խտության բաշխումը քլոր-բացախաթթվի մոլեկուլում.



9. Համապատասխանեցրե՞ք կարբոնաթթվի բանաձևը և անվանումը.

Բանաձև	Անվանում
ա) $\text{H}_3\text{C}-\overset{\text{CH}_3}{\text{CH}}-\text{CH}_2-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$	1) 3,3,4-տոմեթիլպենտանաթթու 2) 3,3-երկմեթիլպենտանաթթու
բ) $\text{H}_3\text{C}-\underset{\text{H}_3\text{C}}{\text{CH}}-\text{CH}_2-\text{CH}_2-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$	3) 4-մեթիլպենտանաթթու 4) 3-մեթիլպենտանաթթու
գ) $\text{H}_3\text{C}-\underset{\text{H}_3\text{C}}{\text{CH}}-\overset{\text{CH}_3}{\underset{\text{CH}_3}{\text{C}}}-\text{CH}_2-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$	5) 3-մեթիլբուրթանաթթու 6) 2,2-երկմեթիլպրոպանաթթու
դ) $\text{H}_3\text{C}-\overset{\text{CH}_3}{\underset{\text{H}_3\text{C}}{\text{C}}}-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$	

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ2, գ1, դ5
2) ա5, բ3, գ1, դ6
3) ա5, բ3, գ6, դ1
4) ա4, բ5, գ2, դ3

10. Հետևյալ նյութերից ո՞րն է կարագաթթվի իզոմերը.

- 1) վալերիանաթթու
2) պենտանաթթու
3) 2-մեթիլպրոպանաթթու
4) բենզոլյական թթու

11. Համապատասխանեցրե՛ք նյութի անվանումը և քիմիական բանաձևը.

Անվանում	Բանաձև
ա) էթանաթթու	1) CH_3COOH
բ) մեթանաթթու	2) $\text{CH}_3\text{COOCH}_3$
գ) պրոպանաթթվի մեթիլէսթեր	3) HCOOCH_3
դ) մեթանաթթվի մեթիլէսթեր	4) HCOOCH_3
	5) HCOOH
	6) $\text{C}_2\text{H}_5\text{COOCH}_3$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ5, գ6, դ3 2) ա2, բ4, գ5, դ3 3) ա1, բ4, գ3, դ2 4) ա2, բ4, գ5, դ2


12. Ո՞ր նյութերն են ստացվում ալդեհիդների հիդրումից.

- 1) երկրորդային սպիրտներ 3) կարբոնաթթուներ
2) երրորդային սպիրտներ 4) առաջնային սպիրտներ

13. Ո՞ր միացությանն է բնորոշ արծաթահայելու ռեակցիան.

- 1) էթիլենգլիկոլին 2) բենզոլին 3) բութանոլին 4) բութանալին

14. Ո՞ր շարքում են X_1 , X_2 և X_3 նյութերի բանաձևերն ըստ հետևյալ փոխարկումների.



- 1) CH_3COH , $\text{CH}_3\text{CH}_2\text{OH}$, $\text{CH}_3\text{CH}_2\text{ONa}$
2) CH_3COH , CH_3COOH , CH_3COONa
3) CH_3COOH , CH_3COH , $\text{CH}_3\text{CH}_2\text{ONa}$
4) $(\text{CH}_3\text{COO})_2\text{Cu}$, CH_3COOAg , CH_3COONa

15. Որքան է ալդեհիդի մոլեկուլում ածխածնի զանգվածային բաժինը (%), եթե դրա գոլորշու խտությունն ըստ հելիումի 11 է.

- 1) 54,55 2) 36,365 3) 9,095 4) 60,065

16. Հետևյալ թթուներից ո՞րն է ամենաուժեղը.

- 1) CH_3COOH 2) $\text{C}_6\text{H}_5\text{COOH}$ 3) ClCH_2COOH 4) Cl_2CHCOOH

17. Ո՞ր նյութի հիդրոլիզի արգասիքն է քացախալդեհիդը.

- 1) քլորէթանի 3) 1,2-երկքլորէթանի
2) 1,1-երկքլորէթանի 4) 2,2-երկքլորպրոպանի

18. Հետևյալ նյութերից որը կստացվի պղնձի(II) օքսիդի առկայությամբ էթանոլը օքսիդացնելիս.

- 1) մրջնալրեհիդ 2) ացետալդեհիդ 3) մրջնաթթու 4) երկէթիլէթեր

19. Համապատասխանեցրե՛ք ալդեհիդի և հիդրման արգասիքի բանաձևը.

Ալդեհիդ	Արգասիքի բանաձև
1) $\text{CH}_3-\text{CH}_2-\text{CH}_2-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{H}$	ա) $\text{CH}_3-\text{CH}_2-\text{CH}_2-\text{OH}$
2) $\text{CH}_3-\text{CH}_2-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{H}$	բ) $\text{CH}_3-\text{CH}_2-\text{CH}_2-\text{CH}_2-\text{OH}$
3) $\text{CH}_3-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{H}$	գ) CH_3OH
4) $\text{H}-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{H}$	դ) $\text{CH}_3-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\text{CH}_2\text{OH}$
	ե) $\text{CH}_3-\underset{\text{OH}}{\overset{\text{CH}_3}{\text{C}}}-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\text{CH}_3$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1բ, 2ա, 3դ, 4գ 2) 1ա, 2բ, 3գ, 4դ 3) 1ա, 2բ, 3ե, 4դ 4) 1բ, 2ա, 3ե, 4գ

20. Ո՞ր նյութերը կարող են հայտաբերվել արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով.

- ա) $\text{C}_2\text{H}_5\text{COOH}$ բ) CH_3OH գ) HCOOH դ) $\text{C}_6\text{H}_5\text{OH}$ ե) $\text{C}_3\text{H}_7\text{CHO}$
 1) ա, բ, գ 2) բ, գ, դ 3) գ, ե 4) դ, ե

21. Ո՞ր սպիրտի օքսիդացումից կստացվի 2,2-երկմեթիլպրոպանալ.

- 1) 2-մեթիլպրոպանոլ-1 3) 2,2-երկմեթիլպրոպանոլ-1
 2) 2-մեթիլպրոպանոլ-2 4) 2,2-երկմեթիլբրոպանոլ-2

22. Ո՞րն է X նյութը հետևյալ փոխարկումներում. $\text{C}_2\text{H}_5\text{OH} \rightarrow \text{X} \rightarrow \text{CH}_3\text{COOH}$.

- 1) էթիլեն 2) ացետիլեն 3) էթիլենգլիկոլ 4) ացետալդեհիդ

23. Ո՞ր նյութը կստացվի բութին-1-ի և ջրի փոխազդեցությունից.

- 1) բութանալ 3) բութանոլ-2
 2) բութանոլ-1 4) մեթիլէթիլկետոն

24. Ո՞ր նյութը կստացվի էթանալի օքսիդացումից.

- 1) մրջնաթթու 3) երկմեթիլէթեր
 2) քացախաթթու 4) պրոպանոլ-1

25. Որո՞նք են արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով մրջնալդեհիդի լրիվ օքսիդացման վերջանյութերը.

- | | |
|---|---|
| 1) Ag_2O , HCOOH | 3) Ag , HCOOH |
| 2) Ag , H_2O , CO_2 | 4) Ag , CH_3OH |

26. Ո՞ր ազդանյութով է հնարավոր տարբերել ֆորմալդեհիդը, էթանոլը և գլիցերինը.

- | | |
|-----------------|---------------------------------------|
| 1) բրոմաջուր | 3) թարմ պատրաստված պղնձի հիդրօքսիդ |
| 2) ֆենոլֆտալեին | 4) արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթ |

27. Ո՞րն է Կուլերովի ռեակցիայի հավասարումը.

- | | |
|--|--|
| 1) $\text{C}_2\text{H}_2 + 2\text{Cl}_2 \rightarrow \text{C}_2\text{H}_2\text{Cl}_4$ | 3) $\text{C}_2\text{H}_2 + \text{HOH} \rightarrow \text{CH}_3\text{CHO}$ |
| 2) $\text{C}_2\text{H}_2 + 4 [\text{O}] \rightarrow \text{HOOC}-\text{COOH}$ | 4) $\text{C}_2\text{H}_2 + \text{HBr} \rightarrow \text{CH}_2 = \text{CHBr}$ |

28. Ո՞ր ռեակցիայի արգասիքն է էթանալը.

- | | |
|------------------------|----------------------|
| 1) մեթանոլի օքսիդացման | 3) էթենի հիդրատացման |
| 2) պրոպանոլի հիդրման | 4) էթինի հիդրատացման |

29. Ո՞րն է ալդեհիդի բանաձևը, եթե դրա 23,2 գ զանգվածով նմուշը արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով օքսիդացնելիս գոյացել է 86,4 գ նստվածք.

- | | | | |
|------------------|----------------------------|-------------------------------------|-------------------------------------|
| 1) HCHO | 2) CH_3CHO | 3) $\text{C}_2\text{H}_5\text{CHO}$ | 4) $\text{C}_3\text{H}_7\text{CHO}$ |
|------------------|----------------------------|-------------------------------------|-------------------------------------|

30. Ի՞նչ զանգվածով (գ) էթանոլից կառաջանա 7,92 գ էթանալ, եթե ռեակցիայի ելքը 60 % է.

- | | | | |
|--------|-------|---------|---------|
| 1) 138 | 2) 69 | 3) 13,8 | 4) 7,92 |
|--------|-------|---------|---------|

31. Ո՞ր պնդում(ներ)ն է(են) ճիշտ կարբոնաթթուների վերաբերյալ.

ա) նույն թվով ածխածնի ատոմներ պարունակող կարբոնաթթուները և էսթերները միջդասային իզոմերներ են

բ) մեղմ տաքացման պայմաններում մրջնաթթուն օքսիդանում է $\text{Cu}(\text{OH})_2$ -ով

- | | |
|-----------------------------|-----------------------|
| 1) ձիշտ է միայն <i>ա</i> -ն | 3) երկուսն էլ ձիշտ են |
| 2) ձիշտ է միայն <i>բ</i> -ն | 4) երկուսն էլ սխալ են |

32. Ո՞ր շարքի նյութերն են դասավորված ըստ դրանց մոլեկուլներում ածխածնի օքսիդացման աստիճանի մեծացման.

- | | |
|---|---|
| 1) CH_4 , CH_2O , HCOOH , CO_2 | 3) CH_2O , CO_2 , CH_4 , HCOOH |
| 2) CO_2 , CH_4 , CH_2O , HCOOH | 4) CO_2 , HCOOH , CH_2O , CH_4 |

33. Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների ուրվագրերի ձախ և աջ մասերը.

Ձախ մաս	Աջ մաս
ա) $\text{CH}_3\text{CHO} + \text{Ag}_2\text{O} (\text{NH}_3) \rightarrow$	1) $\text{CH}_3\text{CH}_2\text{OH}$
բ) $\text{HCOOH} + \text{CH}_3\text{OH} \rightarrow$	2) $\text{CH}_3\text{CH}_2\text{OH} + \text{Ag}$
գ) $\text{C}_4\text{H}_{10} + \text{O}_2$ (կատ.) \rightarrow	3) $\text{CH}_3\text{COOH} + \text{Ag}$
դ) $\text{CH}_3\text{CHO} + \text{H}_2$ (կատ.) \rightarrow	4) $\text{HCOOCH}_3 + \text{H}_2\text{O}$
	5) $\text{CH}_3\text{COOH} + \text{H}_2\text{O}$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ2, գ5, դ1 2) ա2, բ4, գ2, դ4 3) ա3, բ4, գ5, դ1 4) ա3, բ5, գ1, դ1

34. Ո՞րն է կարագաթթվի և իզոպրոպիլսպիրտի փոխազդեցությունից ստացված օրգանական միացության մոլեկուլում ջրածնի ատոմների գումարային թիվը.

- 1) 12 2) 14 3) 16 4) 10

35. Համապատասխանեցրե՛ք նյութի անվանումը և հիդրոլիզի հնարավոր արգասիքի բանաձևը.

Անվանում	Բանաձև
ա) էթիլպրոպիոնատ	1) $\text{C}_2\text{H}_5\text{COOH}$
բ) եռստեարին	2) $\text{C}_{15}\text{H}_{31}\text{COOH}$
գ) պրոպիլացետատ	3) CH_3COOH
դ) եռօլեատ	4) $\text{C}_{17}\text{H}_{31}\text{COOH}$
	5) $\text{C}_{17}\text{H}_{33}\text{COOH}$
	6) $\text{C}_{17}\text{H}_{35}\text{COOH}$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ5, գ1, դ2 3) ա1, բ4, գ1, դ2
2) ա1, բ6, գ3, դ5 4) ա3, բ4, գ2, դ6

36. Ո՞րն է X նյութը հետևյալ փոխարկումներում.



- 1) $\text{CH}_3\text{CH}_2\text{OH}$ 2) CH_3ONa 3) $\text{CH}_3\text{CH}_2\text{ONa}$ 4) CH_3COONa

37. Ո՞րն է առավել ուժեղ թթվային հատկություններ ցուցաբերող թթուն.

- 1) HCOOH 2) CH_3COOH 3) $\text{CH}_3\text{CH}_2\text{COOH}$ 4) $\text{CH}_3\text{CH}_2\text{CH}_2\text{COOH}$

38. Ո՞ր նյութի ջրային լուծույթում լակմուսը կկարմրի.

- 1) մեթանաթթու 2) մեթանալ 3) էթանալ 4) էթանոլ

39. Ո՞ր զույգ նյութերի փոխազդեցությունից կառաջանա թթու.

ա) C_4H_{10} և O_2 (t, p, կատ.)

գ) CH_3CHO և H_2 (t, կատ.)

բ) $HCOOK$ և H_2SO_4 (տաք)

դ) CO և H_2 (t, Zn/Cr կատ., p)

1) ա, բ

2) բ, գ

3) ա, դ

4) գ, դ

40. Ո՞ր շարքի մասնիկներն են առկա քացախաթթվի լուծույթում.


1) CH_3COOH , $(CH_3COOH)_2$, CH_3COO^-

3) H^+ , CH_3COOH , OH^-

2) CH_3COO^- , H^+ , $HCOOH$

4) CH_3COO^- , $HCOOH$, $HCOO^-$

41. Ո՞րն է X նյութը փոխարկումների հետևյալ շղթայում.



1) ացետիլեն

2) նատրիումի ացետատ

3) մեթանոլ

4) մեթանալ

42. Ո՞ր նյութի և քացախաթթվի փոխազդեցության արգասիքն է էթիլացետատը.

1) մեթանոլ

2) էթան

3) պրոպան

4) էթանոլ

43. Ո՞ր շարքի բոլոր նյութերը կփոխազդեն Ag_2O -ի ամոնիակային լուծույթի հետ.

1) բենզոլ, մեթանալ, մեթանոլ

2) մեթանալ, մեթանաթթու, մեթիլֆորմիատ

3) գլյուկոզ, էթիլացետատ, էթանալ

4) ֆրուկտոզ, նատրիումի ֆորմիատ, մեթանալ

44. Ո՞ր պնդումներն են ճիշտ քացախաթթվի համար.

ա) սովորական պայմաններում հեղուկ է

բ) կոչվում է նաև մրջնաթթու

գ) միահիմն թույլ թթու է

դ) տալիս է միացման ռեակցիաներ

ե) ստացվում է էթանալը պղնձի(II) հիդրօքսիդով օքսիդացնելիս

1) ա, բ, գ

2) գ, դ, ե

3) բ, դ, ե

4) ա, գ, ե

45. Ո՞րն է հազեցած կարբոնաթթուներին բնորոշ ռեակցիա.

1) հիդրման

3) ներմուլեկուլային դեհիդրատացման

2) հիդրատացման

4) էսթերացման

46. 30 գրամ քացախաթթվի և անհրաժեշտ քանակով էթանոլի փոխազդեցությունից ստացվել է 26,4 գ օրգանական նյութ: Որքան է ռեակցիայի ելքը (%).

1) 40

2) 50

3) 55

4) 60

47. Ո՞ր ազդակի ներգործությամբ ջրային լուծույթում մրջնաթթվի դիսոցման աստիճանը կփոքրանա.

- 1) տաքացում
- 2) նոսրացում
- 3) ավելալու ավելացում
- 4) կալիումի ֆորմիատի ավելացում

48. Ո՞ր շարքի նյութերն են դասավորված ըստ թթվային հատկությունների ուժեղացման.

- 1) երկքլորքացախաթթու, քացախաթթու, քլորքացախաթթու
- 2) քացախաթթու, քլորքացախաթթու, եռքլորքացախաթթու
- 3) եռքլորքացախաթթու, քլորքացախաթթու, քացախաթթու
- 4) երկքլորքացախաթթու, եռքլորքացախաթթու, քլորքացախաթթու

49. Ո՞ր նյութի հետ չի փոխազդի կարագաթթուն.

- 1) ամոնիակ
- 2) էթանոլ
- 3) պղինձ
- 4) էթիլենգլիկոլ

50. Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների ելանյութերը և վերջանյութերը.

<i>Ելանյութ</i>	<i>Վերջանյութ</i>
ա) $\text{HCOOH} + \text{Ag}_2\text{O}_{(\text{NH}_3 \text{ Լ-թ})} \xrightarrow{t}$	1) CH_3COOAg , H_2O
բ) $\text{CH}_3\text{CHO} + \text{Ag}_2\text{O}_{(\text{NH}_3 \text{ Լ-թ})} \xrightarrow{t}$	2) Ag , H_2O , CO_2
գ) $\text{C}_4\text{H}_9\text{COOCH}_3 + \text{H}_2\text{O} \xrightarrow{+\text{NaOH}, t}$	3) CH_3COOH , Ag , H_2O
դ) $\text{CH}_3\text{COOH} + \text{C}_2\text{H}_5\text{OH} \xrightarrow{\text{H}^+}$	4) $\text{C}_4\text{H}_9\text{COONa}$, CH_3OH
	5) $\text{C}_4\text{H}_9\text{OH}$, CH_3COONa
	6) $\text{CH}_3\text{COOC}_2\text{H}_5$, H_2O

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ3, գ5, դ6
- 2) ա2, բ6, գ4, դ6
- 3) ա2, բ3, գ4, դ6
- 4) ա2, բ1, գ4, դ6

51. Ո՞ր նյութը կստացվի մրջնաթթուն արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթի ավելցուկի հետ թույլ տաքացնելիս.

- 1) մեթանոլ
- 2) մրջնալիզինիդ
- 3) ածխածնի(II) օքսիդ
- 4) ածխածնի(IV) օքսիդ

3.5. Աղբեկիղներ և կարբոնաթթուներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	18	2	35	2
2	3	19	1	36	4
3	3	20	3	37	1
4	3	21	3	38	1
5	3	22	4	39	1
6	3	23	4	40	1
7	1	24	2	41	2
8	4	25	2	42	4
9	2	26	3	43	2
10	3	27	3	44	4
11	1	28	4	45	4
12	4	29	3	46	4
13	4	30	3	47	4
14	2	31	3	48	2
15	1	32	1	49	3
16	4	33	3	50	3
17	2	34	2	51	4

3.6. ԷՍԹԵՐՆԵՐ, ՃԱՐՊԵՐ, ԱԾԽԱԶՐԵՐ

1. Ո՞ր նյութի հիդրոլիզից է առաջանում գլիցերին.

- 1) սպիտակուցների 2) ճարպերի 3) ածխաջրերի 4) ամինաթթուների

2. Ինչպե՞ս կարելի է պինդ ճարպ ստանալ հեղուկ ճարպից.

- 1) հիդրոմոմով 2) դեհիդրոմոմով 3) հիդրատացումով 4) հիդրոլիզով

3. Ո՞րն(որո՞նք) է(են) բաց թողած բառ(եր)ը.

Պրոպիոնաթթուն և մեթիլացետատը _____ իզոմերներ են:

- 1) ցիս, տրանս 3) ածխածնային կմախքի
2) միջդասային 4) տարածական

4. Ո՞ր էսթերի հիմնային հիդրոլիզի արգասիք է կարագաթթվի աղը.

- 1) էթիլստեարատ 3) բութիլֆորմիատ
2) մեթիլացետատ 4) էթիլբութիրատ

5. Ո՞ր նյութը չի ստացվում էսթերի հիմնային հիդրոլիզից.

- 1) էթանոլ 3) կարբոնաթթու
2) էթիլենգլիկոլ 4) կարբոնաթթվի աղ

6. Ո՞րն է կարագաթթվի և իզոպրոպիլսպիրտի փոխազդեցության օրգանական արգասիքի մոլեկուլում մեթիլ խմբերի գումարային թիվը.

- 1) 2 2) 3 3) 4 4) 1

7. Ո՞ր նյութն է մրջնաթթվի և 3-մեթիլբութանոլ-1-ի էսթերացման արգասիքը.

- 1) բութիլֆորմիատ 3) իզոպենտիլացետատ
2) պենտիլֆորմիատ 4) իզոպենտիլֆորմիատ

8. Ո՞րն է բութանոլի և քացախաթթվի փոխազդեցության արգասիքը.

- 1) բութիլացետատ 3) մեթիլֆորմիատ
2) էթիլբութիրատ 4) էթիլացետատ

9. Ո՞րն է $C_3H_6O_2$ բանաձևն ունեցող բոլոր իզոմերների թիվը.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

10. Ո՞ր ճարպը կարող է գունազրկել կալիումի պերմանգանատի ջրային լուծույթը.

- 1) եռօլեատ 3) եռպալմիտատ
2) եռստեարատ 4) բուրբիրոներկաստեարատ

11. Ո՞ր նյութերի փոխազդեցության արգասիքն է օճառը.

- 1) գլիցերին և NaOH 3) քացախաթթու և Na_2CO_3
2) կարազաթթու և KOH 4) ստեարինաթթու և NaOH

12. Ո՞ր թթուների մնացորդներն են հիմնականում պարունակվում բնական ճարպերի մոլեկուլներում.

- ա) HCOOH գ) $\text{C}_{15}\text{H}_{31}\text{COOH}$ ե) $\text{C}_{17}\text{H}_{33}\text{COOH}$
բ) CH_3COOH դ) $\text{C}_{17}\text{H}_{35}\text{COOH}$
1) գ, դ, ե 2) ա, բ, գ 3) բ, գ, ե 4) ա, բ, դ

13. Ո՞րն է իզոպրոպիլացետատի հիդրոլիզից ստացված սպիրտի մոլեկուլում σ -կապերի թիվը.

- 1) 10 2) 12 3) 9 4) 11

14. Ո՞ր զույգի ճարպաթթուները կարելի է միմյանցից տարբերել բրոմաջրով.

- 1) օլեինաթթու և լինոլենաթթու 3) ստեարինաթթու և պալմիտինաթթու
2) օլեինաթթու և լինոլաթթու 4) պալմիտինաթթու և օլեինաթթու

15. Ո՞ր նյութի ջրային լուծույթի և ճարպի փոխազդեցությունից է առաջանում հեղուկ օճառ.

- 1) NaOH 2) KOH 3) NaCl 4) KCl

16. Համապատասխանեցրե՛ք նյութի անվանումը և դրա հիդրոլիզի արգասիք թթվի բանաձևը.

Անվանում	Բանաձև
ա) էթիլպրոպիոնատ	1) $\text{C}_2\text{H}_5\text{COOH}$
բ) եռստեարին	2) $\text{C}_{15}\text{H}_{31}\text{COOH}$
գ) պրոպիլացետատ	3) CH_3COOH
դ) եռօլեատ	4) $\text{C}_{17}\text{H}_{31}\text{COOH}$
	5) $\text{C}_{17}\text{H}_{33}\text{COOH}$
	6) $\text{C}_{17}\text{H}_{35}\text{COOH}$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ5, գ1, դ2 3) ա1, բ4, գ1, դ2
2) ա1, բ6, գ3, դ5 4) ա3, բ4, գ2, դ6

17. Միաթթու ճարպի լրիվ հիդրումից առաջացած նոր ճարպի M_r -ի արժեքը 6 միավորով մեծ է ելային ճարպի M_r -ի արժեքից: Ո՞ր ճարպաթթվի մնացորդն է եղել ելային ճարպում.

- | | |
|------------------|---------------|
| 1) ստեարինաթթվի | 3) լինոլաթթվի |
| 2) պալմիտինաթթվի | 4) օլեինաթթվի |


18. Ո՞ր միացությունն է օքսիդանում պղնձի(II) հիդրօքսիդով.

- | | |
|---------------------------|-----------------------------|
| 1) քացախաթթվի էթիլէսթերը | 3) պրոպիոնաթթվի մեթիլէսթերը |
| 2) մրջնաթթվի պրոպիլէսթերը | 4) կարագաթթվի բուրբիլէսթերը |

19. $C_4H_8O_2$ բաղադրությամբ էսթերներից քանիսն են տալիս արծաթահայելու ռեակցիա.

- | | | | |
|------|------|------|------|
| 1) 1 | 2) 4 | 3) 3 | 4) 2 |
|------|------|------|------|

20. Ո՞ր ճարպաթթվի մնացորդն է բացակայում հետևյալ ճարպի բաղադրության մեջ.



- | | |
|------------------|---------------|
| 1) պալմիտինաթթվի | 3) օլեինաթթվի |
| 2) ստեարինաթթվի | 4) լինոլաթթվի |

21. Ո՞րն է բաց թողած արտահայտությունը.

Երբ կարբոնաթթուն փոխազդում է թթվածնի նշանակիր արում պարունակող մոլեկուլի հետ, ապա ծանր իզոպոպը _____:

- 1) հայտնվում է ջրի մոլեկուլում
- 2) հայտնվում է ն էսթերի, ն ջրի մոլեկուլներում
- 3) հայտնվում է էսթերի մոլեկուլում
- 4) հայտնվում է ն սպիրտի, ն ջրի մոլեկուլներում

22. Նյութերի ո՞ր դասերի ընդհանուր բանաձևն է $C_nH_{2n}O_2$.

- 1) սահմանային միատոմ սպիրտների և էսթերների
- 2) ալդեհիդների և կետոնների
- 3) սահմանային միախիմ կարբոնաթթուների և էսթերների
- 4) երկատոմ սպիրտների

23. Համապատասխանեցրե՛ք նյութի անվանումը և հարաբերական մոլեկուլային զանգվածի արժեքը (M_r).

Անվանում	M_r
ա) էթանալ	1) 60
բ) էթանոլ	2) 44
գ) էթանաթթու	3) 46
դ) էթիլացետատ	4) 92
	5) 88

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ3, գ1, դ5 2) ա2, բ4, գ3, դ5 3) ա1, բ3, գ4, դ2 4) ա3, բ4, գ5, դ1

24. Որքան կարող է լինել M_r հարաբերական մոլեկուլային զանգվածով միահիմն կարբոնաթթվի և մեթանոլի փոխազդեցությունից ստացված էսթերի հարաբերական մոլեկուլային զանգվածը.

- 1) $M_r + 32$ 2) $M_r + 12$ 3) $M_r + 14$ 4) $M_r - 14$

25. $C_5H_{10}O_2$ բաղադրությամբ իզոմեր էսթերներից քանիսը կարող են փոխազդել արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթի հետ.

- 1) 2 2) 4 3) 5 4) 6

26. Ո՞ր միացությունում է թթվածնի զանգվածային բաժինն ամենամեծը.

- 1) գլյուկոզ 2) գլյուկոնաթթու 3) ֆրուկտոզ 4) սորբիտ

27. Ո՞րն է β -գլյուկոզի բնական պոլիմեր.


- 1) թաղանթանյութ 2) օսլա 3) գլիկոգեն 4) ամիլոզ

28. Ինչ զանգվածով (գ) էթանոլ և ինչ ծավալով (լ, ն. պ.) ածխածնի(IV) օքսիդ են առաջանում 450 գ գլյուկոզի սպիրտային խմորումից.

- 1) 230 և 44,8 2) 220 և 44,8 3) 230 և 112 4) 220 և 112

29. Ո՞ր նյութին է համապատասխանում ներկայացված կառուցվածքային բանաձևը.

- 1) գլյուկոզի β -ձևին
 2) ֆրուկտոզին
 3) մալթոզին
 4) գլյուկոզի α -ձևին



30. Որքան է ազոտի զանգվածային բաժինը (%) բջջանյութի երկնիտրատում.

- 1) 5,5 2) 11,11 3) 16,5 4) 33,05

31. Ո՞րն է X նյութը փոխարկումների հետևյալ շղթայում՝ $C_6H_{12}O_6 \rightarrow X \rightarrow CaCO_3$.

- 1) էթանալը 3) ածխածնի(IV) օքսիդը
2) էթանոլը 4) քացախաթթուն

32. Ո՞ր ռեակցիան բնորոշ է բջջանյութին.

- 1) այրումը 2) հիդրոլիզը 3) նիտրացումը 4) հիդրատացումը

33. Ո՞ր ազդանյութի հետ չի փոխազդում օսլան.

- 1) յոդի սպիրտային լուծույթի 3) թթուների առկայությամբ ջրի
2) նատրիումի քլորիդի 4) կենսակատալիզատորների առկայությամբ ջրի

34. Ո՞ր զույգի նյութերից յուրաքանչյուրին է բնորոշ արծաթահայելու ռեակցիան.

- 1) գլյուկոզ և ֆորմալդեհիդ 3) սախարոզ և գլիցերին
2) ֆրուկտոզ և ֆորմալդեհիդ 4) սախարոզ և ֆորմալդեհիդ

35. Ո՞րն է ալդեհիդասպիրտ.

- 1) գլյուկոզ 2) ֆրուկտոզ 3) սախարոզ 4) օսլա

36. Ո՞ր նյութը արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով չի օքսիդանում.

- 1) գլյուկոզը 2) սախարոզը 3) ռիբոզը 4) դեզօքսիռիբոզը


37. Ո՞ր խմբերն են առկա գլյուկոզի կառուցվածքում.



38. Ո՞րն է հիդրօքսիլ խմբերի թիվը գլյուկոզի ցիկլային (փակ) կառուցվածքում.

- 1) 4 2) 3 3) 6 4) 5

39. Ո՞ր նյութին է համապատասխանում հետևյալ կառուցվածքային բանաձևը.



- 1) գլյուկոզին 2) սախարոզին 3) մալթոզին 4) ֆրուկտոզին

40. Ո՞ր նյութն է առաջանում օսլայի հիդրոլիզից.


- 1) α -գլյուկոզը 3) β -ֆրուկտոզը
2) β -գլյուկոզը 4) սախարոզը

41. Ո՞ր շարքում են X_1 և X_2 օրգանական նյութերն ըստ հետևյալ փոխարկումների.



- 1) էթիլսպիրտ և էթիլեն 3) կաթնաթթու և էթիլեն
2) էթիլեն և 1,3-բութադիեն 4) էթանոլ և 1,3-բութադիեն

42. Ո՞ր շարքում են X_1 , X_2 և X_3 նյութերն ըստ հետևյալ փոխարկումների.



- 1) կալցիումի կարբիդ, ածխածնի(II) օքսիդ, ֆրուկտոզ
2) կալցիումի կարբիդ, ածխածնի(II) օքսիդ, գլյուկոզ
3) կալցիումի կարբոնատ, ածխածնի(IV) օքսիդ, β -գլյուկոզ
4) կալցիումի կարբիդ, ածխածնի(IV) օքսիդ, α -գլյուկոզ

43. Որո՞նք են բաց թողած բառերը.

Օսլայի մասնակի հիդրոլիզից առաջանում է _____, իսկ լրիվ հիդրոլիզի արդյունքում՝ _____:

- 1) մալթոզ, α -գլյուկոզ 3) մալթոզ, β -գլյուկոզ
2) սախարոզ, β -գլյուկոզ 4) սախարոզ, β -ֆրուկտոզ

44. Ո՞րն է հավասար քանակներով սախարոզի և մալթոզի հիդրոլիզից ստացված գլյուկոզների $X(q)$ և $Y(q)$ զանգվածների հարաբերակցությունը համապատասխանաբար.

- 1) $X = Y$ 2) $X = 2Y$ 3) $X > Y$ 4) $X < Y$

45. Ո՞ր միաշաքար(ներ)ն է(են) ստացվում սախարոզի հիդրոլիզից.

- 1) α -գլյուկոզ և β -ֆրուկտոզ 3) միայն α -գլյուկոզ
2) β -գլյուկոզ և α -ֆրուկտոզ 4) միայն β -ֆրուկտոզ

46. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ածխածնի(IV) օքսիդ է անջատվել, եթե 180 գ գլյուկոզի խմորումից ստացվել է 78,2 գ էթիլսպիրտ.

- 1) 38,08 2) 44,8 3) 22,4 4) 17,92

47. Հետևյալ նյութերից որոնք է բնորոշ արծաթահայելու ռեակցիան.

ա) գլյուկոզ, բ) ֆրուկտոզ, գ) էթանոլ, դ) մրջնաթթու

- 1) բ, գ, դ 2) ա, բ, գ 3) ա, դ 4) բ, գ

48. Ո՞րն է թթվածնի ատոմների թիվը եռացետիլթաղանթանյութի տարրական օղակում.

- 1) 4 2) 5 3) 7 4) 8

49. Ո՞րն է α-գլյուկոզի բնական պոլիմերը.

- 1) ցելյուլոզը 2) օսլան 3) սախարոզը 4) եռացետիլցելյուլոզը

50. Առավելագույնը քանի մոլ քացախաթթու կփոխազդի մեկ մոլ սորբիտի հետ.

- 1) 5 2) 6 3) 7 4) 8


51. Ո՞ր ազդանյութով կարելի է հայտաբերել գլյուկոզը.

- 1) արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթ
2) քացախաթթու
3) կալիումի հիդրօքսիդի ջրային լուծույթ
4) քացախալիդեհիդ

52. Ո՞ր նյութն է ստացվում գլյուկոզը ջրածնով վերականգնելիս.

- 1) կաթնաթթու 3) գլյուկոնաթթու
2) կարագաթթու 4) սորբիտ

53. Ո՞րն է X նյութը փոխարկումների հետևյալ շղթայում.



- 1) էթանալը 3) ածխաթթու գազը
2) էթանոլը 4) կաթնաթթուն

54. Ո՞րն է թթվածնի ատոմների թիվը գլյուկոզի սպիրտային խմորման օրգանական արգասիքի մեկ մոլեկուլում.

- 1) 3 2) 1 3) 2 4) 4

3.6. Էսթերներ, ճարպեր, ածխաջրեր

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	19	4	37	2
2	1	20	1	38	4
3	2	21	3	39	3
4	4	22	3	40	1
5	3	23	1	41	4
6	2	24	3	42	4
7	4	25	2	43	1
8	1	26	2	44	4
9	2	27	1	45	1
10	1	28	3	46	1
11	4	29	1	47	3
12	1	30	2	48	4
13	4	31	3	49	2
14	4	32	4	50	2
15	2	33	2	51	1
16	2	34	1	52	4
17	4	35	1	53	4
18	2	36	2	54	2

3.7. ԱԶՈՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՄԻՆԱԹԹՈՒՆՆԵՐ

1. Ո՞ր նյութի բաղադրության մեջ է մտնում ամինային խումբը.

- 1) անիլին 2) գլիցերին 3) նիտրոգլիցերին 4) նիտրոտոլուոլ

2. Որքան է ազոտի զանգվածային բաժինը (%) ալանինի մոլեկուլում.

- 1) 40,73 2) 30,12 3) 20 4) 15,73

3. Քիմիական կապի ո՞ր տեսակներն են բացակայում մեթիլամոնիումի քլորիդի մոլեկուլում.

- ա) կովալենտային բևեռային գ) իոնային
բ) կովալենտային ոչ բևեռային դ) ջրածնային
1) ա, բ 2) բ, գ 3) բ, դ 4) ա, դ

4. Ո՞ր նյութերը կփոխազդեն կալիումի հիդրօքսիդի ջրային լուծույթի հետ.

- ա) անիլին բ) գլիցին գ) ֆենիլամին դ) գլիցիլալանին
1) ա, բ 2) բ, գ 3) բ, դ 4) ա, դ

5. Ո՞ր նյութն է օժտված ամոնիակի համեմատ առավել ուժեղ հիմնային հատկություններով.

- 1) անիլին 3) մեթիլամին
2) երկմեթիլամին 4) բենզիլամին

6. Ո՞ր նյութն է օժտված երկդիմի հատկություններով.

- 1) անիլին 3) մեթիլամին
2) ամինաքացախաթթու 4) նիտրոբենզոլ

7. Հետևյալ նյութերից ո՞րը չի փոխազդի էթիլամինի հետ.

- 1) ջուր 2) ջրածին 3) թթվածին 4) քացախաթթու

8. Ի՞նչ զանգվածով (գ) էթանոլ կպահանջվի 351 գ ալանինի էսթեր ստանալու համար.

- 1) 46 2) 92 3) 138 4) 267

9. Ի՞նչ ծավալով (լ, ն. ս.) քլորաջրածին է անհրաժեշտ 17,8 գ ալանինը աղի վերածելու համար.

- 1) 8,96 2) 5,32 3) 4,48 4) 2,24

10. 73 գ գլիցիլալանին երկպետիդ ստանալու համար համապատասխանաբար ինչ զանգվածով գլիցին և ալանին է անհրաժեշտ.

- 1) 44,5 և 37,5 2) 37,5 և 44,5 3) 75 և 89 4) 89 և 75

11. Ո՞ր նյութի և գլիցինի փոխազդեցությունից պետիդ կառաջանա.

- 1) էթանոլ 2) էթանալ 3) գլիցերին 4) ալանին

12. Ո՞րն է ալանինի իզոմեր նյութը.

- 1) գլիցերինի եռացետատ 3) ամինաքացախաթթվի մերիլէտեր
2) գլիցերինի եռօլեատ 4) ամինաքացախաթթվի էթիլէտեր

13. Ո՞րն է երրորդային ամինի բանաձև.

- 1) CH_3NH_2 2) $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$ 3) $(\text{CH}_3)_2\text{NC}_2\text{H}_5$ 4) $\text{CH}_3\text{NHC}_2\text{H}_5$

14. Ո՞ր շարքի նյութերն են դասավորված ըստ հիմնային հատկությունների ուժեղացման.

- 1) NH_3 , CH_3NH_2 , $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$ 3) CH_3NH_2 , $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$, NH_3
2) CH_3NH_2 , NH_3 , $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$ 4) $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$, NH_3 , CH_3NH_2

15. Ո՞ր շարքի նյութերն են դասավորված ըստ հիմնային հատկությունների թուլացման.

- 1) NH_3 , CH_3NH_2 , $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$ 3) $(\text{CH}_3)_2\text{NH}_2$, $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$, NH_3
2) NH_3 , $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$, $(\text{C}_6\text{H}_5)_2\text{NH}$ 4) $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$, NH_3 , $(\text{CH}_3)_2\text{NH}_2$

16. Ո՞ր պնդումներն են ճիշտ անիլինի վերաբերյալ.


- ա) արոմատիկ ամին է
բ) ստացվում է նիտրոբենզոլից
գ) ամոնիակից ավելի ուժեղ հիմք է
դ) լակմուսը կգունավորի կարմիր
ե) փոխազդում է բրոմի հետ՝ առաջացնելով սպիտակ նստվածք
զ) օգտագործվում է ներկերի ստացման համար

- 1) ա, բ, գ, դ 2) բ, գ, դ, զ 3) ա, բ, ե, գ 4) բ, գ, դ, ե

17. Ո՞ր նյութի և նիտրոմիացությունների փոխազդեցությունից են ստացվում ամիններ.

- 1) թթվածնի 2) ջրածնի 3) բրոմաջրածնի 4) քլորաջրածնի

18. Ո՞րը կարող է լինել X նյութը փոխարկումների հետևյալ շղթայում.



- 1) տոլուոլ 2) քսիլոլ 3) բենզոլ 4) ֆենոլ

19. Ո՞ր նյութի հետ էթիլամինը չի փոխազդում.

- | | |
|------------------------|------------------|
| 1) ջուր | 3) ազոտական թթու |
| 2) նատրիումի հիդրօքսիդ | 4) ծծմբական թթու |

20. Ո՞ր նյութի լուծույթի ազդեցությամբ մեթիլամոնիումի քլորիդից մեթիլամին կստացվի.

- | | |
|------------------|-----------------------|
| 1) քլորաջրածին | 3) կալիումի հիդրօքսիդ |
| 2) ծծմբական թթու | 4) ազոտական թթու |

21. Ինչ զանգվածով (գ) պինդ նյութ կառաջանա 1,12 լ մեթիլամին և 2,24 լ քլորաջրածին գազերի փոխազդեցությունից.

- | | | | |
|----------|---------|---------|--------|
| 1) 3,375 | 2) 6,75 | 3) 67,5 | 4) 135 |
|----------|---------|---------|--------|

22. Ո՞րն է օքսիդիչ նյութի գործակիցն ըստ մեթիլամինի այրման ռեակցիայի հավասարման.

- | | | | |
|------|------|------|------|
| 1) 4 | 2) 5 | 3) 7 | 4) 9 |
|------|------|------|------|

23. Հետևյալ ամինաթթուներից ո՞րն է ամինաերկարբոնաթթու.

- | | |
|-------------|--------------------|
| 1) ալանինը | 3) ֆենիլալանինը |
| 2) ցիստեինը | 4) գլուտամինաթթուն |

24. Ո՞ր ամինաթթուն է պարունակում $-\text{COOH}$, $-\text{NH}_2$ և $-\text{C}_6\text{H}_4\text{OH}$ ֆունկցիոնալ խմբեր.

- | | | | |
|-------------|------------|-------------|------------|
| 1) թիրոզինը | 2) գլիցինը | 3) ցիստեինը | 4) ալանինը |
|-------------|------------|-------------|------------|

25. Որքան է գլիցինից և ալանինից ստացվող հնարավոր երկպեպտիդների գումարը.

- | | | | |
|------|------|------|------|
| 1) 2 | 2) 1 | 3) 3 | 4) 4 |
|------|------|------|------|

26. Ո՞ր նյութի հետ փոխազդելիս α -ամինապրոպիոնաթթուն էսթեր կառաջացնի.

- | | | | |
|-----------|-----------|-----------|---------------|
| 1) էթանոլ | 2) էթանալ | 3) բենզոլ | 4) քացախաթթու |
|-----------|-----------|-----------|---------------|

27. Ինչպիսին է միջավայրը գլուտամինաթթվի ջրային լուծույթում.

- | | |
|------------------|------------------|
| 1) թույլ թթվային | 3) չեզոք |
| 2) հիմնային | 4) ուժեղ թթվային |

28. Որքան է 75 գ գլիցինի հետ փոխազդող քլորաջրածնի առավելագույն զանգվածը (գ).

- | | | | |
|----------|---------|---------|-------|
| 1) 18,25 | 2) 36,5 | 3) 35,5 | 4) 73 |
|----------|---------|---------|-------|

29. Համապատասխանեցրե՛ք գլիցինի հետ փոխազդող նյութերը և այդ ռեակցիաների վերջանյութերը.

Երանյութ	Վերջանյութ
ա) քլորաջրածին	1) $\text{NH}_2\text{CH}_2\text{COOCH}_3 + \text{H}_2\text{O}$
բ) նատրիումի հիդրօքսիդ	2) $\text{ClH}_3\text{NCH}_2\text{COOH}$
գ) ամոնիակ	3) $\text{NH}_2\text{CH}_2\text{COONH}_4\text{Cl}$
դ) մեթանոլ	4) $\text{NH}_2\text{CH}_2\text{COONa} + \text{H}_2\text{O}$
	5) $\text{NH}_2\text{CH}_2\text{COONH}_4$
	6) $\text{NH}_2\text{CH}_2\text{COOCl} + \text{H}_2\text{O}$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ4, գ3, դ5 2) ա6, բ4, գ3, դ1 3) ա2, բ4, գ5, դ1 4) ա3, բ4, գ6, դ5

30. Ինչո՞վ են պայմանավորված մեթիլամինի՝ CH_3NH_2 , հիմնային հատկությունները.

- 1) ազոտի ատոմին միացած ջրածնի ատոմներով
- 2) ազոտի ատոմում առկա չընդհանրացված էլեկտրոնային զույգով
- 3) ազոտի ատոմի ընդհանրացված էլեկտրոնային զույգերով
- 4) մեթիլ խմբի ջրածնի ատոմների առկայությամբ

31. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ազոտ կստացվի 24,8 գ մեթիլամինի այրումից.

- 1) 17,92 2) 13,44 3) 8,96 4) 4,48

32. Հետևյալ բանաձևն ունեցող ամիններից ո՞րն է առավել ուժեղ հիմք.

- 1) CH_3NH_2 2) $(\text{CH}_3)_2\text{NH}$ 3) $(\text{C}_6\text{H}_5)_2\text{NH}$ 4) $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$

33. Ո՞րն է $\text{C}_4\text{H}_{11}\text{N}$ բանաձևով իզոմերային երկրորդային ամինների թիվը.

- 1) 5 2) 2 3) 4 4) 3

34. Ինչ թվով և ինչպիսի ամիններ ունեն $\text{C}_3\text{H}_9\text{N}$ քիմիական բանաձևը.

- 1) 1 առաջնային, 1 երկրորդային
- 2) 2 առաջնային, 1 երրորդային
- 3) 2 առաջնային, 1 երկրորդային, 1 երրորդային
- 4) 4 առաջնային

35. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Մեթիլամոնիումի քլորիդին ավելացրել են _____ լուծույթ և ստացել մեթիլամին:

- 1) կալիումի հիդրօքսիդի 3) ծծմբական թթվի
2) արծաթի նիտրատի 4) քլորաջրածնի

36. Ո՞րն է σ -կապերի թիվն անիլինի մոլեկուլում.

- 1) 9 2) 3 3) 7 4) 14

37. Որքան է օքսիդիչ նյութի գործակիցն ըստ անիլինի այրման ռեակցիայի հավասարման.

- 1) 29 2) 31 3) 27 4) 15

38. Ո՞րն է քլորքացախաթթվի և ամոնիակի փոխազդեցության արգասիքը.

- 1) գլիցին 2) վալին 3) ալանին 4) լիզին

39. Ո՞ր նյութն է օժտված ամֆոտեր հատկություններով.

- 1) անիլինը 2) ալանինը 3) երկֆենիլամինը 4) եռմեթիլամինը

40. Հետևյալ նյութերից ո՞րն է գլիցինի և HCl-ի փոխազդեցության արգասիքը.

- 1) գլիցինի նատրիումական աղը 3) գլիցինի մեթիլէտերը
2) գլիցինի հիդրոքլորիդը 4) գլիցիլգլիցինը

41. Ո՞րն է բաց թողած բանաձևը.

Գլիցինը փոխազդում է _____-ի հետ, իսկ քացախաթթուն չի փոխազդում:

- 1) NaOH 2) Na 3) HCl 4) CH₃OH

42. Ո՞րն է π -կապերի թիվը ալանիլալանինի մոլեկուլում.

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

43. Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի ելանյութերը և վերջանյութերը.

Ելանյութեր	Վերջանյութեր
ա) C ₆ H ₅ NO ₂ և H ₂	1) CO ₂ , H ₂ O, N ₂
բ) CH ₃ NH ₂ և O ₂	2) C ₆ H ₅ NH ₂ , H ₂ O
գ) NH ₂ CH ₂ COOH և NaOH	3) NH ₂ CH ₂ COOCH ₃ , H ₂ O
դ) NH ₂ CH ₂ COOH և CH ₃ OH	4) CO, H ₂ O, NO
	5) NH ₂ CH ₂ COOC ₂ H ₅ , H ₂ O
	6) NH ₂ CH ₂ COONa, H ₂ O

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ1, գ6, դ5 2) ա2, բ4, գ5, դ3 3) ա2, բ1, գ6, դ3 4) ա2, բ4, գ5, դ1

44. Համապատասխանեցրե՛ք ամինաթթվի անվանումը և բանաձևը.

Անվանում	Բանաձև
ա) վալին	1) $\text{H}_2\text{N}-\underset{\text{H}_2\text{C}-\text{C}_6\text{H}_5}{\text{CH}}-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$
բ) սերին	2) $\text{H}_2\text{N}-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$
գ) ֆենիլալանին	3) $\text{H}_2\text{N}-\underset{\text{H}_2\text{C}-\text{OH}}{\text{CH}}-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$
դ) ցիստեին	4) $\text{H}_2\text{N}-\underset{\text{H}_2\text{C}-\text{SH}}{\text{CH}}-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$
	5) $\text{H}_2\text{N}-\underset{\text{CH}(\text{CH}_3)_2}{\text{CH}}-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$
	6) $\text{H}_2\text{N}-\text{CH}_2-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ1, գ5, դ6 3) ա5, բ2, գ1, դ4
 2) ա3, բ1, գ5, դ3 4) ա5, բ3, գ1, դ4

45. Ո՞րն է ֆենոլ → պիկրինաթթու փոխարկմանը համապատասխանող ռեակցիայի հավասարման գործակիցների գումարային թիվը.

- 1) 5 2) 7 3) 8 4) 10

46. Ո՞ր ամինաթթուների մնացորդներն են մտնում երկպեպտիդի բաղադրության մեջ, եթե այն փոխազդում է քլորաջրածնի հետ 1 : 1, իսկ կալիումի հիդրօքսիդի հետ 1 : 3 մոլային հարաբերությամբ.

- 1) ալանին և գլուտամինաթթու 3) գլուտամինաթթու և թիրոզին
 2) ալանին և սերին 4) գլիցին և վալին

47. Քանի՞ իզոմեր արոմատիկ ամիններ ունեն $\text{C}_7\text{H}_9\text{N}$ քիմիական բանաձևը.

- 1) 3 2) 4 3) 5 4) 6

48. Քիմիական կապի ո՞ր տեսակն է բացակայում էթիլամոնիումի քլորիդում.

- 1) կովալենտային բևեռային 3) իոնային
 2) կովալենտային ոչ բևեռային 4) ջրածնային

49. Քանի՞ իզոմեր երկպեպտիդներ կստացվեն գլիցինի և սերինի փոխազդեցությոնից.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

50. Ո՞ր նյութերի հետ համապատասխան պայմաններում կփոխազդի սերինը.

- ա) նատրիումի հիդրօքսիդ դ) պղինձ
բ) քլորաջրածին ե) էթանոլ
գ) նատրիումի քլորիդ
- 1) ա, բ, գ 2) գ, դ, ե 3) ա, բ, դ 4) ա, բ, ե

51. Ո՞ր ամինաթթվի ջրային լուծույթում լակմուսը կգունավորվի կապույտ.

- 1) սերին 2) լիզին 3) գլուտամինաթթու 4) գլիցին

52. Քանի՞ իզոմեր եռպեպտիդ է հնարավոր ստանալ գլիցին, ալանին և սերին ամինաթթուներից.

- 1) 3 2) 5 3) 6 4) 8

53. Ո՞ր պնդումն(երն) է(են) ճիշտ.

- ա) նույն թվով ածխածնի ատոմներ պարունակող առաջնային, երկրորդային և երրորդային ամինները կառուցվածքային իզոմերներ են
բ) սահմանային միաիմն միաամինաթթուները և ալկանների միանիտրոածանցյալները միջդասային իզոմերներ են
գ) ամինները և ամինաթթուները իզոմերներ են
- 1) միայն ա 2) միայն բ 3) միայն գ 4) ա և բ

54. Քանի՞ պեպտիդային կապ է առկա պենտապեպտիդի մոլեկուլում.

- 1) 5 2) 4 3) 3 4) 2

55. Քանի՞ մոլեկուլ ջուր կծախսվի 4,05 գ օսլայի հիդրոլիզից 100 % ելքով գլյուկոզ ստանալիս.

- 1) $1,505 \cdot 10^{22}$ 2) $3,010 \cdot 10^{22}$ 3) $1,505 \cdot 10^{23}$ 4) $3,01 \cdot 10^{23}$

3.7. Ազոտ պարունակող օրգանական միացություններ: Ամիններ և ածինաթթուներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	1	20	3	39	2
2	4	21	1	40	2
3	3	22	4	41	3
4	3	23	4	42	2
5	2	24	1	43	3
6	2	25	4	44	4
7	2	26	1	45	3
8	3	27	1	46	3
9	3	28	2	47	3
10	2	29	3	48	4
11	4	30	2	49	1
12	3	31	3	50	4
13	3	32	2	51	2
14	4	33	4	52	3
15	2	34	3	53	4
16	3	35	1	54	2
17	2	36	4	55	1
18	3	37	2		
19	2	38	1		

3.8. ԲՆԱԿԱՆ ԳԱԶ: ՆԱՎԹ: ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐ

1. Որքան է մեթանի ջերմային քայքայումից (1500 °C) գոյացած օրգանական նյութի հարաբերական խտությունն ըստ ջրածնի.

- 1) 3 2) 8 3) 13 4) 18

2. Ո՞րն(որոնք) է(են) բաց թողած բառ(եր)ը.

Ացեփիլենի հոմոլոգներին բնորոշ չէ _____ հզումերիան:

- 1) եռակի կապի դիրքի 3) ցիս-տրանս
2) ածխածնային կմախքի 4) միջդասային

3. Ո՞ր նյութի այրումից կգոյանա ածխածնի(IV) օքսիդի և ջրի 1 : 1 մոլային հարաբերությամբ խառնուրդ.

- 1) պոլիէթիլեն 2) բնական կաուչուկ 3) պոլիստիրոլ 4) պոլիպրոպիլեն

4. Ո՞ր ածխաջրածինն է բնական գազի հիմնական բաղադրամասը.

- 1) մեթան 2) էթան 3) պրոպան 4) բութան

5. Ո՞րն է հեպտանից տոլուոլի ստացման գործընթացի անվանումը.

- 1) հիդրում 3) նավթի ռիֆորմինգ
2) թորում 4) կրեկինգ

6. Հետևյալ գործընթացներից ո՞րը նավթի վերամշակման եղանակ չէ.

- 1) թորումը 3) ռիֆորմինգը
2) կրեկինգը 4) վերաբյուրեղացումը

7. Ո՞րն է նավթի վերամշակման չթորվող մասը.

- 1) լիգրոինը 2) գուղրոնը 3) մազութը 4) կերոսինը

8. Ո՞րն է բաց թողած բառը.

_____ նավթի վերամշակման հիմնական փուլն է:

- 1) թորումը 2) կրեկինգը 3) ռիֆորմինգը 4) վերաբյուրեղացումը

9. Ո՞ր ալկանն է ենթարկվել կրեկինգի, եթե արդյունքում առաջացել են պենտան և պենտեն.

- 1) օկտան 2) դեկան 3) նոնան 4) հեպտան

10. Որո՞նք են բաց թողած բառը և բառակապակցությունը.

Կատարալիտիկ կրեկինգի արդյունքում ստացված բենզինը _____, քանի որ նյութավորված շղթայով ածխաջրածինների ճայթոնային կայունությունն _____:

- 1) անորակ է, ավելի փոքր է
- 2) որակյալ է, ավելի փոքր է
- 3) որակյալ է, ավելի մեծ է
- 4) անորակ է, ավելի մեծ է

11. Ինչպե՞ս են անվանում նավթամշակման գործընթացում ալկանների փոխարկումը արոմատիկ ածխաջրածինների.

- 1) թորում
- 2) կատալիտիկ կրեկինգ
- 3) ջերմային կրեկինգ
- 4) ռիֆորմինգ

12. Ո՞ր զույգ նյութերն են քարածխի չոր թորման արգասիքներ.

- 1) բենզոլ, նիտրոբենզոլ
- 2) ֆենոլ, եռնիտրոֆենոլ
- 3) կոքս, ֆենոլ
- 4) կոքս, եռբրոմֆենոլ

13. Ո՞ր ազդանյութով է հնարավոր տարբերել թորումով և ջերմային կրեկինգով ստացված բենզինները.

- 1) բրոմաջրով
- 2) աղաջրով
- 3) ջրով
- 4) կրաջրով

14. Ո՞ր շարքում են նավթի կրեկինգի երկու հիմնական տեսակները.

- 1) ջրային և կատալիտիկ
- 2) գազային և կատալիտիկ
- 3) ջերմային և կոնտակտային
- 4) ջերմային և կատալիտիկ

15. Հետևյալ նյութերից ո՞րը քարածխի չոր թորման արգասիք չէ.

- 1) կոքս
- 2) քարածխային խեժ
- 3) տորֆ
- 4) կոքսազազ

16. Որքա՞ն է 50 400 գ/մոլ միջին մոլային զանգվածով պոլիէթիլենի պոլիմերացման միջին աստիճանը.

- 1) 6
- 2) 28
- 3) 1800
- 4) 50400

17. Ո՞րն է X նյութի մեկ մոլեկուլում σ-կապերի թիվն ըստ հետևյալ փոխարկումների.

ացետիլեն $\rightarrow X \rightarrow$ պոլիվինիլբլորիդ

- 1) 2
- 2) 3
- 3) 4
- 4) 5

18. Ո՞րն է էթանոլի այրման ռեակցիայի հավասարման բոլոր գործակիցների գումարային թիվը.

- 1) 6
- 2) 8
- 3) 9
- 4) 10

19. Լրացրեք բաց թողած բառ(եր)ը կամ բառակապակցությունը.

Ի տարբերություն բնական գազի՝ ուղեկից նավթային գազերը պարունակում են ավելի մեծ քանակությամբ _____:

- 1) էթան, պրոպան, բութան
2) ազոտ, ածխածնի(IV) օքսիդ
3) հեղուկ ածխաջրածիններ
4) պինդ ածխաջրածիններ

20. Ո՞ր նյութի վերամշակումից են ստանում կոքս.

- 1) բնական գազի
2) ուղեկից գազերի
3) նավթի
4) քարածխի

21. Լրացրեք բաց թողած բառակապակցությունը.

Ջերմային կրեկինգից սրացվող բենզինը նավթի առաջնային թորումից սրացվող բենզինից հիմնականում տարբերվում է նրանով, որ այն պարունակում է _____:

- 1) արոմատիկ ածխաջրածիններ
2) ցիկլոալկաններ կամ նաֆտեններ
3) ոչ սահմանային ածխաջրածիններ
4) սպիրտներ և եթերներ

22. Ո՞ր նյութերի հետ է փոխազդում մեթանը.

- ա) HCl բ) Br₂(շո.) գ) Cl₂ դ) O₂ ե) KOH զ) H₂
1) գ, դ 2) բ, դ 3) ա, բ, գ 4) գ, ե, զ

23. Ինչ զանգվածով (գ) միակ օրգանական նյութ կարող է առաջանալ 44,8 լ (ն. պ.) մեթանի և 134,4 լ (ն. պ.) քլորի փոխազդեցությունից.

- 1) 308 2) 239 3) 166 4) 95

24. Ո՞ր նյութի կատալիտիկ կրեկինգի արդյունքում կստացվի C₆H₁₀ և C₆H₁₂ ածխաջրածինների խառնուրդ.

- 1) C₁₂H₂₂ 2) C₁₂H₂₆ 3) C₁₂H₂₄ 4) C₁₂H₁₈

25. Համապատասխանեցրեք պոլիմերի անվանումը և ստացման ռեակցիայի տեսակը.

Անվանում	Ռեակցիայի տեսակ
ա) պոլիէթիլեն	1) պոլիմերացում
բ) բութադիենային կաուչուկ	2) պոլիկոնդենսացում
գ) ֆենոլֆորմալդեհիդային խեժ	3) համապոլիմերացում
դ) բութադիենստիրոլային կաուչուկ	

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ3, գ1, դ2 3) ա2, բ2, գ1, դ1
2) ա1, բ1, գ2, դ3 4) ա1, բ3, գ2, դ2

3.8. Բնական զագ: Նախք: Վառելանյութեր

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	10	3	19	1
2	3	11	4	20	4
3	1	12	3	21	3
4	1	13	1	22	1
5	3	14	4	23	2
6	4	15	3	24	1
7	2	16	3	25	2
8	1	17	4		
9	2	18	3		

3.9. ՔԻՄԻԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԸ

1. Որքան է պղնձի զանգվածային բաժինը (%) բրոնզ (Cu/Sn) համաձուլվածքում, եթե դրա 59,5 գ նմուշը աղաթթվի ավելցուկով մշակելիս անջատվել է 2,24 լ (ս. պ.) գազ.

- 1) 20 2) 40 3) 60 4) 80

2. Ո՞ր նյութն է օգտագործվում ծծմբական թթվի արտադրության վերջին փուլում SO_3 -ը կլանելու համար.

- 1) ջուր 2) օլեում 3) ծծմբական թթու 4) ծծմբային թթու

3. Ինչ զանգվածով (տ) ածխածին է անհրաժեշտ 80 տ երկաթի(III) օքսիդը մետաղի փոխարկելու համար, եթե ածխածինն օքսիդանում է մինչև ածխածնի(II) օքսիդ.

- 1) 2, 25 2) 4, 5 3) 9 4) 18

4. Որքան է վերականգնիչ նյութի գործակիցն ըստ ազուրիտ հանքաքարի՝ $(\text{CuCO}_3 \cdot 2\text{Cu}(\text{OH})_2)$, և ածխի ավելցուկի փոխազդեցության ռեակցիայի հավասարման.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5


5. CuO և Cu_2S նյութեր պարունակող հանքաքարի վերամշակման հիման վրա ինչ արտադրություններ կարելի է կազմակերպել.

- 1) պղնձի 3) ծծմբի
2) պղնձի և թթվածնի 4) պղնձի և ծծմբական թթվի

6. Ազոտական թթվի արտադրության դ՞ր փուլն է իրականացվում կատալիզատորի առկայությամբ.

- 1) $\text{NO} \rightarrow \text{NO}_2$ 2) $\text{NO}_2 \rightarrow \text{HNO}_3$ 3) $\text{NH}_3 \rightarrow \text{NO}$ 4) $\text{N}_2 \rightarrow \text{NO}$

7. Ո՞րն է X նյութը էթանոլի ստացման ռեակցիաների հետևյալ շղթայում.



- 1) ֆրուկտոզ 2) գլյուկոզ 3) սախարոզ 4) ռիբոզ

8. Համապատասխանեցրե՛ք նյութի բանաձևը և ստացման եղանակը.

<i>Բանաձև</i>	<i>Ստացման եղանակ</i>
ա) C_2H_5OH	1) կումոլի օքսիդացում
բ) C_6H_5OH	2) ացետիլենի հիդրատացում
գ) $C_6H_5NH_2$	3) կալցիումի կարբիդի հիդրոլիզ
դ) ացետիլեն	4) էթիլենի հիդրատացում
	5) էթանոլի միջմոլեկուլային դեհիդրատացում
	6) նիտրոբենզոլի վերականգնում

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա4, բ1, գ6, դ3 | 3) ա4, բ1, գ5, դ2 |
| 2) ա1, բ2, գ3, դ5 | 4) ա6, բ2, գ6, դ4 |

9. Արտադրությունում դ՛ր մետաղը կարելի է ստանալ ալյումինաջերմային եղանակով.

- | | |
|------------|-------------|
| 1) կալիում | 3) ալյումին |
| 2) արծաթ | 4) քրոմ |

10. Լրացրե՛ք բաց թողած բառակապակցությունը.

Կոնսրակտային եղանակով ծծմբական թթվի արտադրությունում մինչև կոնսրակտային սարք մղվելը ծծմբի(IV) օքսիդը չորացնում են՝ այն բաց թողնելով _____:

- | | |
|---------------------------------|------------------------------------|
| 1) ծծմբական թթվի խիտ լուծույթով | 3) նատրիումի հիդրօքսիդի լուծույթով |
| 2) կալցիումի օքսիդի վրայով | 4) ազոտական թթվի լուծույթով |

11. Ո՞րն է ծծմբական թթվի արտադրության ելանյութ.

- | | |
|--------------------|------------------|
| 1) Գլատրերի աղը | 3) գիպսը |
| 2) ծծմբի կոլչեղանը | 4) երկաթարջասալը |

12. Ո՞ր սարքում են իրականացնում պիրիտից ծծմբային գազի ստացումը.

- 1) բովման վառարանում
- 2) ցիկլոնում
- 3) կլանող աշտարակում
- 4) ջերմափոխանակիչում

13. Հետևյալ նյութերից ո՞րն է «Նաիրիտ» կաուչուկի ստացման ելանյութ.

- | | |
|------------|------------|
| 1) էթանը | 3) բութանը |
| 2) պրոպանը | 4) մեթանը |

14. Համապատասխանեցրե՛ք համաձուլվածքների անվանումը և բաղադրությունը.

Անվանում	Բաղադրություն
ա) բրոնզ	1) երկաթ, 0,6–1,5% ածխածին
բ) բարձրածխածնային պողպատ	2) պղինձ, անագ
գ) մելքիր	3) երկաթ, մինչև 4% ածխածին
դ) թուջ	4) երկաթ, 0,2% ածխածին
	5) երկաթ, սնդիկ
	6) պղինձ, նիկել, կոբալտ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ1, գ6, դ5 2) ա2, բ4, գ5, դ3 3) ա2, բ1, գ6, դ3 4) ա2, բ4, գ5, դ1

15. Որքան է կրաքարից կալցիումի կարբիդի ստացման երկփուլ գործընթացում վերօքս ռեակցիայի արդյունքում ստացված գազային նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը.

- 1) 64 2) 44 3) 28 4) 56

16. Ո՞րն է ջերմակլանիչ ռեակցիայի հավասարում.

- 1) $2\text{Fe} + 3\text{Cl}_2 = 2\text{FeCl}_3$ 3) $\text{CaCO}_3 = \text{CaO} + \text{CO}_2$
 2) $\text{HCl} + \text{KOH} = \text{KCl} + \text{H}_2\text{O}$ 4) $\text{SO}_3 + \text{H}_2\text{O} = \text{H}_2\text{SO}_4$

17. Բուխանը ջերմային կրեկինգի ենթարկելիս գոյացել են մոլեկուլների և համաչափ, և՛ անհամաչափ ճեղքման արգասիքներ: Քանի՞ տոկոսով կկրճատվի ստացված գազային խառնուրդի ծավալը, եթե վերջինս անցկացվի բրոմաջրի միջով.

- 1) 100 2) 75 3) 50 4) 25

18. Ո՞ր մետաղի ատոմն (իոնն) է օքսիդանում Cu/Zn գալվանական սնուցիչում.

- 1) Zn^0 2) Zn^{2+} 3) Cu^0 4) Cu^{2+}

19. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ածխածնի(IV) օքսիդ է ստացվել գլյուկոզն այրելիս, եթե անջատվել է 704 կՋ ջերմություն: Գլյուկոզի այրման ջերմաքիմիական հավասարումն է՝ $\text{C}_6\text{H}_{12}\text{O}_6 + 6\text{O}_2 = 6\text{CO}_2 + 6\text{H}_2\text{O} + 2816$ կՋ.

- 1) 11 2) 66 3) 5, 6 4) 33, 6

20. Որքան է 1 կգ կրաքարի քայքայման ջերմեֆեկտը, եթե այդ ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումն է՝ $\text{CaCO}_{3(\text{պ})} = \text{CaO}_{(\text{պ})} + \text{CO}_{2(\text{պ})} - 157$ կՋ.

- 1) +1570 2) -1570 3) +785 4) -785

21. Ածխի լրիվ այրման ջերմությունը 393,5 կՋ/մոլ է: Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ածխածնի(IV) օքսիդ է ստացվել, եթե անջատվել է 157,4 կՋ ջերմություն.

- 1) 2,24 2) 6,72 3) 8,96 4) 17,92

22. Ո՞ր շարքում են չվերականգնվող բնական պաշարների անվանումներ.

- 1) բնական գազ, անտառային ծածկույթ, օդ, ջուր
- 2) մաքուր ջուր, բերրի հող, նավթ, ածուխ
- 3) բույսեր, կենդանիներ, մետաղներ, օդ
- 4) մետաղներ, բնական գազ, ածուխ, նավթ

23. Ո՞րն է բույսերի կողմից քլորոֆիլի առկայությամբ ածխաթթու գազ կլանելու և այն թթվածնով փոխարկելու երևույթի անվանումը.

- 1) հիդրոլիզ
- 2) կատալիզ
- 3) կենսասինթեզ
- 4) ֆոտոսինթեզ

24. Ո՞ր շարքում են տարրերը ներկայացված ըստ երկրակեղևում դրանց տարածվածության նվազման.

- 1) ալյումին, թթվածին, սիլիցիում, երկաթ
- 2) թթվածին, ալյումին, երկաթ, սիլիցիում
- 3) թթվածին, սիլիցիում, ալյումին, երկաթ
- 4) սիլիցիում, թթվածին, ալյումին, երկաթ

25. Ո՞ր շարքում են նյութերը ներկայացված ըստ մարդու օրգանիզմում դրանց զանգվածային բաժնի նվազման.

- 1) ածխաջրեր, ջուր, սպիտակուցներ, ճարպեր
- 2) սպիտակուցներ, ջուր, ճարպեր, ածխաջրեր
- 3) սպիտակուցներ, ածխաջրեր, ջուր, ճարպեր
- 4) ջուր, սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր

26. Գործվածքի վրայից յոդի թարմ հետքը կարելի է վերացնել նատրիումի թիոսուլֆատի լուծույթով՝ ըստ $\text{Na}_2\text{S}_2\text{O}_3 + \text{I}_2 \rightarrow \text{NaI} + \text{Na}_2\text{S}_4\text{O}_6$ ուրվագրի: Որքան է վերականգնիչի գործակիցն այդ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման մեջ.

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4

27. Ո՞ր նյութից պատրաստված քանդակները առավել արագ կքայքայվեն թթվային անձրևներից.

- 1) գիպս
- 2) պղինձ
- 3) մարմար
- 4) քար

28. Ջրի թթվածնի կենսաքիմիական պահանջարկը (Թ-ԿՊ) մոտ 320 մգ/լ է: Ինչ զանգվածով (մգ) ածխածին կարող է օքսիդանալ (մինչև CO_2) 320 մգ թթվածնով.

- 1) 30
- 2) 60
- 3) 120
- 4) 240

29. Ո՞ր մետաղի իոնն է պարունակվում հեմոգլոբինում.

- 1) ցինկ 2) երկաթ 3) կալցիում 4) նատրիում

30. Ինչպե՞ս է անվանվում կենսաբանական համակարգերում օրգանական և անօրգանական նյութերի հաշվեկշռի պահպանման գործընթացը.

- 1) լիմֆոստազ 2) հեմոստազ 3) հոմեոստազ 4) խոլեստազ

31. Ո՞ր ֆերմենտի ազդեցությամբ է օրգանիզմում արագանում ջրածնի պերօքսիդի քայքայման գործընթացը.

- 1) ուրեազ 2) լիպազ 3) ամիլազ 4) կատալազ

32. Ո՞ր նյութի ձևով են օրգանիզմում պահեստավորվում ածխաջրերը.

- 1) գլյուկոզ 2) գլիկոգեն 3) սախարոզ 4) ֆրուկտոզ

33. Սննդի հետ օրգանիզմ մտնող նյութերից ո՞րն է լրիվ ծախսվում (չի պահեստավորվում).

- 1) ածխաջրեր 3) հանքային նյութեր
2) ճարպեր 4) սպիտակուցներ

34. Հետևյալ նյութերից ո՞րն է կիրառվում խմելու ջրի վարակազերծման համար.

- 1) քլորակիր 2) ժավելաջուր 3) քլորաջրածին 4) քլոր

35. Քիմիկոսները չեն արգելում ալյումինե կաթսայում.

- 1) կաթ եռացնել 3) թթու ապուրներ պատրաստել
2) մարինադ պատրաստել 4) սոդայի լուծույթ եռացնել

36. Որո՞նք են բաց թողած բառերը.

Փոքր չափաբաժնով թմրանյութերն ունեն _____ ազդեցություն, մեծ քանակով թմրանյութերն ազդում են որպես _____ միջոց, իսկ առավել մեծ քանակներով թմրանյութերն ազդում են որպես _____ :

- 1) ընկճող, ուրախացնող, խթանիչ 3) խթանիչ, ընկճող, թույն
2) ընկճող, խթանիչ, թույն 4) ընկճող, ակտիվացնող, դեղամիջոց

37. Կենդանի օրգանիզմի համար ո՞ր թունավոր նյութերն են ճեղքվում համապատասխանաբար ուրեազ և կատալազ ֆերմենտներով.

- 1) ջրածնի պերօքսիդը, միզանյութը 3) ճարպերը, ջրածնի պերօքսիդը
2) սպիտակուցները, միզանյութը 4) միզանյութը, ջրածնի պերօքսիդը

38. Ո՞ր տարրերն են առավել շատ պարունակվում բուսական և կենդանի օրգանիզմներում.

- 1) s և p 2) s և d 3) p և f 4) d և f


39. Կաթնաթթուն ստացվում է գլյուկոզի խմորումից: Ինչ զանգվածով (գ) կաթնաթթու կարող է ստացվել 360 գ գլյուկոզից, եթե ռեակցիայի ելքը 80 % է.

- 1) 140,8 2) 147,2 3) 288 4) 360

40. 90 գ ացետիլսալիցիլաթթվի ($\text{HOOC}_6\text{H}_4\text{OCOCH}_3$) թթվային հիդրոլիզի հետևանքով ստացվել է երկու միացություն: Ինչի՞ է հավասար մեծ մոլային զանգվածով արգասիքի զանգվածը, եթե փոխարկումն ընթացել է 70 % ելքով.

- 1) 24, 2 2) 48, 3 3) 69 4) 98, 6

41. Ո՞ր X նյութով է կատալիզվում միզանյութի հիդրոլիզն օրգանիզմում.



- 1) կատալազ 2) ուրեազ 3) քլորոֆիլ 4) գլյուկոզ

42. Ո՞ր շարքում են սովորական ապակու բաղադրության մեջ մտնող տարրերի նշաններ.

- 1) K, Ca, Si, O 3) Mo, Na, Si, O
2) Na, Ca, Si, O 4) K, Na, Mo, O

43. Հետևյալ բանաձևերից որն է համապատասխանում քիմիական ապակու բաղադրությանը.

- 1) $\text{K}_2\text{O} \cdot \text{CaO} \cdot 6\text{SiO}_2$ 3) $\text{Al}_2\text{O}_3 \cdot 2\text{SiO}_2 \cdot 2\text{H}_2\text{O}$
2) $\text{Na}_2\text{O} \cdot \text{CaO} \cdot 6\text{SiO}_2$ 4) $\text{K}_2\text{O} \cdot \text{Al}_2\text{O}_3 \cdot 6\text{SiO}_2$

44. Ո՞ր նյութն է ներքին այրման շարժիչներում օգտագործվում որպես հակասառիչ (անտիֆրիզ).

- 1) էթանոլ 2) ֆենոլ 3) էթիլենգլիկոլ 4) գլիցերին

45. Ո՞ր պնդումներն են ճիշտ.

- ա) շաքարավազը տաք ջրում ավելի լավ է լուծվում
բ) կավձափոշին ջրի հետ խառնելիս ստացվում է սուսպենզիա
գ) ավազի և ջրի խառնուրդը կոչվում է էմուլսիա

- 1) ա և բ 2) բ և գ 3) ա և գ 4) բոլորը ճիշտ են

46. Ո՞ր հալոգենի սպիրտային լուծույթն է կիրառվում բժշկության մեջ.

- 1) բրոմի 2) քլորի 3) յոդի 4) ֆտորի

47. Որո՞նք են բաց թողած բառերը.

Վիտամինները _____ նյութեր են, որոնք _____ քանակներով ներմուծվում են օրգանիզմ, մասնակցում են _____ ռեակցիաների իրականացմանը և պահպանում կենդանի օրգանիզմների կենսունակությունը:

- 1) սննդային, մեծ, կենսաբանական
 2) ոչ սննդային, փոքր, կենսաքիմիական
 3) սննդային, փոքր, կենսաքիմիական
 4) սննդային, մեծ, կենսաքիմիական

3.9. Քիմիան և կյանքը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	4	17	3	33	4
2	3	18	1	34	4
3	4	19	4	35	1
4	3	20	2	36	3
5	4	21	3	37	4
6	3	22	4	38	1
7	2	23	4	39	3
8	1	24	3	40	2
9	4	25	4	41	2
10	1	26	2	42	2
11	2	27	3	43	1
12	1	28	3	44	3
13	4	29	2	45	1
14	3	30	3	46	3
15	3	31	4	47	3
16	3	32	2		

ԲԱԺԻՆ

2

ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Երկրորդ գլխում ընդգրկված են կարճ պատասխանով առաջադրանքներ:

Առաջադրանքների և ենթաառաջադրանքների պատասխանները դրական ամբողջ թվեր են: Այդ առաջադրանքների համար նշվում են առաջադրանքի և ենթաառաջադրանքների լուծումից ստացված պատասխանի միայն թվային արժեքները: Պատասխանները պետք է լրացնել այդ նպատակի համար հատկացված տեղում՝ ձևաթղթում՝ ըստ պահանջվող ձևի: Պատասխանում չափման միավորը չի նշվում:

Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ նախատեսված հորիզոնական չորս վանդակներից **յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան**: Առաջադրանքի պատասխան կարող է լինել 0-ից 9999-ը ամբողջ թվերից որևէ մեկը: Եթե պատասխանը միանիշ թիվ է, ապա այն պետք է լրացնել վերջին՝ **չորրորդ** վանդակում՝ բաց թողնելով առաջին, երկրորդ և երրորդ վանդակները, իսկ եթե երկնիշ թիվ է, ապա պետք է լրացվի **երրորդ** և **չորրորդ** վանդակներում՝ բաց թողնելով առաջին և երկրորդ վանդակները: Եթե պատասխանը եռանիշ թիվ է, ապա պետք է լրացնել **երկրորդ**, **երրորդ** և **չորրորդ** վանդակներում՝ բաց թողնելով առաջին վանդակը (*տես նկ. 2*):

23	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text" value="8"/>
24	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text" value="2"/>	<input type="text" value="2"/>
25	<input type="text"/>	<input type="text" value="3"/>	<input type="text" value="8"/>	<input type="text" value="3"/>
26	<input type="text" value="3"/>	<input type="text" value="8"/>	<input type="text" value="8"/>	<input type="text" value="3"/>

նկ.2

Հաշվարկներում պետք է օգտագործել հարաբերական ատոմային զանգվածների կիրառված արժեքները, բացի բրոմից՝ 35,5:

ԳԼՈՒԽ 1

1.1. ՔԻՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1.1. Ատոմանոլեկուլային ուսմունք

1. Որքան է 9 կարգաթիվն ունեցող տարրի մեկ ատոմի զանգվածը (գ.ա.մ.):
2. Քանի անգամ է պղնձի մեկ ատոմի զանգվածը մեծ մեթանի մեկ մոլեկուլի զանգվածից:
3. Քանի անգամ է պղնձի մեկ ատոմի զանգվածը մեծ թթվածնի մեկ ատոմի զանգվածից:
4. Քանի անգամ է պղնձի(II) սուլֆատում թթվածին տարրի զանգվածային բաժինը մեծ ծծումբ տարրի զանգվածային բաժնից:
5. Որքան է միատոմ սպիրտի հարաբերական մոլեկուլային զանգվածը, եթե թթվածին տարրի զանգվածային բաժինը դրանում 50 % է:
6. Որքան է լիթիումի 4 մլն ատոմների և թթվածնի 1 մլն մոլեկուլների միացման արգասիքի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
7. Որքան է սպիտակ ֆոսֆորի 1 մլն և թթվածնի 5 մլն մոլեկուլների միացման արգասիքի պարզագույն բանաձևում ատոմների գումարային թիվը:
8. Քանի մոլեկուլ ջուր է պարունակում ծծմբական թթվի հիդրատներից մեկը, եթե դրա մոլեկուլը ջրածնի և թթվածնի հավասար թվով ատոմներ է պարունակում:
9. 18,4 գ մետաղի(II) բրոմիդի և ավելցուկով արծաթի նիտրատի փոխազդեցությունից առաջացել է 37,6 գ զանգվածով նստվածք: Որքան է էլեկտրոնների թիվն այդ մետաղի իոնում:
10. Հնգավալենտ տարրի օքսիդի և նույն տարրի բրոմիդի մոլային զանգվածների հարաբերությունը 1: 3,035 է: Որքան է պրոտոնների թիվն այդ տարրի ատոմի միջուկում:
11. NaHCO_3 -ի և $\text{Na}_2\text{CO}_3 \cdot 10\text{H}_2\text{O}$ -ի հավասարամոլային խառնուրդը մինչև հնարավոր փոփոխությունների ավարտը շիկացնելիս զանգվածը փոխվել է 211 գրամով: Որքան է բյուրեղահիդրատի զանգվածը (գ) խառնուրդում:
12. Ինչ ծավալով (լ) ածխածնի(II) օքսիդ պետք է խառնել 1 լ ծծմբի(IV) օքսիդին, որպեսզի ստացված գազային խառնուրդի խտությունն ըստ ջրածնի դառնա 18,5:

13. Որքան է ատոմների գումարային թիվը միացության պարզագույն բանաձևում, եթե դրանում տարրերի զանգվածային բաժիններն են՝ K (26,53%), Cr (35,37%), O (38,10%):
14. MnO_2 և Cr_2O_3 օքսիդները ջրածնով վերականգնելիս ստացվել է 108-ական գրամ ջրային գոլորշի: Որքան է օքսիդների գումարային զանգվածը (գ):
15. 38,4 գ զանգվածով ծծմբի(IV) օքսիդը համապատասխան պայմաններում օդի թթվածնով օքսիդացնելիս ստացել են 38,4 գ ծծմբի(VI) օքսիդ: Որքան է ծծմբի(IV) օքսիդի փոխարկման աստիճանը (%):
16. Ծծմբի և ածխի 23 գ զանգվածով խառնուրդն այրելիս ստացվել է ծծմբի(IV) և ածխածնի(IV) օքսիդների 71 գ զանգվածով խառնուրդ: Ինչ զանգվածով (գ) ծծումբ է այրվել:
17. Ածուխն այրել են անհրաժեշտ ծավալով ազոտի օքսիդում և ստացել ազոտի օքսիդի ծավալին հավասար ծավալով ազոտ ու կրկնակի փոքր ծավալով ածխածնի(IV) օքսիդ: Որքան է ընթացող ռեակցիայի հավասարման գործակիցների գումարը:
18. Ինչ ծավալով (լ. ն. պ.) ջրածին կանչատվի, եթե ըստ զանգվածի 30 % Na և 70 % Pb պարունակող 143,75 գ զանգվածով համաձուլվածքը սենյակային ջերմաստիճանում փոխազդի ավելցուկով վերցված ջրի հետ:
19. Մինչև պարզ նյութեր քայքայվելիս 100 մլ մեթանի ծավալը դարձել է 175 մլ: Որքան է մեթանի քայքայման աստիճանը (%):
20. Ծծմբի(IV) և (VI) օքսիդների խառնուրդում 5 ատոմ ծծմբին բաժին է ընկնում 12 ատոմ թթվածին: Որքան է ծծմբի(IV) օքսիդի ծավալային (%) բաժինը խառնուրդում:
21. Նատրիումի հիդրոֆոսֆատի բյուրեղահիդրատում ջրածնի ատոմների թիվը 1,5625 անգամ մեծ է թթվածնի ատոմների թվից: Որքան է բյուրեղահիդրատի մոլային զանգվածը (գ/մոլ):
22. Պարբերական համակարգի երկրորդ խմբի գլխավոր ենթախմբի մետաղի 0,25 մոլ քանակով ազոտատի երկհիդրատը $1,5351 \cdot 10^{25}$ էլեկտրոն է պարունակում: Որքան է մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:
23. Որքան է հավասար նյութաքանակով ածխածնի(IV) օքսիդում և օզոնում պարունակվող ատոմների թվերի հարաբերությունը:
24. Որքան է գազի մոլային զանգվածը (գ/մոլ), եթե 2,8 լ ծավալով (ն. պ.) այդ գազի զանգվածը 7,25 գ է:
25. Միացության մոլեկուլում ծծմբի և երկաթի զանգվածների հարաբերությունը 4:3,5 է: Որքան է այդ նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

26. Որքան է գազային նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը, եթե դրա 3,4 գ զանգվածով նմուշի այրումից ստացվել են 6,4 գ ծծմբի(IV) օքսիդ և 1,8 գ ջուր:
27. Որքան է ջրածնի և ծծմբի փոխազդեցության արգասիքի խտությունն ըստ ջրածնի:
28. Որքան է $2,408 \cdot 10^{24}$ թվով ջրածնի ատոմ պարունակող ջրի զանգվածը (գ):
29. Որքան է $3,01 \cdot 10^{25}$ թվով ջրածնի ^2H ատոմներ պարունակող ծանր ջրի (D_2O) զանգվածը (գ):
30. Մետաղի 9 գ նմուշն օդում այրելիս առաջացել է 17 գ զանգվածով մետաղի(III) օքսիդ: Որքան է մետաղի օքսիդի մոլային զանգվածը (գ/մոլ):
31. Միացություններում հաստատուն օքսիդացման աստիճան ցուցաբերող մետաղի և այդ մետաղի բրոմիդի մոլային զանգվածների հարաբերությունը 1 : 5 է: Ի՞նչ քանակով (մոլ) պրոտոններ են պարունակվում 10 գ զանգվածով այդ մետաղի ատոմներում:
32. Պարբերական համակարգի V խմբի տարրերից մեկի զանգվածային բաժինը իր բարձրագույն օքսիդում 43,66 % է: Որքան է այդ տարրի ջրածնային միացության մոլային զանգվածը (գ/մոլ):
33. Պարբերական համակարգի VII խմբի տարրերից մեկի ջրածնային միացության մոլեկուլում ջրածնի զանգվածային բաժինը 5 % է: Ի՞նչ թվով պրոտոններ են առկա այդ տարրի առաջացրած պարզ նյութի մոլեկուլում:
34. Կալցիումի և ալյումինի կարբիդների խառնուրդի և ջրի փոխազդեցությունից ստացվել են հավասար ծավալով գազեր: Խառնուրդում կալցիումի կարբիդի քանակը (մոլ) քանի՞ անգամ է մեծ ալյումինի կարբիդի քանակից:
35. Մարդու արյան 15 գրամն այրելիս ստացվել է 16 մգ երկաթ պարունակող մոխիր: Քանի՞ միլիգրամ երկաթ է պարունակում 60 կգ զանգվածով մարդու արյունը, եթե այն մարդու մարմնի զանգվածի մոտ 8 %-ն է:
36. Գիպսը՝ $\text{CaSO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$, մինչև 130°C տաքացնելիս ջրի ռո՞ մասն (%) է կորցնում՝ փոխարկվելով կեսջրյա բյուրեղահիդրատի:
37. Ո՞րն է տարրի կարգաթիվը, եթե RO բանաձևով այդ տարրի օքսիդում թթվածնի զանգվածային բաժինը 19,75 % է:
38. Որքան է նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը, եթե դրա 154 գ նմուշում պարունակվում են $2,107 \cdot 10^{24}$ թվով մոլեկուլներ:
39. Համաձուլվածքի նմուշում անագի 3 ատոմին բաժին են ընկնում պղնձի 20 ատոմ և նիկելի 7 ատոմ: Որքան է անագի մոլային բաժինը (%) համաձուլվածքի այդ նմուշում:

40. Մետաղի R_2O_3 բանաձևով օքսիդում թթվածնի զանգվածային բաժինը 16,44% է: Ո՞րն է այդ մետաղի կարգաթիվը:

41. Որքան է $C_2H_5COOK + HCl \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի մոլեկուլային կառուցվածքով արգասիքի մոլային զանգվածը (գ/մոլ):

42. Որքան է $NO_2 + NaOH \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի իոնային կառուցվածքով արգասիքների մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը:

43–44. Ծծմբի(IV) և (VI) օքսիդների խառնուրդում ծծմբի յուրաքանչյուր 5 ատոմին բաժին է ընկնում 14 ատոմ թթվածին:

43. Որքան է ծծմբի(IV) օքսիդի մոլային բաժինը (%) այդ խառնուրդում:

44. Որքան է նմուշի զանգվածը (գ), եթե խառնուրդում օքսիդների գումարային քանակը 5 մոլ է:

45–46. Ծծմբի օքսիդում ծծմբի և թթվածնի զանգվածների հարաբերությունը 2 : 3 է: Այդ օքսիդի 4 գ զանգվածով նմուշին ավելացրել են ջուր և ստացել թթվի 10 % զանգվածային բաժնով լուծույթ:

45. Որքան է ավելացրած ջրի զանգվածը (գ):

46. Ի՞նչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդի 28 % զանգվածային բաժնով լուծույթ կաահանջվի ստացված թթուն լրիվ չեզոքացնելու համար:

47–48. Երկաթի և պղնձի համաձուլվածքում երկաթի զանգվածը 2,625 անգամ մեծ է պղնձի զանգվածից:

47. Երկաթի քանի՞ ատոմ է բաժին ընկնում պղնձի մեկ ատոմին այդ նմուշում:

48. Ի՞նչ զանգվածով (գ) 20 % զանգվածային բաժնով աղաթթուն անմնացորդ կփոխազդի 46,4 գ համաձուլվածքի հետ:

49–50. Անջուր նատրիումի սուլֆատը, ջուր կլանելով, վերածվում է բյուրեղահիդրատի:

49. Որքան է ջրի մոլեկուլների թիվը նատրիումի սուլֆատի բյուրեղահիդրատի մոլեկուլում, եթե 8,875 գ անջուր աղին համապատասխանում է 20,125 գ բյուրեղահիդրատ:

50. Ի՞նչ զանգվածով (գ) բարիումի քլորիդ կպահանջվի 40,25 գ բյուրեղահիդրատի լուծույթից սուլֆատ իոնները լրիվ նստեցնելու համար:

51–52. Մետաղի(II) օքսիդում մետաղի զանգվածային բաժինը 77,46 % է:

51. Ո՞րն է մետաղի կարգաթիվը:

52. Որքան է մետաղի բարձրագույն օքսիդի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

53–54. Երկաթի 14 գ նմուշի և ավելցուկով աղաթթվի փոխազդեցությունից առաջացած ջրածինը կարող է վերականգնել 14 գ ալկեն:

53. Որքան է ալկենի մոլային զանգվածը (գ/մոլ):

54. Քանի՞ σ -կապ է առկա այդ ալկենի մոլեկուլում:

55–56. Կառլիսը պարունակում է ըստ զանգվածի 20,93 % Al, 21,71 % Si, 1,55 % H, 55,81 % O:

55. Որքան է կառլիսի մոլային զանգվածը (գ/մոլ):

56. Ի՞նչ զանգվածով (գ) կալցիումի կարբոնատում կպարունակվի այնքան թթվածին, որքան մեկ մոլ կառլիսում:

57–58. Ազոտի(II) և (IV) օքսիդների զազային խառնուրդում մոլեկուլների թիվը 2,8 անգամ փոքր է առումների թվից: 56 լ (ն. ս.) ծավալով այդ խառնուրդն անցկացրել են ավելցուկով նատրիումի հիդրօքսիդի 333 գ ջրային լուծույթի միջով:

57. Որքան է ազոտի(II) օքսիդի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

58. Որքան է ստացված լուծույթում մեծ մոլային զանգվածով աղի զանգվածային բաժինը (%):

59–60. $XClY_3$ նյութում քլորի զանգվածային բաժինը 28,98 % է, իսկ $XClY_4$ նյութում՝ 25,63 %:

59. Ո՞րն է X տարրի հարաբերական ատոմային զանգվածը:

60. Որքան է Y տարրի կարգաթիվը:

61–62. 40,6 գ մագնեզիումի հիդրօքսիդին ավելացրել են 39,2 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի 100 գ լուծույթ, ջուրը գոլորշացրել են, պինդ մնացորդը՝ շիկացրել:

61. Ինչ զանգվածով (գ) մագնեզիումի սուլֆատ է ստացվել:

62. Որքան է մագնեզիումի սուլֆատի զանգվածային բաժինը (%) շիկացնելուց հետո ստացված պինդ մնացորդում:

63–64. Լիթիումի նիտրիդի և հիդրիդի խառնուրդը, որում լիթիում տարրի զանգվածային բաժինը 70 % է, մշակել են ջրով և անջատված գազային խառնուրդն անցկացրել տաքացրած պղնձի(II) օքսիդ պարունակող խողովակի միջով: Գազերի լրիվ փոխազդեցությունից հետո վերականգնման արդյունքում առաջացել է 512 գ զանգվածով պղինձ:

63. Որքան է եղել ելային խառնուրդի զանգվածը (գ):

64. Ինչ զանգվածով (գ) ջուր է ստացվել ռեակցիաների ընթացքում:

65–66. Թթվածնի, ազոտի և ազոտի(II) օքսիդի 600 մլ խառնուրդում ազոտի ծավալային բաժինը 63 % է: Թթվածնի հետ ազոտի(II) օքսիդի լրիվ փոխազդեցությունից հետո ազոտի ծավալային բաժինը դարձել է 70 %:

65. Որքան է թթվածնի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

66. Ինչ ծավալով (մլ) թթվածին է մնացել վերջնական խառնուրդում:

67–68. Ջրածին ստանալու նպատակով հպումային սարքում (կոնտակտային սպարատ) խառնել են 1 մոլ մեթանը 2 մոլ ջրային գոլորշու հետ: Փոխազդել է սկզբնական խառնուրդի 75 %-ը: Մեթանը փոխարկվել է մինչև ածխածնի(IV) օքսիդ:

67. Որքան է ջրածնի ծավալային բաժինը (%) ջրային գոլորշին կոնդենսացնելուց հետո ստացված վերջնական խառնուրդում:

68. Ինչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդի 40 % զանգվածային բաժնով լուծույթ պետք է վերցնել, որպեսզի ստացված ածխածնի(IV) օքսիդը ամբողջովին փոխարկվի թթու աղի:

69–70. Ազոտի երեք օքսիդներում թթվածնի զանգվածային բաժինները համապատասխանաբար կազմում են 36,36 %, 69,57 % և 74,07 %:

69. Որքան է այդ օքսիդների (բանաձևերը՝ նվազագույն ինդեքսներով) հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը:

70. Որքան է ազոտի վալենտականությունը վերջին օքսիդում:

71–72. Կալիումի և մագնեզիումի քլորիդների 1,5 մոլ ընդհանուր քանակով խառնուրդում պարունակվում է 59 մոլ էլեկտրոն:

71. Որքան է խառնուրդի զանգվածը (գ):

72. Ի՞նչ զանգվածով (գ) արծաթի քլորիդ կստացվի նշված քանակով խառնուրդի և ավելցուկով վերցրած արծաթի նիտրատ պարունակող լուծույթի փոխազդեցությունից:

73–75. 1000 °C ջերմաստիճանում 16,8 լ (ն. պ.) մեթանը ենթարկել են պիրոլիզի: Պինդ արգասիքը էլեկտրական փոխազդեցության մեջ են դրել 44,8 գ կալցիումի օքսիդի հետ, իսկ գազային արգասիքը կատալիզորդի սուկայությանը և տաքացման պայմաններում՝ 44 գ քացախալդեհիդի հետ:

73. Որքան է ստացված կարբիդի զանգվածը (գ):

74. Ի՞նչ զանգվածով (գ) նյութ կստացվի քացախալդեհիդի և պիրոլիզի գազային արգասիքի փոխազդեցությունից:

75. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) օդ կպահանջվի քացախալդեհիդի և պիրոլիզի գազային արգասիքի փոխազդեցությունից ստացված գազազոլորչային խառնուրդն այրելու համար:

76–78. Խառնել են 179,2 լ (ն. պ.) ամոնիակը և 44,8 լ (ն. պ.) քլորաջրածինը: Գոյացած իոնական միացությունը լուծել են ջրում և ավելացրել անհրաժեշտ քանակությամբ արծաթի նիտրատի 34 % զանգվածային բաժնով լուծույթ: Փոխազդեցությունից հետո մնացած գազի ավելցուկն անցկացրել են օրթոֆոսֆորական թթվի 6 մոլ/լ կոնցենտրացիայով 0,5 լ լուծույթով:

76. Որքան է գազերի փոխազդեցությունից ստացված միացության զանգվածը (գ):

77. Ի՞նչ զանգվածով (գ) արծաթի նիտրատի լուծույթ է ծախսվել:

78. Ի՞նչ զանգվածով (գ) ֆոսֆորական թթվի աղ է առաջացել:

79–81. Նատրիումի և կալցիումի քլորիդների 2 : 1 մոլային հարաբերությամբ խառնուրդը անհրաժեշտ քանակով ծծմբական թթվի հետ տաքացնելիս անջատվել են 44,8 լ (ն. պ.) գազ և լուծույթում լակմուսի գույնը չփոխող պինդ մնացորդ:

79. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):

80. Որքան է ռեակցիայի արդյունքում ստացված պինդ մնացորդի զանգվածը (գ):

81. Ինչ թվով էլեկտրոններ են պարունակվում ելային խառնուրդը կազմող նյութերի մեկական մոլեկուլներում:

82–84. Նատրիումի օքսիդի և նատրիումի պերօքսիդի որոշակի զանգվածով խառնուրդը, որում նատրիումի յուրաքանչյուր 5 ատոմին բաժին է ընկնում թթվածնի 4 ատոմ, լուծել են որոշակի ծավալով տաք ջրում: Ստացվել է 10 % զանգվածային բաժնով ալկալու լուծույթ, իսկ անջատված գազը քավարարել է 672 մլ (ն. պ.) պրոպանի այրման համար:

82. Որքան է օքսիդի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

83. Որքան է խառնուրդի լուծման համար վերցրած ջրի ծավալը (մլ):

84. Ինչ զանգվածով (գ) ազոտական թթվի 6,3 % զանգվածային բաժնով լուծույթ կապահանջվի ալկալու լուծույթը չեզոքացնելու համար:

85–87. Կալիումի հիդրօքսիդի ջրային տաք լուծույթի մեջ 13,44 լ (ն. պ.) քլոր անցկացնելիս ալկալու քանակը պակասել է 3 անգամ: Ստացված լուծույթը գոլորշացրել են, և պինդ մնացորդը՝ շիկացրել մանգանի(IV) օքսիդի կատալիտիկ քանակի առկայությամբ՝ մինչև հաստատուն զանգված:

85. Քանի անգամ է քլորի վերականգնված ատոմների քանակը (մոլ) մեծ քլորի օքսիդացած ատոմների քանակից:

86. Որքան է շիկացումից հետո ստացված պինդ մնացորդի զանգվածը (գ):

87. Ինչ քանակով (մմոլ) բութանը կպարունակի նույնքան ջրածնի ատոմ, որքան մոլեկուլ պարունակում է շիկացումից ստացված գազը:

88–90. Նյութի այրումից առաջացել է 10 գ մետաղի(II) օքսիդ, որում մետաղի զանգվածային բաժինը 80 % է, և գազ, որի խտությունն ըստ ջրածնի 32 է: Այդ գազը գունազրկել է 10 գ բրոմ պարունակող բրոմաջուրը:

88. Ո՞րն է մետաղի կարգաթիվը:

89. Քանի՞ էլեկտրոն է առկա գազ առաջացնող տարրի ատոմում:

90. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) օդ է ծախսվել նյութի այրման համար:

91–93. Երկաթի(II) սուլֆիդի և պիրիտի 50 գ խառնուրդի բովուծից ստացվել է 0,6 մոլ գազ:

91. Որքան է ելային խառնուրդում պիրիտի զանգվածային բաժինը (%):

92. Որքան է սուլֆիդների այրման ռեակցիաների հավասարումներում քանակաչափական գործակիցների գումարային թիվը:

93. Ի՞նչ զանգվածով (գ) պղնձի(I) սուլֆիդի այրումից կստացվի այնքան գազ, որքան ստացվել է ելային խառնուրդի այրումից:

1.1.1. Ատոմանդեկուրային ուսմունք

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	19	32	34	63	110
2	4	33	18	64	144
3	4	34	3	65	17
4	2	35	5120	66	42
5	32	36	75	67	75
6	30	37	30	68	105
7	7	38	44	69	198
8	2	39	10	70	4
9	10	40	51	71	122
10	15	41	74	72	287
11	286	42	154	73	16
12	3	43	20	74	46
13	11	44	384	75	364
14	565	45	45	76	107
15	80	46	20	77	1000
16	8	47	3	78	396
17	6	48	219	79	114
18	21	49	10	80	139
19	75	50	26	81	82
20	60	51	25	82	40
21	358	52	222	83	369
22	40	53	56	84	1000
23	1	54	11	85	5
24	58	55	258	86	123
25	120	56	300	87	30
26	34	57	20	88	29
27	17	58	20	89	16
28	36	59	39	90	14
29	500	60	8	91	12
30	102	61	48	92	42
31	5	62	80	93	96

1.1.2. Ատոմի կառուցվածքը: Միջուկ: Էլեկտրոն

1. Հետևյալ մասնիկներից մեկում էլեկտրոնների թիվը 1-ով մեծ է պրոտոնների թվից. ա) S^{2-} , բ) Cl^- , գ) Na^+ , դ) Al^{3+} : Որքան է ընտրված մասնիկին համապատասխանող պարզ նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
2. Հետևյալ իզոտոպներից երկուսի միջուկում նեյտրոնների թիվը 1-ով մեծ է պրոտոնների թվից. ա) ^{13}C , բ) 2H , գ) 3H , դ) 1H : Որքան կլինի ընտրված իզոտոպներից կազմված մեթանի մեկ մոլեկուլի զանգվածը (գ.ա.մ.):
3. Քանի՞ լրացված p -օրբիտալ է առկա հիմնական վիճակում գտնվող կալցիումի ատոմում:
4. Քանի՞ չզույգված էլեկտրոն է առկա հիմնական վիճակում գտնվող երկաթի ատոմում:
5. Քանի՞ չզույգված էլեկտրոն է առկա երկաթի Fe^{3+} իոնում:
6. Որքան է $3,01 \cdot 10^{25}$ պրոտոնների զանգվածը (գ):
7. Ինչ զանգվածով (գ) ջուրը կպարունակի այնքան էլեկտրոն, որքան պրոտոն է պարունակում 32 գ զանգվածով մեթանը:
8. Որքան է $1s^2 2s^2 2p^6 3s^2$ և $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^5$ էլեկտրոնային բանաձև ունեցող տարրերին համապատասխանող պարզ նյութերի փոխազդեցությունից ստացվող նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
9. Օրգանական նյութերի հոմոլոգիական շարքի յուրաքանչյուր անդամի մեկ մոլեկուլում պարունակվող պրոտոնների թիվը որքանով է փոքր հաջորդ անդամի մեկ մոլեկուլում պարունակվող պրոտոնների թվից:
10. Բնական պղինձը երկու իզոտոպի խառնուրդ է, որոնցից ^{63}Cu իզոտոպի մոլային բաժինը 73 % է: Ո՞րն է մյուս իզոտոպի զանգվածային թիվը, եթե պղինձի հարաբերական ատոմային զանգվածը 63,54 է:
11. Բնական նեոնը երկու իզոտոպի՝ ^{20}Ne և ^{22}Ne , խառնուրդ է: Որքան է ծանր իզոտոպի մոլային բաժինը (%), եթե հարաբերական ատոմային զանգվածը 20,2 է:
12. Գազային խառնուրդը պարունակում է ըստ զանգվածի 16 % մեթան, 20 % նեոն և 64 % թթվածին: Որքան է այդ խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):
13. Ամբողջ օզոնը քայքայվելուց հետո 25 լ օզոնացված թթվածնի ծավալը դարձել է 28 լ: Որքան է օզոնի ծավալային բաժինը (%) օզոնացված թթվածնում:

14. Ինչի՞ է հավասար ^1H իզոտոպով ջրի ($^1\text{H}_2\text{O}$) զանգվածային բաժինը (%) ծանր ջրի ($^2\text{H}_2\text{O}$) հետ խառնուրդում, եթե դրանում թթվածին տարրի զանգվածային բաժինը 88 % է:
15. Տարրի իզոտոպի զանգվածային թիվը 2,2 անգամ մեծ է պրոտոնների թվից, իսկ նեյտրոնների թիվը 12 է: Որքա՞ն է այդ տարրի ատոմում էլեկտրոնների թիվը:
16. Ո՞րն է $^{235}_{92}\text{U}$ իզոտոպի β -տրոհման հետևանքով ստացվող տարրի իզոտոպի զանգվածային թիվը:
17. Քանի՞ անգամ է ^{35}Cl ատոմների թիվը մեծ ^{37}Cl ատոմների թվից, եթե ընդունենք, որ բլորի հարաբերական ատոմային զանգվածը 35,5 է:
18. Որքա՞ն է նեյտրոնների թիվը X տարրի իզոտոպում՝ ըստ հետևյալ միջուկային ռեակցիայի հավասարման. $^{14}_7\text{N} + \alpha \rightarrow X + ^1_1\text{H}$:
19. 5,6 գ զանգվածով մետաղի(II) օքսիդը անմնացորդ փոխազդել է 29,2 % զանգվածային բաժնով 25 գ աղաթթվի հետ: Ո՞րն է այդ տարրի կարգաթիվը:
20. Կազմե՞ք հետևյալ զույգերով առաջացած նյութերի քիմիական բանաձևերը. 1) Mg^{2+} և N^{3-} ; 2) Al^{3+} և S^{2-} ; 3) Al^{3+} և F^- ; 4) Co^{3+} և SO_4^{2-} : Որքա՞ն է ատոմների գումարային թիվն այդ նյութերի մեկական մոլեկուլներում:
21. Հետևյալ շարքից՝ Mn^{2+} , Cu^+ , Sr^{2+} , Cu^{2+} , Na^+ , Co^{2+} , ընտրե՛ք այն իոնները, որոնց էլեկտրոնային կառուցվածքը համընկնում է իներտ գազի էլեկտրոնային կառուցվածքին: Որքա՞ն է ընտրված մեկական իոններում էլեկտրոնների գումարային թիվը:
22. ^{24}Mg , ^{25}Mg , ^{26}Mg , ^{35}Cl , ^{37}Cl իզոտոպներում որքա՞ն է նեյտրոնների գումարային թիվը:
23. Արտաքին էներգիական մակարդակի $2s^2 2p^1$ էլեկտրոնային բանաձև ունեցող ատոմում որքա՞ն է p -էլեկտրոնների մոլային բաժինը (%):
24. Արտաքին էներգիական մակարդակի $3s^2 3p^6$ էլեկտրոնային բանաձև ունեցող տարրի ատոմում ի՞նչ թվով p -էլեկտրոններ են առկա:
25. $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^3$ էլեկտրոնային բանաձև ունեցող քիմիական տարրի մեկ մոլը ի՞նչ քանակով (մոլ) p -էլեկտրոններ է պարունակում:
26. ^{14}C իզոտոպը անընդհատ առաջանում է օդում՝ ըստ հետևյալ ուրվագրի. $X + ^1_0n \rightarrow ^1_1\text{H} + ^{14}_6\text{C}$: Որքա՞ն է այդ միջուկային ռեակցիային մասնակցող X քիմիական տարրի ատոմի միջուկում առկա նեյտրոնների թիվը:
27. Որքա՞ն է X քիմիական տարրի զանգվածային թիվն ըստ $^{27}_{13}\text{Al} + ^2_1\text{H} \rightarrow ^4_2\text{He} + X$ ուրվագրով ընթացող միջուկային ռեակցիայի հավասարման:

28. Քանի՞ պրոտոն է պարունակվում քիմիական տարրի ատոմի միջուկում, եթե այդ տարրի R^{3+} կատիոնում էլեկտրոններն ունեն $1s^2 2s^2 2p^6$ փոխդասավորությունը:



29. Յոդի ^{131}I իզոտոպի կիսատրոհման պարբերությունը 8 օր է: 16 օրում յոդի սկզբնական քանակի որ մասն է (%) քայքայվում:

30. Քանի՞ լրիվ լրացված էներգիական մակարդակ ունի ծծմբի ատոմը:

31. Ո՞ր կարգաթվով տարրի մոտ է սկսվում 5p ենթամակարդակի լրացումն էլեկտրոններով:

32. Որքան է HSO_4^- , HCO_3^- և NH_4^+ իոններում առկա բոլոր էլեկտրոնների գումարային թիվը:

33. Որքան է X և Y մասնիկների զանգվածային թվերի գումարը՝ ըստ հետևյալ միջուկային ռեակցիաների ուրվագրերի:



34. Որքան է 1823 մոլ քանակով էլեկտրոնի զանգվածը (գ), եթե $m_0(e) = \frac{1}{1823}$ գ. ա. մ.:

35–36. X տարրի առաջացրած բյուրեղներից մեկի բանաձևն է XCl_5 , որում այդ տարրի զանգվածային բաժինը 14,87 % է:

35. Որքան է X տարրի բարձրագույն օքսիդի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

36. Որքան է X տարրի բարձրագույն օքսիդի և տաք ջրի փոխազդեցությունից առաջացող թթվի մոլեկուլում թթվածնի ատոմների մոլային բաժինը (%):

37–38. ${}^{12}\text{C}^{16}\text{O}$ և ${}^{12}\text{C}^{18}\text{O}$ միացությունների խառնուրդի միջին մոլային զանգվածը 28,6 է:

37. Որքան է ${}^{12}\text{C}^{16}\text{O}$ միացության մոլային բաժինը խառնուրդում (%):

38. Որքան է ${}^{18}\text{O}$ իզոտոպի զանգվածը (գ) 286 գ խառնուրդում:

39–40. Ալկենի և ազոտի հալիասարամոլային խառնուրդի խտությունն ըստ ջրածնի 21 է: Որոշակի ծավալով այդ խառնուրդում առկա ալկենը ավելցուկով ջրածնով հիդրելուց հետո խառնուրդի հարաբերական խտությունն ըստ ջրածնի դարձել է 11,25:

39. Որքան է ատոմների թիվը ալկենի մեկ մոլեկուլում:

40. Որքան է ջրածնի ծավալային բաժինը (%) վերջնական խառնուրդում:

41–42. Փակ անոթում պայթեցրել են ածխածնի(IV) օքսիդից, ջրածնից և թթվածնից բաղկացած 84 լ (ն. ս.) ծավալով գազային խառնուրդ: Ելային խառնուրդում ածխածնի(IV) օքսիդի զանգվածը 100 գ-ով ավելի է ջրածնի և թթվածնի զանգվածների գումարից, իսկ թթվածնի զանգվածը 4 անգամ մեծ է ջրածնի զանգվածից:

41. Որքան է սկզբնական խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

42. Քանի անգամ է ածխածնի(IV) օքսիդի քանակը մեծ ջրածնի քանակից վերջնական խառնուրդում:

43–44. Փակ անոթում այրել են ածխածնի(II) օքսիդի, ացետիլենի և ավելցուկով վերցված թթվածնի 150 լ (ն. ս.) խառնուրդ: Սկզբնական պայմանների բերելուց և ջրային գոլորշին կոնդենսացնելուց հետո ստացվել է 105 լ ծավալով գազային խառնուրդ: Վերջինս նատրիումի հիդրօքսիդի լուծույթի միջով անցկացնելուց հետո մնում է 35 լ չկրանված գազ:

43. Որքան է ածխածնի(II) օքսիդի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

44. Ինչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ է փոխազդել վերջնական խառնուրդի հետ, եթե առաջացել է չեզոք աղ:

45–46. Նեոնի և ազոտի(IV) օքսիդի 89,6 լ (ն. ս.) խառնուրդը պարունակում է $3,1906 \cdot 10^{25}$ էլեկտրոն:

45. Ինչ քանակով (մոլ) ազոտի(IV) օքսիդ է պարունակում խառնուրդը:

46. Ինչ զանգվածով (գ) աղ կստացվի գազերի խառնուրդը թթվածնի առկայությամբ կալիումի հիդրօքսիդի ավելցուկ պարունակող ջրային լուծույթով անցկացնելիս:

47–49. NO և NO₂ օքսիդների 40 մլ (ն. ս.) ծավալով խառնուրդին 15 մլ (ն. ս.) օդ ավելացնելիս խառնուրդի ծավալը կրճատվել է 3 մլ-ով: Ստացված խառնուրդին 150 մլ (ն. ս.) օդ ավելացնելիս խառնուրդի ծավալը կրճատվել է ևս 2 մլ-ով: Երկու փորձարկումների ընթացքում ստացված ամբողջ գազային խառնուրդն անցկացրել են ավելցուկով ակալի պարունակող լուծույթով:

47. Որքան է ելային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

48. Որքան է ազոտի ծավալային բաժինը (%) երկու փորձարկումներից հետո ստացված խառնուրդում:

49. Որքան է ալկալու լուծույթով անցկացնելուց հետո ստացված գազային խառնուրդի ծավալը (մլ, ն. պ.):


50–52. 84 գ ամոնիակը, որի մոլեկուլները կազմված են բացառապես ^{15}N և ^2H իզոտոպներից, փոխազդեցության մեջ են դրել 234 գ քլորաջրածնի հետ, որի մոլեկուլները կազմված են ջրածնի՝ ^2H և քլորի՝ ^{37}Cl իզոտոպներից:

50. Որքան է փոխազդած քլորաջրածնի զանգվածը (գ):

51. Որքան է իոնային միացության ստացված քանակում ջրածնի ծանր իզոտոպի զանգվածը (գ):

52. Ի՞նչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով լուծույթի հետ կարող է փոխազդել ստացված իոնային միացությունը:

53–55. Իրականացրել են հետևյալ փոխարկումները.



53. Ի՞նչ քանակով (մոլ) ֆոսֆին կառաջանա 6,2 կգ զանգվածով ելանյութից, եթե յուրաքանչյուր ռեակցիայի ելքը 50 % է:

54. Որքան է Y նյութի մոլային զանգվածը (գ/մոլ):

55. Քանի՞ էլեկտրոն է ընդունում կալցիումի ֆոսֆատի մեկ մոլը:

56–58. 5,3 կգ զանգվածով նատրիումի կարբոնատ պարունակող լուծույթն ստանց մնացորդի փոխազդել է ազոտական թթվի 50 % զանգվածային բաժնով 9,45 կգ լուծույթի հետ, ինչի հետևանքով անջատվել է գազ, և ստացվել է լուծույթ, որը գոլորշացրել են, իսկ պինդ մնացորդը՝ շիկացրել:

56. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) գազ է անջատվել լուծույթի և թթվի փոխազդեցությունից:

57. Որքան է գոլորշացումից հետո ստացված պինդ մնացորդի զանգվածը (գ):

58. Որքան է շիկացումից ստացված չոր գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

59–61. Ըստ ջրածնի 9,25 խտությամբ մեթանից և ազոտիլենից կազմված 44,8 լ (ն. ս.) խառնուրդի այրումից ստացված չոր գազն անցկացրել են կալիումի հիդրօքսիդի 42% զանգվածային բաժնով 360 գ լուծույթի մեջ:

59. Որքան է ազոտիլենի ծավալային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

60. Որքա՞ն է կալիումի կարբոնատի մոլային բաժինը (%) ստացված աղերի խառնուրդում:

61. Որքան է վերջնական լուծույթի զանգվածը (գ):

1.1.2. Ատոմի կառուցվածքը: Միջուկ: Էլեկտրոն

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	71	22	77	43	20
2	25	23	20	44	250
3	6	24	12	45	1
4	4	25	9	46	101
5	5	26	7	47	42
6	50	27	25	48	66
7	36	28	13	49	150
8	95	29	75	50	156
9	8	30	2	51	32
10	65	31	49	52	800
11	10	32	92	53	5
12	25	33	6	54	182
13	24	34	1	55	10
14	90	35	142	56	560
15	10	36	50	57	8475
16	235	37	70	58	35
17	3	38	54	59	25
18	9	39	12	60	8
19	20	40	50	61	470
20	31	41	32		
21	46	42	5		

1.1.3. Քիմիական տարրերի հատկությունների փոփոխության պարբերական բնույթը: Քիմիական կապ և մոլեկուլի կառուցվածք

1. Որքան է $(n-1)d^{10}ns^1$ ընդհանուր էլեկտրոնային բանաձև ունեցող տարրերի կարգաթվերի գումարը:
2. Որքան է ab և ba երկնիշ թվերի գումարը, եթե դրանք համընկնում են VII խմբի գլխավոր ենթախմբի տարրերի կարգաթվերի հետ:
3. Որքան է արտաքին էներգիական մակարդակի ns^2np^5 էլեկտրոնային բանաձևով տարրերի HRO_3 ընդհանուր բանաձևն ունեցող ամենաուժեղ թթվի մեկ մոլեկուլում պրոտոնների թիվը:
4. Հետևյալ շարքերից մեկում ներառված են տարրեր, որոնց առավելագույն օքսիդացման աստիճանները չեն համընկնում պարբերական համակարգում դրանց խմբի համարին:
1) Cu, O, F; 2) Ca, Cr, Mn; 3) Zn, Al, C: Որքան է այդ տարրերի հարաբերական ատոմային զանգվածների գումարը:
5. Որքան է $1s^22s^22p^5$ էլեկտրոնային բանաձևով տարրի և սիլիցիումի առաջացրած ցնդող միացության գոլորշու խտությունն ըստ ջրածնի:
6. H° թվով p -էլեկտրոններ են պարունակվում R_2O , բաղադրությամբ բարձրագույն օքսիդ առաջացնող p տարրի ատոմի արտաքին էներգիական մակարդակում:
7. Որքան է R տարրի բարձրագույն օքսիդի մոլային զանգվածը (q /մոլ), եթե հայտնի է, որ այդ օքսիդում թթվածնի զանգվածային բաժինը 41,177 % է, իսկ գազային ջրածնային միացությունն ունի HR բանաձևը:
8. IV պարբերության առավել ակտիվ մետաղը VI խմբի առավել ուժեղ ոչմետաղի ջրածնային միացության հետ անմնացորդ փոխազդելիս անջատվել է 22,4 լ (ն. պ.) գազ: Որքան է փոխազդած մետաղի զանգվածը (q):
9. Որքան է ազոտի վալենտականության և օքսիդացման աստիճանի թվային արժեքների գումարը $Ca(NO_3)_2$ միացության մեջ:
10. Տարրի ատոմի վալենտային շերտի էլեկտրոնները բնութագրվում են հետևյալ քվանտային թվերով. $n = 3, \ell = 0, m_\ell = 0, m_s = 1/2$: Քանի՞ թափուր d -օրբիտալ կա այդ ատոմում:
11. Որքան է մետաֆոսֆորական, օրթոֆոսֆորական և երկֆոսֆորական թթուների հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը:
12. Որքան է σ - և π -կապերի թվերի տարբերությունը ացետիլենի մեկ մոլեկուլում:

13. Որքան է NH_3 , CH_4 , CO_2 , BCl_3 բանաձևերով նյութերից այն մոլեկուլի զանգվածը (գ.ա.մ.), որում կովալենտային անկյունը 107° է:

14. Պրոպենի մեկ մոլեկուլում որքան է sp^2 -օրբիտալների հարթությունում գտնվող ատոմների թիվը:

15. 2-բութենի մեկ մոլեկուլում որքան է σ - և π -կապերի թվերի տարբերությունը:

16. Ալկանների հոմոլոգիական շարքի յուրաքանչյուր անդամի մեկ մոլեկուլի զանգվածը քանի՞ գ.ա.մ-ով է տարբերվում հաջորդ անդամի մեկ մոլեկուլի զանգվածից:


17. Որքան է ամոնիակի այրման գազային վերջանյութի մոլեկուլում կովալենտային կապերի թիվը:

18. Որքան է $2\text{HNO}_3 + \text{P}_2\text{O}_5 = \dots$ ուրվագրին համապատասխան ռեակցիայի (պահպանելով ձախ կողմի գործակիցները) վերջանյութ թթվի մոլեկուլում առկա կովալենտային կապերի գումարային թիվը:

19. Ինչ թվով sp^2 -օրբիտալներ են մասնակցում բենզոլի մոլեկուլի առաջացմանը:

20. Որքան է 1) N_2 , 2) NH_3 , 3) NH_4Cl , 4) N_2H_4 , 5) HNO_3 նյութերի շարքում այն միացությունների համարների գումարային թիվը, որոնցում ազոտի օքսիդացման աստիճանի և կովալենտային կապերի թվային արժեքները չեն համընկնում:

21. Որքան է X և Y նյութերի մոլեկուլներում դոնորակցեպտորային մեխանիզմով առաջացած կովալենտային կապերի գումարային թիվն ըստ հետևյալ ուրվագրերի.



22. Քլորային թթվի մոլեկուլում σ -կապերի թիվը քանի՞ անգամ է մեծ π -կապերի թվից:

23–24. Պարբերական համակարգի երկրորդ խմբի գլխավոր ենթախմբին պատկանող երեք տարրերի նիտրատներում դրանց զանգվածային բաժինները 41,51%, 24,39% և 52,49% են:

23. Որքան է դրանցից առավել փոքր իոնացման էներգիա ունեցող մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:

24. Որքան է դրանցից առավել մեծ իոնացման էներգիա ունեցող մետաղի 82 գ զանգվածով նիտրատի ջերմային քայքայումից գոյացող պինդ մնացորդի զանգվածը (գ):

25-26. *Ըստ հետևյալ միջուկային ռեակցիայի՝ $^{56}\text{Fe} + \text{նեյտրոն} \rightarrow \text{պրոտոն} + X$.*

25. Որքան է X տարրի բարձրագույն օքսիդի մեկ մոլեկուլում թթվածինի բաժին ընկնող պրոտոնների թիվը:

26. Որքան է այդ նույն օքսիդին համապատասխանող թթվի մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը:

27-28. *Հետևյալ շարքում՝ Li^+ , Cl^- , Ca^{2+} , N^{3-} , Na^+ , F^- , որոշ իոններ ունեն նեոն իներտ գազի էլեկտրոնային կառուցվածք:*

27. Որքան է այդ իոնների զույգ առ զույգ առաջացրած միացությունների մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը:

28. Ի՞նչ զանգվածով (գ) բրոմիդ է համապատասխանում նեոնի էլեկտրոնային կառուցվածքն ունեցող կատիոնի 2 մոլին:

29-30. *Տրված են H_2S , HCl , SiH_4 , Br_2 միացությունների քանակները:*

29. Քանի՞ պրոտոն է առկա առավել բևեռային կովալենտային կապ պարունակող միացության մոլեկուլում:

30. Ի՞նչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա, եթե 2 մոլ քանակով առավել բևեռային կապով միացությունը փոխազդի ավելցուկով վերցրած արծաթի նիտրատի լուծույթի հետ:

31-32. *Պարբերական համակարգի երրորդ պարբերության II խմբի գլխավոր ենթախմբում գտնվող տարրի և արտաքին էներգիական մակարդակի $4s^2 4p^5$ էլեկտրոնային կառուցվածքն ունեցող տարրի ատոմների միջև փոխազդեցությունից առաջացած միացությունում մետաղի ատոմային օրբիտալները գտնվում են sp հիբրիդային վիճակում:*

31. Որքան է կապերի միջև անկյունն այդ նյութի մոլեկուլում:

32. Ի՞նչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա 46 % զանգվածային բաժնով այդ նյութի 200 գ լուծույթի հետ անհրաժեշտ քանակով նատրիումի հիդրօքսիդի փոխազդեցությունից:

33-34. Տարացման պայմաններում փոխազդեցության մեջ են դրել (կատալիզորդի առկայությամբ) 11,2 գ զանգվածով 2-մեթիլպրոպենը և 7,2 գ զանգվածով ջրային գոլորշին: Ստացվել է գազագոլորշային խառնուրդ, որի խտությունն ըստ հեղիումի 9,2 է:

33. Որքան է սպիրտի ստացման ռեակցիայի ելքը (%):

34. Որքան է ստացված սպիրտի մոլեկուլում σ -կապերի թիվը:

1.1.3. Քիմիական տարրերի հատկությունների փոփոխության պարբերական բնույթը: Քիմիական կապ և մոլեկուլի կառուցվածք

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	155	13	17	25	56
2	88	14	6	26	6
3	42	15	10	27	125
4	99	16	14	28	206
5	52	17	3	29	18
6	5	18	6	30	287
7	272	19	18	31	180
8	78	20	13	32	29
9	9	21	2	33	50
10	5	22	3	34	14
11	356	23	137		
12	1	24	66		

**1.1.4. Պինդ, հեղուկ, գազային նյութեր: Մաքուր նյութեր և
խառնուրդներ: Նյութերի գազային վիճակը:
Մենդելեև-Կլապեյրոնի հավասարումը: Ավոգադրոյի օրենքը:
Պինդ նյութեր: Բյուրեղային և ամորֆ նյութեր**

1. Նատրիումի կարբոնատի, հիդրոկարբոնատի և ալյումինի օքսիդի փոշիների խառնուրդը մշակել են տաք ջրով, ֆիլտրել, լուծույթը գոլորշացրել և չոր մնացորդը շիկացրել: Որքան է շիկացումից հետո ստացված պինդ նյութի մոլային զանգվածը (գ/մոլ):
2. Սենյակային ջերմաստիճանում 11,2 լ (ն. պ.) ազոտի(II) օքսիդը խառնել են 22,4 լ (ն. պ.) թթվածնի հետ: Որքան է ստացված խառնուրդում փոքր մոլային զանգվածով գազի ծավալային բաժինը (%):
3. Կրակաթ պատրաստելու համար 224 գ կալցիումի օքսիդը լուծել են 576 գ ջրում: Որքան է կալցիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը (%) կրակաթում, եթե կալցիումի օքսիդը ամբողջությամբ վերածվել է կալցիումի հիդրօքսիդի:
4. 60 գ կալցիումի կարբոնատ պարունակող սուսպենզիայի մեջ անցկացրել են ածխածնի(IV) օքսիդի և թթվածնի հավասարամոլային խառնուրդի 38 գ նմուշ: Որքան է լուծույթում առաջացած նոր աղի զանգվածը:
5. Ծծումբ պարունակող գազային միացության խտությունը 52°C -ում և 86,32 կՊա ճնշման պայմաններում 2,084 գ/լ է: Որքան է միացության հարաբերական խտությունն ըստ հելիումի ($R=8,32/\text{մոլ} \cdot \text{Կ}$, $T_0=273 \text{ Կ}$):
6. Որքան է արծաթի և պղնձի նիտրատների հավասարամոլային խառնուրդի քայքայումից ստացվող գազային խառնուրդում օքսիդի մոլային բաժինը (%):
7. Հավասար ծավալներով էթանի և ացետիլենի խառնուրդին ինչ-որ գազի որոշակի քանակություն ավելացնելիս նոր ստացված գազային խառնուրդի հարաբերական խտությունը չի փոխվել: Որքան է ավելացրած գազի մոլային զանգվածը (գ/մոլ):
8. Քանի՞ անգամ են իրարից տարբերվում միևնույն պայմաններում հավասար զանգվածներով վերցրած հելիումի և մեթանի ծավալները:
9. Հեղուկ ամոնիակի խտությունը (ն. պ.) 0,51 գ/մլ է: Քանի՞ անգամ կմեծանա հեղուկ ամոնիակի ծավալը, եթե այն վերածվի գազի (ն. պ.):
10. Որքան է ածխածնի(IV) օքսիդի զանգվածը (գ), եթե 27°C ջերմաստիճանի և 300 կՊա ճնշման պայմաններում այն զբաղեցնում է 41,5 լ ծավալ ($R=8,32/\text{մոլ} \cdot \text{Կ}$, $T_0=273 \text{ Կ}$):

11. Նատրիումի կարբոնատի և հիդրոկարբոնատի 190 գ խառնուրդը ավելցուկով վերցրած աղաթթվով մշակելիս անջատվել է 50 լ ծավալով գազ 27°C ջերմաստիճանի և 99,6 կՊա ճնշման պայմաններում ($R = 8,3 \text{ Ջ/մոլ} \cdot \text{Կ}$, $T_0 = 273 \text{ Կ}$): Որքան է նատրիումի կարբոնատի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

12. Ինչ ծավալ (լ) կգբաղեցնի 128 գ ծծմբի(IV) օքսիդը 400 Կ ջերմաստիճանում և 415 կՊա ճնշման պայմաններում ($R = 8,3 \text{ Ջ/մոլ} \cdot \text{Կ}$):

13. Որքան է ամոնիակի հարաբերական խտությունն ըստ ամոնիակի լրիվ քայքայման արդյունքում ստացված գազային խառնուրդի:

14. Որքան է մեթանի հարաբերական խտությունն ըստ 1500°C պայմաններում մեթանի լրիվ քայքայման արդյունքում ստացված գազային խառնուրդի:

15. Որքան է ծծմբի(VI) օքսիդի քայքայման աստիճանը (%), եթե ստացված հավասարակշռային խառնուրդի և ծծմբի(IV) օքսիդի խտությունները նույնն են:

16. Ինչ զանգվածով (կգ) պոլիէթիլեն կառաջանա 56 կգ էթիլենից, եթե ռեակցիան ընթանա 50% ելքով:

17–18. Սիլանի, թթվածնի և նեոնի 1 : 3 : 1 ծավալային հարաբերությամբ խառնուրդն այրել են և վերջնական գազային խառնուրդը՝ ստեղծել մինչև 20°C : Պինդ մնացորդը տաքացրել են ածխածնի ավելցուկի հետ:

17. Որքան է ստացված գազային խառնուրդի հարաբերական խտությունն ըստ ջրածնի:

18. Որքան է սիլիցիումի զանգվածային բաժինը (%) վերջնական խառնուրդում առկա սիլիցիում պարունակող բարդ նյութում:

19–20. $13,6 \text{ գ/սմ}^3$ խտությամբ սովորական պայմաններում հեղուկ վիճակում գտնվող մետաղի որոշակի զանգվածով նմուշը տաքացրել են և ստացել $0,224 \text{ լ}$ (ն. պ.) գոլորշի:

19. Որքան է գոլորշացած մետաղի զանգվածը (մգ):

20. Որքան է 68 գ զանգվածով հեղուկ մետաղի ծավալը (սմ^3):

21–22. Սենյակային ջերմաստիճանում հեղուկ վիճակում գտնվող ոչմետաղը սաքացման պայմաններում փոխազդել է երկաթի խարտուքի հետ: Ստացված միացության լուծույթին ավելացրել են արծաթի նիտրատի լուծույթ:

21. Որքան է ոչմետաղ տարրի մոլային բաժինը (%) ստացված միացությունում:

22. Ինչ զանգվածով (մգ) նստվածք կգոյանա 2,96 գ ստացված միացություն պարունակող ջրային լուծույթի և ավելցուկով արծաթի նիտրատի փոխազդեցության արդյունքում:

23–24. Չքայքայվող խառնուկներ պարունակող կրաքարի 10,26 գ նմուշը շիկացրել են մինչև հաստատուն զանգված՝ 6,3 գ:

23. Որքան է կալցիումի օքսիդի զանգվածային բաժինը (%) շիկացումից ստացված պինդ մնացորդում:

24. Ինչ զանգվածով (գ) կալցիումի կարբոնատ է պարունակում կրաքարի նմուշը:

25–26. Կալիումի և պղնձի(II) նիտրատների խառնուրդի լրիվ քայքայումից անջատվել է 23,52 լ (ն. պ.) գազային խառնուրդ, որում ազոտ տարրի զանգվածային բաժինը 25 % է: Անջատված գազային խառնուրդը կլանել են 208,8 գ ջրով:

25. Որքան է ելային խառնուրդում կալիումի նիտրատի մոլային բաժինը (%):

26. Որքան է նյութի զանգվածային բաժինը ջրով կլանվելուց հետո ստացված լուծույթում (%):

27–28. 10 լ ծավալ ունեցող փակ անոթում 27°C ջերմաստիճանի պայմաններում 1,6 գ միատոմ գազ տեղավորելիս անոթում ստեղծվել է $9,96 \cdot 10^3$ Պա ճնշում ($R = 8,3$ Ջ/մոլ \cdot Կ, $T_0 = 273$ Կ):

27. Որքան է գազի մոլային զանգվածը (գ/մոլ):

28. Որքան կլինի ճնշումն (Պա) անոթում, եթե այն սառեցվի մինչև -3°C :

29–30. Որոշակի զանգվածով թթվածինը 809,25 կՊա ճնշման և 546 Կ ջերմաստիճանի պայմաններում զբաղեցնում է 112 լ ծավալ ($R = 8,3$ Ջ/մոլ \cdot Կ):

29. Ինչ ծավալ (լ) կզբաղեցնի այդ նույն զանգվածով թթվածինը 99,6 կՊա ճնշման և 300 Կ ջերմաստիճանի պայմաններում:

30. Ինչ զանգվածով (գ) ջուր պետք է ենթարկել էլեկտրոլիզի՝ ելային քանակով թթվածին ստանալու համար:

31–32. Կալցիումի հիդրոկարբոնատի 48,6 գրամը տաքացրել են 400 °C–ից ցածր ջերմաստիճանում: Ստացված գազագոյորչային խառնուրդն անցկացրել են 16,8 գ կալիումի հիդրօքսիդ պարունակող 131,4 գ լուծույթի մեջ:

31. Որքան է տաքացման արդյունքում գոյացած պինդ նյութի զանգվածը (գ):

32. Որքան է գազագոյորչային խառնուրդի կլանման արդյունքում ստացված իոնային կառուցվածք ունեցող նյութի զանգվածային բաժինը (%) լուծույթում:

33–35. 312 գ ածխածինն այրել են 1792 լ (ն. պ.) օդ պարունակող փակ անոթում: Ստացված գազային խառնուրդն անցկացրել են 102 գ ամոնիակ պարունակող 5661 գ ջրային լուծույթի միջով:

33. Որքան է այրման արդյունքում ստացված գազային խառնուրդի ծավալը (լ, ն. պ.):

34. Ինչ զանգվածով (գ) գազային խառնուրդ է ստացվել:

35. Որքան է ամոնիակի ջրային լուծույթում ստացված աղի զանգվածային բաժինը (%):


**1.1.4. Պինդ, հեղուկ, գազային նյութեր: Մաքուր նյութեր և խառնուրդներ:
Նյութերի գազային վիճակը: Մենդելևև – Կլապեյրոնի հավասարումը:
Ավոգադրոյի օրենքը: Բյուրեղային և ամորֆ նյութեր**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	106	13	2	25	20
2	60	14	2	26	20
3	37	15	50	27	40
4	81	16	28	28	8964
5	16	17	13	29	500
6	75	18	70	30	720
7	28	19	2010	31	30
8	4	20	5	32	20
9	672	21	75	33	2016
10	220	22	5640	34	2616
11	50	23	80	35	8
12	16	24	9		


1.2. ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ

1.2.1. Քիմիական ռեակցիաների դասակարգումը


1. Որքան է ամոնիակի կատալիտիկ օքսիդացման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը:
2. Որքան է կալիումի պերմանգանատի ջերմային քայքայման ռեակցիայի ընթացքում վերականգնման արգասիքների գործակիցների գումարը:
3. Որքան է օքսիդիչ նյութերի գործակիցների գումարը ամոնիակից ազոտական թթվի արդյունաբերական ստացման հիմքում ընկած բոլոր ռեակցիաների հավասարումներում:
4. Որքան է երկաթի(II,III) օքսիդի (երկաթի հարուկի) հետ աղաթթվի փոխանակման ռեակցիայում քլորաջրածնի գործակիցը:
5. Որքան է ծծմբաջրածնի լրիվ և թերի այրման ռեակցիաների հավասարումներում թթվածնի գործակիցների գումարը:
6. Հետևյալ գույգերից մեկի նյութերը կարող են փոխազդել միմյանց հետ համապատասխան պայմաններում. ա) BaO և HgO, բ) SrO և FeO, գ) BeO և CaO, դ) Na₂O և CaO: Որքան է ընտրված գույգի նյութերի միջև ընթացող ռեակցիայի վերջանյութի մոլային զանգվածը (գ/մոլ):
7. Որքան է ռեակցիայի հավասարման բոլոր գործակիցների գումարն ըստ հետևյալ ռեակցիայի հավասարման ուրվագրի... + ... + ... = 2MnSO₄ + 6K₂SO₄ + 3H₂O:
8. Վերականգնե՛ք հետևյալ ռեակցիայի հավասարման ձախ մասը ... + ... = Fe₄[Fe(CN)₆]₃ + 6K₂SO₄: Որքան է ռեակցիայի հավասարման բոլոր գործակիցների գումարը:
9. Երկու մոլ երկաթի(II) քլորիդի և 5 մոլ նատրիումի հիդրօքսիդի փոխազդեցությունից առաջացել է պղնձի(II) հիդրօքսիդ: Որքան է ավելցուկ ելանյութի զանգվածը (գ):
10. Ի՞նչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա, եթե 0,4 մոլ նատրիումի քլորիդ և 0,35 մոլ մագնեզիումի բրոմիդ պարունակող լուծույթին ավելացվի փոխազդեցության համար անհրաժեշտ քանակով արծաթի նիտրատ:
11. Որքան է հետևյալ ուրվագրով օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.



12. Որքան է հետևյալ ուրվագրով օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարման օքսիդիչ նյութի գործակիցը.



13–14. Որոշ գույգ նյութերի միջև հնարավոր է միացման ռեակցիա.



13. Որքան է միացման ռեակցիաների արդյունքում գոյացող արգասիքների մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը:

14. Որքան է այդ ռեակցիաների արդյունքում գոյացող արգասիքների մոլեկուլներում ջրածնի ատոմների գումարային թիվը:

15–16. Ջերմային քայքայման են ենթարկել 376 գ զանգվածով պղնձի(II) նիտրատը:

15. Որքան է պինդ մնացորդի զանգվածը (գ):

16. Որքան է գոյացած գազային խառնուրդի ծավալը (լ, ն. պ.):

17–18. Ածխածնի(II) օքսիդի և ջրածնի խառնուրդի ծավալը 89,6 լ (ն. պ.) է:

17. Որքան է այդ խառնուրդի լրիվ այրման համար անհրաժեշտ թթվածնի քանակը (մոլ):

18. Ինչ զանգվածով (գ) նատրիումի նիտրատի ջերմային քայքայումից կստացվի ելային խառնուրդի լրիվ այրման համար անհրաժեշտ թթվածինը:

19–20. 0,2 մոլ քանակով ծծմբաջրածնի լրիվ այրման հետևանքով առաջացած չոր գազը կլանել են 22,4 գ կալիումի հիդրօքսիդ պարունակող 113,6 գ լուծույթով:

19. Որքան է լուծույթում առաջացած աղի զանգվածային բաժինը (%):

20. Որքան է այդ աղի օքսիդացման համար անհրաժեշտ թթվածնի ծավալը (մլ, ն. պ.):

21–22. Երկաթի և ալյումինի խառնուրդն ալկալու լուծույթի ավելցուկով մշակելուց հետո խառնուրդի զանգվածը պակասել է 21,6 գ-ով: Չլուծված մնացորդը տաքացման պայմաններում ստրոնցիումի փոխազդել է 13,44 լ (ն. պ.) քլորի հետ:

21. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):

22. Որքան է քլորի հետ փոխազդեցության արդյունքում ստացված աղի զանգվածը (գ):

23–25. Կալիումի և կալցիումի կարբոնատների 3,76 գ զանգվածով խառնուրդը քանակապես փոխազդել է 10,95 գ զանգվածով 10 % զանգվածային բաժնով աղաթթվի հետ, ընդ որում՝ գազի անջատում չի դիտվել: Այնուհետև ստացված համակարգին ավելացրել են աղաթթու՝ մինչև գազի անջատման ախարտը:

23. Որքան է կալիումի կարբոնատի զանգվածը (մգ) սկզբնական խառնուրդում:

24. Որքան է կալցիումի քլորիդի զանգվածը (մգ) առաջին լուծույթում:

25. Ինչ ծավալով (մլ, ն. պ.) գազ է անջատվել երկրորդ անգամ աղաթթու ավելացնելիս:

26–28. Ջերմային քայքայման են ենթարկել 157,5 գ զանգվածով ամոնիումի երկբրոմատը:

26. Որքան է օքսիդացման և վերականգնման արդյունքում առաջացած նյութերի մոլային զանգվածների գումարը:

27. Որքան է առաջացած գազի ծավալը (լ, ն. պ.):

28. Որքան է ամոնիումի նիտրիտի զանգվածը (գ), որի քայքայումից կառաջանա նույն քանակով (մոլ) այն գազը, որն անջատվում է ամոնիումի երկբրոմատի քայքայումից:

1.2.1. Քիմիական ռեակցիաների դասակարգումը


Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	19	11	25	21	44
2	2	12	1	22	65
3	7	13	172	23	2760
4	8	14	6	24	555
5	4	15	160	25	672
6	81	16	112	26	180
7	21	17	2	27	14
8	12	18	340	28	40
9	40	19	25		
10	189	20	2240		

**1.2.2. Գաղափար քիմիական ռեակցիայի արագության մասին:
Քիմիական հավասարակշռություն**

1. Փակ համակարգում ճնշումը 2 անգամ մեծացնելիս քանի՞ անգամ կմեծանա քլորի հետ երկաթի փոխազդեցության ռեակցիայի արագությունը:
2. Որքան է $A + 2B = D$ ռեակցիայի արագությունը (մոլ/լ · ժ) ըստ A նյութի սպառման, եթե 10 րոպեի ընթացքում B նյութի քանակը 10 մլ ծավալով ռեակցիոն խառնուրդում պակասել է 0,6 մոլ-ով:
3. $A + 2B = 2D$ ռեակցիայի արագությունն ըստ A նյութի սպառման 2 մոլ/լ · վ է: Որքան կլինի նույն ռեակցիայի արագությունն (մոլ/լ · վ) ըստ B նյութի սպառման:
4. Մեկ լիտր տարողությամբ փակ անոթում տաքացման պայմաններում տեղավորել են 2 մոլ ամոնիակ: Որոշ ժամանակ անց համակարգում ստեղծվել է հավասարակշռություն, և ճնշումն անոթում մեծացել է 1,5 անգամ: Որքան է նյութերի հավասարակշռային կոնցենտրացիաների գումարը (մոլ/լ):
5. Երկու լիտր տարողությամբ փակ անոթում իրականացրել են ամոնիակի սինթեզ. $N_{2(g)} + 3H_{2(g)} = 2NH_{3(g)}$: Ռեակցիան սկսվելուց 2 վրկ հետո գոյացել է 1,7 գ զանգվածով ամոնիակ: Որոշե՞ք ամոնիակի առաջացման միջին արագությունը (մմոլ/լ · վրկ):
6. 2,5 լ տարողությամբ փակ անոթում 4,5 մոլ A գազը խառնել են B գազին: Համակարգում գոյացել է 2 մոլ C գազ՝ ըստ $A + B = C$ հավասարման: Որքան կլինի A գազի մոլային կոնցենտրացիան (մոլ/լ):
7. 500 մլ ծավալով անոթում պարզ նյութերից 15 վայրկյանում գոյացել է 73 գ քլորաջրածին: Որքան է ռեակցիայի միջին արագությունը (մոլ/լ · ժ):
8. Ըստ $A + B = D$ համասեռ ռեակցիայի՝ A նյութի կոնցենտրացիան 6,0 մոլ/լ-ից 18 վայրկյան անց դարձել է 4,2 մոլ/լ: Ի՞նչ միջին արագությամբ (մոլ/լ · ժ) է ընթացել ռեակցիան:
9. 20 °C ջերմաստիճանում ռեակցիան ընթանում է 2 րոպեում: Ի՞նչ ժամանակում (րոպե) կընթանա այդ ռեակցիան 0 °C ջերմաստիճանում, եթե արագության ջերմաստիճանային գործակիցը՝ $\gamma=2$:
10. 100 °C ջերմաստիճանում ռեակցիայի արագությունը $3,6 \cdot 10^{-2}$ մոլ/լ · վրկ է, իսկ արագության ջերմաստիճանային գործակիցը՝ $\gamma=2$: Ի՞նչ ջերմաստիճանում (°C) պետք է ընթանա այդ ռեակցիան, որպեսզի արագությունը հավասարվի $9 \cdot 10^{-3}$ մոլ/լ · վրկ:

11. Ըստ $A = B + D$ հավասարման ընթացող ռեակցիան սկսվելուց 6 վայրկյան անց A նյութի կոնցենտրացիան 2 մոլ/լ-ից դարձել է 1,4 մոլ/լ: Ինչ արագությամբ է ընթացել ռեակցիան (մոլ/լ · րոպե) նշված ժամանակահատվածում:
12. Քանի՞ անգամ կփոխվի փակ անոթում իրականացվող $C_{(պինո)} + O_{2(գազ)} = CO_{2(գազ)}$ ռեակցիայի արագությունը, եթե ձնշումն այդ անոթում մեծացվի 5 անգամ:
13. Քանի՞ անգամ կմեծանա ռեակցիայի միջին արագությունը ջերմաստիճանը 40 °C-ով բարձրացնելիս, եթե ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցը՝ $\gamma = 3$:
14. Քանի՞ անգամ պետք է փոքրացնել ծավալը, որպեսզի փակ անոթում ընթացող $CO_{(գազ)} + Cl_{2(գազ)} = COCl_{2(գազ)}$ ռեակցիայի արագությունը մեծանա 100 անգամ:
15. Քիմիական ռեակցիան 10 °C ջերմաստիճանում ավարտվում է 8 րոպեում: Ինչ ժամանակահատվածում (վրկ) կավարտվի ռեակցիան 50 °C ջերմաստիճանում, եթե ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցը՝ $\gamma = 2$:
16. 6 մոլ էթենը տեղավորել են 2 դմ³ ծավալով փակ անոթում և ենթարկել պոլիմերացման: Որքա՞ն է էթենի մոլային կոնցենտրացիան (մոլ/դմ³) ռեակցիան սկսվելուց 5 վրկ հետո, եթե պոլիմերացման ռեակցիայի միջին արագությունը 0,2 մոլ/դմ³ · վրկ է:
17. Երկու տարբեր ռեակցիաներ 20 °C ջերմաստիճանում ընթանում են նույն արագությամբ ($V_1 = V_2$), իսկ 50 °C-ում՝ $V_1/V_2 = 8$: Ինչպիսի՞ն է γ_1/γ_2 ջերմաստիճանային գործակիցների հարաբերությունն այդ ռեակցիաների համար:

18. Որքա՞ն է ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցն ըստ հետևյալ նկարի:



19. Քանի՞ անգամ կփոքրանա ռեակցիայի արագությունը ջերմաստիճանը 100 °C-ից մինչև 70 °C իջեցնելիս, եթե $\gamma = 2$:
20. 850 °C ջերմաստիճանում $CO_{(գազ)} + H_2O_{(գազ)} \rightleftharpoons CO_{2(գազ)} + H_2_{(գազ)}$ համակարգում հավասարակշռության հաստատունը 1 է: Հաշվի առնելով, որ CO-ի և H₂O-ի սկզբնական կոնցենտրացիաները եղել են համապատասխանաբար 3 մոլ/լ և 2 մոլ/լ, հաշվե՞ք ածխածնի(IV) օքսիդի հավասարակշռային կոնցենտրացիան (մոլ/լ):

21. Փակ անոթում կատալիզորդի առկայությամբ մեկ մոլ թթվածնից և մեկ մոլ ամոնիակից կազմված գազային խառնուրդը տաքացնելիս առաջացել են ամոնիակի օքսիդացման արգասիքներ, և ստեղծվել է հավասարակշռություն: Ջուրը հեռացնելուց հետո մնացած գազային խառնուրդում թթվածնի ծավալային բաժինը 20 % է: Որքան է ստացված ազոտի(II) օքսիդի քանակը (մմոլ):
22. Փակ անոթում 1 : 2 մոլային հարաբերությամբ խառնել են ջրածնի և քացախալդեհիդի գոլորշին, որոնց փոխազդեցության հետևանքով ձնշումը (300 °C) փոքրացել է 20 %-ով: Որքան է էթանոլի ստացման ռեակցիայի ելքը (%):
- 23–24. Երկու քիմիական ռեակցիաներ 50 °C ջերմաստիճանի պայմաններում ընթանում են 2 մոլ/լ · վրկ–ում:
23. Ինչ արագությամբ (մոլ/լ · վրկ) կընթանա առաջին ռեակցիան 80 °C ջերմաստիճանում, եթե ջերմաստիճանային գործակիցը՝ $\gamma = 2$:
24. Որքան է երկրորդ ռեակցիայի ջերմաստիճանային գործակիցը՝ γ , եթե 80 °C ջերմաստիճանում ռեակցիայի արագությունը դարձել է 128 մոլ/լ · վրկ:
- 25–26. Փակ անոթում գտնվող խառնուրդը, որում ածխածնի(II) օքսիդի կոնցենտրացիան 1,60 մոլ/լ է, իսկ քլորինը՝ 1,62 մոլ/լ, լուսավորել են արևի լույսով: Ընթացել է $CO_{(գազ)} + Cl_{2(գազ)} = COCl_{2(գազ)}$ ռեակցիան, և 3 վայրկյան անց հաստատվել է հավասարակշռություն, որտեղ ածխածնի(II) օքսիդի կոնցենտրացիան հավասարվել է 1,00 մոլ/լ–ի:
25. Որքան է ստացված խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):
26. Որքան է ֆոսգենի՝ $COCl_2$, առաջացման միջին արագությունը (մոլ/լ · րոպե):
- 27–28. Լուծույթում ընթացող $2A = B$ ռեակցիայի արագության որոշման հավասարումն է $V = k[A]^2$, իսկ արագության ջերմաստիճանային գործակիցը՝ $\gamma = 2$:
27. Քանի՞ անգամ կմեծանա ռեակցիայի արագությունը, եթե A նյութի կոնցենտրացիան մեծացվի 4 անգամ:
28. Քանի՞ անգամ կմեծանա ռեակցիայի արագությունը, եթե միաժամանակ ջերմաստիճանն իջեցվի 20 °C–ով, իսկ A նյութի կոնցենտրացիան մեծացվի 4 անգամ:

29–30. 12 լ տարողությամբ փակ անոթում իրականացրել են ամոնիակի սինթեզ և ստացել հավասարակշռային գազային խառնուրդ, որը կազմված է 16,8 գ ազոտից, 10,2 գ ամոնիակից և 2,4 գ ջրածնից:

29. Որքան է ռեակցիայի հավասարակշռության հաստատունի թվային արժեքը:

30. Ինչ քանակով (մոլ) երկաթ կարելի է վերականգնել 12 լ հավասարակշռային խառնուրդը տաքացման պայմաններում երկաթի(II) օքսիդի հետ փոխազդեցության մեջ դնելիս:

31–33. Ազոտի և ամոնիակի 56 լ (ն. ս.) խառնուրդին ավելացրել են 22 լ (ն. ս.) քլորաջրածին, ինչի արդյունքում ստացված գազային խառնուրդի խտությունն ըստ մեթանի դարձել է 1,835:

31. Որքան է ամոնիակի ծավալային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

32. Ինչ զանգվածով (գ) պղինձ կարելի է վերականգնել սկզբնական խառնուրդում առկա ամոնիակի և պղնձի(II) օքսիդի փոխազդեցությունից:

33. Համապատասխան փոխարկումների միջոցով ելային խառնուրդում առկա ամոնիակից ինչ զանգվածով (գ) ազոտական թթվի 35 % զանգվածային բաժնով լուծույթ կարելի է ստանալ, եթե վերջինիս ելքը 80 % է:

34–36. 28 լ (ն. ս.) ծավալով SO_2 , 56 լ (ն. ս.) O_2 և 28 լ (ն. ս.) SO_3 պարունակող գազային խառնուրդը կատալիզորդի առկայությամբ տաքացնելիս գոյացել է հավասարակշռային խառնուրդ, որում SO_2 -ի ծավալային բաժինը 40 % է:

34. Որքան է SO_2 -ի ծավալը (լ) հավասարակշռային խառնուրդում:

35. Ինչ զանգվածային բաժնով (%) աղ կարող է գոյանալ, եթե հավասարակշռային խառնուրդից առանձնացված SO_2 -ն անցկացվի 122,5 գ կալիումի հիդրօքսիդ պարունակող 910 գ լուծույթի մեջ:

36. Որքան կլինի ստացվող աղերի գումարային զանգվածը (գ), եթե հավասարակշռային խառնուրդն անցկացվի ավելցուկով վերցրած նատրիումի հիդրօքսիդի լուծույթի մեջ:

37–39. 40 լ (ն. ս.) ծավալով H_2 , 40 լ (ն. ս.) N_2 և 14 լ (ն. ս.) NH_3 պարունակող գազային խառնուրդը կատալիզորդի առկայությամբ տաքացնելիս գոյացել է հավասարակշռային խառնուրդ, որում NH_3 -ի ծավալային բաժինը 35 % է:

37. Որքան է H_2 -ի ծավալը (լ) հավասարակշռային խառնուրդում:

38. Ինչ զանգվածով (գ) քլորաջրածնի 7,3 % զանգվածային բաժնով աղաթթու կպահանջվի հավասարակշռային խառնուրդում պարունակվող ամոնիակը աղի փոխարկելու համար:

39. Որքան է հավասարակշռային խառնուրդի ծավալը (լ):


**1.2.2. Գաղափար քիմիական ռեակցիայի արագության մասին:
Քիմիական հավասարակշռություն**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	8	14	10	27	16
2	3	15	30	28	4
3	4	16	2	29	50
4	3	17	2	30	2100
5	25	18	2	31	25
6	1	19	8	32	60
7	16	20	1200	33	90
8	6	21	600	34	49
9	8	22	60	35	25
10	80	23	16	36	320
11	6	24	4	37	19
12	5	25	61	38	625
13	81	26	12	39	80

1.2.3. Քիմիական ռեակցիայի ջերմեֆեկտ: Ջերմանջատիչ և ջերմակլանիչ ռեակցիաներ: Ջերմաքիմիական հավասարումներ

1. Ջրագազի ստացման $\text{H}_2\text{O}_{(գ)} + \text{C}_{(այ)} = \text{H}_{2(գ)} + \text{CO}_{(գ)}$ ռեակցիայի ընթացքում կլանվում է 130 կՋ ջերմություն: Որքան է ածխածնի(II) օքսիդի գոյացման ջերմությունը՝ $Q_{(գմ)}$, (կՋ/մոլ), եթե ջրային գոլորշու գոյացման ջերմությունը՝ $Q_{(գմ)}(\text{H}_2\text{O}) = 242$ կՋ/մոլ:
2. Որքան է $2\text{Fe} + \text{O}_2 = 2\text{FeO}$ ռեակցիայի ջերմեֆեկտը (կՋ), եթե $Q_{(գմ)}(\text{FeO}) = 267,5$ կՋ/մոլ է:
3. Որոշակի ծավալով ավալու լուծույթը չեզոքացնելու համար ծախսվել է ծծմբական թթվի 49% զանգվածային բաժնով լուծույթ: Ի՞նչ ծավալով (մլ) թթվի լուծույթ ($\rho = 1,25$ գ/սմ³) է ծախսվել, եթե չեզոքացման հետևանքով անջատվել է 328,5 կՋ ջերմություն: Չեզոքացման ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումն է $\text{H}^+ + \text{OH}^- = \text{H}_2\text{O} + 65,7$ կՋ:





4. Տրված են հետևյալ ջերմաքիմիական հավասարումները.



Որքան է $\text{H}_{2(գ)} + 1/3\text{O}_{3(գ)} = \text{H}_2\text{O}_{(գ)}$ ռեակցիայի ջերմեֆեկտը (կՋ) ըստ ջերմաքիմիական հավասարումների:

5. 21,9 % զանգվածային բաժնով 1250 գ աղաթթվի և անհրաժեշտ քանակով երկաթի փոխազդեցությունից անջատված գազն օգտագործել են ամոնիակ սինթեզելու համար: Որքան ջերմություն (կՋ) կանջատվի այդ սինթեզի ժամանակ, եթե մեկ մոլ ամոնիակ առաջանալիս անջատվում է 46 կՋ ջերմություն:
6. 20 % զանգվածային բաժնով 2 լիտր աղաթթվի ($\rho = 1,095$ գ/սմ³) և բավարար քանակով ցինկի փոխազդեցությունից անջատվել է գազ: Որքան ջերմություն (կՋ) կանջատվի ստացված գազը թթվածնում լրիվ այրելիս, եթե մեկ մոլ ջրածնի այրումից անջատվում է 286 կՋ ջերմություն:
7. 0,6 մոլ/լ կոնցենտրացիայով կալիումի հիդրօքսիդի 50 մլ լուծույթին բրոմաջրածնի 6 % զանգվածային բաժնով 40,5 մլ լուծույթ ($\rho = 1,042$ գ/սմ³) ավելացնելիս անջատվել է 1,68 կՋ ջերմություն: Որքան է չեզոքացման ռեակցիայի ջերմությունը (կՋ/մոլ):

8. Որքան է հետևյալ ռեակցիաներից այն ռեակցիայի վերջանյութի մոլային զանգվածը (գ/մոլ), որին համապատասխանում է բերված գծապատկերը:



9. Թթվածնում 54 գ ալյումինն այրելիս անջատվել է 1675,5 կՋ ջերմություն, իսկ 32 գ երկաթի(III) օքսիդի և ալյումինի փոխազդեցությունից՝ 170,9 կՋ: Որքան է երկաթի(III) օքսիդի գոյացման ջերմությունը ($Q_{(գմ)}$, կՋ/մոլ):

10. Որքան է պարզ նյութերից ամոնիակի ստացման ռեակցիայի ջերմությունը (կՋ), եթե H-H, N-N, N-H կապերի էներգիաները համապատասխանաբար հավասար են 435 կՋ/մոլ, 945 կՋ/մոլ և 390 կՋ/մոլ:


11. Ըստ $C_{(պինդ)} + O_{2(գազ)} = CO_{2(գազ)} + 450$ կՋ/մոլ և $CaCO_{3(պինդ)} = CaO_{(պինդ)} + CO_{2(գազ)} - 180$ կՋ/մոլ ջերմաքիմիական հավասարումների որոշե՛ք, թե ինչ զանգվածով (գ) ածխածին պետք է այրել, որ անջատված ջերմությունը բավարարի կալցիումի կարբոնատից 1680 գ զանգվածով կալցիումի օքսիդ ստանալու համար:

12. Ինչ քանակությամբ (կՋ) ջերմություն է անջատվել, եթե հետևյալ ռեակցիայի՝ $1/2N_{2(գազ)} + 3/2H_{2(գազ)} = NH_{3(գազ)} + 46$ կՋ, արդյունքում առաջացել է 4 մոլ ամոնիակ:


13. Մեկ մոլ մեթանի այրումից անջատվում է 890 կՋ ջերմություն: Ինչ զանգվածով (գ) սնդիկի(II) օքսիդ կարելի է քայքայել՝ օգտագործելով այդ ջերմության 80%-ը, եթե 5,025 գ սնդիկ այրելիս անջատվում է 2,225 կՋ ջերմություն:

14. $Q_{(գոյ)}(H_2O) = 286$ կՋ/մոլ, $Q_{(գոյ)}(CO) = 112$ կՋ/մոլ տվյալների հիման վրա կազմե՛ք $C_{(պինդ)} + H_2O_{(գազ)} = CO_{(գազ)} + H_{2(գազ)}$ ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումը և որոշե՛ք, թե ինչ քանակությամբ ջերմություն (կՋ) կծախսվի, եթե ռեակցիային մասնակցի 24 գ ածխածին:

15. Ռեակցիային համապատասխանում է հետևյալ էներգիական գծապատկերը: Որքան է ռեակցիայի ջերմությունը՝ ΔH (կՋ):



16. Ռեակցիային համապատասխանում է հետևյալ էներգիական գծապատկերը: Որքան է ռեակցիայի ջերմությունը՝ Q (կՋ):



17-18. Էթանի այրման հետևանքով անջատվել է 7805 կՋ ջերմություն:

$$Q_{(գոյ)}(C_2H_6) = 85 \text{ կՋ/մոլ}, Q_{(գոյ)}(CO_2) = 394 \text{ կՋ/մոլ}, Q_{(գոյ)}(H_2O) = 286 \text{ կՋ/մոլ:}$$

17. Որքան է ծախսված էթանի ծավալը (լ, ն. պ.):

18. Որքան է գոյացած ածխածնի(IV) օքսիդի զանգվածը (գ):

19–20. Ազոտից և թթվածնից 33,6 լ (ն. պ.) ազոտի(II) օքսիդ սինթեզելիս կրակել է 135 կՋ ջերմություն:

19. Որքան է ազոտի(II) օքսիդի առաջացման ջերմությունը ΔH (կՋ/մոլ):

20. Ի՞նչ զանգվածով (գ) պղնձի և նոսր ազոտական թթվի փոխազդեցությունից կառաջանա նույն ծավալով (ն. պ.) ազոտի(II) օքսիդ:

21–22. Պարզ նյութերից հեղուկ ջրի ստացման ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումն է՝ $H_{2(գազ)} + 1/2 O_{2(գազ)} = H_2O_{(հեղուկ)} + 286$ կՋ:

21. Որքան ջերմություն (կՋ) կանջատվի 56 լ (ն. պ.) ջրածինն այրելիս:

22. Ի՞նչ զանգվածով (գ) ջուր կառաջանա 56 լ (ն. պ.) ջրածինն այրելիս:

23–24. Պենտանի և հեպտանի 34,4 գ զանգվածով խառնուրդն այրելիս անջատվել է 1644 կՋ ջերմություն: Պենտանի և հեպտանի այրման ջերմությունները համապատասխանաբար հավասար են 3540 կՋ/մոլ և 4680 կՋ/մոլ:

23. Որքան է ռեակցիաների քանակաչափական գործակիցների գումարը:

24. Որքան է պենտանի մոլային բաժինը (%) խառնուրդում:

25–26. Երկաթի ստացումը ալյումինաջերմային եղանակով կատարվում է ըստ $3Fe_3O_{4(այ)} + 8Al_{(այ)} = 4Al_2O_{3(այ)} + 9Fe_{(այ)} + Q$ ջերմանջատիչ ռեակցիայի հավասարման:

25. Որքան է ռեակցիայի ջերմաֆեկտը (կՋ), եթե $Q_{(գոյ)}(Al_2O_3) = 1671$ կՋ/մոլ է, իսկ $Q_{(գոյ)}(Fe_3O_4) = 1117$ կՋ/մոլ:

26. Որքան ջերմություն (կՋ) կանջատվի 168 գ երկաթի ստացման ժամանակ:

27–28. Մեթանի և ացետիլենի 11,2 լ (ն. պ.) խառնուրդը լրիվ այրելիս անջատվել է 527 կՋ ջերմություն: Նշված գազերի այրման ջերմություններն են՝ $Q_{այրման}(CH_4) = 890$ կՋ/մոլ, $Q_{այրման}(C_2H_2) = 1300$ կՋ/մոլ:

27. Որքան է մեթանի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

28. Ի՞նչ զանգվածային բաժնով (%) աղ կառաջանա, եթե անհրաժեշտ քանակով թթվածնում ելային խառնուրդի այրման արգասիքներն անցկացնեն 28 գ նատրիումի հիդրօքսիդ պարունակող 346,8 գ զանգվածով լուծույթի մեջ:

29–31. *Յինկի և ալյումինի 384 գ զանգվածով խառնուրդը քանակապես փոխազդել է 985,5 գ քլորաջրածին պարունակող լուծույթի հետ:*

29. Ի՞նչ քանակով ջերմություն (կՋ) կանջատվի ստացված գազից ամոնիակ սինթեզելիս, որի ջերմաքիմիական հավասարումն է $1/2N_{2(գազ)} + 3/2H_{2(գազ)} = NH_{3(գազ)} + 46 \text{ կՋ}$:

30. Որքան է ելային խառնուրդում ալյումինի մոլային բաժինը (%):

31. Ի՞նչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդի 40 % զանգվածային բաժնով լուծույթ կպահանջվի ելային խառնուրդում պարունակվող ցինկը լուծելու համար:

32–34. *Պղնձի և երկաթի հալխասարանոլային խառնուրդը բովելիս անջատվել է 1763,5 կՋ ջերմություն: Ստացված CuO և Fe₃O₄ օքսիդների խառնուրդը լուծել են քլորաջրածնի 20 % զանգվածային բաժնով 3005 գ լուծույթում:*

32. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ), եթե CuO և Fe₃O₄ օքսիդների գոյացման ջերմությունները համապատասխանաբար 215,5 և 1117 կՋ/մոլ են:

33. Որքան է մեծ մոլային զանգվածով աղի քանակը (մոլ) ստացված լուծույթում:

34. Որքան է լուծույթում մնացած քլորաջրածնի զանգվածը (գ):

35–37. *Մեկ մոլ կալիումի հիդրօքսիդ պարունակող 204 գ զանգվածով ջրային լուծույթին որոշակի զանգվածով 12,6 % զանգվածային բաժնով ազոտական թթվի լուծույթ ավելացնելիս անջատվել է 26,28 կՋ ջերմություն: Ստացված լուծույթը գոլորշացրել և սպա շիկացրել են մինչև հաստատուն զանգված:*

35. Որքան է ազոտական թթվի լուծույթի զանգվածը (գ), եթե չեզոքացման ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումն է $H^+ + OH^- = H_2O + 65,7 \text{ կՋ}$:

36. Որքան է աղի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

37. Որքան է աղի մոլային բաժինը (%) շիկացումից հետո ստացված պինդ մնացորդում:

**1.2.3. Քիմիական ռեակցիայի ջերմեֆեկտ:
Ջերմանջատիչ և ջերմակլանիչ ռեակցիաներ:
Ջերմաքիմիական հավասարումներ:**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	112	14	348	27	60
2	535	15	80	28	15
3	400	16	100	29	414
4	289	17	112	30	70
5	115	18	440	31	600
6	1716	19	90	32	360
7	56	20	144	33	2
8	30	21	715	34	90
9	821	22	45	35	200
10	90	23	47	36	10
11	144	24	50	37	40
12	184	25	3333		
13	1736	26	1111		

1.2.4. Լուծույթներ: Դիսպերս համակարգեր, կոլոիդ համակարգեր, սուսպենզիաներ և իսկական լուծույթներ: Լուծույթների քանակական բաղադրության արտահայտման ձևերը. լուծված նյութի զանգվածային բաժին, մոլային կոնցենտրացիա

1. 108 գ ջրում որոշակի ջերմաստիճանում առավելագույնը կարող է լուծվել 278 գ երկաթարջասպ՝ $\text{FeSO}_4 \cdot 7\text{H}_2\text{O}$: Որքան է ջրի նյութաքանակը (մոլ) ստացված հազեցած լուծույթում:
2. Կալիումի նիտրատի լուծելիությունը 60°C ջերմաստիճանում 110 գ է 100 գ ջրում, իսկ 5°C ջերմաստիճանում՝ 15 գ: Ինչ զանգվածով (գ) կալիումի նիտրատ կըլուրեղանա 1092 գ զանգվածով հազեցած լուծույթից, եթե ջերմաստիճանը 60°C -ից իջեցվի մինչև 5°C :
3. Կերակրի աղը լուծել են 180 գ ջրում և ստացել 10 % զանգվածային բաժնով լուծույթ: Որքան է վերցրած աղի զանգվածը (գ):
4. Որքան է 49 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթի ($\rho = 1,4 \text{ գ/սմ}^3$) մոլային կոնցենտրացիան (մոլ/լ):
5. Ցինկի սուլֆատի 5,38 գ զանգվածով բյուրեղահիդրատը լուծել են 75,12 մլ ջրում և ստացել լուծույթ, որում անջուր աղի զանգվածային բաժինը 4 % է: Որքան է բյուրեղահիդրատի մոլային զանգվածը (գ/մոլ):
6. 224 գ չհանգած կիրը ավելացրել են մեկ լիտր ծավալով ջրին ($\rho = 1 \text{ գ/սմ}^3$) և ստացված սուսպենզիայի մեջ բաց թողել այնքան ածխածնի(IV) օքսիդ, որ համակարգում գործնականում լուծված նյութ չմնա: Ինչ զանգվածով (գ) ածխածնի(IV) օքսիդ են բաց թողել այդ սուսպենզիայի միջով:
7. 45 գ նյութը լուծել են 180 գ ջրում և ստացել հազեցած լուծույթ: Որքան է նյութի լուծելիությունը ջրում (գ/100 գ):
8. Կալցիումի քլորիդի վեցջրյա բյուրեղահիդրատի 1 մոլը ջրում լուծելիս կլանվել է 19,1 կՋ ջերմություն, իսկ 1 մոլ անջուր աղը ջրում լուծելիս անջատվել է 74,9 կՋ ջերմություն: Որքան է կալցիումի քլորիդի հիդրատացման ջերմությունը (կՋ/մոլ):
9. Որքան է լուծված նյութի զանգվածային բաժինը (%) լուծույթում, որը ստացվել է 22 գ աղը 418 գ ջրում լուծելիս:
10. Որքան է լուծված նյութի զանգվածային բաժինը (%) լուծույթում, որը ստացվել է 1 մոլ մետաղական նատրիումը 778 գ զանգվածով ջրում լուծելիս:
11. Որքան է 40 % զանգվածային բաժնով ($\rho = 1,225 \text{ գ/սմ}^3$) ծծմբական թթվի մոլային կոնցենտրացիան (մոլ/լ):

12. Որքան է կալիումի քլորիդի լուծելիությունը (գ/100 գ ջուր) 35 °C ջերմաստիճանում, եթե սովյալ ջերմաստիճանում հազեցած լուծույթ ստանալու համար ծախսվել են 80 գ ջուր և 32 գ աղ:

13. Ֆոսֆորական թթվի անհիդրիդի 284 գ նմուշը լուծել են 516 գ զանգվածով ջրում: Որքան է օրթոֆոսֆորական թթվի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

14. Ինչ զանգվածով (գ) անջուր աղի 14,8% զանգվածային բաժնով լուծույթ կարելի է պատրաստել 64 գ $\text{Mg}(\text{NO}_3)_2 \cdot 6\text{H}_2\text{O}$ բյուրեղահիդրատից:

15. Ինչ զանգվածով (գ) պղնձի սուլֆատի 8% զանգվածային բաժնով լուծույթի մեջ պետք է լուծել 400 գ պղնձարջասպը՝ անջուր աղի 16% զանգվածային բաժնով լուծույթ ստանալու համար:

16. Ինչ ծավալով (մլ) 0,05 մոլ/լ կոնցենտրացիայով ծծմբական թթվի լուծույթ է անհրաժեշտ կալիումի հիդրօքսիդի 50 մլ ծավալով 0,5 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթը չեզոքացնելու համար:

17–18. Նատրիումի օքսիդի և մետաղական նատրիումի հալասարամույային խստնորդի 42,5 գ նմուշը լուծել են 198 գ ջրում և ստացված լուծույթը չեզոքացրել ծծմբական թթվի 25% զանգվածային բաժնով լուծույթով:

17. Որքան է ալկալու զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

18. Ինչ զանգվածով (գ) ծծմբական թթվի լուծույթ է ծախսվել:

19–20. Ամոնիումի քլորիդի 400 մլ լուծույթի ($\rho = 1,07$ գ/մլ) հետ ավելցուկով վերցրած ալկալու փոխազդեցության արդյունքում անջատվել է 44,8 լ (ն. ս.) գազ, իսկ մնացած լուծույթը ենթարկել են էլեկտրոլիզի մինչև քլորիդ իոնների վերջանալը:

12. Որքան է ամոնիումի քլորիդի զանգվածային բաժինը (%) ելային լուծույթում:

13. Որքան է էլեկտրոլիզի արդյունքում անոդի վրա անջատված գազի նյութաքանակը (մոլ):

21–22. Ֆոսֆորական թթվի 29,4% զանգվածային բաժնով լուծույթին ավելացրել են 35,5 գ ֆոսֆորի(V) օքսիդ: Ստացված լուծույթի 107,1 գ զանգվածով նմուշի լրիվ չեզոքացման համար պահանջվել է նատրիումի հիդրօքսիդի 30% զանգվածային բաժնով 128 մլ լուծույթ ($\rho = 1,25$ գ/մլ):

21. Որքան է ծախսված ալկալու զանգվածը (գ):

22. Որքան է ելային ֆոսֆորական թթվի լուծույթի զանգվածը (գ):

23–24. 25°C ջերմաստիճանում կապարի նիտրատի հազեցած լուծույթ պատրաստելու համար պահանջվել են 50 գ ջուր և 30 գ աղ:

23. Որքան է աղի զանգվածը (գ) հազեցած լուծույթի 200 գ նմուշում:

24. Որքան է աղի լուծելիությունը 25°C ջերմաստիճանում (գ/100 գ ջրում):

25–26. Պատրաստել են մագնեզիումի սուլֆատի 70°C ջերմաստիճանում հազեցած լուծույթ և այն ստեղծել մինչև 20°C : Անջատվել է 114 գ բյուրեղահիդրատ, որում ջրածնի ատոմների թիվը 1,2 անգամ մեծ է թթվածնի ատոմների թվից: Անջուր աղի լուծելիությունը 70°C ջերմաստիճանում 60 գ է 100 գ ջրում, իսկ 20°C ջերմաստիճանում՝ 50 գ:

25. Որքան է բյուրեղահիդրատի 1 մոլում բյուրեղաջրի նյութաքանակը (մոլ):

26. Որքան է մագնեզիումի սուլֆատի 70°C ջերմաստիճանում հազեցած լուծույթի զանգվածը (գ):

27–28. $\text{CoCl}_2 \cdot 6\text{H}_2\text{O}$ բյուրեղահիդրատը լուծել են ջրում և ստացել 330 գ հազեցած լուծույթ: Անջուր աղի լուծելիությունը 65 գ է 100 գ ջրում:

27. Ինչ զանգվածով (գ) ջրում են լուծել բյուրեղահիդրատը:

28. Ինչ զանգվածով (գ) ջուր պետք է ավելացնել լուծույթին՝ անջուր աղի 25 % զանգվածային բաժնով նոր լուծույթ ստանալու համար:

29–30. Կալցիումի օքսիդի 5,6 գ զանգվածով նմուշը լուծել են 45,4 մլ ջրում և ստացել կրակաթ (կախույթ):

29. Ինչ ծավալով (մլ) 4 մոլ/լ կոնցենտրացիայով անհրաժեշտ քանակով աղաթթու ($\rho = 1,2$ գ/սմ³) պետք է ավելացնել կրակաթին՝ չեզոք աղի լուծույթ ստանալու համար:

30. Որքան է նյութի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

31–32. Աղի 20 % զանգվածային բաժնով 200 գ ջրային լուծույթին ավելացրել են նույն աղի 300 գ զանգվածով երկրորդ լուծույթը և ստացել 17 % զանգվածային բաժնով երրորդ լուծույթը:

31. Որքան է աղի զանգվածային բաժինը (%) երկրորդ լուծույթում:

32. Ի՞նչ զանգվածով (գ) ջուր պետք է գոլորշացնել երրորդ լուծույթից, որպեսզի աղի զանգվածային բաժինը դրանում կրկնապատկվի:

33–34. Գլիցերինի 1/3 մոլային բաժնով էթանոլային լուծույթի որոշակի զանգվածով նմուշին անհրաժեշտ քանակով մետաղական նատրիում ավելացնելիս անջատվել է 7 լ (ն. ս.) գազ:

33. Որքան է գլիցերինի զանգվածային բաժինը (%) լուծույթում:

34. Որքան է ելային լուծույթի զանգվածը (գ):

35–36. Մետաղական կալիումը լուծել են 20,7 գ ջրում և ստացել լուծույթ, որի չեզոքացման համար ծախսվել է 7,3 % զանգվածային բաժնով 50 գ աղաթթու:

35. Որքան է ջրի հետ փոխազդած մետաղական կալիումի զանգվածը (մգ):

36. Որքան է չեզոք լուծույթում աղի զանգվածային բաժինը (%):

37–38. 50 °C ջերմաստիճանում պատրաստել են կալիումի նիտրատի 3810 գ հազեցած լուծույթ, որում աղի և ջրի զանգվածների հարաբերությունը 0,905 : 1 է: Լուծույթը սառեցրել են մինչև 20 °C ջերմաստիճան, որում աղի լուծելիությունը 40 գ է 100 գ ջրում:

37. Ի՞նչ զանգվածով (գ) աղ կնստի սառեցնելիս:

38. Ի՞նչ ծավալով (լ, ն. ս.) գազ կանջատվի նստվածք անցած աղը շիկացնելիս:

39–41. 128 գ պղնձից ստացել են պղնձարջասպ, լուծել ջրում և ստացել 2 լ լուծույթ:

39. Որքան է ստացված պղնձարջասպի զանգվածը (գ):

40. Որքան է անջուր աղի կոնցենտրացիան (մոլ/լ) պղնձարջասպի լուծույթում:

41. Ի՞նչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա, եթե ստացված լուծույթին ավելացվի նատրիումի հիդրօքսիդի 2 մոլ/լ կոնցենտրացիայով 0,5 լ լուծույթ:

42-44. 11,2 գ կալիումի հիդրօքսիդ պարունակող 519,4 գ լուծույթում լուծել են լիթիումի և կալիումի օքսիդների 40,6 գ խառնուրդ, որի հետևանքով կալիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը դարձել է 10 %: Ստացված լուծույթը չեզոքացրել են անհրաժեշտ քանակությամբ 21,9 % զանգվածային բաժնով աղաթթվով:

42. Որքան է օքսիդների խառնուրդում լիթիումի օքսիդի մոլային բաժինը (%):

43. Որքան է ծախսված աղաթթվի զանգվածը (գ):

44. Աղաթթվով չեզոքացնելու արդյունքում ստացված լուծույթում կալիումի քլորիդի նյութաքանակը քանի՞ անգամ է մեծ լիթիումի քլորիդի նյութաքանակից:

45-47. Սենյակային ջերմաստիճանում երկաթի(II) քլորիդի 39,376% զանգվածային բաժնով որոշակի զանգվածով լուծույթին ավելացրել են 100 գ անջուր երկաթի(II) քլորիդ և տաքացնելով լուծել: Տաք լուծույթը մինչև երային ջերմաստիճան սառեցնելիս նստել է 238,8 գ բյուրեղահիդրատ, և մնացել է 40 % զանգվածային բաժնով 361,2 գ լուծույթ:

45. Որքան է սկզբնական լուծույթի զանգվածը (գ):

46. Որքան է բյուրեղահիդրատի մոլային զանգվածը (գ/մոլ):

47. Ինչ զանգվածով (գ) ջրում պետք է լուծել 398 գ բյուրեղահիդրատը փորձի ջերմաստիճանի պայմաններում հազեցած լուծույթ պատրաստելու համար:

48-50. Որոշակի զանգվածով մետաղական կալցիումը ջրում լուծելիս ստացվել է կրաջուր, և անջատվել է գազ: Կրաջրի մեջ ածխածնի(IV) օքսիդ անցկացնելիս նախ դիտվել է պղտորություն, ապա այն անհետացել է: Թափանցիկ լուծույթը գոլորշացնելուց և մինչև 1000 °C շիկացնելուց հետո առաջացել է 2,8 գ պինդ մնացորդ:

48. Որքան է լուծված մետաղական կալցիումի զանգվածը (գ):

49. Ինչ ծավալ (մլ) կգրադեցնի անջատված ջրածինը 7 °C ջերմաստիճանի և 100 կՊա ճնշման պայմաններում ($R = 8,3 \text{ Ջ/}^\circ\text{C} \cdot \text{մոլ}$, իսկ $T_0 = 273\text{K}$):

50. Որքան է փոխազդած ածխածնի(IV) օքսիդի ծավալը (մլ, ն. պ.):

1.2.4. Լուծույթներ: Դիսպերս համակարգեր, կոլոիդ համակարգեր, սուսպենզիաներ և իսկական լուծույթներ: Լուծույթների քանակական բաղադրության արտահայտման ձևերը. լուծված նյութի զանգվածային բաժին, մոլային կոնցենտրացիա

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	13	18	294	35	3900
2	494	19	25	36	10
3	20	20	1	37	1010
4	7	21	48	38	112
5	269	22	500	39	500
6	176	23	75	40	1
7	25	24	60	41	49
8	94	25	6	42	20
9	5	26	528	43	200
10	5	27	92	44	5
11	5	28	190	45	154
12	40	29	50	46	257
13	49	30	10	47	199
14	250	31	15	48	2
15	2400	32	250	49	1162
16	250	33	50	50	2240
17	25	34	23		

1.2.5. Էլեկտրոլիտներ և ոչ էլեկտրոլիտներ: Իոնների հատկությունները: Դիսոցման աստիճան: Իոնափոխանակային ռեակցիաներ: Հիմքերի, թթուների և աղերի դիսոցումը: Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ

1. Հետևյալ էլեկտրոլիտների մի մասի դիսոցումից առաջանում են գունավոր իոններ՝ NaCl , CuSO_4 , KMnO_4 , NaHCO_3 : Որքան է գունավոր իոնների լիցքերի հանրահաշվական գումարի թվային արժեքը:
2. 0,025 մոլ ազոտական թթուն վերականգնելիս ազոտի ատոմները $1,204 \cdot 10^{23}$ էլեկտրոններ են ընդունել: Հետևյալ NH_3 , NO , N_2O , NO_2 նյութերից մեկը վերականգնման արգասիքն է: Որքան է ընտրված նյութի մեկ մոլեկուլում պրոտոնների գումարային թիվը:
3. Քացախաթթվի լուծույթում պարունակվում են թթվի $9,8 \cdot 10^{19}$ չդիսոցված մոլեկուլներ և գումարային $4 \cdot 10^{18}$ հիդրօքսոնիում և ացետատ իոններ: Որքան է քացախաթթվի դիսոցման աստիճանն այդ լուծույթում (%):
4. Միացություններում +1 օքսիդացման աստիճան ցուցաբերող մետաղի սուլֆատի 3,55 % զանգվածային բաժնով 20 գ լուծույթում հայտնաբերվել են $9,03 \cdot 10^{21}$ թվով իոններ: Ո՞րն է մետաղի կարգաթիվը, եթե աղը լրիվ դիսոցված է:
5. Միջնաթթվի 25 մմոլ/լ կոնցենտրացիայով լուծույթում չդիսոցված մոլեկուլների թիվը 2 անգամ մեծ է լուծույթում անիոնների և կատիոնների գումարային թվից: Որքան է ջրածնի իոնների կոնցենտրացիան (մմոլ/լ) լուծույթում:
6. Նատրիումի սուլֆատի 0,4 ջրային լուծույթում պարունակվում են 28,4 գ իոններ (անիոններ և կատիոններ): Որքան է Na^+ իոնների մոլային կոնցենտրացիան (մոլ/լ) այդ լուծույթում:
7. HX միահիմն թթվի ջրային լուծույթում HX -ի յուրաքանչյուր չդիսոցված մոլեկուլին բաժին են ընկնում 3-ական H^+ և X^- իոններ: Որքան է այդ թթվի դիսոցման աստիճանը (%):
8. Բարիումի քլորիդի 0,7 լ լուծույթում պարունակվում են 49,7 գ քլորիդ իոններ: Որքան է բարիումի քլորիդի կոնցենտրացիան (մոլ/լ):
9. Նատրիումի կարբոնատի 0,02 մոլ/լ կոնցենտրացիայով ջրային լուծույթում հայտնաբերվել են 10^{-3} մոլ/լ հիդրօքսիդ իոններ: Որքան է աղի հիդրոլիզի աստիճանը (%), եթե հիդրոլիզն ընթացել է միայն մեկ փուլով, իսկ ստացվող ալկալին լրիվ դիսոցված է:
10. 1,8 գ քացախաթթու պարունակող լուծույթում առկա են 0,0285 գ հիդրօքսոնիում իոններ: Որքան է թթվի դիսոցման աստիճանը (%):

11. Ջրում լուծել են որոշակի քանակով KCl և $MgSO_4$ և ստացել լուծույթ, որը պարունակում է 4 մոլ K^+ , 4 մոլ Cl^- , 2 մոլ Mg^{2+} և 2 մոլ SO_4^{2-} իոններ: Ի՞նչ քանակներով երկու այլ աղից կարելի է պատրաստել ճիշտ նույն բաղադրությամբ լուծույթ: Պատասխանում տվե՛ք այդ աղերի նյութաքանակների (մոլ) գումարը:
12. Որքան է հետևյալ նյութերի՝ Na_2SO_3 , $CaCO_3$, և աղաթթվի միջև ընթացող իոնափոխանակային ռեակցիաների կրճատ իոնական հավասարումների քանակաչափական գործակիցների գումարը:
13. 0,06 մոլ ծծմբական թթուն վերականգնելիս ծծմբի ատոմները միացրել են $2,8896 \cdot 10^{23}$ թվով էլեկտրոններ: Որքան է ռեակցիայի արդյունքում ստացված գազի հարաբերական խտությունն ըստ ջրածնի:
14. Որքան է տաքացման պայմաններում 2,5-ական մոլ ամոնիումի կարբոնատի և բարիումի հիդրօքսիդի միջև ընթացող իոնափոխանակային ռեակցիայի հետևանքով անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):
15. Որքան է կալցիումի հիդրոկարբոնատի և կալիումի հիդրօքսիդի միջև ընթացող իոնափոխանակային ռեակցիայի կրճատ իոնական հավասարման քանակաչափական գործակիցների գումարը:
16. Որքան է $KH_2PO_4 + 2KOH = K_3PO_4 + 2H_2O$ ռեակցիայի կրճատ իոնական հավասարման քանակաչափական գործակիցների գումարը:
17. Հավասար քանակներով Na_3PO_4 և NaH_2PO_4 պարունակող լուծույթները խառնել են իրար: Որքան է ընթացող ռեակցիայի կրճատ իոնական հավասարման քանակաչափական գործակիցների գումարը:
18. Հետևյալ նյութերից՝ կալիումի երկհիդրոֆոսֆատ, օրթոֆոսֆորական թթու, ալյումինի քլորիդ, նատրիումի հիդրոկարբոնատ, որոնք են դիսոցվում երեք փուլով: Որքան է այդ նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը:
19. Մետաղի քլորիդ պարունակող 296,75 գ լուծույթին ավելացրել են ռեակցիայի համար անհրաժեշտ քանակով արծաթի նիտրատ: Գոյացել է 71,75 գ զանգվածով նստվածք, որը ֆիլտրելով անջատել են: Որքան է մնացած լուծույթում նիտրատ իոնների զանգվածային բաժինը (%):
20. Ազոտային թթվի լուծույթում իոնների չտրոհված մոլեկուլների քանակը 9,5 անգամ գերազանցում է H_3O^+ և NO_2^- իոնների գումարային քանակը: Ի՞նչ զանգվածով (գ) հիդրօքսոնիում իոն կառաջանա 80 լ 0,5 մոլ/լ կոնցենտրացիայով ազոտային թթվի լուծույթում:
21. Լիթիումի և կալիումի հիդրօքսիդների 16 գ խառնուրդի լրիվ չեզոքացման համար ծախսվել է ազոտական թթվի 25% զանգվածային բաժնով 100,8 գ լուծույթ: Որքան է կալիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

22. Մետաղական ցինկը լուծել են անհրաժեշտ քանակով նատրիումի հիդրօքսիդի լուծույթում, այնուհետև լուծույթին ավելացրել են այնքան աղաթթու, որ առաջացել է հնարավոր առավելագույն զանգվածով՝ 148,5 գ նստվածք: Վերջինս ֆիլտրելով անջատելուց հետո մնացած լուծույթի զանգվածը եղել է 355 գ: Որքան է մնացած լուծույթում քլորիդ իոնների զանգվածային բաժինը (%):
23. 4,48 լ (ն. պ.) ամոնիակը լրիվ փոխազդել է 36,5 մլ աղաթթվի ($\rho = 1,0 \text{ գ/սմ}^3$) հետ: Որքան է քլորաջրածնի զանգվածային բաժինը լուծույթում (%):
24. Քլորաջրածնի 20% զանգվածային բաժնով 54,75 սմ³ ծավալով աղաթթվի ($\rho = 1,0 \text{ գ/սմ}^3$) լրիվ չեզոքացման համար օգտագործվել է նատրիումի հիդրօքսիդի 16 % զանգվածային բաժնով լուծույթ: Ինչ նյութաքանակով (մմոլ) ջուր է պարունակվել ալկալու լուծույթում:
25. Ալյումինի և ավելցուկով նատրիումի հիդրօքսիդի ջրային լուծույթի փոխազդեցությունից անջատվել է 33,6 լ (ն. պ.) ջրածին: Որքան է փոխազդած ալյումինի զանգվածը (գ):
26. Որքան է $\text{SO}_2 + \text{K}_2\text{Cr}_2\text{O}_7 + \text{H}_2\text{SO}_4 \rightarrow \text{Cr}_2(\text{SO}_4)_3 + \text{K}_2\text{SO}_4 + \text{H}_2\text{O}$ ուրվագրին համապատասխան ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը:
27. Որքան է $\text{MnO}_2 + \text{KClO}_3 + \text{KOH} \rightarrow \text{K}_2\text{MnO}_4 + \text{KCl} + \text{H}_2\text{O}$ ուրվագրին համապատասխան ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը:
28. Որքան է $\text{FeS} + \text{O}_2 \rightarrow \text{Fe}_2\text{O}_3 + \text{SO}_2$ ուրվագրին համապատասխան ռեակցիայի հավասարման մեջ օքսիդիչ նյութի գործակիցը:
- 29–30. *Որոշակի զանգվածով աղը, որում կատիոնի զանգվածային բաժինը 20 % է, լուծել են ջրում: Ստացված լուծույթում հայտնաբերվել են $9,03 \cdot 10^{23}$ թվով երկլիցք անիոններ և նույնքան $1s^2 2s^2 2p^6$ էլեկտրոնային բանաձևով երկլիցք կատիոններ:*
29. Որքան է լուծված աղի զանգվածը (գ):
30. Ինչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա աղի լուծույթին ավելցուկով նատրիումի ֆոսֆատ ավելացնելիս:
- 31–32. *Քացախաթթվի ջրային լուծույթում հայտնաբերվել են $2,408 \cdot 10^{22}$ թվով ացետատ իոններ: Նույն լուծույթի չեզոքացման համար ծախսվել է 25 % զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի 80 գ լուծույթ:*
31. Որքան է քացախաթթվի դիսոցման աստիճանը (%):
32. Ինչ զանգվածով (գ) աղ է գոյացել լուծույթի չեզոքացման հետևանքով:

33–34. Լուծույթին, որը պարունակում է 2 մոլ $AlCl_3$, ավելացրել են 8 մոլ $NaOH$ պարունակող լուծույթ: Այնուհետև ստացված լուծույթի մեջ անցկացրել են 179,2 լ (ն. ս.) քլորաջրածին:

33. Ի՞նչ զանգվածով (գ) $Na[Al(OH)_4(H_2O)_2]$ բաղադրությամբ նյութ է գոյացել առաջին ռեակցիայում:

34. Որքան է վերջնական լուծույթում նատրիումի քլորիդի զանգվածը (գ):

35–36. Ծծմբական և ազոտական թթուներ պարունակող 945 գ զանգվածով ջրային լուծույթին ավելցուկով բարիումի քլորիդ ավելացնելիս անջատվել է 116,5 գ նստվածք: Նստվածքի անջատումից հետո մնացած լուծույթը չեզոքացնելու համար ծախսվել է 100 գ նատրիումի հիդրօքսիդ:

35. Որքան է ազոտական թթվի զանգվածային բաժինը (%) ելային լուծույթում:

36. Որքան է ելային լուծույթում ծծմբական թթվի զանգվածը (գ):

37–38. Պղնձի(II) բրոմիդը ջրային լուծույթում փոխազդում է հետևյալ նյութերի հետ՝ H_2S , $AgNO$ և KOH :

37. Որքան է ջրում չլուծվող՝ ստացված աղերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը:

38. Որքան է ստացված հիմքի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

39–40. Որոշակի զանգվածով ալյումինե թիթեղն ընկղմել են երկվալենտ մետաղի քլորիդի 2028,2 գ զանգվածով լուծույթի մեջ: Որոշ ժամանակ անց թիթեղը հասնել են, լվացել, չորացրել և կշռել: Թիթեղի զանգվածն ավելացել է 28,2 գրամով, իսկ ալյումինի աղի զանգվածային բաժինը լուծույթում կազմել է 2,67%:

39. Ո՞րն է երկվալենտ մետաղի կարգաթիվը:

40. Որքան է թիթեղի վրա նստած երկվալենտ մետաղի զանգվածը (մգ):

41–42. 0,5 մոլ ծծմբական թթուն չեզոքացրել են անհրաժեշտ քանակով նատրիումի հիդրօքսիդ պարունակող 306 գ լուծույթով:

41. Որքան է ստացված աղի զանգվածը (գ):

42. Որքան է աղի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

43-44. Նատրիումի հիդրօքսիդը ջրային լուծույթում փոխազդում է հետևյալ նյութերից մի մասի հետ՝ NH_4NO_3 , KCl , $CuSO_4$, $FeCl_3$, $Ba(CO_3)_2$:

43. Որքան է փոխանակման ռեակցիաների արդյունքում ստացված գազային նյութերի մեկական մոլեկուլներում բոլոր ատոմների գումարային թիվը:

44. Որքան է նստվածք առաջացնող կատիոններին համապատասխան տարրերի ատոմային համարների գումարը:

45-46. Հետևյալ նյութերի շարքում՝ H_3PO_4 , H_3PO_3 , HPO_3 , $HOOC-COOH$, CH_3COOH , H_2SO_3 , կան երկհիմն թթուներ:

45. Որքան է դրանց հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը:

46. Որքան է մեծ մոլային զանգվածով երկհիմն թթվի կալցիումական չեզոք աղի մոլային զանգվածը (գ/մոլ):

47-48. Աննացորդ փոխազդել են 4 մոլ օրթոֆոսֆորական թթուն և 5 մոլ նատրիումի հիդրօքսիդը:

47. Որքան է ստացված փոքր մոլային զանգվածով աղի զանգվածը (գ):

48. Որքան է ստացված մեծ մոլային զանգվածով աղի քանակը (մոլ):

49-50. Երկու փորձանոթում գտնվող 0,01-ական մոլ ալյումինի քլորիդ պարունակող լուծույթներից մեկին ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով 2,5 մլ ջրային լուծույթ ($\rho = 1,2$ գ/սմ³), իսկ մյուսին՝ նատրիումի հիդրօքսիդի 28 % զանգվածային բաժնով 4 մլ ծավալով ջրային լուծույթ ($\rho = 1,25$ գ/սմ³): Հիմնային աղերի առաջացումը հաշվի չառնել:

49. Որքան է առաջին փորձանոթում նստվածքի զանգվածը (մգ):

50. Որքան է երկրորդ փորձանոթում նստվածքի զանգվածը (մգ):

51-52. Կալիումի հիդրօքսիդի 14 % զանգվածային բաժնով 200 գ լուծույթի մեջ անցկացրել են 8,96 լ (ն. ս.) ծծմբի(IV) օքսիդ:

51. Որքան է փոքր մոլային զանգվածով աղի զանգվածը (գ) լուծույթում:

52. Որքան է մեծ մոլային զանգվածով աղի մոլային բաժինը (%) աղերի խառնուրդում:

53–54. 20 գ զանգվածով երկաթի, ալյումինի և պղնձի խառնուրդի կեսը մշակել են կալիումի հիդրօքսիդի նոսր լուծույթով, ինչի արդյունքում անջատվել է 3,36 լ (ն. ս.) գազ: Մյուս կեսին ավելցուկով աղաթթու ավերացնելիս անջատվել է 4,48 լ (ն. ս.) գազ:

53. Որքան է մետաղների խառնուրդում երկաթի զանգվածային բաժինը (%):

54. Որքան է մետաղների ելային խառնուրդում պղնձի զանգվածը (գ):

55–56. Բերթոլեյի աղի 191,40625 գ զանգվածով նմուշը տաքացրել են կատալիզորդի առկայությամբ: Քայքայման ռեակցիայի ընթացքում օքսիդիչ տարրի ատոմները միացրել են $4,515 \cdot 10^{24}$ թվով էլեկտրոններ:

55. Որքան է աղի քայքայման աստիճանը (%):

56. Որքան է անջատված գազի ծավալը (լ, ն. ս.):

57–59. Միացություններում +2 օքսիդացման աստիճան ցուցաբերող A մետաղի թիթեղն ընկղմել են պղնձի(II) նիտրատի 10 % զանգվածային բաժնով 188 գ լուծույթի մեջ: Երբ թիթեղը հասնել են լուծույթից, պարզվել է, որ նշված աղի զանգվածը լուծույթում պակասել և դարձել է 7,52 գ, իսկ թիթեղի զանգվածը պակասել է 0,06 գրամով:

57. Որքան է A մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:

58. Ինչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդի 10 % զանգվածային բաժնով լուծույթ է անհրաժեշտ, որպեսզի առաջին փոխարկման արդյունքում ստացված լուծույթի մշակումից առաջանա առավելագույն զանգվածով նստվածք:

59. Նվազագույնը ինչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդի 8 % զանգվածային բաժնով լուծույթ է անհրաժեշտ, որպեսզի առաջին փոխարկման արդյունքում ստացված լուծույթի մշակումից առաջանա միայն մեկ նյութի նստվածք:

60–62. 25,2 գ ջրում լուծել են 13,9 գ երկաթարջասպ՝ $FeSO_4 \cdot 7H_2O$: Ստացված լուծույթը անօդ պարմաններում անհրաժեշտ քանակով կալիումի հիդրօքսիդի 2,5 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթով մշակելիս գոյացել է նստվածք:

60. Ինչ քանակով (մոլ) ջուր է բաժին ընկնում 1 մոլ երկաթի(II) սուլֆատին ստացված լուծույթում:

61. Ինչ ծավալով (մլ) ալկալու լուծույթ է ծախսվել:

62. Քանի՞ միլիգրամով կավելանա նստվածքի զանգվածը, եթե այն երկար ժամանակ պահվի օդում:

63–65. Անհրաժեշտ քանակությամբ թթվածնի ստկայությամբ 126 գ զանգվածով նատրիումի հիդրոկարբոնատ պարունակող 395 գ լուծույթի մեջ բաց են թողել այնքան ազոտի(IV) օքսիդ, որ նիտրատ իոնի զանգվածային բաժինը լուծույթում դարձել է 7,75 %, իսկ անջատված գազն անբողջությամբ հեռացվել է լուծույթից:

63. Որքան է լուծված ազոտի(IV) օքսիդի զանգվածը (գ):

64. Որքան է ստացված լուծույթի զանգվածը (գ):

65. Որքան է լուծույթում մնացած չփոխազդած նյութի զանգվածային բաժինը (%):

66–68. Չքայքայվող խստնուկներ պարունակող կալիումի պերմանգանատի 98,75 գ նմուշը շիկացրել են մինչև հաստատուն զանգված, ինչի արդյունքում համակարգի զանգվածը պակասել է 8 գրամով:

66. Որքան է KMnO_4 -ի զանգվածային բաժինը (%) ելային նմուշում:

67. Որքան է մանգան տարր պարունակող արգասիքների գումարային զանգվածը (գ) շիկացումից ստացված պինդ մնացորդում:

68. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կստացվի սկզբնական նմուշում պարունակվող կալիումի պերմանգանատի և ավելցուկով աղաթթվի փոխազդեցությունից:

69–71. Երկվալենտ մետաղի սուլֆիդի 24 գ նմուշը 58,8 լ (ն. պ.) օդում բովելիս ստացվել է գազային խստնուրդ, որը կարող է գունազրկել 20 % զանգվածային բաժնով 200 գ բրոմաջուրը:

69. Որքան է երկվալենտ մետաղի սուլֆիդի մոլային զանգվածը (գ/մոլ):

70. Որքան է ստացված գազային խստնուրդում օքսիդի ծավալային բաժինը (%):

71. Քանի՞ մոլ էլեկտրոն է տրամադրել վերականգնիչ նյութի մեկ մոլը սուլֆիդը բովելիս:

**1.2.5. Էլեկտրոլիտներ և ոչ էլեկտրոլիտներ:
Իոնների հատկությունները: Դիսոցման աստիճան:
Իոնափոխանակային ռեակցիաները:
Հիմքերի, թթուների և աղերի դիսոցումը:
Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	1	25	27	49	390
2	10	26	8	50	390
3	2	27	17	51	36
4	11	28	7	52	25
5	5	29	180	53	28
6	1	30	131	54	9
7	75	31	8	55	80
8	1	32	41	56	42
9	5	33	308	57	65
10	5	34	468	58	112
11	4	35	10	59	224
12	11	36	49	60	35
13	17	37	284	61	40
14	112	38	98	62	850
15	9	39	30	63	23
16	6	40	39	64	400
17	4	41	71	65	21
18	234	42	20	66	80
19	10	43	7	67	71
20	38	44	55	68	28
21	70	45	254	69	96
22	30	46	128	70	10
23	20	47	360	71	6
24	3500	48	1		

1.2.6. Էլեկտրոլիզ: Տալույթների և լուծույթների էլեկտրոլիզը: Էլեկտրոլիզի գործնական նշանակությունը

1. Իներտ էլեկտրոդներով ջրային լուծույթների էլեկտրոլիզի ընթացքում հետևյալ անիոններից՝ Cl^- , NO_3^- , S^{2-} , SO_4^{2-} , որոնք կենթարկվեն անոդային օքսիդացման: Որքան է այդ անիոնների օքսիդացման արգասիքների մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը:
 2. Պղնձի(II) սուլֆատի 25 % զանգվածային բաժնով 800 մլ լուծույթը ($\rho = 1,2$ գ/սմ³) լրիվ էլեկտրոլիզի են ենթարկել մինչև գունազրկվելը և ստացված պղինձը լուծել են 30 % զանգվածային բաժնով ազոտական թթվի լուծույթում ($\rho = 1,2$ գ/սմ³): Որքան է ծախսված ազոտական թթվի ծավալը (մլ):
 3. Պղնձի(II) սուլֆատի ջրային լուծույթի (իններտ էլեկտրոդներով) էլեկտրոլիզը դադարեցրել են լուծույթը գունազրկվելու պահին: Ստացվել է 5,712 լ (ն. պ.) թթվածին, որը կազմում է տեսական ելքի 85%-ը: Ինչ զանգվածով (գ) պղնձի(II) սուլֆատ է պարունակվել ելային լուծույթում:
 4. Կալցիումի քլորիդի հալույթի էլեկտրոլիզի (իններտ էլեկտրոդներով) ընթացքում անոդային օքսիդացմանը մասնակցել են $6,02 \cdot 10^{23}$ էլեկտրոններ: Որքան է կաթոդի վրա անջատված մետաղի զանգվածը (գ):
 5. Երկաթի(II) քլորիդի ջրային լուծույթի էլեկտրոլիզի (իններտ էլեկտրոդներով) ընթացքում լուծույթից անջատված նստվածքի զանգվածն օդում երկար մնալիս ավելացել է 5,3125 գրամով: Որքան է կաթոդի վրա անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):
 6. Կերակրի աղի ջրային լուծույթի էլեկտրոլիզի (իններտ էլեկտրոդներով) ընթացքում անոդի վրա անջատված գազը ամբողջությամբ փոխազդել է 112 գ երկաթի հետ: Ինչ զանգվածով (գ) կերակրի աղ է ենթարկվել էլեկտրոլիզի:
 7. Որքան է կալիումի քլորիդի ջրային լուծույթի էլեկտրոլիզի (իններտ էլեկտրոդներով) ընթացքում կաթոդի վրա անջատված նյութի մոլային զանգվածը (գ/մոլ):
 8. Իրականացրել են էլեկտրոլիզ՝ որպես կաթոդ օգտագործելով 0,6 կգ մաքուր պղինձ, որպես անոդ՝ 576 կգ զանգվածով պղինձ, իսկ որպես էլեկտրոլիտ՝ պղնձի(II) սուլֆատի ջրային լուծույթ: Էլեկտրոլիզը դադարեցրել են, երբ անոդի զանգվածը պակասել է 90%-ով: Որքան է եղել կաթոդի զանգվածը (կգ) էլեկտրոլիզից հետո:
- 9–10. Էլեկտրոլիզի (իններտ էլեկտրոդներով) են ենթարկել 20 գ նատրիումի հիդրօքսիդ պարունակող 490 գ ջրային լուծույթը: Էլեկտրոլիզը դադարեցրել են այն պահին, երբ կաթոդի վրա անջատվել է 112 լ (ն. պ.) գազ:*
9. Որքան է անոդի վրա անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):

10. Որքան է էլեկտրոլիտի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

11–12. 447 գ կալիումի քլորիդ պարունակող 742,5 գ լուծույթը ենթարկել են էլեկտրոլիզի (իներտ էլեկտրոդներով): Այն դադարեցրել են, երբ աղի քանակը լուծույթում սակասել է 6 անգամ:

11. Որքան է անջատված գազերի գումարային ծավալը (լ, ն. ս.):

12. Որքան է լուծույթում գոյացած նոր էլեկտրոլիտի զանգվածային բաժինը (%):

13–14. Նատրիումի հիդրօքսիդի հալույթի էլեկտրոլիզն (իներտ էլեկտրոդներով) իրականացնելիս անջատվել է 5,6 լ (ն. ս.) գազ, իսկ հիմքի քանակը սակասել է 2,5 անգամ:

13. Որքան է կաթոդի վրա անջատված նյութի զանգվածը (գ):

14. Որքան է մնացած նատրիումի հիդրօքսիդի զանգվածը (գ):

15–16. Արծաթի նիտրատ պարունակող 378,5 գ լուծույթը ենթարկել են էլեկտրոլիզի (իներտ էլեկտրոդներով) և դադարեցրել այն, երբ լուծույթում արծաթի իոններ չեն մնացել: Անոդի վրա անջատվել է 5,6 լ (ն. ս.) գազ:

15. Որքան է սկզբնական լուծույթում արծաթի նիտրատի զանգվածը (գ):

16. Որքան է թթվի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

17–18. Պղնձարջասպի 1,0 մոլ/լ կոնցենտրացիայով 900 մլ լուծույթը ($\rho = 1,06$ գ/սմ³) իներտ էլեկտրոդներով ենթարկել են էլեկտրոլիզի մինչև լուծույթի գունազրկվելը:

17. Որքան է ստացված լուծույթում թթվի զանգվածային բաժինը (%):

18. Որքան է էլեկտրոդների վրա անջատված նյութերի զանգվածների գումարը (գ):

19–20. Արծաթի նիտրատի 42,5% զանգվածային բաժնով 400 գ լուծույթը ենթարկել են էլեկտրոլիզի (իներտ էլեկտրոդներով): Էլեկտրոլիզը դադարեցրել են այն պահին, երբ լուծույթի զանգվածը սակասել է 29 գրամով:

19. Որքան է կաթոդի վրա անջատված նյութի զանգվածը (գ):

20. Քանի՞ անգամ է լուծույթում մնացած աղի նյութաքանակը (մոլ) մեծ լուծույթում գոյացած նյութի քանակից:

21–22. 35 գ կալիումի սուլֆատ պարունակող 500 գ ջրային լուծույթը իներտ էլեկտրոդներով ենթարկել են էլեկտրոլիզի: Էլեկտրոլիզը դադարեցրել են այն պահին, երբ կաթոդի վրա անջատվել է 27°C ջերմաստիճանում և 124,5 կՊա ճնշման տակ չափված 400 լ ծավալով գազ ($R = 8,32/\text{մոլ} \cdot \text{Կ}$, $T_0 = 273 \text{ Կ}$):

21. Որքան է աղի զանգվածային բաժինը (%) էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում:

22. Որքան է անոդի վրա անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):

23–24. Ըստ զանգվածի 6,4 % խառնուկներ պարունակող կերակրի աղի 625 կգ հալույթը էլեկտրոլիզի ենթարկելիս անոդի վրա անջատվել է 89,6 մ³ (ն. պ.) գազ:

23. Ինչ զանգվածով (կգ) մետաղ է անջատվել կաթոդի վրա:

24. Որքան է մետաղական նատրիումի ստացման գործընթացի ելքը (%):

25–27. 1,4 գ լիթիումի և 4,38 գ քլորաջրածին պարունակող 19,20 գ աղաթթվի փոխազդեցությունից ստացված լուծույթը իներտ էլեկտրոդներով ենթարկել են էլեկտրոլիզի: Էլեկտրոլիզը դադարեցրել են, երբ փոխարկվել է լուծույթում եղած աղի կեսը:

25. Որքան է լիթիումի քլորիդի զանգվածային բաժինը (%) լիթիումի և աղաթթվի փոխազդեցությունից ստացված լուծույթում:

26. Որքան է երկու գործընթացներում անջատված գազերի ընդհանուր նյութաքանակը (մմոլ):

27. Որքան է վերջնական լուծույթում էլեկտրոլիտների ընդհանուր զանգվածը (մգ):

28–30. Իներտ էլեկտրոդներով էլեկտրոլիզի են ենթարկել ցինկի սուլֆատի 50 % զանգվածային բաժնով 322 գ լուծույթը: Էլեկտրոլիզը դադարեցնելու պահին կաթոդի վրա անջատված պինդ նյութը աղաթթվի 36,5 % զանգվածային բաժնով լուծույթից կարող է դուրս մղել 1 գ ջրածին, իսկ անոդի վրա անջատված նյութը բավարարում է 3,92 լ (ն. պ.) պրոպանը լրիվ այրելու համար: Էլեկտրոլիզից հետո ստացված լուծույթը մշակել են ավելցուկով վերցրած նատրիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով լուծույթով մինչև հնարավոր ռեակցիաների լրիվ ավարտը:

28. Որքան է անոդի վրա անջատված նյութի զանգվածը (գ):

29. Որքան է ծախսված նատրիումի հիդրօքսիդի լուծույթի զանգվածը (գ):

30. Որքան է նատրիումի հիդրօքսիդի լուծույթով մշակելուց հետո ստացված լուծույթի զանգվածը (գ):

31–33. Պղնձի(II) նիտրատի որոշակի զանգվածով նմուշը ենթարկել են ջերմային քայքայման մինչև հաստատուն զանգված, որի ընթացքում անջատվել է գազերի 33,6 լ (ն. ս.) խառնուրդ: Նույն զանգվածով աղի նմուշ պարունակող 972 գ ջրային լուծույթը ենթարկել են էլեկտրոլիզի (իներտ էլեկտրոդներով): Էլեկտրոլիզը դադարեցրել են այն պահին, երբ լուծույթում աղի քանակը պակասել է երեք անգամ:

31. Որքան է էլեկտրոդների վրա անջատված նյութերի զանգվածների գումարը (գ):

32. Ի՞նչ զանգվածով (գ) պինդ մնացորդ կստացվի աղի ջերմային քայքայումից:

33. Որքան է աղի զանգվածային բաժինը (%) էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում:

34–36. Կալցիումի քլորիդի 11,1% զանգվածային բաժնով 50 գ լուծույթի էլեկտրոլիզն (իներտ էլեկտրոդներով) իրականացնելիս անոդի վրա անջատված 3,36 լ (ն. ս.) գազային խառնուրդն անցկացրել են 15 գ մագնեզիում պարունակող խողովակի միջով:

34. Որքան է անոդի վրա անջատված գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

35. Որքան է ստացված մագնեզիումի օքսիդի զանգվածը (գ):

36. Ի՞նչ զանգվածով (գ) մագնեզիում չի փոխազդել (գ):

37–39. 62,5 գ պղնձի(II) սուլֆատը լուծել են 275 մլ ջրում և ստացված լուծույթի էլեկտրոլիզը իներտ էլեկտրոդներով շարունակել մինչև անոդի վրա 3,5 լ (ն. ս.) գազի անջատվելը:

37. Որքան է ստացված թթվի բաղադրությունում առկա թթվածնի ատոմների նյութաքանակը (մմոլ):

38. Որքան է կաթոդի վրա անջատված նյութի զանգվածը (գ):

39. Որքան է աղի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

40–42. Նատրիումի քլորիդի 30 % զանգվածային բաժնով 117 կգ ջրային լուծույթի էլեկտրոլիզն (իններտ էլեկտրոդներ) իրականացնելիս անոդի վրա անջատվել է 6,72 մ³ (ն. ս.) գազ, որը 5 % կորուստով անցկացրել են էլեկտրոլիտային ալիագանում ստացված ալկալու լուծույթի մեջ: Կաթոդի վրա անջատված գազն օգտագործվել է նիտրոբենզոլից 6,51 կգ անիլին ստանալու համար:

40. Որքան է նատրիումի քլորիդի քանակը (մոլ) վերջնական լուծույթում:

41. Որքան է անիլինի ստացման ռեակցիայի ելքը (%):

42. Ի՞նչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ է մնացել վերջնական լուծույթում:

43–45. Պղնձի(II) սուլֆատ պարունակող 530 գ լուծույթը ենթարկել են էլեկտրոլիզի (իններտ էլեկտրոդներով) մինչև լուծույթի գունազրկվելը: Այդ ընթացքում արտաքին շղթայով անոդից կաթոդին է անցել $6,02 \cdot 10^{23}$ էլեկտրոն:

43. Ի՞նչ զանգվածով (գ) մետաղ է անջատվել էլեկտրոդի վրա:

44. Որքան է թթվի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

45. Ի՞նչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով լուծույթ է անհրաժեշտ ստացված լուծույթը չեզոքացնելու համար:

46–48. Չանգվածային բաժնով 596 գ կալիումի քլորիդ պարունակող լուծույթը էլեկտրոլիզի (իններտ էլեկտրոդներով) ենթարկելիս անոդի վրա անջատված գազն ամբողջությամբ փոխազդել է էլեկտրոլիտային ալիագանում ստացված ալկալու հետ և սենյակային ջերմաստիճանում փոխարկվել այլ նյութերի: Էլեկտրոլիզի հետևանքով լուծույթի զանգվածը նվազել է 4 գրամով:

46. Որքան է մեծ մոլեկուլային զանգվածով աղի զանգվածը (գ) ստացված լուծույթում:

47. Որքան է փոքր մոլեկուլային զանգվածով աղի զանգվածը (գ) ստացված լուծույթում:

48. Որքան է էլեկտրոլիզի գործընթացում փոխանցված էլեկտրոնների քանակը (մոլ):

**1.2.6. Էլեկտրոլիզ: Հարյուրների և լուծույթների էլեկտրոլիզը:
Էլեկտրոլիզի գործնական նշանակությունը:**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	103	17	10	33	4
2	700	18	72	34	45
3	96	19	27	35	8
4	20	20	3	36	9
5	7	21	25	37	1250
6	351	22	224	38	20
7	2	23	184	39	4
8	519	24	80	40	285
9	56	25	25	41	70
10	5	26	160	42	1200
11	112	27	5910	43	32
12	50	28	28	44	10
13	23	29	600	45	280
14	60	30	859	46	181
15	170	31	32	47	447
16	24	32	48	48	4

1.2.7. Անօրգանական միացությունների դասերը, դրանց ստացումը, դասակարգումը, անվանումը, հատկությունները և կիրառումը: Հիմքերի, թթուների, աղերի և օքսիդների քիմիական հատկությունները

1. Որքան է երկաթի օքսիդի հարաբերական մոլեկուլային զանգվածը, եթե դրա 19,68 գ զանգվածով նմուշը մինչև մետաղ վերականգնելու համար ծախսվել է 8,2656 լ (ն. պ.) ծավալով ջրածին:
2. Նոսր ծծմբական թթվի 81,34 գ լուծույթի մեջ ընկղմել են 11 գ ցինկի կտոր: Երբ գազի անջատումը դադարել է, ցինկի կտորը հանել են, չորացրել և կշռել: Դրանից հետո զանգվածը դարձել է 2,9075 գ: Որքան է ծծմբական թթվի զանգվածային բաժինը (%) ելային լուծույթում:
3. Կալիումի հիդրօքսիդի բյուրեղահիդրատում բյուրեղաչրի զանգվածային բաժինը 39,13 % է: Որքան է 1 մոլ բյուրեղահիդրատում բյուրեղաչրի զանգվածը (գ):
4. Երկաթի և պղնձի փոշուց կազմված 3 գ զանգվածով խառնուրդի քլորացման համար պահանջվել է 1,12 լ (ն. պ.) քլոր: Որքան է 36,5 % զանգվածային բաժնով աղաթթվի զանգվածը (գ), որը քանակապես կփոխազդի նշված զանգվածով խառնուրդի հետ:
5. Բաց անոթում գտնվող նատրիումի պերօքսիդի զանգվածը որոշ ժամանակ անց մեծացել է 266 գրամով: Որքան է կլանված ածխածնի(IV) օքսիդի զանգվածը (գ):
6. Քլորի թթվածնավոր թթուներից մեկում հալոգենի զանգվածային բաժինը 35,32 % է: Ինչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդ է անհրաժեշտ 201 գ զանգվածով նշված թթուն չեզոքացնելու համար:
- 7-8. Բարիումի քլորիդի, կալցիումի կարբոնատի և նատրիումի հիդրոկարբոնատի 15,02 գ զանգվածով խառնուրդը լուծել են ջրում: Մնացել է չլուծված 3,5 գ նստվածք: Ելային խառնուրդի նույն զանգվածով մեկ այլ նմուշի մինչև 1000 °C շիկացումից հետո զանգվածը նվազել է 4,64 գրամով:
7. Որքան է թթու աղի զանգվածը (մգ) ելային խառնուրդում:
8. Ինչ զանգվածով (մգ) սուլֆատ իոններ կպահանջվեն ելային խառնուրդում պարունակվող բարիումի իոնների հետ փոխազդելու համար:
- 9-10. Կալիումի նիտրիտի 1 լ ջրային լուծույթում, որում աղի հիդրոլիզի աստիճանը 2 % է, հայտնաբերվել են, 0,255 գ հիդրօքսիդ իոններ: Ստացված ալկալին ամբողջովին դիսոսցված է:

9. Ի՞նչ զանգվածով (գ) կալիումի նիտրիտ պետք է լուծել ջրում 40 լ ծավալով նույն կոնցենտրացիայով լուծույթ պատրաստելու համար:

10. Ի՞նչ զանգվածով (գ) չիդրոլիզված աղ է պարունակվում 40 լ լուծույթում:

11–12. Մանգանի օքսիդի 4,58 գ նմուշը վերականգնելու համար ծախսվել է 1,792 լ (ն. պ.) ջրածին:

11. Որքան է այդ օքսիդի մոլային զանգվածը (գ/մոլ):

12. Ի՞նչ զանգվածով (գ) ալյումին կծախսվի 1,5 մոլ այդ օքսիդը վերականգնելու համար:

13–14. Կալցիումի քլորիդի 444 գ լուծույթին ավելացրել են նատրիումի կարբոնատի 8,48 % զանգվածային բաժնով 500 գ լուծույթ: Նստվածքը ֆիլտրել և շիկացրել են մինչև հաստատուն զանգված: Ֆիլտրատին 10 % զանգվածային բաժնով 146 գ աղաթթու ավելացնելիս գազի անջատումը դադարել է:

13. Որքան է նստվածքի շիկացումից հետո ստացված նյութի քանակը (մմոլ):

14. Որքան է կալցիումի քլորիդի զանգվածային բաժինը (%) սկզբնական լուծույթում:

15–16. Պղնձի(II) սուլֆատի լուծույթի մեջ ընկղմել են ալյումինե թիթեղ: Որոշ ժամանակ անց, երբ թիթեղի զանգվածի փոփոխությունը կազմել է 2,76 գ, այն հանել են, լվացել, չորացրել և փոխազդեցության մեջ դրել քլորի հետ: Վերջինիս ծախսը եղել է 168 լ (ն. պ.):

15. Որքան է լուծույթում գոյացած աղի զանգվածը (մգ):

16. Որքան է ալյումինե թիթեղի սկզբնական զանգվածը (գ):

17–19. Կալցիումի օքսիդի, կարբիդի և ֆոսֆիդի խառնուրդի 61,4 գ նմուշի վրա անհրաժեշտ քանակությամբ ջուր ավելացնելիս ստացվել են պինդ նյութ և 15,68 լ (ն. պ.) գազերի խառնուրդ, որում ածխաջրածնի քանակը 2,5 անգամ մեծ է նյութ գազի քանակից:

17. Որքան է ստացված պինդ նյութի զանգվածը (գ):

18. Որքան է կալցիումի օքսիդի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

19. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) օդ կպահանջվի հիդրոլիզի ընթացքում ստացված ածխաջրածինն այրելու համար:

20–22. Նատրիումի հիդրոկարբոնատի 17,5 % զանգվածային բաժնով 672 գ լուծույթին ավելացրել են 171 գ բարիումի հիդրօքսիդ պարունակող 585 գ լուծույթ: Ռեակցիաներն ավարտվելուց հետո նստվածքը առանձնացրել են լուծույթից:

20. Որքան է նստվածքի զանգվածը (գ):

21. Ինչ զանգվածով (գ) լուծույթ է ստացվել:

22. Որքան է լուծույթում պարունակվող ալկալու զանգվածը (գ):

23–25. Մագնեզիումի և պղնձի(II) քլորիդների հալիասարամուխին խառնուրդը լուծել են 197 մլ ջրում և ավելացրել արծաթի նիտրատի 1 մոլ/լ կոնցենտրացիայով որոշակի ծավալով լուծույթ ($\rho = 1,1$ գ/մլ): Առաջացած 57,4 գ նստվածքը հեռացրել են և լուծույթի մեջ ընկղմել պղնձե թիթեղ: Ռեակցիան ավարտվելուց հետո թիթեղի զանգվածը ավելացել է 7,6 գրամով:

23. Որքան է քլորիդների ելային խառնուրդի զանգվածը (գ):

24. Որքան է պղնձե թիթեղը հանելուց հետո մնացած լուծույթի զանգվածը (գ):

25. Որքան է վերջնական լուծույթում պղնձի(II) նիտրատի զանգվածային բաժինը (%):

26–28. Ածխածնի(II) և (IV) օքսիդների 0,896 լ (ն. ս.) խառնուրդն այրելու համար ծախավել է 0,112 լ (ն. ս.) թթվածին: Առաջացած գազը մղել են 2,96 գ կալցիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթի մեջ:

26. Որքան է ածխածնի(II) օքսիդի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

27. Ինչ զանգվածով (գ) աղ է առաջացել:

28. Որքան է ելային գազային խառնուրդի զանգվածը (մգ):

1.2.7. Անօրգանական միացությունների դասերը, դրանց ստացումը, դասակարգումը, անվանումը, հատկությունները և կիրառումը: Հիմքերի, թթուների, աղերի և օքսիդների քիմիական հատկությունները

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	160	11	229	21	1060
2	15	12	108	22	24
3	36	13	200	23	23
4	1	14	5	24	705
5	418	15	6840	25	4
6	112	16	135	26	25
7	8400	17	74	27	4
8	1440	18	25	28	1600
9	2550	19	140		
10	2499	20	197		

ԳԼՈՒԽ 2. ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ

2. ՄԵՏԱՂՆԵՐ

2.1.1. Մետաղային կապ: I–III գլխավոր ենթախմբերի և բոլոր երկրորդական ենթախմբերի մետաղների բնութագիրը

- Ցինկի և մագնեզիումի փոշիների 332 գ զանգվածով խառնուրդն աղաթթվի ավելցուկով մշակելիս անջատվել է 156,8 լ (ն. պ.) գազ: Որքան է մագնեզիումի նյութաքանակը (մոլ) ելային խառնուրդում:
- Որքան է K^+ , Cu^+ , Ca^{2+} , Zn^{2+} , Fe^{2+} կատիոններից $3d^{10}4s^0$ էլեկտրոնային բանաձևն ունեցող տարրերի կարգաթվերի գումարը:
- MgO , CaO , BaO , BeO նյութերից առավել ուժեղ հիմնային հատկությամբ օժտված օքսիդի 15,3 գ նմուշը լուծել են ջրում և ստացել 30% զանգվածային բաժնով լուծույթ: Որքան է ստացված լուծույթի զանգվածը (գ):
- Որքան է 405,18 գ զանգվածով օսմիումի ծավալը ($սմ^3$), եթե դրա խտությունը 22,51 գ/ $սմ^3$ է:
- Նատրիումի քլորիդի և Բերթոլեյի աղի հավասարամոլային խառնուրդը շիկացրել են (առանց կատալիզորդի) մինչև ռեակցիայի ավարտը: Որքան է նատրիումի քլորիդի մոլային բաժինը (%) ստացված պինդ մնացորդում:
- Նատրիումի և ամոնիումի նիտրատների հավասարամոլային խառնուրդի որոշ զանգվածով նմուշը տաքացրել են բաց անոթում մինչև հաստատուն զանգված: Քանի՞ անգամ է ելային խառնուրդում պարունակվող նյութերի գումարային քանակը (մոլ) մեծ ստացված պինդ մնացորդում պարունակվող նյութի քանակից:
- Ըստ $KCl \rightarrow X \rightarrow KH$ փոխարկումների շղթայի որքան է 80 գ վերջանյութ ստանալու համար անհրաժեշտ X նյութի զանգվածը (գ):
- Որքան է կալիումի նիտրատի ջերմային քայքայման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը:
- Ինչ զանգվածով (մգ) Na^+ իոններ կանցնեն լուծույթ Na_2R բաղադրությամբ կատիոնիտի և 0,81 գ կալցիումի հիդրոկարբոնատի ջրային լուծույթի փոխազդեցության արդյունքում:
- 8 գ զանգվածով $NaOH$ պարունակող լուծույթը փոխազդել է 9,8 գ զանգվածով ֆոսֆորական թթվի հետ: Որքան է այդ ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը:

11–12. *K, Ca, Cr, Ga, Cu, Ag մետաղներից մի քանիսն ունեն ստոմի արտաքին էլեկտրոնային շերտի 4s¹ բանաձև:*

11. Որքան է 4s¹ բանաձևով տարրերի կարգաթվերի գումարը:

12. Որքան է 4s¹ բանաձևով d–տարրերի հարաբերական ատոմային զանգվածների գումարը:

13–14. *Ալյումինի և դրա օքսիդի խառնուրդի 156 գ նմուշն ակալու լուծույթով մշակելիս անջատվել է 67,2 լ (ն. ս.) գազ:*

13. Որքան է մետաղի զանգվածը (գ) տրված նմուշում:

14. Ի՞նչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդի 20% զանգվածային բաժնով լուծույթ է ծախսվել նշված գործընթացում:

15–17. *Ըստ հետևյալ փոխարկումների շղթայի.*



15. Որքան է FeX₂ միացության հարաբերական մոլեկուլային զանգվածը, եթե դրանում X տարրի զանգվածային բաժինը 55,91% է:

16. Որքան է A և B նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը:

17. Ի՞նչ զանգվածով (գ) ջրածնի պերօքսիդի 2% զանգվածային բաժնով լուծույթ կծախսվի A նյութից B նյութ ստանալու համար, եթե FeX₂–ի զանգվածը 2,54 գ է:

18–20. *Երկաթի(II) նիտրատի 259,02 գ զանգվածով լուծույթի մեջ ընկղմել են ալյումինե թիթեղ: Որոշ ժամանակ անց, երբ թիթեղը հանել են, լվացել և չորացրել, պարզվել է, որ զանգվածը փոխվել է 3,42 գրամով:*

18. Որքան է թիթեղի վրա նստած երկաթի զանգվածը (մգ):

19. Հաշվեք երկաթի(II) նիտրատի և ալյումինի փոխազդեցությունից գոյացած աղի զանգվածային բաժինը (%) թիթեղը հանելուց հետո մնացած լուծույթում:

20. Հաշվեք ալյումինե թիթեղի սկզբնական զանգվածը (գ), եթե երկաթապատ ալյումինե թիթեղը լուծելու համար ծախսվել է 3 մոլ/լ կոնցենտրացիայով 1 լ ձծմբական թթու:

2.1.1. Մետաղային կապ: I-III գլխավոր ենթախմբերի և բոլոր երկրորդական ենթախմբերի մետաղների բնութագիրը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	8	5	15	127
2	59	9	230	16	197
3	57	10	6	17	17
4	18	11	72	18	5040
5	50	12	116	19	5
6	2	13	54	20	54
7	78	14	800		

2.1.2. Ալկալիական մետաղներ. Ֆիզիկական և քիմիական հատկությունները


1. Ինչ զանգվածով (գ) աղ կգոյանա 11,2 % զանգվածային բաժնով կալիումի հիդրօքսիդի 200 գ լուծույթով 11,2 լ (ն. պ.) ածխածնի(IV) օքսիդ անցկացնելիս:

2. Ինչ զանգվածով (գ) թթվածնային միացություն կառաջանա 23 գ մետաղական նատրիումը թթվածնում տաքացնելիս:

3. Որքան է KOH, HNO₂, HNO₃, NaOH նյութերից առաջին, երկրորդ և երրորդ փուլերում անհրաժեշտ նյութերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարն ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



4. Ըստ փոխարկումների հետևյալ շղթայի որքան է A, B, C նյութերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը.



5. Որքան է հետևյալ ուրվագրին՝ $\text{Al} + \text{HCl} \rightarrow \text{X} + \text{H}_2$, համապատասխանող X արգասիքի մեկ մոլում էլեկտրոնների քանակը (մոլ):

6. Որքան է հետևյալ միացություններից՝ K₂MnO₄, NaMnO₄, MnO₂, մանգանի բարձրագույն օքսիդացման աստիճան ունեցող նյութի մոլային զանգվածը (գ/մոլ):

7. 15 գ NaH-ից ստացվել է 42 գ հիդրոկարբոնատ՝ ըստ հետևյալ փոխարկումների՝ $\text{NaH} \xrightarrow{1} \text{X} \xrightarrow{2} \text{NaHCO}_3$: Որքան է 2-րդ ռեակցիայի ելքը (%), եթե առաջին ռեակցիան ընթացել է քանակապես:

8. 1 : 2 մոլային հարաբերությամբ 848 գ զանգվածով կալցիումի կարբոնատի և հիդրոկարբոնատի խառնուրդը վշակել են ավելցուկով վերցրած աղաթթվով: Որքան է անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):

9. Նատրիումի օքսիդի և հիդրօքսիդի 10 գ զանգվածով խառնուրդը, որում օքսիդի զանգվածային բաժինը 62 % է, լուծել են 137,5 մլ ջրում: Որքան է ստացված լուծույթում ալկալու զանգվածային բաժինը (%):

10. Որքան է 196 գ զանգվածով ծծմբական թթվի և անհրաժեշտ քանակով բարիումի հիդրօքսիդի փոխազդեցությունից գոյացած նստվածքի զանգվածը (գ):


11. Երկաթե թիթեղը պղնձի սուլֆատի լուծույթի մեջ ընկղմելիս թիթեղի զանգվածը մեծացել է 4 գրամով: Որքան է փոխազդած երկաթի զանգվածը (գ):

12. Հավասար նյութաքանակներով նատրիումի, կալցիումի և ամոնիումի կարբոնատների խառնուրդի որոշակի զանգված տաքացրել են 300 °C-ում: Ստացված չոր մնացորդը ջրով մշակելիս մնացել է 50 գ նստվածք: Որքան է ջրում լուծված նյութի ատոմների գումարային նյութաքանակը (մոլ):

13. Ալկալիական մետաղի օքսիդն ամբողջությամբ փոխազդել է 10 % զանգվածային բաժնով 324 գ բրոմաջրածնական թթվի հետ: Վերջինիս 18 գ ջուր ավելացնելիս ստացվել է 10 % զանգվածային բաժնով մետաղի բրոմիդի լուծույթ: Ո՞րն է մետաղի կարգաթիվը:

14. Նատրիումի հիդրիդի հիդրոլիզից ստացված գազը շիկացած պղնձի(II) օքսիդի վրայով անցկացնելիս պինդ նյութի զանգվածը պակասել է 4 գրամով: Որքան է նատրիումի հիդրիդի զանգվածը (գ):

15. Որքան է նատրիում պարունակող X_1 , X_2 , X_3 նյութերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարն ըստ հետևյալ փոխարկումների շղթայի.



16. H_2X բանաձևն ունեցող միացության ջրային լուծույթում H_2X -ի յուրաքանչյուր չդիսոցված մոլեկուլին բաժին են ընկնում 8 հատ H^+ և 4 հատ X^{2-} իոններ: Լուծույթում որքան է այդ էլեկտրոլիտի դիսոցման աստիճանը (%):

17. Ինչ քանակով (մոլ) նատրիումի օքսիդ պետք է ավելացնել 160 գ նատրիումի հիդրօքսիդ պարունակող 676 գ ջրային լուծույթին՝ նատրիումի հիդրօքսիդի 40 % զանգվածային բաժնով լուծույթ ստանալու համար:

18. 1,25-ական մոլ մետաղական Li, Na և K պարունակող խառնուրդը «լուծել են» 2417,5 գ ջրում: Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ է անջատվել նշված գործընթացում:

19–20. 4,8 % զանգվածային բաժնով լիթիումի հիդրօքսիդի 2500 գ լուծույթի մեջ լուծել են այնքան ծծմբի(IV) օքսիդ, որ լուծույթում գոյացած փոքր և մեծ մոլեկուլային զանգվածով լիթիումական աղերի նյութաքանակների հարաբերությունը համասպառասախանաբար լինի 2 : 1:

19. Որքան է կլանված գազի ծավալը (լ, ն. պ.):

20. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ծծմբային գազ պետք է անցկացնել ստացված լուծույթով՝ չեզոք աղը թթու աղի վերածելու համար:

21–22. Որոշակի զանգվածով պլյումինի և սիլիցիումի օքսիդների 1 : 5 մոլային հարաբերությամբ խառնուրդի նմուշը լրիվ լուծելու համար պահանջվել է նատրիումի հիդրօքսիդի 80 % զանգվածային բաժնով 600 գ տաք լուծույթ:

21. Որքան է փոխազդած խառնուրդի զանգվածը (գ):
22. Առավելագույնը ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) 4,5 մոլ/լ կոնցենտրացիայով աղաթթու կարող է փոխազդել ստացված լուծույթի հետ:
- 23–25. Մետաղական կալիումի և նատրիումի 1,31 գ զանգվածով համաձուլվածքը ջրում լուծելիս ստացվել է 2,16 գ զանգվածով հիդրօքսիդների խառնուրդ:*
23. Որքան է կալիումի զանգվածը (մգ) ելային համաձուլվածքում:
24. Որքան է նատրիումի մոլային բաժինը (%) ելային համաձուլվածքում:
25. Որքան է անջատված գազի ծավալը (մլ, ն. պ.):
- 26–28. Նատրիումի քլորիդի 195 գ զանգվածով ջրային լուծույթը էլեկտրոլիզի ենթարկելիս աղը լրիվ տարրալուծվել է, և անոդի վրա անջատվել է 11,2 լ (ն. պ.) գազ:*
26. Որքան է աղի զանգվածային բաժինը (%) ելային լուծույթում:
27. Ի՞նչ զանգվածով (գ) ծծմբական թթվի 24,5% զանգվածային բաժնով լուծույթ կպահանջվի էլեկտրոլիտային ավազանում ստացված լուծույթը չեզոքացնելու համար:
28. Ի՞նչ զանգվածով (գ) երկաթ կստացվի կաթոդի վրա անջատված գազով մագնիսական երկաթաքարը վերականգնելիս:
- 29–31. Նատրիումի պերօքսիդի և կարբոնատի 230 գ զանգվածով հավասարաճախային խառնուրդը որոշ ժամանակ ածխածնի(IV) օքսիդի մթնոլորտում թողնելիս խառնուրդի զանգվածն ավելացել է 14 գրամով: Ռեակցիայի արդյունքում անջատված գազը խառնել են անհրաժեշտ ծավալով ջրածնի հետ և պայթեցրել:*
29. Որքան է նատրիումի կարբոնատի մոլային բաժինը ածխաթթու գազ կլանած չոր խառնուրդում (%):
30. Որքան է փոխազդած ջրածնի զանգվածը (գ):
31. Առավելագույնը ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ածխաթթու գազ կարող է կլանել չոր ելային խառնուրդը:

32-34. 78 գ զանգվածով կալիումը լուծել են 924 գ ջրում: Ստացված լուծույթը քանակապես փոխազդել է հալսասար նյութաքանակներով երկաթի(III) և պղնձի(II) սուլֆատներ պարունակող 2000 գ զանգվածով սառը ջրային լուծույթի հետ:

32. Որքան է կալիումի և ջրի փոխազդեցությունից ստացված լուծույթի զանգվածը (գ):

33. Որքան է երկաթի աղի զանգվածային բաժինը (%) աղերի տրված լուծույթում:

34. Նստվածքի հեռացումից հետո մնացած լուծույթին ավելացրել են անհրաժեշտ քանակով բարիումի քլորիդ պարունակող լուծույթ: Որքան է վերջնական լուծույթում առկա լուծված նյութի զանգվածը (գ):

**2.1.2. Ալկալիական մետաղներ.
Ֆիզիկական և քիմիական հատկությունները**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	40	13	3	25	560
2	39	14	6	26	30
3	159	15	230	27	200
4	324	16	80	28	21
5	64	17	2	29	70
6	142	18	42	30	1
7	80	19	84	31	28
8	224	20	28	32	1000
9	8	21	402	33	5
10	466	22	4	34	149
11	28	23	390		
12	3	24	80		

2.1.3. Հողալկալիական մետաղներ. Ֆիզիկական և քիմիական հատկությունները

1. Որքան է խոնավածուծ հատկությամբ օժտված նյութերի մոլային զանգվածների գումարային թիվը միացությունների հետևյալ շարքում. CaO , Ca(OH)_2 , CaCO_3 , CaCl_2 , MgSO_4 :

2. Որքան է զանգվածի կորուստը (կգ) 172 կգ զանգվածով բնական գիպսից կեսչրյա գիպս ստանալիս:
3. Ի՞նչ զանգվածով (մգ) սոդա կծախսվի 400 մգ/լ Ca^{2+} իոններ պարունակող 2 լ ծավալով կոշտ ջրից այդ իոնները լրիվ հեռացնելու համար:
4. Ըստ հետևյալ փոխարկումների՝ ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ածխածնի(IV) օքսիդ է ստացվել, եթե փոխարկումներին մասնակցել է 31,25 գ զանգվածով կալցիումի կարբոնատ:
$$\text{CaCO}_3 \longrightarrow \text{CaCl}_2 \longrightarrow \text{MgCO}_3 \longrightarrow \text{Mg(HCO}_3)_2 \xrightarrow{1000^\circ\text{C}} \text{CO}_2$$
5. Ի՞նչ զանգվածով (գ) մագնեզիումի սուլֆիդ կստացվի 18 գ մագնեզիումը 28 գ ծծմբի հետ տաքացնելիս:
- 6-7. *Կալցիումի և ալյումինի կարբիդների 33,6 գ զանգվածով խառնուրդի լրիվ հիդրոլիզից անջատվել է 13,34 լ (ն. պ.) գազային խառնուրդ:*
6. Որքան է ալյումինի կարբիդի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:
7. Ի՞նչ ծավալով (մլ) 5 մոլ/լ կոնցենտրացիայով կալիումի հիդրօքսիդի լուծույթ կպահանջվի կարբիդների հիդրոլիզից ստացված նստվածքը լուծելու համար:
- 8-9. *Կալցիումի և ալյումինի կարբիդների 1 : 1 մոլային հարաբերությամբ 1040 գ զանգվածով խառնուրդը փոխազդեցության մեջ են դրել անհրաժեշտ քանակով ջրի հետ:*
8. Որքան է ստացված խառնուրդում գազերի քանակը (մոլ):
9. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին է անհրաժեշտ ստացված գազային խառնուրդն այրելու համար:
- 10-11. *Մագնեզիումի և ցինկի 13,7 գ զանգվածով խառնուրդը նոսր ծծմբական թթվում լուծելիս անջատվել է 8,3 լ (27°C , $1,2 \cdot 10^5$ կՊա) ջրածին ($R = 8,3$ Ջ/Կ·մոլ, $T_0 = 273$ Կ):*
10. Ի՞նչ ծավալ (մլ) կգրադեցնի անջատված ջրածինը նորմալ պայմաններում:

11. Որքան է մագնեզիումի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

12–13. Կալցիումի և մագնեզիումի կարբոնատների խառնուրդը 1000 °C ջերմաստիճանում շիկացնելիս ստացված ածխածնի(IV) օքսիդի զանգվածը երկու անգամ կպակասի ելային խառնուրդի զանգվածից:

12. Որքան է կալցիում պարունակող միացության մոլային բաժինը (%) պինդ նյութերի ստացված խառնուրդում:

13. Ինչ զանգվածով (գ) հիդրոկարբոնատների խառնուրդ կստացվի 176 գ զանգվածով կարբոնատների խառնուրդից:

14–15. Միայն կալցիումի և մագնեզիումի կարբոնատներ պարունակող մարմարի 984 գ զանգվածով նմուշին ավելացրել են անհրաժեշտ քանակով՝ 7300 գ աղաթթու: Անջատված գազը շիկացած ածխի վրայով անցկացնելիս ստացվել է ըստ հելիումի յոթ հարաբերական խտությանը մի այլ գազ, որը բավարար է 2880 գ զանգվածով պղնձի(I) օքսիդից պղինձը վերականգնելու համար:

14. Որքան է կալցիումի կարբոնատի զանգվածը (գ) ելային նմուշում:

15. Որքան է քլորաջրածնի զանգվածային բաժինը (%) աղաթթվում:

16–18. Կալցիումի քլորիդ և հիդրոկարբոնատ պարունակող 200 մլ ($\rho = 1,0$ գ/մլ) ջրի կոշտությունը վերացնելու նպատակով այն եռացրել են, և անջատվել է 0,4 գ զանգվածով նստվածք: Նստվածքը հեռացնելուց հետո մնացած ջուրը սոդայի ավելցուկով մշակելիս անջատվել է 0,2 գ զանգվածով նստվածք:

16. Ինչ զանգվածով (մգ) կալցիումի հիդրոկարբոնատ է պարունակվում 1 լ ջրում:

17. Ինչ զանգվածով (գ) կալցիումի քլորիդ է պարունակվում 100 լ ջրում:

18. Ինչ զանգվածով (գ) սոդա կօգտագործվի 100 լ ջուրը փափկեցնելու համար:

19–21. 2 : 1 մոլային հարաբերությամբ $\text{Ca}(\text{HCO}_3)_2$ և MgSO_4 աղեր պարունակող կոշտ ջուրը անհրաժեշտ քանակով սոդայով՝ Na_2CO_3 մշակելիս ստաշացել է 710 գ զանգվածով նստվածք:

19. Որքան է կալցիումական աղի զանգվածը (գ) կոշտ ջրում:

20. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) գագ կանջատվի նստվածքը հեռացնելուց հետո ստացված լուծույթը անհրաժեշտ քանակով ծծմբական թթվով մշակելիս:


21. Ի՞նչ ծավալով (լ) 0,25 մոլ/լ կոնցենտրացիայով բարիումի նիտրատի լուծույթ կպահանջվի ելային կոշտ ջրից սուլֆատ իոնները հեռացնելու համար:

**2.1.3. Հողակալիական մետաղներ.
Ֆիզիկական և քիմիական հատկությունները**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	287	8	20	15	10
2	27	9	952	16	3240
3	2120	10	8960	17	111
4	14	11	75	18	318
5	42	12	25	19	810
6	25	13	300	20	224
7	80	14	900	21	10

2.1.4. Ալյումին և երկաթ. դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները

1. Որոշակի զանգվածով ալյումինը աղաթթվում լուծելիս անջատվել է 11 գ զանգվածով գազ: Ի՞նչ զանգվածով (գ) գազ կառաջանա նույն զանգվածով ալյումինը կալիումի հիդրօքսիդի լուծույթում լուծելիս:
2. Երկաթի խտությունը $7,8 \text{ գ/սմ}^3$ է: Ի՞նչ ծավալ (դմ³) կգբաղեցնի 156 կգ երկաթը նույն ջերմաստիճանում:
3. Փոխարկումների հետևյալ շղթայում որքան է բոլոր ռեակցիաների հավասարումների քանակաչափական գործակիցների գումարը.



4. 11,12 գ զանգվածով երկաթարջասպի տաքացումից ստացվել է 6,08 գ անջուր աղ: Որքան է բյուրեղաջրի քանակը երկաթարջասպի 3 մոլում:
5. Որքան է օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարման ելանյութերի քանակաչափական գործակիցների գումարը.



6. Երկաթի(II) և ալյումինի քլորիդների 2,032 գ զանգվածով խառնուրդի և ավելցուկով վերցրած կալիումի հիդրօքսիդի լուծույթի փոխազդեցության արդյունքում մնացել է 1,08 գ մնացորդ: Որքան է երկաթի(II) քլորիդի զանգվածային բաժինը (%) ելային խառնուրդում:
7. Միացություններում +3 օքսիդացման աստիճան ցուցաբերող 4,32 գ զանգվածով մետաղի և աղաթթվի փոխազդեցության արդյունքում ստացվել է համապատասխան աղի 0,2 մոլ/լ կոնցենտրացիայով 800 մլ լուծույթ: Որքան է մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:

8–9. Երկաթի(II) և (III) օքսիդների 304 գ զանգվածով խառնուրդը ջրածնով վերականգնելիս ստացվել է 224 գ զանգվածով երկաթ:

8. Որքան է երկաթի(II) օքսիդի զանգվածը (գ) խառնուրդում:
9. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ածխածնի(II) օքսիդ կծախսվի այդ նույն խառնուրդը լրիվ վերականգնելու համար:

10-11. $C + 3OH^- = AlO_3^{3-} + 3B$ կրճատ իոնական հալասարման ուրվագրում վերականգնե՛ք C և B նյութերի բանաձևերը, եթե հայտնի է, որ A-ն կազմված է երեք տարրերի ատոմներից:

10. Որքան է C և B նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը:

11. Որքան է 39 գ C նյութը լուծելու համար անհրաժեշտ 7,35 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթի զանգվածը (գ):

12-13. Ընտրե՛ք հետևյալ ուրվագրով օքսիդացման-վերականգնման ռեակցիայի գործակիցները՝ $Fe + HNO_3 \rightarrow Fe(NO_3)_3 + NH_4NO_3 + H_2O$:

12. Որքան է հալասարման քանակաչափական գործակիցների գումարը:

13. Ի՞նչ քանակով (մոլ) էլեկտրոն կմասնակցի ռեակցիային 968 գ զանգվածով երկաթի(III) նիտրատ գոյանալիս:

14-15. Որոշակի զանգվածով երկաթե թիթեղը նախ ընկղմել են ծծմբական թթվի նոսր ջրային լուծույթի, ապա պղնձի(II) սուլֆատի լուծույթի մեջ: Որոշ ժամանակ անց թիթեղը հանել են աղի լուծույթից, չորացրել և կշռել: Պարզվել է, որ թիթեղի սկզբնական զանգվածի փոփոխություն տեղի չի ունեցել:

14. Որքան է անջատված ջրածնի ծավալը (մլ, ն. պ.), եթե թիթեղի վրա նստել է 1,12 գ պղինձ:

15. Որքան է թիթեղի զանգվածի փոփոխությունը (մգ) թթվի հետ փոխազդելուց հետո:

16-17. Փոխարկումներն ըստ հետևյալ շղթայի իրականացնելիս A և B նյութերը պատկանում են անօրգանական միացությունների միևնույն դասին:



16. Ի՞նչ զանգվածով (գ) B միացություն կգոյանա փոխարկումներին 135 գ ալյումին մասնակցելիս:

17. Ի՞նչ զանգվածով (գ) A նյութի 20 % զանգվածային բաժնով լուծույթ կծախսվի փոխարկումների վերջին փուլն իրականացնելիս:

18–20. 170,4 գ զանգվածով ալյումինի նիտրատ պարունակող լուծույթին ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի 40% զանգվածային բաժնով 150 գ լուծույթ: Այնուհետև նստվածք պարունակող խառնուրդի վրա ավելացրել են ևս 120 գ նատրիումի հիդրօքսիդի նույն լուծույթից:

18. Ինչ զանգվածով (գ) նստվածք է առաջացել առաջին անգամ ալկալի ավելացնելիս:

19. Որքան կլինի նստվածքի զանգվածը (գ) երկրորդ անգամ ալկալի ավելացնելիս:

20. Որքան է նիտրատի զանգվածը (գ) վերջնական լուծույթում:

21–23. Միացություններում +3 և +2 օքսիդացման աստիճաններ ցուցաբերող երկու մետաղների 1470 գ զանգվածով խառնուրդն աղաթթվի հետ փոխազդելիս անջատվել է 1008 լ (ն. ս.) գազ: Հայտնի է, որ +3 օքսիդացման աստիճանով մետաղի հարաբերական ատոմային զանգվածի հարաբերությունը +2 օքսիդացման աստիճանով մետաղի հարաբերական ատոմային զանգվածին $0,675 : 1$ է, իսկ խառնուրդում մետաղների մոլային հարաբերությունը $1 : 3$ է:

21. Ո՞րն է +3 օքսիդացման աստիճանով մետաղի կարգաթիվը:

22. Ո՞րն է +2 օքսիդացման աստիճանով մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:

23. Որքան է ստացված աղերի գումարային զանգվածը (գ):

24–26. Երկաթի(II) բրոմիդի և պղնձի(I) բրոմիդի խառնուրդը, որում պղնձի ատոմների թիվը 2 անգամ ավելի է երկաթի ատոմների թվից, իսկ բրոմի ատոմների թիվը $6,02 \cdot 10^{24}$ է, օքսիդացրել են բավարար քանակությամբ քլորով:

24. Հաշվե՞ք քլորի այն ծավալը (լ, ն. ս.), որն անհրաժեշտ է բրոմիդների խառնուրդի լրիվ օքսիդացման համար:

25. Որքան է երկաթի(II) բրոմիդի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

26. Որքան է պղնձի աղի մոլային բաժինը (%) աղերի ստացված խառնուրդում:


**2.1.4. Ալյումին և երկաթ.
դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	11	10	96	19	39
2	20	11	1000	20	204
3	34	12	58	21	13
4	21	13	12	22	40
5	11	14	56	23	4665
6	75	15	140	24	196
7	27	16	390	25	540
8	144	17	1000	26	50
9	112	18	39		

**2.1.5. Մետաղների ստացման եղանակները: Կոռոզիա:
Համաձուլվածքներ: Թուջ և պողպատ**

1. Որոշակի զանգվածով արծաթի և պղնձի համաձուլվածքը լրիվ լուծելու համար ծախսվել է 20% զանգվածային բաժնով 63 գ ազոտական թթու: Որքան է անջատված գազի ծավալը (մլ, ն. պ.):
 2. Պողպատի նմուշը թթվածնի ավելցուկում այրելիս անջատվել է 33,6 լ (ն. պ.) ածխածնի(IV) օքսիդ: Ի՞նչ զանգվածով (գ) ածխածին է պարունակվում պողպատի այդ նմուշում:
 3. Մագնետիտ (Fe_3O_4) պարունակող երկաթահանքում երկաթի զանգվածային բաժինը 42% է: Որքան է Fe_3O_4 -ի զանգվածային բաժինն (%) այդ երկաթահանքում:
 4. Թթվածնի և խոնավության առկայությամբ 112 գ զանգվածով երկաթն ամբողջությամբ ենթարկվել է կերամաշման՝ վերածվելով նախ $Fe(II)$, ապա $Fe(III)$ հիդրօքսիդների: Որքան է վերջնական արգասիքի զանգվածը (գ):
- 5-6. Ալյումինաջերմային եղանակով երկաթ ստանալու նպատակով փոխազդեցության մեջ են դրել 640 գ զանգվածով երկաթի(III) օքսիդն ու 270 գ զանգվածով ալյումինի փոշին:*
5. Որքան է ստացված երկաթի զանգվածը (գ):
 6. Որքան է ալյումինի մոլային բաժինը (%) մետաղների ստացված խառնուրդում:
- 7-8. Իներտ էլեկտրոդներով 585 գ զանգվածով կերակրի աղի հալույթի էլեկտրոլիզը դադարեցրել են այն պահին, երբ անոդի վրա անջատվել է 89,6 լ (ն. պ.) ծախսով գազ:*
7. Ի՞նչ զանգվածով (գ) մետաղական նատրիում է ստացվել:
 8. Կերակրի աղի ռո՞մասն է (%) ենթարկվել էլեկտրոլիզի:
- 9-10. Ըստ հետևյալ ուրվագրի՝ $Fe_3O_4 \xrightarrow{HCl} A + B + H_2O$, ընթացող ռեակցիայի ժամանակ ծախսվել է 40% զանգվածային բաժնով 1460 գ աղաթթու, և ստացվել է լուծույթ:*
9. Ի՞նչ զանգվածով (գ) A նյութ է գոյացել, եթե $Mr(A) < Mr(B)$:
 10. Որքան է ստացված լուծույթի զանգվածը (գ):

11-13. Ըստ հետևյալ ուրվագրի՝ ցինկի օքսիդից ստացել են 325 կգ զանգվածով ցինկ, ընդ որում՝ ստաշին փոխարկումն ընթացել է 80 %, իսկ երկրորդը՝ 100 % էլքով:



11. Որքան է A և B պարզ գազային նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը:

12. Ի՞նչ ծավալով (մ^3) A գազ է անհրաժեշտ նշված քանակով ցինկ ստանալու համար:

13. Որքան է ծախսված B գազի ծավալը (մ^3):

14-16. Ջրային միջավայրում 112 գ զանգվածով երկաթը լրիվ ենթարկվել է էլեկտրաքիմիական կոռոզիայի (երկաթն օքսիդանում է մինչև Fe^{+2}):

14. Ի՞նչ զանգվածով (գ) թթվածին է մասնակցել կաթոդի թթվածնային ապարենոացմանը:

15. Ի՞նչ նյութաքանակով (մոլ) էլեկտրոն է մասնակցել կաթոդի ապարենոացմանը:

16. Ի՞նչ զանգվածով (գ) թթվածին է լրացուցիչ մասնակցել կոռոզիայի գործընթացին, եթե երկաթը վերածվել է $\text{Fe}(\text{OH})_3$ -ի:

17-19. Երկաթե թիթեղը նոսր աղաթթվի մեջ ընկղմելիս անջատվել է 11,2 լ (ն. պ.) գազ: Այնուհետև թիթեղը հասել են և ընկղմել պղնձի(II) սուլֆատի լուծույթի մեջ: Թիթեղը հանելուց և չորացնելուց հետո պարզվել է, որ դրա զանգվածն ավելացել է 2,4 գրամով, իսկ երկու ռեակցիաներին մասնակցած երկաթի զանգվածը կազմել է թիթեղի ելային զանգվածի 40 %-ը:

17. Որքան է աղաթթվի հետ փոխազդած երկաթի զանգվածը (գ):

18. Որքան է փոխազդած պղնձի(II) սուլֆատի զանգվածը (գ):

19. Որքան է եղել երկաթե թիթեղի ելային զանգվածը (գ):

20-22. Ալյումինի և պղնձի համաձուլվածքի 25,6 գ զանգվածով անուշը մշակել են ավելցուկով աղաթթվով: Մնացորդը լվացել են և լուծել 50,61 % զանգվածային բաժնով 49,8 գ ազոտական թթվում: Ստացված լուծույթը զոլորչացրել են, չոր մնացորդը՝ շիկացրել, որի արդյունքում ստացվել է գազերի խառնուրդ, և մնացել է 8 գ զանգվածով պինդ նյութ:

20. Որքան է ալյումինի զանգվածային բաժինը համաձուլվածքում (%):

21. Որքան է աղի զանգվածային բաժինը (%) համաձուլվածքի մնացորդն ազոտական թթվում լուծելիս ստացված լուծույթում: _____

22. Որքան է չոր մնացորդը շիկացնելիս ստացված գազային խառնուրդում բարդ նյութի մոլային բաժինը (%): _____

**2.1.5. Մետաղների ստացման եղանակները: Կոռոզիա:
Համաձուլվածքներ: Թուջ և պողպատ**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	1120	9	254	17	28
2	18	10	1924	18	48
3	58	11	34	19	112
4	214	12	210	20	75
5	448	13	112	21	40
6	20	14	32	22	80
7	184	15	4		
8	80	16	16		

2.2. ՈՉՄԵՏԱՂՆԵՐ

2.2.1. Ջրածին, ջուր: Հալոգենների ընդհանուր բնութագիրը: Հալոգենաջրածիններ: Շղթայական ռեակցիաներ: Հալոգենների և դրանց կարևորագույն միացությունների կիրառությունն ու կենսաքանակական նշանակությունը

1. Որքան է A և B պարզ նյութերի մեկական մոլեկուլներում էլեկտրոնների ընդհանուր թիվն ըստ հետևյալ ուրվագրի.



2. Ջրածնի և քլորի հավասարամոլային խառնուրդը լուսավորելիս դրա 3/4-ը փոխազդել է: Որքան է վերջանյութի ծավալային բաժինը (%) նոր ստացված գազային խառնուրդում:

3. Որքան ջերմություն (կՋ) կանջատվի 85 գ զանգվածով ջրածնի պերօքսիդի քայքայումից՝ ըստ հետևյալ ջերմաքիմիական հավասարման. $\text{H}_2\text{O}_2 = \text{H}_2\text{O} + 1/2\text{O}_2 + 188 \text{ կՋ/մոլ}$:

4. Ինչ քանակով էներգիա (կՋ, ամբողջ թվի ճշտությամբ) կծախսվի 22,4 դմ³ (ն. պ.) ջրածնի $\text{H}_{2(\text{գ})} = 2\text{H}_{(\text{գ})}$ փոխարկումն իրականացնելու համար, եթե H-H կապի էներգիան $7,177 \cdot 10^{-19}$ Ջ է:

5. Որքան է X₂ գազի մոլային զանգվածը (գ/մոլ), եթե դրա 5,6 դմ³ (ն. պ.) ծավալում պարունակվում են ընդհանուր թվով $1,0234 \cdot 10^{25}$ պրոտոններ և էլեկտրոններ:

6. Ինչ զանգվածով (գ) սիլիցիումի(IV) օքսիդ կարելի է լուծել 500 մլ 2 մոլ/լ կոնցենտրացիայով ֆտորաջրածնային թթվում, եթե ռեակցիայի արգասիքը SiF₄ գազն է:

7. Ավելցուկով կալիումի բրոմիդի լուծույթի միջով անցկացրել են 11,2 լ (ն. պ.) քլորի, քլորաջրածնի և ջրածնի խառնուրդ, անջատվել է 8 գ բրոմ, իսկ չլուծված գազի ծավալը կազմել է 5,6 լ (ն. պ.): Որքան է քլորաջրածնի ծավալային բաժինը (%) գազերի ելային խառնուրդում:

8. Որոշակի զանգվածով երկաթի մի նմուշը փոխազդել է աղաթթվի հետ, իսկ նույն զանգվածով մեկ այլ նմուշ՝ գազային քլորի: Որքան է երկաթի նմուշի զանգվածը (գ), եթե փոխազդած քլորի զանգվածը 8,375 գրամով մեծ է փոխազդած քլորաջրածնի զանգվածից:

9–10. Փակ անոթում ջրածինը խառնել են քլորի ավելցուկի հետ և լուսավորել: Ռեակցիայի ավարտից հետո խառնուրդում քլորի ծավալային բաժինը կազմել է 20 %:

9. Որքան է քլորի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

10. Ինչ զանգվածով (գ) քլորաջրածին կստացվի 56 լ (ն. պ.) ելային խառնուրդից:

11-12. Տրված է ջրածին տարրի $1,505 \cdot 10^{24}$ ատոմներ պարունակող մեթանի նմուշ:

11. Որքան է մեթանի այդ նմուշի ծավալը (լ, ն. պ.):

12. Որքան է մեթանի այդ նմուշի ծավալը (լ) 47°C և $8,3$ կՊա պայմաններում:

($R = 8,3$ Ջ/մոլ \cdot Կ, իսկ $T_0 = 273$ Կ):

13-14. Սովորական և ծանր ջրերի խառնուրդում յուրաքանչյուր 50 մոլ պրոտոնին բաժին է ընկնում 41 մոլ նեյտրոն:

13. Որքան է ծանր ջրի մոլային բաժինը (%) խառնուրդում:

14. Որքան է 182 գ զանգվածով այդպիսի խառնուրդի և անհրաժեշտ քանակով մետաղական նատրիումի փոխազդեցությունից ստացված գազի զանգվածը (գ), եթե ռեակցիաների գազային արգասիքները միայն H_2 -ը և D_2 -ն են:

15-16. Կալիումի քլորատի և քլորիդի խառնուրդն առանց կատալիզորդի տաքացնելիս կալիումի քլորիդի քանակը կրկնապատկվել է, և ստացվել է աղերի նոր խառնուրդ:

15. Որքան է կալիումի քլորատի մոլային բաժինը (%) աղերի սկզբնական խառնուրդում:

16. Որքան է կալիումի պերքլորատի մոլային բաժինը (%) աղերի նոր խառնուրդում:

17-18. $2,55$ լ քլորը և 1 լ մեթանը համապատասխան պայմաններում անմնացորդ փոխազդել են:

17. Որքան է քլոր տարրի ատոմների մոլային բաժինը (%) ստացված մեծ մոլային զանգվածով օրգանական միացությունում:

18. Որքան է ածխածնի օքսիդացման աստիճանը ստացված փոքր մոլային զանգվածով օրգանական միացությունում:

19-20. Ամոնիակի և ջրածնի խառնուրդը տաքացրած պղնձի(II) օքսիդի ավելցուկ պարունակող խողովակով անցկացնելիս պինդ մնացորդի զանգվածը պակասել է 12 գրամով: Ստացված գազազորոշային խառնուրդը ֆոսֆորի(V) օքսիդ պարունակող խողովակով անցկացնելիս մնացել է $2,8$ լ (ն. պ.) չփոխազդած գազ:

19. Որքան է ջրածնի ծավալային բաժինն ամոնիակի և ջրածնի ելային խառնուրդում (%):

20. Ի՞նչ զանգվածով (գ) պղնձի(II) օքսիդ է վերականգնվել:

21-22. 40 գ զանգվածով երկաթի օքսիդը լրիվ վերականգնելու համար ծախսվել է 16,8 լ (ն. ս.) ջրածին:

21. Ինչի՞ է հավասար օքսիդի մոլային զանգվածը (մոլ/լ):

22. Նվազագույնը ինչ ծավալով (մլ, ն. ս.) 4 մոլ/լ կոնցենտրացիայով աղաթթու կծախսվի երկաթի հետ փոխազդելու համար:

23-24. Էթիլենի և ազոտի 89,6 լ (ն. ս.) հավասարամոլային խառնուրդն անցկացրել են ավելցուկով բրոմաջուր պարունակող սրվակի միջով:

23. Որքանով կավելանա լուծույթի զանգվածը (գ) սրվակում:

24. Ինչ զանգվածով (գ) ամոնիումի նիտրիտ է անհրաժեշտ գազային խառնուրդում պարունակվող ազոտը ստանալու համար:

25-27. Երկաթի, պղնձի և ալյումինի խառնուրդի որոշակի զանգվածով նմուշի լրիվ քլորացման համար պահանջվել է 896 լ (ն. ս.) քլոր: Այդ խառնուրդի նույն զանգվածով մեկ այլ նմուշի հետ քանակապես փոխազդելու համար պահանջվել է ջրում լուծել 560 լ (ն. ս.) քլորաջրածին: Նմանատիպ երրորդ նմուշի և նատրիումի հիդրօքսիդի լուծույթի փոխազդեցությունից անջատվել է 168 լ (ն. ս.) գազ:

25. Որքա՞ն է ալյումինի զանգվածը (գ) խառնուրդի նմուշում:

26. Որքա՞ն է պղնձի քանակը (մոլ) նմուշում:

27. Որքա՞ն է երկաթի քանակը (մոլ) նմուշում:

28-30. Ջրածնի և A գազի 11 գ զանգվածով խառնուրդի ծախսը 112 լ (ն. ս.) է: Ջրածինը ստացվել է 6,75 մոլ ծծմբական թթու պարունակող նոսր լուծույթի և ցինկի փոխազդեցությունից, ինչի հետևանքով թթվի քանակը լուծույթում նվազել է 3 անգամ:

28. Որքա՞ն է ջրածնի զանգվածը (գ):

29. Որքա՞ն է A գազի մոլային զանգվածը (գ/մոլ):

30. Առավելագույնը ինչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ կփոխազդի ծծմբական թթվի և ցինկի փոխազդեցությունից ստացված լուծույթի հետ:

31–34. 612,5 գ Բերթոլեյի աղը տաքացրել են կատալիզատորի ստկայությանը, ընդ որում՝ օքսիդիչ տարրի ատոմները միացրել են $9,03 \cdot 10^{24}$ թվով էլեկտրոններ:

31. Որքան է աղի քայքայման աստիճանը (%):

32. Որքան է անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):

33. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կստացվի Բերթոլեյի աղի նույն զանգվածով նմուշը աղաթթվի ավելցուկով մշակելիս:

34–36. Կալցիումի հիդրիդի հիդրոլիզից անջատվել է գազ, իսկ ստացված լուծույթը չեզոքացրել են քլորաջրածնի 12,5 % զանգվածային բաժին ունեցող աղաթթվով: Անջատված գազը բախարար քանակությամբ շիկացած երկաթի(II) օքսիդի վրայով անցկացնելիս վերջինիս զանգվածը պակասել է 20 գրամով:

34. Որքան է անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):

35. Որքան է ծախսված աղաթթվի զանգվածը (գ):

36. Ինչ զանգվածով (գ) երկաթի(II) օքսիդ է վերականգնվել:

37–39. Իրականացրել են 702 գ նատրիումի քլորիդ սպարունակող 1498 գ ջրային լուծույթի էլեկտրոլիզը: Իներտ անոդի վրա անջատված գազը լուծել են էլեկտրոլիզի ավարտից հետո ստացված լուծույթում: Կաթոդի վրա անջատված գազի ծավալը եղել է 89,6 լ (ն. պ.):

37. Ինչ զանգվածով (գ) անթթվածին աղ է պարունակում վերջնական լուծույթը:

38. Որքան է թթվածնավոր աղի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

39. Առավելագույնը ինչ զանգվածով (գ) երկաթի հարուկ կարելի է վերականգնել կաթոդի վրա անջատված գազով:

40–42. Լիթիումի հիդրիդի և մետաղական նատրիումի 1 : 2 մոլային հարաբերությամբ խառնուրդը մշակել են 700 գ ջրով, ինչի հետևանքով անջատվել է 89,6 լ (ն. պ.) գազ, և ստացվել է ալկալիների լուծույթ:

40. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):

41. Որքան է մեծ մոլային զանգվածով ալկալու զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

42. Ի՞նչ ծավալով (լ) ազոտական թթվի 3 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթ է անհրաժեշտ ստացված լուծույթը չեզոքացնելու համար:

43–45. Ածխածնի(II) օքսիդի և ջրային գոլորշու 1 : 4 ծավալային հարաբերությամբ խառնուրդը փոխազդել է ըստ $CO + H_2O = CO_2 + H_2$ ռեակցիայի հավասարման՝ 80 % ելքով: Ջրային գոլորշին խտացնելուց հետո ստացված գազային խառնուրդի ծավալը դարձել է 90 մ³:

43. Որքան է ածխածնի(II) օքսիդի ծավալը (մ³) ելային գազային խառնուրդում:

44. Որքան է ջրային գոլորշու ծավալային բաժինը (%) ստացված գազագոլորշային խառնուրդում:

45. Ի՞նչ ծավալով (մ³) օդ (20 % O₂) է անհրաժեշտ ստացված չոր գազային խառնուրդն այրելու համար:

46–48. Քլորաջրածնի 3,84 մոլ/լ կոնցենտրացիայով 5 լ աղաթթուն փոխազդեցության մեջ են դրել կալիումի պերմանգանատի 10 % զանգվածային բաժնով 4740 գ լուծույթի հետ: Անջատված գազն անցկացրել են ավելցուկով վերցրած կալիումի հիդրօքսիդի տաք լուծույթի մեջ, որի հետևանքով ստացվել են A և B աղերը: B աղն առանձնացրել են լուծույթից և քայքայել կատալիզորդի առկայությամբ:

46. Որքան է առաջին ռեակցիայում անջատված գազի նյութաքանակը (մոլ):

47. Ի՞նչ զանգվածով (գ) A աղ է ստացվել երկրորդ ռեակցիայում:


48. Ի՞նչ զանգվածով (գ) գազ է անջատվել B աղի քայքայումից:

**2.2.1. Ջրածին, ջուր: Հայրգենների ընդհանուր բնութագիրը:
 Հայրգենաջրածիններ: Շղթայական ռեակցիաներ: Հայրգենների և դրանց
 կարևորագույն միացությունների կիրառությունն ու կենսաբանական
 նշանակությունը**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	104	17	60	33	168
2	75	18	0	34	28
3	470	19	60	35	365
4	432	20	60	36	90
5	71	21	160	37	468
6	15	22	250	38	20
7	40	23	56	39	232
8	14	24	128	40	108
9	60	25	135	41	20
10	73	26	25	42	2
11	14	27	5	43	50
12	200	28	9	44	64
13	10	29	4	45	125
14	11	30	900	46	6
15	80	31	50	47	745
16	60	32	84	48	96

2.2.2. Թթվածնի ենթահտումբը: Թթվածին և ծծումբ

1. Որքան է ռեակցիաների բոլոր վերջանյութերի քանակաչափական գործակիցների գումարն ըստ հետևյալ ուրվագրերի.



2. 13 գ զանգվածով ցինկը համահավել են 3,2 գ զանգվածով ծծմբի հետ և ստացված խառնուրդին ավելացրել ավելցուկով աղաթթու: Որքան է ստացված գազային խառնուրդի խտությունն ըստ ջրածնի:
3. Որքան է կալիումի յոդիդի ջրային լուծույթի և օզոնի փոխազդեցության ռեակցիայի մոլեկուլային հավասարման գործակիցների գումարային թիվը:
4. Բերթոլեյի աղի 49 գ նմուշը հախճապակե թասի մեջ տաքացրել են առանց կատալիզատորի: Որքան է նոր ստացված պինդ մնացորդի զանգվածը (գ):
5. Ջրում լուծել են 448 լ (ն. պ.) քլոր և երկար ժամանակ թողել արևի լույսի տակ, ինչի հետևանքով դիտվել է գազի անջատում: Ինչ զանգվածով (գ) ծծմբի հետ կարող է փոխազդել անջատված գազը:
6. Որքան է ավելցուկով վերցրած կալիումի յոդիդի ջրային լուծույթի միջով 0,448 լ (ն. պ.) օզոն անցկացնելիս անջատված յոդի զանգվածը (մգ):
7. Տարրի ատոմի զանգվածային թիվը 2,5 անգամ մեծ է պրոտոնների թվից, իսկ նեյտրոնների թիվը 78 է: Ո՞րն է տարրի ատոմային համարը:
8. Որքան է 12% խառնուկներ պարունակող 1 կգ երկաթի սուլֆիդից ստացվող ծծմբաջրածնի ծավալը (լ, ն. պ.):
9. Տարրի ատոմի միջուկը պարունակում է 44 նեյտրոն, որը 1,294 անգամ մեծ է էլեկտրոնների թվից: Ո՞րն է այդ տարրի ատոմային համարը:
10. Որքան է $\text{FeSO}_4 + \text{KMnO}_4 + \text{H}_2\text{SO}_4 = \text{Fe}_2(\text{SO}_4)_3 + \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման ելանյութերի գործակիցների գումարային թիվը:
11. Որքան է մագնեզիումի օքսիդի և ծծմբական թթվի միջև ընթացող ռեակցիայի կրճատ իոնային հավասարման գործակիցների գումարը:
12. Որոշակի ծավալով օդն օզոնարարով անցկացնելիս ծավալը կրճատվել է 140 մլ-ով (ն. պ.): Ինչ զանգվածով (մգ) յոդ կանջատվի ստացված գազային խառնուրդն ավելցուկով կալիումի յոդիդի պարունակող ջրային լուծույթի միջով անցկացնելիս:

13. Որոշակի զանգվածով ծծմբական թթվում ծծումբ տարրին բաժին է ընկնում 24 մոլ պրոտոն: Որքան է ծծմբական թթվի զանգվածը (գ):

14–15. Նատրիումի հիդրօքսիդի 48 % զանգվածային բաժնով 200 գ լուծույթով անցկացրել են 33,6 լ (ն. ս.) ծծմբի(IV) օքսիդ:

14. Որքան է գոյացած աղերի նյութաքանակների տարբերությունը (մմոլ):

15. Ինչ զանգվածով (գ) չոր նատրիումի հիդրօքսիդ կպահանջվի լուծույթը լրիվ չեզոքացնելու համար:

16–17. 180 գ ջրում լուծել են 16 գ զանգվածով ծծմբի(VI) օքսիդ:

16. Որքան է նյութի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

17. Որքան է նյութի մոլային բաժինը (%) ստացված լուծույթում:

18–19. Հպումային սարք են մղել ծծմբի(IV) օքսիդի և օդի 1:5 ծավալային հարաբերությամբ 268,8 մ³ (ն. ս.) խառնուրդ, իսկ սարքից դուրս է եկել 256,48 մ³ (ն. ս.) գազային խառնուրդ:

18. Որքան է ծծմբային գազի օքսիդացման ռեակցիայի ելքը (%):

19. Որքան է գոյացած ծծմբի(VI) օքսիդի զանգվածը (կգ):

20–21. Փակ անոթում տեղափորել են ծծմբի(IV) օքսիդի և թթվածնի հավասարամոլային խառնուրդ: Համապատասխան պայմաններում որոշ ժամանակ անց ստեղծվել է $2SO_2 + O_2 \rightleftharpoons 2SO_3$ հավասարակշռություն, իսկ ձնշումն անոթում նվազել է 20 %-ով:

20. Որքան է հավասարակշռային գազային խառնուրդում ծծմբի(VI) օքսիդի ծավալային բաժինը (%):

21. Որքան է հավասարակշռային գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

22–23. Ծծմբի և ածխածնի 68 գ զանգվածով խառնուրդը խիտ ծծմբական թթվի ավելցուկով մշակելիս անջատվել է 59 գ/մոլ միջին մոլային զանգվածով գազերի խառնուրդ:

22. Որքան է ծծմբի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

23. Որքան է ծծմբի(IV) օքսիդի մոլային բաժինը (%) գազերի ստացված խառնուրդում:

24–25. *Խառնել են պղնձի(II) սուլֆատի 20% զանգվածային բաժնով 400 գ և նատրիումի սուլֆիդի 20% զանգվածային բաժնով 234 գ լուծույթները:*

24. Որքան է գոյացած նստվածքի զանգվածը (գ):

25. Որքան է լուծույթում մնացած աղերի գումարային նյութաքանակը (մմոլ):

26–27. *Երկաթի(II) սուլֆիդի 528 գ նմուշը մշակել են ավելցուկով վերցրած աղաթթվով, իսկ անջատված գազն այրել են օդի ավելցուկում: Ստացված գազագոլորշային խառնուրդը կալիումի հիդրօքսիդի 1200 մլ լուծույթով ($\rho = 1,4$ գ/սմ³) անցկացնելիս ստացվել է միայն չեզոք աղի լուծույթ:*

26. Որքան է կալիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը (%) վերցրած լուծույթում:

27. Որքան է աղի զանգվածը (գ) վերջնական լուծույթում:

28–29. *20% չայրվող խառնուկներ պարունակող ծծմբի որոշակի զանգվածով նմուշն այրել են օդում, իսկ ստացված ծծմբային գազն անցկացրել են նատրիումի հիդրօքսիդի 16% զանգվածային բաժնով 2000 գ լուծույթով: Արդյունքում ստացվել է աղերի խառնուրդ, որում թթու աղի զանգվածը եղել է 416 գ:*

28. Որքան է ստացված չեզոք աղի զանգվածը (գ):

29. Որքան է ծծմբի նմուշի զանգվածը (գ):

30–31. *Խիտ ծծմբական թթվի հետ չփոխազդող խառնուկներ պարունակող $MgSO_3$ -ի և $CaSO_3$ -ի 398 գ զանգվածով խառնուրդը մշակել են խիտ ծծմբական թթվով: Արդյունքում անջատվել է 67,2 լ (ն. ս.) գազ, և ստացվել է 366,4 գ զանգվածով սուլֆատների խառնուրդ:*

30. Որքան է կալցիումի սուլֆիտի զանգվածը ելային խառնուրդում (գ):

31. Որքան է խիտ ծծմբական թթվի հետ չփոխազդող խառնուկների զանգվածային բաժինը (%) ելային խառնուրդում:

32–33. Ըստ ծավալի 10 % օգոն պարունակող 112 լ (ն. ս.) օգոնաթթվածնային խառնուրդն անցկացրել են ավելցուկով կալիումի յոդիդի ջրային լուծույթի միջով:

32. Որքան է ստացված հալոգենի զանգվածը (գ):

33. Որքան է լուծույթից դուրս եկող գազի ծավալը (լ, ն. ս.):

34–35. Կալիումի գերօքսիդ (KO₂) պարունակող խողովակի միջով անցկացրել են ածխածնի(IV) օքսիդի և արգոնի 100 լ հավասարամոլային խառնուրդ: Փոխարկումն ընթացել է 100 % ելքով:

34. Որքան է ստացված գազային խառնուրդի ծավալը:

35. Որքան է թթվածնի ծավալային բաժինը ստացված գազային խառնուրդում:

36–37. 25 % չայրվող խառնուկներ պարունակող 100 գ պիրիտը (FeS₂) այրել են բավարար քանակությամբ թթվածնում:

36. Որքան է այրման արդյունքում ստացված ծծմբային գազի ծավալը (լ, ն. ս.):

37. Որքան է այրման արդյունքում ստացված երկաթի օքսիդի զանգվածը (գ):

38–39. Ծծմբի և ածխածնի 12 գ խառնուրդն այրել են 560 լ (ն. ս.) օդում, որի ընթացքում ծախավել է թթվածնի 1/10 մասը:

38. Որքան է ծծմբի զանգվածային բաժինը (%) ելային խառնուրդում:

39. Որքան է ազոտի ծավալային բաժինը (%) ստացված գազային խառնուրդում:

40–41. 8,4 գ զանգվածով կալիումի հիդրօքսիդ պարունակող 140,4 գ լուծույթն ամբողջությամբ կլանել է 3,36 լ (ն. ս.) ծծմբային գազ:

40. Որքան է լուծույթում առաջացած աղի զանգվածը (գ):

41. Որքան է լուծույթում առաջացած աղի զանգվածային բաժինը (%):

42-44. Ծծմբաջրածնի և ածխածնի(II) օքսիդի որոշակի ծավալով խառնուրդի լրիվ այրման համար պահանջվել է այդ ծավալից հինգ անգամ մեծ ծավալով օդ (օդում $\varphi(O_2) = 20\%$, $\varphi(N_2) = 80\%$): Այրումից հետո ստացված չոր գազային խառնուրդն ավելաու ավելցուկ պարունակող ջրային լուծույթով անցկացնելիս 56 լ (ն. պ.) գազ չի կրանվել:

42. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) չոր գազային խառնուրդ է ստացվել:

43. Որքան է ածխածնի(II) օքսիդի ծավալային բաժինը (%) գազերի ելային խառնուրդում:

44. Ի՞նչ զանգվածով (գ) պինդ նյութ կգոյանա այրումից հետո ստացված չոր գազային խառնուրդի և ավելցուկով վերցրած ծծմբաջրածնի փոխազդեցությունից:

45-47. Ծծմբական թթվի 80% զանգվածային բաժնով 200 գ լուծույթ պատրաստելու համար անհրաժեշտ քանակությամբ 20% զանգվածային բաժնով օլեումը խառնել են ծծմբական թթվի 20% զանգվածային բաժնով լուծույթի հետ:

45. Որքան է ծախսված օլեումի զանգվածը (գ, տալ ամբողջ թվի ճշտությամբ):

46. Որքան է ստացված լուծույթի 61,25 գ զանգվածով նմուշը չեզոքացնելու համար պահանջվող կալիումի հիդրօքսիդի զանգվածը (գ):

47. Որքան է օլեումի 122,5 գ զանգվածով նմուշը չեզոքացնելու համար պահանջվող կալիումի հիդրօքսիդի 10% զանգվածային բաժնով լուծույթի զանգվածը (գ):

48-50. Երկաթի(II) սուլֆիդի և պիրիտի խառնուրդում երկաթի 5 ատոմին բաժին է ընկնում ծծմբի 9 ատոմ: Այդպիսի խառնուրդի 852 կգ նմուշը բուլել են օդի ավելցուկում, իսկ անջատված գազից համապատասխան փոխարկումների արդյունքում ստացել են 926,1 կգ ծծմբական թթու:

48. Որքան է երկաթի(II) սուլֆիդի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

49. Որքան է ծծմբական թթվի ստացման ռեակցիայի գումարային ելքը (%):

50. Որքան է խառնուրդի բովման ընթացքում ստացված երկաթի(III) օքսիդի զանգվածը (կգ):

51-53. 110 գ երկաթի(II) սուլֆիդն այրել են պահանջվածից կրկնակի մեծ ծավալով օդում (թթվածնի ծավալային բաժինն օդում ընդունել 20%):

51. Որքան է այրման արդյունքում ստացված պինդ մնացորդի զանգվածը (գ):

52. Որքան է այրման արդյունքում ստացված գազային խառնուրդի ծավալը (լ, ն. պ.):

53. Որքան է ստացված գազային խառնուրդում ազոտի ծավալը (լ, ն. պ.):

54–56. Ածխածնի(II) օքսիդի և մեթանի որոշակի ծավալով խառնուրդը, որի միջին մոլային զանգվածը 20,8 գ/մոլ է, այրել են ավելցուկով վերցրած օդում: Ստացված գազագոլորշային խառնուրդը ֆոսֆորի(V) օքսիդ պարունակող խողովակի միջով անցկացնելիս վերջինիս զանգվածն ավերացել է 67,5 գրամով:

54. Որքան է ածխածնի(II) օքսիդի ծավալային բաժինը (%) տրված խառնուրդում:

55. Որքան է ծախսված թթվածնի ծավալը (լ, ն. պ.):

56. Ինչ զանգվածով (գ) աղ կառաջանա, եթե տրված խառնուրդի այրման արգասիքներն անցկացվեն 37 գ կալցիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթի մեջ:

57–59. Յինկի և ծծմբի որոշակի զանգվածով խառնուրդն անօդ պայմաններում տաքացնելուց հետո ամբողջ պինդ զանգվածը մշակել են ավելցուկով վերցրած աղաթթվով: Ստացվել է 8,96 լ (ն. պ.) գազային խառնուրդ, որը 4 գ նատրիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթի միջով անցկացնելիս 6,72 լ (ն. պ.) գազ չի կրանվել:

57. Որքան է ծծմբաջրածնի ծավալային բաժինը (%) ստացված գազային խառնուրդում:

58. Որքան է մետաղի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

59. Որքան է վերջին լուծույթում ստացված աղի զանգվածը (մգ):

60–62. 650 գ երկաթի(III) քլորիդ պարունակող 2042 գ լուծույթի մեջ անցկացրել են ծծմբաջրածնի և քլորաջրածնի 112 լ (ն. պ.) խառնուրդ, որի խտությունն ըստ ջրածնի 18 է: Ռեակցիայի ավարտից հետո պղտորություն առաջացրած պարզ նյութը ֆիլտրումով հեռացրել են լուծույթից:

60. Որքան է ծծմբաջրածնի ծավալային բաժինը (%) գազային խառնուրդում:

61. Որքան է երկաթի(III) քլորիդի զանգվածը վերջնական լուծույթում (%):

62. Որքան է քլորաջրածնի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

2.2.2. Թթվածնի ենթախումբը: Թթվածին

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	18	22	25	43	50
2	9	23	75	44	30
3	8	24	48	45	142
4	49	25	600	46	56
5	320	26	40	47	1463
6	5080	27	948	48	20
7	52	28	252	49	70
8	224	29	240	50	600
9	34	30	48	51	100
10	20	31	20	52	469
11	5	32	127	53	392
12	3175	33	112	54	40
13	147	34	125	55	98
14	300	35	60	56	81
15	24	36	28	57	25
16	10	37	50	58	26
17	2	38	80	59	5600
18	55	39	80	60	20
19	88	40	18	61	325
20	50	41	12	62	10
21	60	42	70		

2.2.3. Ազոտ, ֆոսֆոր

1. Ի՞նչ զանգվածով (գ) ֆոսֆատ իոններ են առկա 31 գ կայցիումի ֆոսֆատում:
 2. Նատրիումի նիտրատի 42,5 գ կշռանքը շիկացնելիս և սկզբնական պայմանների բերելիս մնացել է 39,3 գ պինդ նյութ: Նատրիումի նիտրատի ի՞նչ մասն է (%) քայքայվել:
 3. Որքան է X նյութի մոլային զանգվածը (գ/մոլ) հետևյալ ուրվագրով փոխարկումների շղթայում՝ $N_2 \rightarrow NH_3 \rightarrow X \rightarrow NO_2 \rightarrow HNO_3$:
 4. Կալիումի երկհիդրոֆոսֆատի բյուրեղահիդրատում պարունակվում են հավասար թվով ջրածին և թթվածին տարրերի ատոմներ: Քանի մոլեկուլ բյուրեղաջուր է պարունակում բյուրեղահիդրատի մեկ մոլեկուլը:
 5. Որքան է օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարման գործակիցների գումարը փոխարկումների հետևյալ շղթայում՝ $P \rightarrow P_2O_5 \rightarrow K_3PO_4$:
 6. Ազոտի և ջրածնի խառնուրդը տաք կատալիզորդի վրայով անցկացնելիս ստացվել է 26,88 լ (ն. պ.) ամոնիակ, և մնացել է չփոխազդած 0,4 մոլ ազոտ և 0,2 մոլ ջրածին: Ելային խառնուրդում որքան էր գազերի ընդհանուր նյութաքանակը (մոլ):
 7. 78,4 գ օրթոֆոսֆորական թթու պարունակող 874 գ ջրային լուծույթին 62 գ կայցիումի ֆոսֆատ ավելացնելիս ստացվել է թափանցիկ նոր լուծույթ: Որքան է այդ լուծույթում գոյացած աղի զանգվածային բաժինը (%):
- 8–9. $R_3(PO_4)_2$ քանազան ունեցող 155 գ աղում թթվածնի ատոմներին բաժին է ընկնում 32 գ պրոտոն:
8. Ո՞րն է R մետաղի ատոմային համարը:
 9. Ի՞նչ զանգվածով (գ) օրթոֆոսֆորական թթու կստացվի նույն զանգվածով աղը ավելցուկով ծծմբական թթվի հետ փոխազդելիս:
- 10–11. Նատրիումի նիտրատ և ֆոսֆատ պարունակող 1640 գ լուծույթին ավելացրել են փոխազդեցության համար անհրաժեշտ քանակությամբ արծաթի նիտրատ պարունակող 1007,6 գ լուծույթ, որի արդյունքում անջատվել է 167,6 գ նստվածք: Նստվածքի հետազոտմից հետո նիտրատ իոնների զանգվածային բաժինը լուծույթում կազմել է 5 %:
10. Որքան է նատրիումի ֆոսֆատի զանգվածային բաժինը (%) ելային լուծույթում:
 11. Ի՞նչ զանգվածով (գ) նատրիումի նիտրատ էր առկա ելային լուծույթում:

12-13. Կազմվե՞ք (1 մոլ) $P \rightarrow P_2O_5 \rightarrow K_3PO_4$ փոխարկումներին համապատասխանող ռեակցիաների հավասարումները:

12. Որքան է օքսիդավերականգնման ռեակցիայի ընթացքում ծախսված օքսիդիչ նյութի ծավալը (լ, ն. պ.):

13. Որքան է չեզոքացման ռեակցիայի ընթացքում ծախսված 28 % զանգվածային բաժնով ավկալու լուծույթի զանգվածը (գ):

14-15. Ազոտական թթվի 40 % զանգվածային բաժնով 500 մլ լուծույթի ($\rho = 1,26$ գ/սմ³) 1/5 մասը չեզոքացրել են նատրիումի հիդրօքսիդով, իսկ մնացած մասին ջուր ավելացնելով՝ ստացել են 15 % զանգվածային բաժնով ազոտական թթվի նոր լուծույթ:

14. Որքան է ծախսված նատրիումի հիդրօքսիդի զանգվածը (գ):

15. Որքան է նոսրացման համար անհրաժեշտ ջրի զանգվածը (գ):

16-17. 25-ական մոլ քանակով ամոնիակի մի նմուշը լրիվ այրել են բավարար քանակով թթվածնում, իսկ մյուս նմուշը ենթարկել են կատալիտիկ օքսիդացման 60 % ելքով:

16. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին է մասնակցել երկու ռեակցիաներին:

17. Որքան է կատալիտիկ օքսիդացման ռեակցիայում ստացված գազի ծավալը (լ, ն. պ.):

18-19. Պարբերական համակարգի I B խմբի մետաղի(I) և ամոնիումի նիտրատների խառնուրդում ամոնիումի նիտրատի զանգվածային բաժինը 32 % է, իսկ ազոտ տարրի զանգվածային բաժինն այդ նույն խառնուրդում 16,8 % է:

18. Ո՞րն է մետաղի կարգաթիվը:

19. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին կանչատվի 106,25 գ մետաղի(I) նիտրատի ջերմային քայքայումից:

20-21. 212,5 գ նատրիումի նիտրատի ջերմային քայքայումից ստացվել է 192,5 գ պինդ մնացորդ:

20. Որքան է նատրիումի նիտրատի քայքայման աստիճանը (%):

21. Որքան է չքայքայված նատրիումի նիտրատի զանգվածը (գ):

22–24. 2 : 1 մուլային հարաբերությամբ լիթիումի և մագնեզիումի նիտրիդների խառնուրդը ավելցուկով վերցրած ջրով մշակելիս գոյացել է ջրում անլուծելի 435 գ նյութ: Հիդրոլիզի արդյունքում ստացված հիդրօքսիդի խառնուրդը մշակել են 1,2 Մ աղաթթվով:

22. Որքան է մշակման արդյունքում ստացված գազի ծավալը (լ ն. պ.):

23. Որքան է լիթիումի նիտրիդի զանգվածը (գ) սկզբնական խառնուրդում:

24. Ինչ ծավալով (լ) աղաթթու է ծախսվել:

25–27. 31 գ կայցիումի ֆոսֆատից 75 % էլքով ստացել են օրթոֆոսֆորական թթվի 73,5 % զանգվածային բաժնով լուծույթ: Վերջինս չեզոքացնելու համար ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի 8 % զանգվածային բաժնով 100 գ լուծույթ, որից հետո չոր նատրիումի հիդրօքսիդ՝ մինչև լրիվ չեզոքացում և ստացված լուծույթից լրիվ հեռացրել ֆոսֆատ իոնները:

25. Որքան է փոքր մուլային զանգվածով աղի զանգվածային բաժինը(%) լուծույթում, մինչև չոր նատրիումի հիդրօքսիդ ավելացնելը:

26. Ինչ զանգվածով (գ) չոր նատրիումի հիդրօքսիդ պետք է ավելացնել ստացված լուծույթը լրիվ չեզոքացնելու համար:

27. Ինչ զանգվածով (գ) 15,3% զանգվածային բաժնով արծաթի նիտրատի լուծույթ պետք է ավելացնել չեզոքացրած լուծույթին ֆոսֆատ իոնները լրիվ հեռացնելու համար:

28–30. Ըստ զանգվածի 80 % կայցիումի ֆոսֆատ պարունակող 387,5 գ ֆոսֆորիտից 100 % էլքով ստացած ֆոսֆորն օքսիդացրել են թթվածնի ավելցուկում: Օքսիդացման արգասիքը նախ լուծել են կալիումի հիդրօքսիդի 1,5 մոլ/լ կոնցենտրացիայով 2 լ լուծույթում, որից հետո ստացված լուծույթը գոլորշացրել են, պինդ մնացորդն առանձնացրել և չորացրել:

28. Որքան է ֆոսֆորի օքսիդացումից ստացված նյութի զանգվածը (գ):

29. Որքան է կալիումի հիդրօքսիդի հետ փոխազդելուց հետո ստացված պինդ մնացորդի զանգվածը (գ):

30. Ինչ ծավալով (լ) կալիումի հիդրօքսիդի նույն կոնցենտրացիայով լուծույթ կծախսվեր օքսիդացման արգասիքը լուծելուց հետո ստացված լուծույթը լրիվ չեզոքացնելիս:

31–33. Ազոտի և ամոնիակի 40 լ (ն. ս.) խառնուրդին 20 լ (ն. ս.) քլորաջրածին ավելացնելիս ստացվել է ըստ հելիումի 6,45 հարաբերական խտություն ունեցող գազերի նոր խառնուրդ:

31. Որքան է ազոտի ծավալային բաժինը (%) գազերի ելային խառնուրդում:

32. Ի՞նչ ծավալով (լ) օդ կպահանջվի գազերի ելային խառնուրդում պարունակվող ամոնիակի կատալիտիկ օքսիդացման համար:

33. Ի՞նչ զանգվածով (գ) երկաթ կստացվի ելային խառնուրդում պարունակվող ամոնիակով բավարար քանակությամբ երկաթի(II) օքսիդ վերականգնելիս:

34–36. Ազոտի և ամոնիակի 40 լ (ն. ս.) խառնուրդին 20 լ (ն. ս.) քլորաջրածին ավելացնելիս ստացվել է ըստ հելիումի 6,45 հարաբերական խտություն ունեցող գազերի նոր խառնուրդ:

34. Որքան է ամոնիակի ծավալային բաժինը (%) գազերի ելային խառնուրդում:

35. Որքան է ազոտի ծավալային բաժինը (%) գազերի ստացված խառնուրդում:

36. Ի՞նչ զանգվածով (գ) մետաղ կստացվի գազերի ելային խառնուրդով բավարար քանակությամբ երկաթի(III) օքսիդը վերականգնելիս:

37–39. Կայցիումի նիտրիդի և ֆոսֆիդի հավասարամոլային խառնուրդը ջրով հիդրոլիզելիս ստացվել են 44,8 լ (ն. ս.) գազերի խառնուրդ և լուծույթ: Գազերի խառնուրդն այրել են բավարար քանակով օդում, իսկ լուծույթը՝ չեզոքացրել 29,2% զանգվածային բաժնով աղաթթվով:

37. Ի՞նչ զանգվածով (գ) ելային խառնուրդ է ենթարկվել հիդրոլիզի:

38. Ի՞նչ ծավալով (լ, ն. ս.) օդ է ծախսվել ստացված գազային խառնուրդն այրելիս:

39. Ի՞նչ զանգվածով (գ) քլորաջրածնի 29,2% զանգվածային բաժնով աղաթթու է ծախսվել հիդրոլիզի արդյունքում ստացված լուծույթը չեզոքացնելիս:

40–41. Ըստ զանգվածի 77,5% կայցիումի ֆոսֆատ պարունակող հանքաքարի 100 գ զանգվածով նմուշը խառնել են ավելցուկով վերցրած ալազի ու կոքսի հետ և առանց օդի մուտքի տաքացրել էլեկտրական վառարանում: Ստացված պարզ նյութն օքսիդացրել են 78,75% զանգվածային բաժնով ազոտական թթվի 280 գ լուծույթով, իսկ անջատված գազն ամբողջությամբ հեռացվել է լուծույթից:

40. Որքան է օքսիդացման արդյունքում ստացված թթվի զանգվածը (գ):

41. Ինչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ կաահանջվի նոր ստացված թթուն չեզոքացնելու համար:

42. Ինչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ կաահանջվի ազոտական թթվով օքսիդացումից հետո ստացված լուծույթը չեզոքացնելու համար, եթե օքսիդացման ընթացքում անջատված գազն ամբողջությամբ հեռացվել է լուծույթից:

43–45. Նատրիումի և կալցիումի նիտրիդների խառնուրդում ազոտ տարրի ատոմների մոլային բաժինը 32,5 % է: Այդ խառնուրդի 25,175 գ զանգվածով նմուշն ավելցուկով աղաթթվի հետ փոխազդելիս ստացվել է քլորիդների լուծույթ, և անջատվել է գազ, որն ամբողջությամբ կլանվել է 31,85 գ զանգվածով օրթոֆոսֆորական թթու պարունակող ջրային լուծույթով:

43. Որքան է կալցիում տարրի զանգվածը (գ) նիտրիդների խառնուրդում:

44. Որքան է օրթոֆոսֆորական թթվի ստացված ամոնիումային աղի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

45. Որքան է ծախսված քլորաջրածնի նյութաքանակը (մմոլ):

46–48. Ամոնիումի երկհիդրոֆոսֆատի և հիդրոֆոսֆատի 319,375 գ խառնուրդում ֆոսֆոր և ազոտ տարրերի ատոմների թվերի հարաբերությունը 4 : 7 է: Խառնուրդը լուծել են ջրում և ավելացրել այնքան նատրիումի հիդրօքսիդ, որ լուծույթում գոյացել է միայն նատրիումի հիդրոֆոսֆատ:

46. Որքան է ամոնիումի երկհիդրոֆոսֆատի մոլային բաժինը(%) ելային խառնուրդում:

47. Որքան է ծախսված նատրիումի հիդրօքսիդի զանգվածը (գ):

48. Որքան է անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):


49–51. Պղնձի նիտրատի և կարբոնատի 2 : 1 մոլային հարաբերությամբ 125 գ զանգվածով խառնուրդը շիկացնելիս ստացվել են պինդ մնացորդ և գազերի խառնուրդ, որն անցկացրել են կալիումի հիդրօքսիդի 22,4 % զանգվածային բաժնով 440 գ լուծույթով:

49. Որքան է շիկացման արդյունքում ստացված պինդ մնացորդի զանգվածը (գ):

50. Որքան է փոքր մոլային զանգվածով աղի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

51. Ի՞նչ զանգվածով (գ) քլորաջրածնի 7,3% զանգվածային բաժնով աղաթթու կպահանջվի գազերի խառնուրդը կլանելուց հետո ստացված լուծույթի հետ փոխազդելու համար:

52–54. 14,2 գ զանգվածով ֆոսֆորի(V) օքսիդն ըստ փոխարկումների հետևյալ շղթայի փոխարկել են A նյութի, որը 0,8 մոլ/լ կոնցենտրացիայով ալկալու լուծույթի հետ փոխազդելիս վերածվել է կալիումի երկհիդրոֆոսֆատի.



52. Որքան է A նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

53. Ի՞նչ ծավալով (մլ) ալկալու լուծույթ է ծախսվել:

54. Ի՞նչ ծավալով (մլ) տրված կոնցենտրացիայով ալկալու լուծույթ կպահանջվի ստացված թթու աղը չեզոք աղի փոխարկելու համար:

55–57. Ամոնիումի կարբոնատի և հիդրոկարբոնատի 35 գ զանգվածով խառնուրդը լուծել են 165 գ ջրում և ավելացրել ավելցուկով նատրիումի հիդրօքսիդի 658,2 գ լուծույթ: Դրա հետևանքով անջատվել է 13,44 լ (ն. ս.) գազ:

55. Որքան է ամոնիումի կարբոնատի մոլային բաժինը (%) աղերի սկզբնական խառնուրդում:

56. Որքան է ստացված աղի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

57. Ի՞նչ զանգվածով (գ) աղ կառաջանա, եթե նշված գազն անցկացվի ծծմբական թթվի 1,2 մոլ/լ կոնցենտրացիայով 500 մլ ծավալով լուծույթի մեջ:

2.2.3. Ազոտ, ֆոսֆոր

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	19	20	50	39	750
2	40	21	14	40	49
3	30	22	224	41	60
4	2	23	175	42	100
5	11	24	25	43	12
6	3	25	10	44	115
7	15	26	10	45	975
8	20	27	500	46	25
9	98	28	142	47	200
10	4	29	310	48	98
11	68	30	2	49	60
12	28	31	40	50	20
13	600	32	150	51	380
14	32	33	90	52	142
15	840	34	60	53	250
16	840	35	80	54	500
17	336	36	60	55	50
18	47	37	165	56	5
19	7	38	308	57	69

2.2.4. Ածխածին, սիլիցիում

1. Որքան է էլեկտրոնային զույգերի թիվը CO և CO₂ մոլեկուլների էլեկտրոնային բանաձևերում:
2. Սիլիցիումի և մագնեզիումի փոշիների 150 գ զանգվածով խառնուրդը, որում մետաղի զանգվածային բաժինը 30% է, տաքացրել են հալանոթում (տիգել): Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի, եթե հալանոթում ստացված պինդ մնացորդը մշակեն ծծմբական թթվով:
3. Նատրիումի հիդրօքսիդի 25% զանգվածային բաժնով 160 գ լուծույթի մեջ անցկացրել են 11,2 լ (ն. պ.) ածխածնի(IV) օքսիդ: Ինչ զանգվածով (գ) աղ է գոյացել լուծույթում (հիդրոլիզն անտեսել):
4. 5,0 գ զանգվածով երկարժեք մետաղի կարբոնատի ջերմային քայքայումից ստացվել է 2,8 գ պինդ մնացորդ: Որքան է մետաղի ատոմում պրոտոնների թիվը:
5. Որքան է հետևյալ ուրվագրով՝ $\text{Ca}(\text{HCO}_3)_2 + 2\text{NaOH} \rightarrow \dots\dots\dots$, ռեակցիայի կրճատ իոնական հավասարման գործակիցների գումարը:
6. Ըստ զանգվածի 75% սիլիցիումի(IV) օքսիդ պարունակող քվարցային ավազի հետ ավելցուկով վերցրած ֆտորաջրածնական թթվի փոխազդեցության արդյունքում ստացվել է 5,6 լ (ն. պ.) գազ: Ինչ զանգվածով (գ) քվարցային ավազ է փոխազդել:
- 7-8. Բերթոլեյի աղի քայքայումից ստացված թթվածնում այրել են 12 գ ածխածին: Ավելցուկով կրաջրի մեջ ստացված գազերի խառնուրդն անցկացնելիս անջատվել է 20 գ նստվածք:
7. Որքան է Բերթոլեյի աղի զանգվածը (գ):
8. Որքան է ածխածնի այրումից ստացված գազերի խառնուրդում ածխածնի(II) օքսիդի ծավալային բաժինը (%):
- 9-10. Նատրիումի հիդրոկարբոնատի 14% զանգվածային բաժնով 250 մլ լուծույթը ($\rho = 1,2$ գ/մլ) եռացրել են մինչև գազի լրիվ անջատվելը, որի ընթացքում գոլորշացել է նաև 24 գ ջուր:
9. Որքան է ստացված նոր աղի զանգվածային բաժինը լուծույթում (%):
10. Որքան է կարբոնատ իոնները լուծույթից հեռացնելու համար պահանջվող կալցիումի քլորիդի 15% զանգվածային բաժնով լուծույթի ($\rho = 1,25$ գ/մլ) ծավալը (մլ):

11-12. Որոշակի զանգվածով երկաթի(III) օքսիդն ամբողջությամբ փոխազդել է ածխածնի(II) օքսիդի և մեթանի խառնուրդի հետ, որի խտությունն ըստ հելիումի 5,5 է: Դրա հետևանքով գոյացել են գազագոլորչային խառնուրդ և 560 գ զանգվածով երկաթ:

11. Ինչ զանգվածով (գ) վերականգնիչ գազերի խառնուրդ է փոխազդել երկաթի(III) օքսիդի հետ:

12. Որքան է ստացված գազագոլորչային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

13-14. 200 գ կալիումի հիդրոկարբոնատի շիկացումից գոյացած գազագոլորչային խառնուրդն անցկացրել են 80 գ նատրիումի հիդրօքսիդի 468 գ լուծույթի մեջ:

13. Որքան է գազագոլորչային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

14. Որքան է աղի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

15-16. Ածխածնի(II) և (IV) օքսիդների խառնուրդում թթվածնի ատոմների թիվը 1,2 անգամ մեծ է ածխածնի ատոմների թվից: Որոշակի ծավալով այդ գազերի խառնուրդն անցկացրել են կալիումի հիդրօքսիդի ջրային լուծույթի մեջ:

15. Ինչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդ կծախսվի 56 լ (ն. պ.) գազային խառնուրդում պարունակվող ածխածնի(IV) օքսիդը թթու աղի փոխարկելու համար:

16. Ինչ ծավալով (լ) գազ կստացվի տրված 20 լ գազային խառնուրդն ավելցուկով վերցրած շիկացած ածխի հետ փոխազդելիս:

17-19. Սիլիցիումի և մագնեզիումի փոշիների խառնուրդը տաքացրել են հալանոթում մինչև ռեակցիայի ավարտը, իսկ ստացված խառնուրդի վրա աղաթթու ավելացնելիս անջատվել է 17 գ/մոլ միջին մոլային զանգված ունեցող գազերի 8,96 լ (ն. պ.) խառնուրդ:

17. Որքան է սիլիցիումի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

18. Որքան է մագնեզիումի զանգվածային բաժինը (%) ելային խառնուրդում (%):

19. Որքան է սիլիցիում պարունակող գազային նյութի մոլային բաժինը (%) գազերի ստացված խառնուրդում:

20–22. Երկաթի(II) սուլֆիդի, կալիումի հիդրոկարբոնատի և կալիումի քլորիդի 63,2 գ խառնուրդը մշակել են ավելցուկով վերցրած 10 % զանգվածային բաժնով աղաթթվով ($\rho = 1,095$ գ/սմ³): Ստացված գազային խառնուրդը ծծմբի(IV) օքսիդի ջրային լուծույթի մեջ անցկացնելիս առաջացել է 7,2 գ պինդ նյութ, իսկ մնացած չոր գազը շիկացած կոքսի վրայով անցկացնելիս ծավալը մեծացել է 10,08 լիտրով (ն. ս.): Ածխածնի(IV) օքսիդի լուծելիությունը ջրում անտեսել:

20. Որքան է ելային խառնուրդում փոքր մոլային զանգվածով աղի զանգվածը (գ):

21. Ելային խառնուրդն աղաթթվով մշակելիս ստացված գազային խառնուրդում որքան է մեծ մոլային զանգվածով գազի ծավալային բաժինը (%):

22. Որքան է աղերի խառնուրդի հետ փոխազդած աղաթթվի ծավալը (սմ³):

23–25. 22,2 գ մագնեզիումի և 23,25 գ սիլիցիումի(IV) օքսիդի խառնուրդը շիկացրել են, պինդ զանգվածը՝ մշակել ավելցուկով վերցրած 18,25 % զանգվածային բաժնով աղաթթվով: Թթվում չլուծված մնացորդն առանձնացրել են, լվացել և լուծել ավելցուկով վերցրած կալիումի հիդրօքսիդի լուծույթում:

23. Որքան է ելային խառնուրդի շիկացման արդյունքում ստացված օքսիդի զանգվածը (գ):

24. Որքան է փոխազդած աղաթթվի զանգվածը (գ):

25. Որքան է կալիումի հիդրօքսիդի լուծույթի հետ փոխազդեցության ժամանակ անջատված գազի ծավալը (լ, ն. ս.):

26–28. Ազոտով լցված փակ անոթի զանգվածը 64 գ է, իսկ թթվածնով լցված նույն անոթի զանգվածը՝ 66 գ, իսկ ածխածնի(II) և (IV) օքսիդների A խառնուրդով լցված նույն անոթի զանգվածը՝ 70,4 գրան:

26. Որքան է ածխածնի(II) օքսիդի ծավալային բաժինը (%) A խառնուրդում:

27. Ի՞նչ զանգվածով (գ) պղնձի(II) օքսիդ կարելի է վերականգնել A խառնուրդով:

28. Ի՞նչ զանգվածով (գ) աղ կստացվի, եթե A խառնուրդն անցկացվի նատրիումի հիդրօքսիդի 0,5 մոլ/լ կոնցենտրացիայի 0,5 լ ծավալով լուծույթի մեջ:

29–31. Ածխածնի և ալյումինի խառնուրդի 121,5 գ զանգվածով կշռանքը շիկացրել են մինչև ռեակցիայի ավարտը: Ստացված պինդ մնացորդը լուծել են աղաթթվի ավելցուկում: Անջատվել է գազերի 12,5 գ/մոլ միջին մոլային զանգվածով խառնուրդ:

29. Որքան է ածխածնի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

30. Որքան է պարզ նյութի մոլային բաժինը (%) անջատված գազերի խառնուրդում:

31. Նվազագույնը ինչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդի 40 % զանգվածային բաժնով լուծույթ կպահանջվի ելային խառնուրդում եղած ալյումինի լրիվ լուծման համար:

32–34. Սիլիցիումի 7 գ կշռանքը շիկացրել են որոշակի զանգվածով մագնեզիումի հետ մինչև ռեակցիայի ավարտը: Ստացվածը ավելցուկով աղաթթվով մշակելիս գոյացել է 1 մոլ նյութաքանակով աղ, և անջատվել է գազերի խառնուրդ:

32. Որքան է մագնեզիումի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

33. Որքան է անջատված գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

34. Ի՞նչ ծավալով (լ, ն. ս.) օդ կպահանջվի անջատված գազային խառնուրդը լրիվ այրելու համար:

35–37. Սիլիցիումի, սիլիցիումի(IV) օքսիդի և մագնեզիումի խառնուրդի երեք միատեսակ նմուշներից առաջինը ավելցուկով աղաթթվով մշակելիս անջատվել է 67,2 լ (ն. ս.) գազ, երկրորդը ավելցուկով նատրիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթով մշակելիս անջատվել է 22,4 լ (ն. ս.) գազ: Երրորդ նմուշը նախ շիկացրել են մինչև հնարավոր ռեակցիաների ավարտը, ապա ստացված պինդ մնացորդը մշակել են ավելցուկով աղաթթվով:

35. Որքան է ծախսված նատրիումի հիդրօքսիդի զանգվածը (գ):

36. Որքան է երրորդ դեպքում անջատված գազի նյութաքանակը (մոլ), եթե շիկացումից հետո ստացված պինդ մնացորդը պարզ նյութեր չի պարունակում:

37. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):

38–40. Միացություններում +2 օքսիդացման աստիճան ցուցաբերող մետաղի և ստրոնցիումի կարբոնատների 62 գ զանգվածով խառնուրդը մինչև հաստատուն զանգված շիկացնելիս ստացվել են 40 գ պինդ մնացորդ և գազ, որն անցկացրել են 20 գ նատրիումի հիդրօքսիդ պարունակող 818 գ լուծույթով: 0,1 մոլ քանակով մետաղի կարբոնատում պարունակվում է 5 մոլ էլեկտրոն:

38. Ո՞րն է անհայտ մետաղի կարգաթիվը:

39. Որքան է ստրոնցիումի կարբոնատի մոլային բաժինը (%) խառնուրդում:

40. Որքան է լուծված նյութի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

2.2.4. Ածխածին, սիլիցիում

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	12	15	28	29	27
2	21	16	24	30	25
3	53	17	25	31	490
4	20	18	72	32	24
5	9	19	50	33	12
6	20	20	5	34	84
7	49	21	75	35	80
8	80	22	250	36	1
9	10	23	31	37	116
10	148	24	370	38	20
11	132	25	14	39	50
12	31	26	20	40	5
13	31	27	8		
14	20	28	21		

ԳԼՈՒԽ 3. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ

3.1. ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ, ՑԻԿԼՈՒԱԿԱՆՆԵՐ

1. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ածխաթթու գազ կառաջանա 1 մոլ ալկանի այրումից, եթե դրա գոլորշու խտությունն ըստ հելիումի 18 է:
2. Ինչ քանակով (մոլ) թթվածին է անհրաժեշտ մոլեկուլում 23 ատոմ պարունակող 500 գ ալկանն այրելու համար:
3. 1,12 լ գազային ալկանի այրումից գոյացած ածխածնի(IV) օքսիդի չեզոքացման համար պահանջվել է 5% զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի 80 գ լուծույթ: Որքան է ալկանի մոլեկուլում ատոմների գումարային թիվը:
4. Որքան թթվածին (մմոլ) է ծախսվել ցիկլոալկանն այրելիս, եթե գոյացել է 22 գ ածխածնի(IV) օքսիդ:
5. 2,00 դմ³ (ն. պ.) էթանի լրիվ այրման համար ծախսվել է 6,23 դմ³ օդոնացված թթվածին: Խառնուրդում եղած օդոնը այրման համար անհրաժեշտ թթվածնի ո՞ր մասն է (%) կազմում:
6. Պենտանի իզոմերներից մեկը համապատասխան պայմաններում բրոմացնելիս ստացվել է միայն մեկ միաբրոմածանցյալ: Որքան է այդ իզոմերի կառուցվածքային բանաձևում մեթիլ խմբերի թիվը:
7. C₆H₁₂ ընդհանուր բանաձևով ցիկլոալկանը ցիկլում ածխածնի չորս ատոմ պարունակող քանի՞ իզոմեր կարող է առաջացնել (տարածական իզոմերիան բացառել):
8. Մեթանի և սահմանային ածխաջրածնի հավասարամոլային խառնուրդի հարաբերական խտությունն ըստ ջրածնի 15 է: Ածխածնի քանի՞ ատոմ կա այդ ածխաջրածնի մեկ մոլեկուլում:
9. Ալկանի մոլեկուլում C–C կապերի թիվը 11-ով փոքր է C–H կապերի թվից: Այդ ալկանի բլրաբացումից ստացվում է միայն մեկ միաբլրածանցյալ: Գտե՛ք ալկանում մեթիլ խմբերի թիվը:
10. Երեք լիոր մեթանին ինչ ծավալով (լ) բութան պետք է խառնել, որպեսզի ստացված գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ) հավասարվի պրոպանի մոլային զանգվածին:

11. Որքան է աղի մոլային զանգվածն (գ/մոլ) ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.
 $C_nH_{2n+1}COONa \rightarrow C_nH_{2n+2} \rightarrow C_nH_{2n+1}Cl \rightarrow CH_3-CH_2-CH_2-CH_3$:

12–13. Անհրաժեշտ քանակով թթվածնում 36 գ 2,2–երկմեթիլպրոպանի այրման արգասիքներն անցկացրել են 12 % զանգվածային բաժնով կալիումի հիդրօքսիդի 3286 գ լուծույթի մեջ:

12. Որքան է այրման արգասիքների գումարային զանգվածը (գ):

13. Որքան է լուծույթում գոյացած աղի զանգվածային բաժինը (%):

14–15. Բութանի համաչափ և անհամաչափ կրեկինգի արգասիքներն անցկացրել են բրոմաջրի միջով, որի հետևանքով 11,2 մ³ գազ չի կլանվել:

14. Որքան է (կգ) բութանի սկզբնական զանգվածը:

15. Ինչ զանգվածով (կգ) ջրածնի հետ կփոխազդեն կրեկինգի արգասիքները:

16–17. Որոշակի ծավալով մեթանն այրելիս անջատվել է 4455 կՋ ջերմություն: Մեթանի, ածխաթթու գազի և ջրի գոյացման ջերմությունները կազմում են համապատասխանաբար 75 կՋ/մոլ, 394 կՋ/մոլ և 286 կՋ/մոլ:

16. Որքան է մեթանի այրման ջերմությունը (կՋ/մոլ):

17. Որքան է այրված մեթանի ծավալը (լ, ն. պ.):

18–19. Ալկանում ջրածնի զանգվածային բաժինը 16,67 % է:

18. Որքան է ալկանում ածխածնի ատոմների թիվը:

19. Որքան է այդ ալկանի բոլոր իզոմերների գումարային թիվը:

20–21. Սահմանային միաիմն կարբոնաթթվի 288 գ նատրիումական աղը նատրիումի հիդրօքսիդի հետ հալելիս 70 % ելքով անջատվել է 47,04 լ (ն. պ.) գազ:

20. Որքան է աղի նյութաքանակը (մոլ):

21. Որքան է անջատված գազի հարաբերական խտությունն ըստ ջրածնի:

22–23. 24,4 գ երկբրոմավականը տաքացրել են մետաղական ցինկի հետ և ստացել 6,72 գ 1,1,2-եռմերթիցիկլոպրոպան:

22. Որքան է երկբրոմավականի բոլոր այն իզոմերների թիվը, որոնք, ըստ նշված ռեակցիայի, կհանգեցնեն 1,1,2-եռմերթիցիկլոպրոպանի ստացմանը:

23. Որքան է ռեակցիայի ելքը (%):

24–25. Հունյոզիական շարքում միմյանց հաջորդող երկու ակաանների մեկական մոլեկուլներում ջրածնի ատոմների թիվը 19–ով մեծ է ածխածնի ատոմների թվից:

24. Չորրորդային ածխածնի ատոմ պարունակող քանի՞ իզոմեր ունի փոքր մոլային զանգվածով ականը:

25. Քանի՞ C–H կապ է առկա մեծ մոլային զանգվածով ականի մեկ մոլեկուլում:

26–27. Ածխաջրածնի 37,5 գ նմուշը լրիվ այրելիս գոյացել է 54 գ ջուր:

26. Որքան է ածխաջրածնի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

27. Որքան է գլխավոր շղթայում ածխածնի 6 ատոմ պարունակող ածխաջրածնի իզոմերների թիվը:

28–29. Ըստ հեղիումի 6,1 հարաբերական խտությանը երկու ակաաններից կազմված 4 : 1 մոլային հարաբերությամբ 11,2 լ գազային խառնուրդն այրել են, այրման արգասիքներն անցկացրել են 72,8 գ կալիումի հիդրօքսիդ պարունակող 541,4 գ լուծույթի մեջ:

28. Որքան է ածխածին տարրի զանգվածային բաժինը (%) փոքր մոլեկուլային զանգվածով ականում:

29. Որքան է ստացված փոքր մոլային զանգվածով աղի զանգվածային բաժինը (%) լուծույթում:

30–32. Մեթանի, էթանի և պրոպանի 134,4 լ (ն. ս.) խառնուրդի լրիվ այրման համար ծախսվել է 403,2 լ թթվածին:

30. Որքան է մեթանի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում, եթե էթանի և պրոպանի նյութաքանակների հարաբերությունը 2 : 1 է:

31. Որքան է սկզբնական խառնուրդի զանգվածը (գ):

32. Ի՞նչ զանգվածով (գ) պրոպեն կարելի է ստանալ տրված խառնուրդում պարունակվող պրոպանից:

33–35. Սահմանային ածխաջրածնի 18 գ նմուշը անհրաժեշտ քանակով օդում այրելիս ստացվել է 27 գ ջուր:

33. Որքան է այդ ածխաջրածնի իզոմերների թիվը:

34. Որքան է ծախսված օդի ծավալը (լ, ն. պ.):

35. Որքան է անջատված ածխաթթու գազը կլանելու համար անհրաժեշտ նատրիումի հիդրօքսիդի նվազագույն զանգվածը (գ):

36–38. Ածխածին տարրի զանգվածային բաժինը ալկանի և ալկենի հալասարանության գագային խառնուրդում 84,375 % է: Հայտնի է, որ 7,2 գ ալկանում պարունակվում է 0,5 մոլ ածխածնի ատոմ: Այդ գագային խառնուրդի նմուշի լրիվ այրման համար ծախսված թթվածնի ծավալը 7 անգամ մեծ է երային ածխաջրածինների գումարային ծավալից:

36. Որքան է ալկանի մեկ մոլեկուլում էլեկտրոնների թիվը:

37. Որքան է ալկենի մոլեկուլում բոլոր ատոմների թիվը:

38. Որքան է ալկենի հնարավոր բոլոր իզոմերներում մեթիլ խմբերի գումարային թիվը:

39–41. Պրոպանի և բութանի որոշակի ծավալով խառնուրդի լրիվ այրման համար պահանջվել է խառնուրդից 26,5 անգամ մեծ ծավալով օդ (օդում $\varphi(O_2) = 20\%$, $\varphi(N_2) = 80\%$): Այրումից հետո ստացված չոր գագային խառնուրդն ավելցուկով նատրիումի հիդրօքսիդ պարունակող ջրային լուծույթի միջով անցկացնելիս 148,4 մ³ (ն. պ.) գազ չի կլանվել:

39. Որքան է ելային խառնուրդի ծավալը (մ³, ն. պ.):

40. Որքան է պրոպանի նյութաքանակը (մոլ) ելային խառնուրդում:

41. Որքան է ստացված լուծույթում աղի նյութաքանակը (մոլ):

42–44. Երրորդային ածխածնի ատոմ պարունակող պենտանաթթվի իզոմերի նատրիումական աղի և ավելցուկով վերցրած նատրիումի հիդրօքսիդի միահալումից ստացվել է 5,6 լ (ն. պ.) ն–բութան:

42. Որքան է ելային աղի զանգվածը (գ):

43. Որքան է մեթիլ խմբերի թիվը ելային աղի մոլեկուլում:

44. Որքան է երրորդային ածխածնի ատոմ պարունակող իզոմեր պենտանաթթուների թիվը:

45-47. Մեթիլ- և էթիլբրոմիդների խառնուրդն անհրաժեշտ քանակով մետաղական նատրիումի հետ տաքացնելիս ստացվել է երեք ալկանների 11,8 մոլ նյութաքանակով խառնուրդ: Պարզվել է, որ խառնուրդում իրար հավասար են ինչպես մեծ և փոքր մոլային զանգված ունեցող ալկանների զանգվածները, այնպես էլ մեծ և միջին մոլային զանգված ունեցող ալկանների նյութաքանակները:

45. Որքան է մեծ մոլային զանգված ունեցող ալկանի զանգվածը (գ):

46. Որքան է ալկանների խառնուրդի զանգվածը (գ):

47. Որքան է էթիլբրոմիդի նյութաքանակը (մոլ) ելային խառնուրդում:

3.1. Սահմանային ածխաջրածիններ, ցիկլոալկաններ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	112	17	112	33	3
2	55	18	5	34	224
3	5	19	3	35	50
4	750	20	3	36	42
5	22	21	15	37	12
6	4	22	3	38	7
7	4	23	80	39	7
8	3	24	2	40	250
9	6	25	18	41	1000
10	6	26	100	42	31
11	96	27	2	43	2
12	164	28	75	44	2
13	10	29	5	45	174
14	29	30	50	46	480
15	1	31	152	47	9
16	891	32	42		

3.2. ՈՉ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ

1. Ի՞նչ զանգվածով (գ) նստվածք կանջատվի 56 լ (ն. պ.) ացետիլենն ավելցուկով վերցրած արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթի մեջ անցկացնելիս:
 2. 2-մեթիլպենտեն-2-ը փոխազդել է յոդաջրածնի, իսկ գոյացած հիմնական արգասիքը՝ նատրիումի հետ: Երկրորդային ածխածնի քանի՞ ատոմ է առկա վերջանյութի մոլեկուլում:
 3. sp^3 հիբրիդացված ածխածնի քանի՞ ատոմ է պարունակվում 1 մոլ ստիրոլի և 4 մոլ ջրածնի լրիվ փոխազդեցությունից գոյացած արգասիքի մեկ մոլեկուլում:
 4. Պրոպենը հիդրել են և ստացել զազային խառնուրդ, որի խտությունն ըստ ջրածնի 21,7 է: Որքան է պրոպենի փոխարկման աստիճանը (%):
 5. Նույն թվով ածխածնի ատոմներ պարունակող ալկանի և ալկենի հավասարամոլային խառնուրդի խտությունն ըստ ջրածնի 28,5 է: Որքան է σ -կապերի թիվն ալկենի մոլեկուլում:
 6. Ի՞նչ զանգվածով (կգ) իզոպրենային կաուչուկ կստացվի 87,5 կգ պենտենից, եթե հիդրումն ընթացել է 60% ելքով, իսկ մյուս փուլերը՝ քանակապես:
 7. Բրոմի և մոլեկուլում 50 էլեկտրոն պարունակող արենի հավասարամոլային խառնուրդը փոխազդել է լուսավորման պայմաններում: Որքան է գոյացած օրգանական արգասիքի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
 8. Որոշակի քանակով ալկենը բաժանել են երկու հավասար մասի: Մի մասը բրոմի հետ փոխազդելիս առաջացրել է 10,1 գ երկբրոմաձանցյալ, իսկ մյուս մասը յոդի հետ՝ 14,8 գ երկյոդաձանցյալ: Որքան է երկբրոմաձանցյալի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
 9. Որքան է ալկինի հարաբերական մոլեկուլային զանգվածը, եթե դրա մեկ մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը 5-ով մեծ է ածխածնի ատոմների թվից:
- 10-11. Պրոպենի, էթանի և մեթանի խառնուրդի հարաբերական խտությունն ըստ ջրածնի 16 է: Բրոմաջրով անցկացնելուց հետո այդ խառնուրդի հարաբերական խտությունն ըստ հելիումի դարձել է 6,335:*
10. Որքան է պրոպենի ծավալային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:
 11. Ի՞նչ զանգվածով (գ) երկբրոմաձանցյալ կստացվի 112 լ (ն. պ.) սկզբնական խառնուրդից:

12–13. 1500 °C ջերմաստիճանում 200 լ մեթանի ջերմային քայքայման հետևանքով ճնշումը փակ անոթում մեծացել է 1,4 անգամ:

12. Որքան է մեթանի փոխարկման աստիճանը (%):

13. Ինչ ծավալով (լ) քլորի հետ կարող է փոխազդել մեթանի ջերմային քայքայման անօրգանական արգասիքը:

14–15. 20 % խառնուկ պարունակող 1,2 կգ կալցիումի կարբիդի հիդրոլիզից ստացված ացետիլենը 80 % ելքով փոխարկել են բենզոլի:

14. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ացետիլեն է ստացվել:

15. Ինչ զանգվածով (գ) բենզոլ է ստացվել:

16–17. Էթիլենի և պրոպանի 8 լ խառնուրդին նորմալ պայմաններում ավելացրել են 8 լ ջրածին: Ստացված խառնուրդը տաք կատալիզատորի վրայով անցկացնելիս ծավալը կրճատվել է մինչև 10 լ:

16. Որքան է էթիլենի ծավալային բաժինը (%) 8 լ խառնուրդում:

17. Որքան է պրոպանի ծավալային բաժինը (%) ստացված գազային խառնուրդում:

18–19. Ածխաջրածնի 0,1 մոլն այրելիս անջատվել են 7,2 գ ջուր և 8,96 լ (ն. պ.) ածխաթթու գազ:

18. Որքան է ածխաջրածնի մոլեկուլում ատոմների գումարային թիվը:

19. Որքան է նույն բաղադրությունն ունեցող ցիկլոպրանի իզոմերների թիվը:

20–21. 10,5 գ պլենը օքսիդացրել են կալիումի պերմանգանատի լուծույթով և ստացել 15,2 գ դիոքս, որին անհրաժեշտ քանակով մետաղական նատրիում ավելացնելիս անջատվել է 4,48 լ (ն. պ.) գազ:

20. Որքան է դիոլի մոլեկուլում ատոմների գումարային թիվը:

21. Որքան է դիոլի ստացման ռեակցիայի ելքը (%):

22–23. *FeCl₃ կատալիզատորի առկայությամբ բենզոլի հոմոլոգը քլորացնելիս ստացվել է միայն մեկ միաքլորածանցյալ, որում քլորի զանգվածային բաժինը 21,068 % է:*

22. Որքան է ածխածնի ատոմների թիվը ածխաջրածնի մեկ մոլեկուլում:

23. Որքան է երկտեղակալված իզոմերի ճիշտ անվանման մեջ բենզոլային օղակում տեղակալիչների դիրքերը ցույց տվող թվերի գումարը:

24–25. *Արոմատիկ ածխաջրածնի այրումից ստացված գազագոլորչային խառնուրդում առկա նյութերի քանակը (մոլ) 1,25 անգամ մեծ է ծախսված թթվածնի քանակից:*

24. Որքան է ելային ածխաջրածնի մեկ մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը:

25. Որքան է տրված ածխաջրածնի քանաձևն ունեցող բոլոր իզոմեր արոմատիկ ածխաջրածինների գումարային թիվը:

26–27. *Բենզոլի մեկ մոլ նյութաքանակով նմուշը համապատասխան պայմաններում ենթարկել են պլիլացման ավելցուկով վերցրած պրոպենով:*

26. Երրորդային ածխածնի քանի՞ ատոմ է պարունակում ստացված ածխաջրածնի մեկ մոլեկուլը:

27. Որքան է ստացված ածխաջրածնի զանգվածը (գ), եթե ռեակցիայի ելքը 85 % է:

28–30. *Ցիկլոհեքսանից, ցիկլոհեքսենից և բենզոլից բաղկացած որոշակի զանգվածով խառնուրդը կարող է գունազրկել բրոմի 10 % զանգվածային բաժնով 2400 գ լուծույթը քառաքլորմեթանում: Այդ խառնուրդը դեհիդրման ենթարկելիս ստացվում են բենզոլ և այնքան ջրածին, որը կարող է քալարարել 204 գ 2–մեթիլքլորֆորհեն–1,3–ի լրիվ հիդրմանը: Ածխաջրածինների տրված խառնուրդի այրման համար պահանջվում է 907,2 լ թթվածին:*

28. Որքան է ցիկլոհեքսենի զանգվածը (գ):

29. Որքան է ցիկլոհեքսանի զանգվածը (գ):

30. Որքան է տրված խառնուրդի զանգվածը (գ):

31–33. Կալցիումի կարբիդի և մագնեզիումի սուլֆիտի որոշակի զանգվածով խառնուրդի նմուշը մշակել են անհրաժեշտ քանակությամբ 36,5 %-անոց աղաթթվով, որի ընթացքում ստացվել են ըստ հեղիումի 11,25 հարաբերական խտությամբ գազային խառնուրդ և լուծույթ, որի գոլորշացումից մնացել է 51,5 գ պինդ մնացորդ:

31. Որքան է կալցիումի կարբիդի և մագնեզիումի սուլֆիտի խառնուրդի զանգվածը (գ):

32. Որքան է ստացված գազային խառնուրդում ազոտիլենի ծավալային բաժինը (%):

33. Ինչ զանգվածով (գ) աղաթթու է ծախսվել պինդ նյութերի ելային խառնուրդը մշակելու համար:

34–36. 10 մոլ նյութաքանակով էթիլենը գտնվում է 10 լ տարողությամբ անոթում, որտեղ 0,02 մոլ/լ · վ արագությամբ ընթանում է պոլիմերացման ռեակցիա: 20 վրկ հետո ռեակցիան դադարեցրել են, պոլիմերն՝ առանձնացրել և կշռել, իսկ մնացած գազն անցկացրել են 1264 գ 25 % զանգվածային բաժնով կալիումի պերմանգանատի լուծույթի միջով:

34. Որքան է պոլիմերի զանգվածը (գ):

35. Որքան է կալիումի պերմանգանատի լուծույթի հետ փոխազդեցության արդյունքում ստացված օրգանական նյութի զանգվածը (գ):

36. Որքան է կալիումի պերմանգանատի լուծույթով չկլանված գազի քանակը (մոլ):

37–39. 34 գ դիենային ածխաջրածինը, որի գոլորշու խտությունը 67°C և $1,14678 \cdot 10^5$ Պա ճնշման պայմաններում 2,76 գ/լ է, այրել են թթվածնի ավելցուկում, ստացված գազը՝ անցկացրել 20 % զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի 600 գ լուծույթի միջով: Լուծույթը գոլորշացրել են, մնացորդը՝ ենթարկել ջերմային քայքայման մինչև հաստատուն զանգված ($R = 8,31$ Ջ/մոլ·Կ):

37. Որքան է ածխաջրածնի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

38. Որքան է սկզբնական ածխաջրածնի բանաձևն ունեցող բաց շղթայով ածխաջրածինների բոլոր իզոմերների թիվը (երկրաչափական իզոմերները բացառել):

39. Որքան է պինդ մնացորդի ջերմային քայքայումից հետո մնացած աղի գումարային զանգվածը (գ):

40–42. Գազային խառնուրդը, որը կազմված է էթենից, էթինից և 72 գ ալյումինի կարբիդի լրիվ հիդրոլիզից ստացված գազից, քանակապես փոխազդում է 6,4 % զանգվածային բաժնով 5 կգ բրոմաջրի հետ, իսկ նույն խառնուրդի այրման համար անհրաժեշտ թթվածնի քանակը 4,25 մոլով մեծ է այդ նույն խառնուրդի քանակից:

40. Որքան է ալյումինի կարբիդի հիդրոլիզից ստացված գազի զանգվածը (գ):

41. Որքան է էթենի զանգվածը (գ) սկզբնական խառնուրդում:

42. Որքան է էթինի զանգվածը (գ) սկզբնական խառնուրդում:

43–45. Տաքացման պայմաններում 1,2–երկբրոմալկանի և մետաղական մագնեզիումի փոխազդեցությունից ստաջացել է չհազեցած միացություն, որի զանգվածը 4,8095 անգամ փոքր է ելային 1,2–երկբրոմալկանի զանգվածից:

43. Որքան է երկբրոմալկանի մոլային զանգվածը (գ/մոլ):

44. Որքան է երկբրոմալկանի բոլոր իզոմերների թիվը:

45. Որքան է ստացված չհազեցած միացության իզոմեր ցիկլոպլանում sp^3 հիբրիդային օրբիտալների գումարային թիվը:

46–48. Ածխածնի և կալցիումի 1 : 2 մոլային հարաբերությամբ խառնուրդը տաքացրել են էլեկտրական վառարանում և ստացված պինդ մնացորդը՝ մշակել ջրով: Գոյացած գազային խառնուրդն անցկացրել են տաք կատալիզատորի վրայով և ստացել նոր գազային խառնուրդ:

46. Որքան է ջրով մշակելուց հետո ստացված գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

47. Որքան է կատալիզատորի վրայով անցկացնելուց հետո ստացված գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

48. Որքան է պրոտոնների նյութաքանակը (մոլ) ածխածնի և կալցիումի ելային խառնուրդի 184 գ նմուշում:

3.2. Ոչ սահմանային ածխաջրածիններ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	600	17	20	33	100
2	4	18	12	34	112
3	8	19	2	35	186
4	70	20	13	36	3
5	11	21	80	37	68
6	51	22	10	38	9
7	171	23	5	39	159
8	202	24	21	40	24
9	96	25	8	41	28
10	40	26	1	42	13
11	404	27	102	43	202
12	40	28	123	44	4
13	120	29	84	45	12
14	336	30	402	46	8
15	312	31	42	47	16
16	75	32	50	48	92

3.3. ՍՊԻՐՏՆԵՐ ԵՎ ՖԵՆՈԼՆԵՐ

1. Որքան է A օրգանական միացության հարաբերական մոլեկուլային զանգվածն ըստ հետևյալ ուրվագրի. $C_6H_5ONa + CO_2 + H_2O \rightarrow A + B$:
2. Հազեցած միատոմ սպիրտի միջմոլեկուլային դեհիդրատացումից գոյացել է 7,4 գ եթեր, իսկ նույն քանակով սպիրտի ներմոլեկուլային դեհիդրատացումից՝ ավելն, որը կարող է փոխազդել 4,48 լ (ն. պ.) քլորի հետ: Որքան է սպիրտի մոլային զանգվածը (գ/մոլ):
3. Սահմանային միատոմ երկու սպիրտների 1 : 1 մոլային հարաբերությամբ խառնուրդը ենթարկել են միջմոլեկուլային դեհիդրատացման և ստացել նույն դասին պատկանող երեք նյութերի հավասարամոլային 18 գ խառնուրդ և 0,3 մոլ ջուր: Որքան է փոքր մոլային զանգվածով սպիրտի մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը:
4. Նատրիումի ֆենոլատ պարունակող 58 գ լուծույթի մեջ անցկացրել են ավելցուկով ածխածնի(IV) օքսիդ: Ջրի հեռացումից հետո մնացած չոր մնացորդը մշակել են ավելցուկով աղաթթվով, որի արդյունքում անջատվել է 224 սմ³ (ն. պ.) գազ: Որքան է նատրիումի ֆենոլատի զանգվածային բաժինը (%) ելային լուծույթում:
5. Սպիրտի 40 % զանգվածային բաժնով լուծույթում ջրի և սպիրտի մոլեկուլների թվերի հարաբերությունը 8 : 3 է: Որքան է սպիրտի մոլային զանգվածը (գ/մոլ):
6. Սահմանային միատոմ սպիրտը ենթարկել են ներմոլեկուլային դեհիդրատացման: Ստացված արգասիքը մշակել են ավելցուկով բրոմաջրածնով և 75% ելքով ստացել 65,4 գ բրոմալկան: Նույն քանակով սպիրտի և անհրաժեշտ քանակով նատրիումի փոխազդեցության արդյունքում անջատվել է 8,96 լ (ն. պ.) գազ: Որքան է սպիրտի մոլեկուլում ատոմների գումարային թիվը:
7. Որքան է սահմանային միատոմ իզոմեր սպիրտների թիվը, եթե ածխածին տարրի զանգվածային բաժինը դրա մոլեկուլում 60 % է:
8. Որքան է սահմանային միատոմ իզոմեր երկրորդային սպիրտների թիվը, եթե թթվածին տարրի զանգվածային բաժինը սպիրտի մոլեկուլում 18,18 % է:
9. Սահմանային միատոմ սպիրտում որքան է ատոմների ընդհանուր թիվը, եթե դրա այրման համար պահանջվող թթվածնի քանակը 4,5 անգամ մեծ է ելային սպիրտի քանակից:
10. Որոշէ՞ք երկատոմ իզոմեր սպիրտների թիվը, եթե դրա 15,2 գ նմուշը մետաղական նատրիումի հետ փոխազդելիս անջատվել է 4,48 լ (ն. պ.) գազ:

11-12. Էթանոլի և գլիցերինի հավասարամույային խառնուրդի և անհրաժեշտ քանակով մետաղական նատրիումի փոխազդեցությունից անջատված ջրածինը բավարարել է ըստ ծավալի 80 % էթեն պարունակող էթենի և բութադիեն-1,3-ի 280 լ (ն. պ.) խառնուրդը լրիվ հիդրելու համար:

11. Որքան է էթանոլի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

12. Որքան է խառնուրդում պարունակվող գլիցերինից համապատասխան պայմաններում 40 % ելքով ստացվող եռնիտրոգլիցերինի զանգվածը (գ):

13-14. Որոշակի զանգվածով էթանոլը համապատասխան պայմաններում ամբողջովին ենթարկվել է ներմուլեկուլային և միջմուլեկուլային դեհիդրատացման: Անջատված գազը կարող է գունազրկել բրոմի 10 % զանգվածային բաժնով 6400 գ լուծույթը բուսալորածիսածնում, իսկ խառնուրդում գոյացած ջուրը կարող է փոխազդել 276 գ մետաղական նատրիումի հետ:

13. Որքան է եղել սպիրտի սկզբնական զանգվածը (գ):

14. Սպիրտի ո՞ր մասն է (%) ենթարկվել միջմուլեկուլային դեհիդրատացման:

15-16. Սահմանային միատոմ սպիրտի այրման համար պահանջվող օդի ծավալը 30 անգամ մեծ է միատոմ սպիրտի գոլորշու ծավալից:

15. Ի՞նչ թվով ածխածնի ատոմներ կան սպիրտի մուլեկուլում:

16. Որքան է իզոմեր առաջնային սպիրտների թիվը:

17-18. Էթանոլի և պրոպանոլի որոշակի զանգվածով խառնուրդը փոխազդել է նատրիումի հիդրօքսիդի 4 մոլ/լ կոնցենտրացիայով 200 մլ լուծույթի հետ, իսկ խառնուրդի նույն զանգվածով մեկ այլ նմուշ մետաղական նատրիումի հետ փոխազդելիս անջատվել է 10,08 լ (ն. պ.) գազ:

17. Որքա՞ն է երկու փորձերում ծախսված սպիրտների խառնուրդի զանգվածը(գ):

18. Որքան է էթանոլի մոլային բաժինը (%) սպիրտների խառնուրդում:

19-20. Միատոմ սպիրտի դեհիդրատացման արդյունքում ստացվել է 14 գ ալկեն, որն անմնացորդ փոխազդել է 40 գ բրոմի հետ:

19. Որքան է սպիրտի մուլեկուլում ածխածնի ատոմների թիվը:

20. Որքան է բոլոր իզոմեր սպիրտների մոլեկուլներում պարունակվող մեթիլ խմբերի գումարային թիվը:

21–22. Սահմանային միատոմ սպիրտը օքսիդացրել են մինչև կարբոնաթթու, որի 18 գ նմուշի չեզոքացման համար ծախսվել է նատրիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով 50 մլ լուծույթ ($\rho = 1,2$ գ/սմ³):

21. Որքան է թթվի մոլային զանգվածը (գ/մոլ):

22. Որքան է սպիրտի մոլեկուլում ատոմների ընդհանուր թիվը:

23–24. Սնդիկի(II) աղի թթվեցրած լուծույթով 122,5 լ (ն. ս.) էթին անցկացնելիս ստացվել է օրգանական միացություն, որն այնուհետև վերականգնել են ջրածնով: Երկու ռեակցիաներն էլ ընթացել են 80 % ելքով:

23. Որքան է միջանկյալ օրգանական միացության նյութաքանակը (մմոլ):

24. Որքան է վերականգնման արդյունքում ստացված վերջնական նյութի զանգվածը (գ):

25–26. Գլիցերինի և էթանոլի որոշակի զանգվածով խառնուրդը, որում գլիցերինի մոլային բաժինը 1/3 է, քաղաքար քանակով մետաղական նատրիումի հետ փոխազդելիս անջատվել է 14 լ (ն. ս.) ջրածին:

25. Որքան է խառնուրդի զանգվածը (գ):

26. Որքան է էթանոլի զանգվածային բաժինը (%) խառնուրդում:

27–29. Մեթանոլի, էթանոլի և ֆենոլի որոշակի զանգվածով խառնուրդը մշակել են կալիումի հիդրօքսիդի 2 մոլ/լ կոնցենտրացիայով 600 մլ լուծույթով: Պարզվել է, որ փոխազդել է ալկալու 5/12–րդ մասը: Նույն զանգվածով ելային խառնուրդի մեկ այլ նմուշ մետաղական կալիումով մշակելիս անջատվել է 13,44 լ (ն. ս.) գազ: Իսկ նմանատիպ երրորդ նմուշի այրման համար պահանջվել է 593,6 լ (ն. ս.) օդ:

27. Որքան է ֆենոլի զանգվածը (գ) խառնուրդում:

28. Որքան է էթանոլի զանգվածը (գ) խառնուրդում:

29. Որքան է ծախսված կալիումի նյութաքանակը (մմոլ):

30–32. Մեթանոլի և էթանոլի գոլորշիների 8,5 գ խառնուրդը տաքացման պայմաններում 32 գ պղնձի(II) օքսիդ պարունակող խողովակով անցկացնելիս վերջինիս զանգվածը պակասել է 3,2 գրամով: Խողովակում մնացած նյութերը լրիվ լուծելու համար օգտագործել են խիտ ծծմբական թթվի 73,5 % զանգվածային բաժնով լուծույթ ($\rho = 1,6 \text{ գ/սմ}^3$), իսկ օրգանական նյութերի խառնուրդն օքսիդացրել են անհրաժեշտ քանակությամբ արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով:

30. Որքան է մեթանոլի մոլային բաժինը (%) սպիրտների ելային խառնուրդում:

31. Ինչ ծավալով (մլ) ծծմբական թթվի լուծույթ է պահանջվել խողովակում մնացած նյութերը լրիվ լուծելու համար:

32. Ինչ զանգվածով (գ) մետաղական արծաթ է ստացվել:

33–35. Սահմանային միատոմ սպիրտի և ֆենոլի 316 գ խառնուրդը բաժանել են երկու հավասար մասի: Խառնուրդի մի կեսի և ավելցուկով վերցրած մետաղական նատրիումի փոխազդեցությունից անջատվել է 22,4 լ (ն. պ.) գազ: Խառնուրդի մյուս կեսը չեզոքացնելու համար պահանջվել է կալիումի հիդրօքսիդի 2 մոլ/լ կոնցենտրացիանունեցող 250 մլ ջրային լուծույթ:

33. Որքան է ֆենոլի մոլային բաժինը (%) խառնուրդում:

34. Որքան է ելային խառնուրդում պարունակվող սահմանային միատոմ սպիրտի զանգվածը (գ):

35. Որքան է նույն բաղադրությամբ առաջնային միատոմ սպիրտների թիվը:

36–38. Երկու հազեցած միատոմ սպիրտների 188 գ խառնուրդը փոխազդել է 400 գ պղնձի(II) օքսիդի հետ: Ստացված պղեհիդրների խառնուրդը ավելցուկով արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով մշակելիս անջատվել է 1728 գ արծաթ:

36. Որքան է փոքր հարաբերական մոլեկուլային զանգվածով սպիրտի զանգվածը (գ) խառնուրդում:

37. Որքան է մեծ հարաբերական մոլեկուլային զանգվածով սպիրտի նյութաքանակը (մոլ) խառնուրդում:

38. Որքան է մեծ հարաբերական մոլեկուլային զանգվածով սպիրտի մոլեկուլում կովալենտային կապերի թիվը:

39–41. Օրգանական նյութի դեհիդրատացումից ստացվել է ալկեն, որն անմնացորդ փոխազդել է 36 մոլ պրոտոն պարունակող բրոմաջրածնի հետ, իսկ նույն քանակով ելանյութի այրումից ստացվել է 89,6 լ (ն. պ.) ածխածնի(IV) օքսիդ:

39. Որքան է ելանյութի մեկ մոլեկուլում ատոմների ընդհանուր թիվը:

40. Որքան է ելանյութի նույն դասին պատկանող իզոմերների թիվը:

41. Ինչ ծավալով (լ, ն. պ.) օդ է անհրաժեշտ ելանյութի այրման համար:

42–44. Ֆենոլի, էթանոլի և քացախաթթվի 80 գ խառնուրդը փոխազդեցության համար անհրաժեշտ քանակությամբ բրոմ պարունակող 512,4 գ բրոմաջրով մշակելիս անջատվել է 132,4 գ նստվածք, որի հեռացումից հետո մնացած լուծույթի լրիվ չեզոքացման համար պահանջվել է կալիումի հիդրօքսիդի 10 % զանգվածային բաժնով 896 գ լուծույթ:

42. Որքան է էթանոլի զանգվածային բաժինը (%) նստվածքի հեռացումից հետո մնացած թթվային լուծույթում:

43. Որքան է ելային խառնուրդում ֆենոլի զանգվածային բաժինը (%):

44. Որքան է ելային խառնուրդում քացախաթթվի զանգվածը (գ):

3.3. Սպիրտներ և ֆենոլներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	94	16	2	31	50
2	46	17	70	32	54
3	4	18	20	33	25
4	2	19	4	34	222
5	32	20	8	35	2
6	9	21	60	36	96
7	2	22	9	37	2
8	3	23	4375	38	8
9	12	24	161	39	15
10	2	25	46	40	4
11	345	26	50	41	672
12	681	27	47	42	4
13	920	28	23	43	47
14	80	29	1200	44	24
15	4	30	25		

3.4. ԱԼԴԵՀԻԴՆԵՐ, ԹԹՈՒՆԵՐ

1. Ալդեհիդի վերականգնումից գոյանում է 2,2-երկմեթիլբութանոլ-1: Որքան է ալդեհիդի մեկ մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը:
2. Քանի մեթիլենային խումբ է առկա 2-քլորպրոպանալ, 4-մեթիլպենտանալ, 2,3-երկմեթիլբութանալ, 3-հիդրօքսի-4-մեթիլհեքսանալ նյութերի մեկական մոլեկուլներում:
3. Որքան է A և B նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարն ըստ հետևյալ ուրվագրի.



4. Սահմանային ալդեհիդի 0,9 գ նմուշի այրումից գոյացել է ածխաթթու գազ, որն ամբողջությամբ կլանելու համար պահանջվել է նատրիումի հիդրօքսիդի 20% զանգվածային բաժնով 16 մլ լուծույթ ($\rho = 1,25$ գ/մլ): Որքան է նույն բաղադրությամբ իզոմեր ալդեհիդների թիվը:
5. Ֆենոլի, քացախաթթվի և երկէթիլթերի 16 գ խառնուրդը նատրիումով մշակելիս անջատվել է 492,8 մլ (ն. պ.) գազ: Նույն զանգվածով խառնուրդը բրոմաջրով մշակելիս գոյացել է 10,592 գ նստվածք: Որքան է քացախաթթվի զանգվածը (մգ) խառնուրդում:
6. Ինչ թվով ածխածնի ատոմներ են առկա $\text{C}_n\text{H}_{2n}\text{O}$ բաղադրությամբ ալդեհիդի մոլեկուլում, եթե դրանում ածխածնի sp^3 և sp^2 հիբրիդային օրբիտալների թվային հարաբերությունը 4 : 1 է:
7. Ինչ միջին մոլային զանգվածով (գ/մոլ) գազային խառնուրդ կստացվի քացախաթթվի և կարագաթթվի նատրիումական աղերի 1 : 1 մոլային հարաբերությամբ խառնուրդն ավելցուկով չոր նատրիումի հիդրօքսիդի հետ շիկացնելիս:
8. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ացետիլեն պետք է անցկացնել սնդիկի(II) աղեր պարունակող թթվեցրած ջրային լուծույթով 88 գ ացետալդեհիդ ստանալու համար, եթե հիդրատացման ռեակցիայի ելքը 80 % է:
9. Որքան է $\text{C}_n\text{H}_{2n}\text{O}$ բաղադրությամբ ալդեհիդի մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը, եթե այդ նյութի գոլորշու հարաբերական խտությունն ըստ ջրածնի 29 է:
10. $\text{C}_n\text{H}_{2n}\text{O}$ բաղադրությամբ 11,6 գ ալդեհիդում պարունակվում է 3,2 գ թթվածին: Ջրածնի քանի ատոմ է պարունակվում ալդեհիդի մեկ մոլեկուլում:
11. Ինչ ծավալով (մլ, ն. պ.) գազ կանջատվի 5% զանգվածային բաժնով քացախաթթվի 90 գ ջրային լուծույթի և ավելցուկով վերցրած սոդայի փոխազդեցությունից:

12-13. Տրված է 1 : 2 մոլային հարաբերությամբ էթանաթթվի և պրոպանաթթվի որոշակի զանգվածով խառնուրդ: Վերջինիս չեզոքացման համար պահանջվել է նատրիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով 1200 գ լուծույթ:

12. Որքան է թթուների խառնուրդի զանգվածը (գ):

13. Որքան է լուծույթում ստացված փոքր հարաբերական մոլեկուլային զանգվածով աղի զանգվածը (գ):

14-15. Մրջնաթթվի և կարագաթթվի խառնուրդն արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով մշակելիս անջատվել է 4,32 գ մետաղ: Նույն զանգվածով նմուշը նատրիումի կարբոնատով մշակելիս անջատվել է 0,336 լ (ն. ս.) գազ:

14. Քանի անգամ է մրջնաթթվի նյութաքանակը մեծ կարագաթթվի նյութաքանակից:

15. Որքան է ելային խառնուրդի հետ փոխազդելու համար անհրաժեշտ կալիումի հիդրօքսիդի նյութաքանակը (մմոլ):

16-17. Քացախաթթվի 82 % զանգվածային բաժնով 500 գ լուծույթին ավելացրել են որոշակի զանգվածով քացախաթթվական անհիդրիդ և ստացել անջուր քացախաթթու:

16. Որքան է ավելացված քացախաթթվական անհիդրիդի նյութաքանակը (մոլ):

17. Որքան է անջուր քացախաթթվի զանգվածը (գ):

18-19. Մրջնալիզեիդի և քացախալիզեիդի խառնուրդն արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով մշակելիս անջատվել է 4,48 լ (ն. ս.) գազ: Նույն զանգվածով ելային խառնուրդը լրիվ հիդրելու համար պահանջվել է 8,96 լ (ն. ս.) ջրածին:

18. Որքան է մրջնալիզեիդի մոլային բաժինը ելային խառնուրդում (%):

19. Որքան է ալիզեիդների ելային խառնուրդի օքսիդացումից ստացված քացախաթթվի զանգվածը (գ):

20-21. Մրջնաթթվի և պրոպիոնաթթվի խառնուրդն արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով մշակելիս անջատվել է 10,8 գ նստվածք: Ելային խառնուրդի նույն զանգվածով մեկ այլ նմուշը քալիարար քանակով կալիումի հիդրոկարբոնատով մշակելիս անջատվել է 2,24 լ (ն. ս.) գազ:

20. Որքան է թթուների ելային խառնուրդի զանգվածը (գ):

21. Որքան է ծախսված կալիումի հիդրոկարբոնատի զանգվածը (գ):

22–23. Սահմանային պղեկիդի 8,6 գ նմուշի և անհրաժեշտ քանակությամբ պղնձի(II) հիդրօքսիդի փոխազդեցությունից ստացվել է 10,2 գ միահիմն կարբոնատ:

22. Որքան է թթվի մոլեկուլում ատոմների գումարային թիվը:

23. Որքան է այդ բանաձևն ունեցող բոլոր իզոմեր թթուների թիվը:

24–25. Հազեցած միահիմն կարբոնատի նմուշի այրումից ստացված ածխաթթու գազի ծավալը 4 անգամ մեծ է թթվի նույն զանգվածով մեկ այլ նմուշի և նատրիումի հիդրոկարբոնատի փոխազդեցությունից անջատված գազի ծավալից:

24. Որքան է ածխածնի ատոմների թիվը կարբոնատի մոլեկուլում:

25. Որքան է կարբոնատի բանաձևն ունեցող բոլոր իզոմերային էսթերների թիվը:

26–27. 14,8 գ էսթերի և ավելցուկով վերցրած NaOH–ի փոխազդեցության արդյունքում 80 % էլքով ստացվել են 10,88 գ նատրիումի ֆորմիատ և սահմանային միատոմ սպիրտ:

26. Որքան է ստացված սպիրտի մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը:


27. Որքան է էսթերի բանաձևն ունեցող բոլոր իզոմերների թիվը (միջդասայինը ներառյալ):

28–29. Հազեցած միահիմն կարբոնատի կալիումական աղի և ավելցուկով վերցրած կալիումի հիդրօքսիդի 203 գ խառնուրդը միահալել են: Ստացված պինդ մնացորդին ավելացրել են 120 գ սիլիցիումի(IV) օքսիդ և կրկին միահալել, որի հետևանքով անջատվել է 11,2 լ (ն. ս.) գազ: Պինդ զանգվածը ջրում լուծելիս մնացել է 30 գ չլուծվող նյութ:

28. Որքան է կարբոնատի կալիումական աղի մոլային զանգվածը (գ/մոլ):

29. Որքան է առաջին ռեակցիայի ժամանակ անջատված օրգանական նյութի զանգվածը (գ):

30–31. Ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



30. Որքան է A նյութի մոլային զանգվածը (գ/մոլ):

31. Որքան է B նյութի մեկ մոլեկուլում π-կապերի թիվը:

32–33. 60 գ քացախաթթու պարունակող 149 գ ջրային լուծույթին ավելացրել են որոշակի քանակով քացախաթթվի անհիդրիդ, որի արդյունքում ստաջացել է քացախաթթվի 60 % զանգվածային բաժնով լուծույթ:

32. Որքան է ավելացրած քացախաթթվի անհիդրիդի նյութաքանակը (մմոլ):

33. Որքան է ստացված լուծույթի զանգվածը (գ):

34–36. Քացախալրեհիդի և քացախաթթվի 520 գ խառնուրդում ստկա քացախաթթվի այրման համար պահանջվում է 20 %-ով ավելի քիչ թթվածին, քան քացախալրեհիդի համար:

34. Որքան է քացախալրեհիդի նյութաքանակը (մոլ) տրված խառնուրդում:

35. Ինչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա խառնուրդի և արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթի փոխազդեցությունից:

36. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի ելային խառնուրդի և մագնեզիումի փոխազդեցությունից:

37–39. Սահանային միահիմն կարբոնաթթվի և ֆենոլի 356 գ խառնուրդը բաժանել են երկու հավասար մասի: Խառնուրդի մի կեսի և ավելցուկով վերցրած նատրիումի հիդրոկարբոնատի փոխազդեցությունից անջատվել է 11,2 լ (ն. պ.) գազ: Խառնուրդի մյուս կեսի և մետաղական նատրիումի փոխազդեցությունից անջատվել է 22,4 լ (ն. պ.) գազ:

37. Որքան է կարբոնաթթվի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

38. Որքան է ֆենոլի մոլային բաժինը (%) խառնուրդում:

39. Ինչ զանգվածով (գ) էսթեր կստացվի ելային խառնուրդում պարունակվող կարբոնաթթվի և էթանոլի փոխազդեցությունից:

40–42. 118 գ/մոլ մոլային զանգվածով հագեցած կարբոնաթթվի 5,9 գ նմուշի և 2,3 գ պկալիական մետաղի փոխազդեցության հետևանքով անջատվել է 1,12 լ (ն. պ.) ջրածին:

40. Որքան է թթվի մոլեկուլում ատոմների գումարային թիվը:

41. Որքան է թթվի բանաձև ունեցող և մետաղական նատրիումի հետ չփոխազդող իզոմերային նյութերի թիվը:

42. Որքան է մետաղի կարգաթիվը:

43–45. *Մեթանալի և մեթանաթթվի հալստարամույսյին խառնուրդը մշակել են արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով: Առաջացել է նստվածք, և անջատվել է 22,4 լ (ն. ս.) գազ: Նստվածքն ստանձնացրել են և լուծել ազոտական թթվի նոսր լուծույթում:*

43. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):

44. Ի՞նչ նյութաքանակով (մոլ) ազոտական թթու է ծախսվել:

45. Որքան է ելային խառնուրդի այրման համար անհրաժեշտ օդի ծավալը (լ, ն. ս.):

46–48. *Քացախաթթվի, մրջնաթթվի և մրջնալոզեհիդի 3 : 1 : 2 մոլային հարաբերությամբ որոշակի զանգվածով խառնուրդը արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով մշակելիս առաջացել է մետաղի նստվածք, և անջատվել է գազ: Խառնուրդի նույն զանգվածով երկրորդ նմուշի և ավելցուկով վերցրած նատրիումի հիդրօքսիդի փոխազդեցությունից ստացվել է աղերի 7,85 գ խառնուրդ:*

46. Որքան է օգտագործված խառնուրդի ընդհանուր զանգվածը (մգ):

47. Որքան է առաջացած մետաղի զանգվածը (գ):

48. Որքան է անջատված գազի ծավալը (մլ, ն. ս.):

3.4. Աղեհիղներ, թթուներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	19	17	1010	33	200
2	4	18	50	34	5
3	115	19	12	35	1080
4	2	20	6	36	56
5	720	21	10	37	74
6	4	22	17	38	75
7	30	23	4	39	102
8	56	24	4	40	14
9	10	25	4	41	1
10	6	26	6	42	11
11	840	27	3	43	38
12	416	28	126	44	4
13	164	29	22	45	84
14	2	30	180	46	7150
15	30	31	1	47	27
16	5	32	500	48	1680

3.5. ԷՍԹԵՐՆԵՐ

1. Մեկ հագեցած կարբոնաթթվի ճարպի 16,12 գ նմուշի հիդրոլիզից ստացվել է 1,84 գ 1,2,3-պրոպանտրիոլ: Որքա՞ն է ատոմների ընդհանուր թիվը ճարպի մոլեկուլում:
2. Ի՞նչ զանգվածով (գ) ազոտ պարունակող միացություն կառաջանա 8840 գ եռօլեատից՝ ըստ հետևյալ փոխարկումների, եթե ռեակցիաներն ընթանան 100,80 և 100 % ելքերով. գլիցերինի եռօլեատ → գլիցերինի եռստեարատ → գլիցերին → եռնիտրոգլիցերին:
3. Էսթերի գոլորշու խտությունն ըստ ջրածնի 44 է: Էսթերի հիդրոլիզից ստացվող երկու միացություններն առանձին-առանձին այրելիս անջատվում է նույն ծավալով ածխաթթու գազ: Որքա՞ն է էսթեր առաջացնող սպիրտի մոլային զանգվածը (գ/մոլ):
4. Ի՞նչ զանգվածով (գ) մալթոզ է ենթարկվել հիդրոլիզի, եթե առաջացած նյութի սպիրտային խմորումից գոյացած էթանոլից Լեբեդևի եղանակով ստացվել է 112 լ (ն. պ.) դիվինիլ:
5. Ի՞նչ թվով սահմանային միահիմն կարբոնաթթուներն ունեն $C_5H_{10}O_2$ բանաձևը:
6. Սահմանային միատոմ սպիրտի և սահմանային միահիմն կարբոնաթթվի փոխազդեցությունից ստացված էսթերի մեկ մոլում պարունակվում է 56 մոլ էլեկտրոն: Ի՞նչ թվով ածխածնի ատոմներ են առկա էսթերի մեկ մոլեկուլում:
7. Որքա՞ն է թթվածնի նշանակիր ատոմ պարունակող $CH_3CO^{18}OCH_3$ բանաձևն ունեցող էսթերի հիդրոլիզից ստացվող սպիրտի մոլային զանգվածը (գ/մոլ):
8. Ձիթապտղի ձեթի նմուշում առկա է 80% զանգվածային բաժնով մեկ C-C կրկնակի կապ պարունակող չհագեցած միահիմն կարբոնաթթվի եռգլիցերիդ: Հայտնի է, որ 2,21 կգ ձեթի նմուշում առկա է 2 մոլ եռգլիցերիդ: Որքա՞ն է բոլոր ատոմների գումարային թիվը կարբոնաթթվի մոլեկուլում:
9. Որքա՞ն է σ -կապերի թիվը A նյութի մեկ մոլեկուլում ըստ փոխարկումների հետևյալ շղթայի. $(C_6H_{10}O_5)_n \rightarrow C_6H_{12}O_6 \rightarrow C_2H_5OH \rightarrow A \rightarrow$ կաուչուկ:
10. Որքա՞ն է 1,25 մոլ գլյուկոզի հիդրոմից 80% ելքով ստացված սորբիտի զանգվածը (գ):
- 11-12. *Ծծմբական թթվի առկայությանը 50% ելքով փոխազդել են 300 գ սովորական իզոտոպային բաղադրությանը քացախաթթուն և 240 գ ^{18}O նշանակիր ատոմ պարունակող էթանոլը:*
11. Որքա՞ն է ստացված էսթերի զանգվածը (գ):

12. Որքան է մյուս վերջանյութի զանգվածը (գ):

13–14. 120 գ էսթերը 40 % էլքով հիդրոլիզելիս ծախավել է 14,4 գ ջուր:

13. Որքան է ածխածին տարրի զանգվածային բաժինը (%) էսթերում:

14. Որքան է հիդրոլիզի հետևանքով ստացված սպիրտի մոլեկուլում σ -կապերի թիվը:

15–16. Ջրային լուծույթում պարունակվում է գլյուկոզի α -, β - և ալդեհիդային ձևերի համապատասխանաբար 4 : 3 : 3 մոլային հարաբերությամբ 360 գ խառնուրդ:

15. Որքան է α -գլյուկոզի զանգվածը (գ) լուծույթում:

16. Ինչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա, եթե տրված լուծույթը տաքացվի, ապա ավելացվի արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթ:

17–18. Ճարպի մոլեկուլում ածխածնի ատոմների թիվը 51-ով մեծ է թթվածնի ատոմների թվից, իսկ դրա բաղադրության մեջ մտնում է մեկ կրկնակի կապ պարունակող միահիմն, ածխածնային շղթայում ճյուղավորումներ չունեցող կարբոնաթթվի մնացորդ:

17. Որքան է մեթիլենային խմբերի թիվը ճարպի մոլեկուլում:

18. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ջրածին կպահանջվի 276,25 գ ճարպը հիդրելու համար:

19–20. Ճարպում ածխածնի զանգվածային բաժինը 76,854 % է, և նրա բաղադրության մեջ առկա է միայն մեկ ասինանային չճյուղավորված ածխածնային շղթայով միահիմն կարբոնաթթվի մնացորդ:

19. Ճարպի մոլեկուլում որքան է ածխածնի ատոմների գումարային թիվը:

20. Ինչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ կպահանջվի 44,5 գ ճարպի հիդրոլիզից ստացված ճարպաթթուն չեզոքացնելու համար:

21–22. $C_3H_6O_2$ քիմիական բանաձև ունեցող 3 իզոմեր նյութերի որոշակի զանգվածով խառնուրդի նմուշը համապատասխան պայմաններում կարող է փոխազդել 20 գրամ նատրիումի հիդրօքսիդի հետ: Նույն զանգվածով մեկ այլ նմուշի և արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթի փոխազդեցությունից կարող է ստացվել 0,4 մոլ արծաթ:

21. Որքան է խառնուրդի նմուշի զանգվածը (գ):

22. Որքան է արծաթի(I) օքսիդի հետ փոխազդող նյութի մոլային բաժինը (%) խառնուրդում:

23–24. Մոլեկուլում ածխածնի նույն թվով ատոմներ պարունակող սահմանային միասին կարբոնաթթվի և միատոմ սպիրտի 33,5 գ զանգվածով հավասարանության խառնուրդը նատրիումի հիդրոկարբոնատի լուծույթի ավելցուկով մշակելիս անջատվել է գազ, որի ծավալը 6 անգամ փոքր է այդ նույն խառնուրդի այրումից գոյացած գազի ծավալից:

23. Ածխածնի քանի՞ ատոմ կպարունակվի ելային խառնուրդից գոյացած էսթերի մեկ մոլեկուլում:

24. Որքան է խառնուրդում կարբոնաթթվի նյութաքանակը (մմոլ):

25–27. Պրոպանոլի և էթիլացետատի 20 գ խառնուրդին ավելացրել են կալիումի հիդրօքսիդի 5 մոլ/լ կոնցենտրացիայով 50 մլ ջրային լուծույթ: Ստացված լուծույթը գոլորշացրել են, իսկ չոր մնացորդը՝ շիկացրել: Ստացված պինդ մնացորդում ածխածին տարրի զանգվածը 1,2 գ է:

25. Որքան է պրոպանոլի զանգվածային բաժինը (%) ելային խառնուրդում:

26. Որքան է էթիլացետատի հիդրոլիզի վրա ծախսված կալիումի հիդրօքսիդի լուծույթի ծավալը (մլ):

27. Քանի՞ անգամ է պինդ մնացորդում աղի նյութաքանակը մեծ ավելալու նյութաքանակից:

28–30. էթիլացետատի և էթանոլի 35,6 գ խառնուրդին ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի 24 % զանգվածային բաժնով 125 մլ լուծույթ ($\rho = 1,2$ գ/սմ³): Ստացված լուծույթը գոլորշացրել են, իսկ չոր մնացորդը՝ շիկացրել: Պինդ մնացորդում նատրիումի հիդրօքսիդի զանգվածը եղել է 12 գրամ:

28. Որքան է նատրիումի հիդրօքսիդի մոլային բաժինը (%) պինդ մնացորդում:

29. Որքան է գոլորշացած սպիրտի նյութաքանակը (մմոլ):

30. Որքան է չոր մնացորդի շիկացումից ստացված օրգանական նյութի զանգվածը (մգ):

31–33. Որոշակի նյութաքանակով քացախադեհիդի մի մասը վերականգնել են ջրածնով և ստացել սպիրտ, իսկ մյուս մասն օքսիդացրել են արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով և ստացել կարբոնատթու: Ստացված սպիրտի և կարբոնատթվի փոխազդեցությունից 75 % էլքով ստացել են 26,4 գ էսթեր: Պարզվել է, որ համապատասխան պայմաններում վերջին ռեակցիոն խառնուրդի հետ կարող է փոխազդել 24 գ նատրիումի հիդրօքսիդ:

31. Որքան է միայն չեզոքացման ռեակցիայում ծախսված ալկալու զանգվածը (գ):

32. Որքան է ելային ալդեհիդի նյութաքանակը (մոլ):

33. Ալդեհիդի ո՞ր մասն է (%) ենթարկվել վերականգնման:

34–36. RCOOH բանաձևով 12 գ կարբոնատթվի և R_1OH սպիրտի փոխազդեցությունից 100 % էլքով ստացել են RCOOR_1 էսթերը: Նշված զանգվածով կարբոնատթվի և նատրիումի հիդրոկարբոնատի փոխազդեցությունից ստացել են 4,48 լ (ն. ս.) գազ, իսկ էսթերի այրման հետևանքով՝ 26,88 լ (ն. ս.) գազագոլորշային խառնուրդ:

34. Որքան է կարբոնատթվի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

35. Որքան է էսթերի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

36. Որքան է իզոմերային էսթերների թիվը:

37–39. Որոշակի զանգվածով $\text{C}_n\text{H}_{2n}\text{O}_2$ բաղադրությամբ միացության թթվային հիդրոլիզի արգասիքներից մեկը տալիս է արծաթահայելու ռեակցիա, իսկ մյուս արգասիքը, որի զանգվածը 180 գ է, կարող է փոխազդել 69 գ նատրիումի հետ:

37. Որքան է տրված միացության հարաբերական մոլեկուլային զանգվածը:

38. Ի՞նչ ծավալով (լ, ն. ս.) օդ է անհրաժեշտ տրված զանգվածով ելանյութն այրելու համար:

39. Քանի՞ իզոմերային էսթեր և կարբոնատթու կարող են լինել նշված բանաձևով:

40–42. Որոշակի զանգվածով գլյուկոզը բաժանել են երկու մասի: Փոքր զանգվածով նմուշը արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով մշակելիս անջատվել է 86,4 գ նստվածք: Գլյուկոզի մեծ զանգվածով նմուշը սպիրտային խմորման ենթարկելիս անջատվել է 26,88 լ (ն. ս.) գազ:

40. Ի՞նչ զանգվածով (գ) գլյուկոզ է օքսիդացել արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով:

41. Որքան է գլյուկոզի ելային զանգվածը (գ):
42. Ի՞նչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ կպահանջվի նույն զանգվածով գլյուկոզի կաթնաթթվային խմորումից ստացված թթուն չեզոքացնելու համար:
- 43–45. Մոլեկուլում միայն C–C միակի կապեր պարունակող A և B նյութերի խառնուրդը տաքացրել են խիտ H_2SO_4 -ի առկայությամբ և 70 % ելքով ստացել 16,24 գ C օրգանական վերջանյութ: Բաց շղթայով B նյութի մոլեկուլում ածխածնի ատոմների թիվը 2-ով մեծ է A նյութի մոլեկուլում եղած ածխածնի ատոմների թվից: A նյութը կարող է օքսիդանալ պղնձի օքսիդով, իսկ օքսիդացման արգասիքը կարող է փոխազդել 4,48 լ ջրածնի հետ՝ կրկին վերածվելով A նյութի: B նյութը կարող է փոխազդել բավարարքանակով նատրիումի հիդրոկարբոնատի հետ՝ առաջացնելով 13,44 լ (ն. ս.) գազ:
43. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):
44. Որքան է C նյութի մեկ մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը:
45. Որքան է ելային խառնուրդում մեծ մոլային զանգվածով բաղադրիչի մոլային բաժինը (%):

3.5. Էսթերներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	155	16	432	31	12
2	1816	17	44	32	1
3	46	18	21	33	40
4	855	19	57	34	60
5	4	20	6	35	74
6	5	21	37	36	2
7	34	22	40	37	88
8	54	23	6	38	1680
9	9	24	250	39	6
10	182	25	56	40	72
11	225	26	20	41	180
12	45	27	2	42	80
13	40	28	50	43	62
14	5	29	500	44	20
15	144	30	4800	45	75

3.6. ԱԶՈՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՄԻՆԱԹԹՈՒՆՆԵՐ

1. Սպիտակուցների բաղադրության մեջ մտնող 17,8 գ ամինաթթվի այրման արդյունքում գոյացել է 6 : 7 : 1 մոլային հարաբերությամբ ածխածնի(IV) օքսիդի, ջրի և ազոտի 41,8 գ խառնուրդ: Որքան է ամինաթթվի մոլեկուլում պարունակվող ջրածնի ատոմների գումարային թիվը:
 2. Ի՞նչ թվով կովալենտային կապեր են առկա էթիլամոնիումի քլորիդում:
 3. Ի՞նչ զանգվածով (գ) երկմեթիլամին կփոխազդի 13,44 լ (ն. պ.) քլորաջրածնի հետ:
 4. Որքան է մեթիլամինի ծավալային բաժինը (%) մեթիլամինի և էթիլամինի խառնուրդում, եթե դրանում ջրածնի և ածխածնի ատոմների մոլային հարաբերությունը 4,4 է:
 5. Որքան է ատոմների գումարային թիվն ամինի մոլեկուլում, եթե 6 մոլ ամինն այրելիս ծախսվել է 13,5 մոլ թթվածին, և ստացվել են 6 մոլ CO_2 , 3 մոլ N_2 և 15 մոլ H_2O :
 6. Միայն մեկ $-\text{NH}_2$ և մեկ $-\text{COOH}$ խումբ պարունակող 26,46 գ α -ամինաթթվից առաջացած եռպեպտիդի հիմնային հիդրոլիզի հետևանքով ստացվել է 47,46 գ կալիումական աղ: Որքան է ամինաթթվի մոլային զանգվածը (գ/մոլ):
 7. 9,6 գ բնական երկպեպտիդը լրիվ հիդրոլիզելու համար ծախսվել է 0,9 գ ջուր: Որքան է ստացված ամինաթթվի մոլային զանգվածը (գ/մոլ), եթե երկպեպտիդի հիդրոլիզից ստացվել է միայն մեկ ամինաթթու:
 8. Որքան է 4 մոլ գլիցինի պոլիկոնդենսացումից ստացած գծային կառուցվածքով քառապեպտիդի մոլային զանգվածը (գ/մոլ):
 9. Բավարար քանակով թթվածնում ի՞նչ զանգվածով (գ) գլիցինի այրումից կգոյանա 448 լ (ն. պ.) գազագոլորշային խառնուրդ:
- 10–11. Սպիտակուցների բաղադրության մեջ մտնող 484 գ ամինաթթվի այրման արգասիքները ծծմբաջրածնական թթվի լուծույթով անցկացնելիս գոյացել է 384 գ պինդ նյութ:*
10. Որքան է ատոմների ընդհանուր թիվն ամինաթթվի մոլեկուլում:
 11. Ի՞նչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդի 40 % զանգվածային բաժնով լուծույթի հետ կփոխազդի տրված քանակով ամինաթթուն:

12–13. Փոխարկումների հետևյալ շղթան իրականացնելիս ծախսվել է 44,8 լ (ն. պ.) քլորաջրածին.



12. Որքան է A նյութի զանգվածը (գ):

13. Ինչ քանակով (մոլ) B նյութ է փոխազդել:

14–15. Բութանի և մեթիլամինի խառնուրդը, որում բութանի զանգվածային բաժինը 22,5% է, ավելցուկով քլորաջրածնի լուծույթով անցկացնելիս լուծույթի զանգվածն ավելացել է 7,75 գ-ով:

14. Որքան է ելային գազային խառնուրդում բութանի զանգվածը (մգ):

15. Որքան է մեթիլամինի ծավալը (մլ, ն. պ.)

16–17. Փայտաթելի 162 կգ կշռանքից, որը 50% զանգվածային բաժնով բջջանկյութ է պարունակում, ստացել են 45 կգ գլյուկոզ:

16. Որքան է գլյուկոզի ստացման ելքը (%):

17. Ինչ զանգվածով (կգ) էթիլսպիրտ կստացվի գլյուկոզի այդ քանակից:

18–19. Դեյտերիումի և 1 մոլ մեթիլամինի խառնուրդում նեյտրոնների և պրոտոնների թվերի հարաբերությունը 5 : 6 է:

18. Որքան է խառնուրդում պարունակվող դեյտերիումի քանակը (մոլ):

19. Ինչ ծավալով օդ (լ, ն. պ.) կպահանջվի այդ խառնուրդի լրիվ այրման համար:

20–21. Գլիցինի և ցիստեինի խառնուրդը, որում թթվածնի ատոմների թիվը 2 անգամ մեծ է Ալոգադրոյի թվից, ենթարկել են էսթերացման:

20. Որքան է ելային խառնուրդում ամինաթթուների գումարային նյութաքանակը (մոլ):

21. Ինչ զանգվածով (գ) էթանոլ է ծախսվել ելային խառնուրդն էսթերացնելիս:

22-24. Արոմատիկ ամինի 53,5 գ կշռանքը օդում լրիվ այրելիս ստացվել են 154 գ ածխածնի(IV) օքսիդ, 5,6 լ (ն. ս.) ազոտ և 40,5 գ ջուր:

22. Որքան է ամինի մեկ մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը:

23. Որքան է նույն բանաձևն ունեցող արոմատիկ ամինների ընդհանուր թիվը:

24. Ի՞նչ ծավալով (լ, ն. ս.) օդ կպահանջվի նույն զանգվածով ամինն այրելու համար:

25-27. Մեկական կարբօքսիլային խումբ պարունակող բնական երկու ամինաթթուների 40,4 գ զանգվածով խառնուրդն անմնացորդ փոխազդում է 16 գ նատրիումի հիդրօքսիդի կամ 0,7 մոլ մետաղական նատրիումի հետ:

25. Որքան է փոքր մոլային զանգվածով ամինաթթվի մոլային բաժինը (%) խառնուրդում:

26. Որքան է մեծ մոլային զանգվածով ամինաթթվի մոլային զանգվածը (գ/մոլ):

27. Ի՞նչ թվով երկպեպտիդներ կստացվեն ամինաթթուների խառնուրդից:

28-30. Մեթիլ- և էթիլամինների խառնուրդը լրիվ այրելու համար պահանջվել է 924 լ (ն. ս.) թթվածին: Ստացված գազազոլորչային խառնուրդը նատրիումի հիդրօքսիդի լուծույթի միջով անցկացնելիս վերջինիս զանգվածն ավելացել է 1645 գրամով:

28. Որքան է ամինների ելային խառնուրդի զանգվածը (գ):

29. Ի՞նչ ծավալով (լ, ն. ս.) գազ չի կլանվել:

30. Որքան է փոխազդած նատրիումի հիդրօքսիդի քանակը (մոլ), եթե լուծույթում գոյացել է չեզոք աղ:

31-32. Էթանի և մեթիլամինի 5,6 լ (ն. ս.) խառնուրդը 22,4 լ (ն. ս.) թթվածնում այրելիս ստացված գազազոլորչային խառնուրդն անցկացրել են կայցիումի հիդրօքսիդի ավելցուկ պարունակող լուծույթով: Չկլանված գազերը բավարար քանակությամբ շիկացած պղնձի փոշի պարունակող խողովակով անցկացնելիս 0,56 լ (ն. ս.) գազ չի փոխազդել:

31. Որքան է ելային գազային խառնուրդում մեթիլամինի մոլային բաժինը (%):

32. Որքան է անջատված նստվածքի զանգվածը (գ):

33. Որքան է փոխազդած պղնձի զանգվածը (գ):

34–36. 79,2 գ զանգվածով երկպեպտիդի հիդրոլիզից ստացվել է 90 գ ամինաթթու, որն այնուհետև 100 % էլքով ենթարկվել է էսթերացման 1–պրոպանոլով:

34. Որքան է ամինաթթվի մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը:

35. Որքան է պեպտիդացման ռեակցիայի էլքը (%), եթե 79,2 գ երկպեպտիդ ստանալու համար ծախսվել է 112,5 գ ամինաթթու:

36. Ինչ զանգվածով (գ) 1–պրոպանոլ կպահանջվի երկպեպտիդի հիդրոլիզից ստացված ամինաթթուն էսթերի փոխարկելու համար:

37–39. Միասամինաթթուների մնացորդներից կազմված երկպեպտիդը, որում ածխածնի զանգվածային բաժինը 1,2 անգամ մեծ է թթվածնի զանգվածային բաժնից, տարբեր պայմաններում ենթարկել են հիդրոլիզի: Մի դեպքում ծախսվել է 2 մոլ/լ կոնցենտրացիայով 2 լ աղաթթու, մյուս դեպքում՝ 10 % զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի 2,4 կգ լուծույթ:

37. Որքան է հիդրոլիզի հետևանքով ստացվող ամինաթթուների մեկական մոլեկուլներում կարբօքսիլ խմբերի գումարային թիվը:

38. Որքան է երկպեպտիդի մոլեկուլում բոլոր ատոմների թիվը:

39. Որքան է երկպեպտիդի նմուշի զանգվածը (գ):

40–42. Ըստ զանգվածի 22,5 % էթան պարունակող էթանի և մեթիլամինի որոշակի զանգվածով գազային խառնուրդն ավելցուկով քլորաջրածնական թթվի լուծույթով անցկացնելիս վերջինիս զանգվածն ավելացել է 62 գրամով: Նույն զանգվածով խառնուրդի մեկ այլ նմուշն օդում լրիվ այրելիս ստացված գազազոլորչային խառնուրդն անցկացրել են կրաջրի ավելցուկով:

40. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):

41. Որքան է փոխազդած քլորաջրածնի քանակը (մոլ):

42. Որքան է կրաջրով անոթում առաջացած նստվածքի զանգվածը (գ):

**3.6. Ազոտ պարունակող օրգանական միացություններ,
ամիններ և ամինաթթուներ**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	7	15	5600	29	168
2	10	16	50	30	40
3	27	17	23	31	20
4	75	18	6	32	45
5	7	19	588	33	24
6	75	20	1	34	10
7	105	21	46	35	80
8	246	22	9	36	72
9	300	23	5	37	3
10	14	24	518	38	29
11	560	25	25	39	436
12	62	26	105	40	80
13	2	27	4	41	2
14	2250	28	535	42	320

3.7. ԲՆԱԿԱՆ ԳԱԶ, ՆԱՎԹ, ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐ

1. Նավթից ստացել են ըստ զանգվածի 25% բենզին և 55% մագուր: Մագուրի հետագա մշակումից կրկին ստացել են բենզին՝ ըստ զանգվածի 60%-ի չափով: Որքան է նավթից բենզինի ստացման գումարային ելքն ըստ զանգվածի (%):
2. Բնական գազը պարունակում է ըստ ծավալի 87 % մեթան, 3 % ածխածնի(IV) օքսիդ և չայրվող խառնուկներ: 13,44 լ (ն. պ.) ծավալով բնական գազի այրումից գոյացած գազային խառնուրդն անցկացրել են կրաջրի ավելցուկով: Որքան է գոյացած նստվածքի զանգվածը (գ):
3. 17,92 լ (ն. պ.) մեթանից ստացել են ացետիլեն: Որքան է ռեակցիայի ելքը (%), եթե ռեակցիոն խառնուրդի ծավալը 31,36 լ (ն. պ.) է:
4. Ինչ զանգվածով (գ) պոլիպրոպիլեն կստացվի 168 լ (ն. պ.) պրոպենից, եթե ռեակցիայի ելքը 60 % է:
5. 440 գ պրոպանը ենթարկել են ջերմային կրեկինգի: 90% ելքով ստացված խառնուրդը բաց են թողել ավելցուկով վերցրած բրոմաջրի մեջ: Որքան է բրոմաջրով սրվակի զանգվածի (գ) փոփոխությունը:
6. Կոքսագազում այրվող գազերի պարունակությունն (ըստ ծավալի) այսպիսին է՝ 60% H₂, 20% CH₄, 10% CO: Ինչ ծավալով (լ, ն. պ.) օդ կպահանջվի 100 լ կոքսագազն այրելու համար:
7. Ալկանի այրումից գոյացել են 94,08 լ (ն. պ.) ածխաթթու գազ և 86,4 գ ջուր: Որքան է ալկանի մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը:
8. 358,4 լ (ն. պ.) մեթանից 75% ելքով գոյացել է ացետիլեն, որից 60% ելքով՝ բենզոլ: Ինչ զանգվածով (գ) հեքսան կպահանջվի նույն քանակով բենզոլ ստանալու համար, եթե այդ փոխարկման ելքը 80% է:
- 9–10. 765,625 գ մեթիլցիկլոհեքսանը ենթարկել են դեհիդրման, իսկ ստացված միացությունն օքսիդացրել են մինչև թթու: Երկու ռեակցիաներն էլ ընթացել են 80 % ելքով:
9. Որքան է ստացված թթվի զանգվածը (գ):
10. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ջրածին է գոյացել առաջին ռեակցիայում:

11–12. Տոլուոլ ստանալու նպատակով 490 գ մեթիլցիկլոհեքսանի գոլորշին 75 % էլքով ենթարկել են դեհիդրման:

11. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ջրածին է անջատվել:

12. Ինչ զանգվածով (գ) տոլուոլ է ստացվել:

13–14. Ածխի չոր թորմամբ 0,5 % էլքով ստացված բենզոլի և տոլուոլի 2,3 կգ խառնուրդը մշակել են կալիումի պերմանգանատի տաք չեղոք լուծույթով և ստացել 1,305 կգ նստվածք:

13. Որքան է չփոխազդած օրգանական նյութի զանգվածը (գ):

14. Որքան է թորման ենթարկված ածխի զանգվածը (կգ):

15–16. Գազագեներատորում ածխածնի(II) օքսիդ ստանալիս 100 % էլքերով ընթացել են հետևյալ երկու ռեակցիաները՝ $C + O_2 = CO_2 + 394$ կՋ; $CO_2 + C = 2CO - 175$ կՋ:

15. Որքան ջերմություն (կՋ) կանջատվի, եթե փոխարկվի 240 գ ածուխ (C):

16. Ինչ զանգվածով (կգ) Fe_3O_4 կվերականգնվի գոյացած ածխածնի(II) օքսիդով:

17–19. Ըստ ծավալի 85 % մեթան, 5 % ածխածնի(IV) օքսիդ և 10 % ազոտ պարունակող որոշակի ծավալով բնական գազն այրել են պահանջվածի համեմատությամբ կրկնակի ծավալով օդում (թթվածնի ծավալային բաժինն օդում 20 % է) և ստացված գազազոլորչային խառնուրդն անցկացրել նատրիումի հիդրօքսիդի ալեյցուկ պարունակող ջրային լուծույթի մեջ: 462 մոլ գազ չի կլանվել:

17. Որքան է վերցրած բնական գազի ծավալը (լ, ն. պ.):

18. Որքան է այրումից հետո մնացած թթվածնի քանակը (մոլ):

19. Որքան է լուծույթում գոյացած աղի զանգվածը (գ):

3.7. Բնական գազ, նավթ, վառելիանյութեր

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	58	8	129	15	2190
2	54	9	610	16	1160
3	75	10	420	17	672
4	189	11	252	18	51
5	252	12	345	19	2862
6	375	13	1610		
7	16	14	460		

3.8. ՔԻՄԻԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԸ

1. Տեխնիկական կերակրի աղի 13 գրամից ստացել են քլորաջրածին, ապա աղաթթու, որն ամբողջությամբ փոխազդել է մանգանի(IV) օքսիդի հետ՝ անջատելով 1,12 լ (ն. պ.) ծավալով գազ: Որքան է խառնուկների զանգվածային բաժինը (%) տեխնիկական կերակրի աղում:
2. Ամոնիակի սինթեզի աշտարակում օրական թողարկվում է 1700 տ ամոնիակ: Տեսականորեն ինչ զանգվածով (տ) 75% զանգվածային բաժնով ազոտական թթվի լուծույթ կստացվի նշված քանակով ամոնիակից:
3. Ացետալդեհիդի 30 լ (ն. պ.) ծավալով գոլորշին խառնել են ավելցուկով թթվածնին և այրել: Ռեակցիայի ավարտից հետո գազագոլորշային խառնուրդի ծավալը դարձել է 135 լ (ն. պ.): Ինչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին են խառնել ալդեհիդին:
4. Բուսական յուղի մեկ նմուշի հիդրոլիզից առաջացել է 50,6 գ զանգվածով գլիցերին, իսկ նույն զանգվածով մեկ այլ նմուշ կարող է միացնել 49,28 լ ջրածին (ն. պ.): Որքան է $C = C$ կրկնակի կապերի թիվը ճարպի մեկ մոլեկուլում:
5. 101,3 կՊա ճնշման պայմաններում գազը գրավում է 22 մ³ ծավալ: Որքան կլինի այդ գազի ծավալը (մ³) նույն ջերմաստիճանի և 202,6 կՊա ճնշման պայմաններում:
6. Արտաշնչած օդում ածխածնի(IV) օքսիդի ծավալային բաժինը 4% է: Ինչ զանգվածով (գ) աղ կառաջանա, եթե 1120 լ այդպիսի օդն անցկացվի 74 գ կալցիումի հիդրօքսիդ պարունակող կրաջրի միջով:
7. Ինչ զանգվածով (կգ) կալիումի քլորիդն է համարժեք 404 կգ կալիումի նիտրատին որպես կալիումական պարարտանյութ:
8. Ինչ զանգվածով (կգ) 64% երկաթի(III) օքսիդ պարունակող հանքաքար է անհրաժեշտ 280 կգ երկաթի ստացման համար:
9. Ինչ զանգվածով (կգ) 47% զանգվածային բաժնով ազոտական թթվի լուծույթ կստացվի 850 կգ ամոնիակից, եթե օքսիդացումը հպումային (կոնտակտային) սարքում և կլանման աշտարակում ընթացել է համապատասխանաբար 98% և 94% ելքերով:
10. Դոմնային վառարանում ըստ զանգվածի 75% երկաթի(III) օքսիդ պարունակող հանքաքարից ստացվել է ըստ զանգվածի 4% խառնուկներ պարունակող 700 կգ թուջ: Վերականգնումը կարելի է ներկայացնել ածխածնի(II) օքսիդի մասնակցությամբ ընթացող երեք հիմնական փուլերով, որոնցից յուրաքանչյուրում ելքը 80% է: Որքան է վերցրած հանքաքարի զանգվածը (կգ):

11. Ֆենոլի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) ջրօգտագործման վայրերում 0,001 մգ/լ է: Կոքսաքիմիական արտադրության հոսքաջրերով $1,0 \cdot 10^4$ մ³ ծավալով ջրամբար է արտանետվել 47 կգ զանգվածով ֆենոլ: Ֆենոլի կոնցենտրացիան ջրամբարում քանի՞ անգամ է գերազանցում ՍԹԿ-ն:

12. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ածխածնի(IV) օքսիդ է արտանետվում մթնոլորտ 1,75-ական գրամ զանգվածով 200 օգտագործված պոլիէթիլենային փաթեթների այրումից:

13. Ճենապակե և հախճապակե իրերի նկարագարման համար օգտագործում են նուրբ մանրացված մետաղների օքսիդներ: Թրծելիս դրանք առաջացնում են սիլիկաթթվի գունավոր աղեր: Կապույտ գունավորում ստացվում է կոբալտի(II) օքսիդի կիրառմամբ՝ ըստ հետևյալ հավասարման. $\text{CoO} + \text{SiO}_2 = \text{CoSiO}_3$: 270 գ զանգվածով պնակի զանգվածի ո՞ր մասն է (%) կազմում կոբալտի(II) սիլիկատի զանգվածը, եթե պնակի նկարագարման համար ծախսվել է 1,5 գ կոբալտի(II) օքսիդ:

14–15. 9,6 կգ զանգվածով երկաթի(III) օքսիդն ածխածնի(II) օքսիդով վերականգնել են մինչև երկաթի հարուկ (Fe_3O_4):

14. Ի՞նչ քանակով (մոլ) էլեկտրոն է մասնակցել վերականգնմանը:

15. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ածխածնի(II) օքսիդ է ծախսվել:

16–17. Երկաթի կոլչեդանի բովանան վատարանում օգտագործվել է 3696 լ օդ, որը պահանջվածից 1,5 անգամ ավելի է: Օդում թթվածնի ծախսային բաժինը 20 % է:

16. Ի՞նչ քանակով (մոլ) ծծմբի(IV) օքսիդ է գոյացել պիրիտի այրումից:

17. Ի՞նչ քանակով գազ (մոլ) չի կլանվի, եթե սարքից դուրս եկող գազային խառնուրդն անցկացվի կալցիումի հիդրօքսիդի ավելցուկ պարունակող լուծույթի միջով:

18–19. Կիտրոնաթթուն արդյունաբերության մեջ ստանում են գլյուկոզի խմորումից՝ ըստ հետևյալ հավասարման. $2\text{C}_6\text{H}_{12}\text{O}_6 + 3\text{O}_2 = 2\text{C}_6\text{H}_8\text{O}_7 + 4\text{H}_2\text{O}$: Վերցրել են գլյուկոզի 15 % զանգվածային բաժնով 4800 կգ լուծույթ, իսկ ռեակցիան ընթացել է 50 % ելքով:

18. Ի՞նչ զանգվածով (կգ) կիտրոնաթթու է ստացվել:


19. Ի՞նչ զանգվածով (կգ) թթվածին է ծախսվել:

20–21. Հավելում չպարունակող 0,45 գ զանգվածով ասպիրինի հարը տաքացնելով լուծել են ջրում և ստացել 100 մլ լուծույթ, որում ասպիրինը լրիվ հիդրոլիզված է:

20. Որքան է սալիցիլաթթվի զանգվածը (մգ):

21. Որքան է սալիցիլաթթվի մոլային կոնցենտրացիան ստացված լուծույթում (մմոլ/լ):

22–23. Դոմնային վատարանում ընթացող ռեակցիաներից մեկի ուրվագիրն է.



22. Որքան է օքսիդիչ նյութի մեկ մոլեկուլի ձեռք բերած էլեկտրոնների թիվը:

23. Որքան է մեկ մոլ նյութաքանակով օքսիդիչ նյութի վերականգնումից ստացված մետաղի զանգվածը (գ), եթե ելքը 75 % է:

24–25. Ջրային գոլորշիով քարածխի «գազացումից» ստացվում է ջրագազ՝ ըստ հետևյալ ուրվագրի. $\text{C}_{(այ)} + \text{H}_2\text{O}_{(գ)} \rightarrow \text{CO}_{(գ)} + \text{H}_{2(գ)}$: Ջրագազի 21,28 լ (ն. ս.) ծավալով նմուշը անջուր պղնձի(II) սուլֆատի ավելցուկ պարունակող խողովակով դանդաղ անցկացնելիս խողովակի զանգվածն ավելացել է 0,9 գրամով:

24. Որքան է «գազացման» գործընթացի ելքը (%):



25. Ի՞նչ զանգվածով (գ) պղնձի(II) օքսիդ է հնարավոր վերականգնել ջրագազի նույն քանակով:

26–27. Ջրածին և քլոր տարրերի զանգվածային բաժինը երկրակեղևում 1% և 0,02 % է, իսկ մարդու օրգանիզմում՝ համապատասխանաբար 10% և 0,1% :

26. Ջրածին և քլոր տարրերի ատոմների թվային հարաբերությունը մարդու օրգանիզմում քանի՞ անգամ է մեծ նույն հարաբերությունից երկրակեղևում:

27. Ի՞նչ քանակով (կմոլ) ջրածին տարրի ատոմ է պարունակվում 70 կգ զանգվածով մարդու օրգանիզմում:

28–30. Հիդրոլիզային սպիրտը արտադրությունում ստանում են փայտի թեփից հետևյալ երկու փուլով, որոնք ընթանում են 80% ելքերով.



28. Ինչ զանգվածով (կգ) 92 % զանգվածային բաժնով հիդրոլիզային սպիրտ կստացվի 50% զանգվածային բաժնով բջջանյութ պարունակող 32,4 տ փայտաթեփից:

29. Ինչ զանգվածով (կգ) ածխաթթու գազ կանջատվի 16,2 տ բջջանյութից ստացված գլյուկոզի սպիրտային խմորումից:

30. Ինչ զանգվածով (գ) 10% զանգվածային բաժնով կրակաթ է անհրաժեշտ առաջին փուլում որպես կատալիզորդ օգտագործված ծծմբական թթվի 0,5% զանգվածային բաժնով 49 կգ լուծույթը չեզոքացնելու համար:

31–33. Թքի մեջ պարունակվող ֆերմենտի 1 մոլեկուլը 1 վ ժամանակահատվածում կարող է օսլայի շղթայից անջատել գլյուկոզի 18 000 մոլեկուլ:

31. Ինչ ժամանակահատվածում (վ) կարող է անջատվել $9 \cdot 10^5$ մոլեկուլ:

32. Ինչ զանգվածով (գ) գլյուկոզ կանջատվի, եթե դրա մոլեկուլների թիվը լինի $3,01 \cdot 10^{23}$:

33. Որքան ժամանակ (վ) կպահանջվի, որպեսզի ֆերմենտի $3,01 \cdot 10^{17}$ մոլեկուլները օսլայի շղթայից անջատեն 162 գ գլյուկոզ:

34–36. Քլորոպրեն ստանալու համար իրականացրել են հետևյալ փոխարկումները.



34. Ինչ թվով σ -կապեր են առկա X նյութի մեկ մոլեկուլում:

35. Ինչ քանակով (մոլ) քլորոպրեն է ստացվել, եթե վերցրել են 175 լ (ն. պ.) մեթան (բոլոր նեակցիաներն ընթացել են 80% ելքով):

36. Որքան է ազոտիլենի զանգվածային բաժինը (%) 175 լ (ն. պ.) մեթանի պիրոլիզից ստացված գազային խառնուրդում, եթե պիրոլիզն ընթացել է 80% ելքով:

3.8. Քիմիան և կյանքը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	10	13	1	25	72
2	8400	14	40	26	2
3	90	15	448	27	7
4	4	16	16	28	6400
5	11	17	143	29	5632
6	162	18	384	30	1850
7	298	19	96	31	50
8	625	20	345	32	90
9	6174	21	25	33	100
10	2500	22	8	34	7
11	4700	23	126	35	1
12	560	24	90	36	65

ԲԱԺԻՆ

3

«ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՓՈՒՆՁ»

Երրորդ գլխում ընդգրկված են «Պնդումների փունջ» կոչվող առաջադրանքներ:

Այս առաջադրանքներն ունեն հետևյալ կառուցվածքը. ներկայացվում են հինգ պնդումներ, որոնցից յուրաքանչյուրի վերաբերյալ կարելի է տալ երեք տեսակի պատասխան՝ «ճիշտ է», «սխալ է» կամ «չգիտեմ»: Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «ճիշտ է» կամ «սխալ է» պատասխանի համար տրվում է մեկական միավոր: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում: Յուրաքանչյուր սխալ նշված «ճիշտ է» կամ «սխալ է» պատասխանի համար առաջադրանքին տրվելիք ընդհանուր միավորից հանվում է մեկական միավոր: Եթե տրվող և հանվող միավորների քանակը հավասար է, կամ հանվող միավորների թիվը գերազանցում է տրվող միավորների թիվը, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է զրո, և վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը հինգ միավոր:

Դրանց պատասխանները պետք է լրացնել ձևաթղթում՝ այդ նպատակի համար հատկացված տեղում, ըստ պահանջվող ձևի:

Պատասխանների ձևաթղթում յուրաքանչյուր պնդման համարի ներքևում տրված է երեք վանդակ: Տրված պնդման ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «X» նշանը (տես նկ. 3): Օրինակ՝ 76–80 առաջադրանքի 77–րդ պնդման համար, եթե ընտրվել է «ճիշտ է» պատասխանը, ապա լրացվում է հետևյալ ձևով.

	76	77	78	79	80
ճիշտ է	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
սխալ է	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
չգիտեմ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

նկ. 3

Այս գլխի առաջադրանքները պետական ավարտական և միասնական քննությունների թեստերում նախատեսվում է ընդգրկել հաջորդ ուսումնական տարում, բայց դրանք կընդգրկվեն արտաքին ընթացիկ գնահատման թեստերում:

ՊՆ ԴՈՒՄՆԵՐԻ ՓՈՒՆՋ

1. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը «Նյութ» և «Ֆիզիկական մարմին» հասկացությունների վերաբերյալ.

- 1) Այն, ինչից կազմված է ֆիզիկական մարմինը, կոչվում է նյութ:
- 2) «Փայտե դուռ» բառակապակցությունում «փայտը» նյութ է, իսկ «դուռը»՝ մարմին:
- 3) Նյութերն ըստ ծագման լինում են անօրգանական և օրգանական:
- 4) Քիմիական նյութն այլ կերպ քիմիական միացություն է:
- 5) Փայտի բաղադրությունը հաստատուն է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

2. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը թթվածին քիմիական տարրի վերաբերյալ.

- 1) Ստանում են ջրածնի պերօքսիդի քայքայումից:
- 2) Վատ է լուծվում ջրում:
- 3) Բնության մեջ առկա է միացությունների բաղադրությունում:
- 4) Անհրաժեշտ է շնչառության համար:
- 5) Ատոմն ունի $1s^2 2s^2 2p^4$ էլեկտրոնային բանաձևը:

	1	2	3	4	5
ճիշտ է			X		X
սխալ է	X	X		X	
չգիտեմ					

3. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը խառնուրդների բաժանման եղանակների վերաբերյալ.

- 1) Էթանոլի և ջրի խառնուրդից էթանոլը հնարավոր է բաժանել թորումով:
- 2) Պղնձի և ալյումինի խարտուքների խառնուրդից պղինձը հնարավոր է բաժանել մագնիսով:
- 3) Բուսական յուղի և ջրի խառնուրդի բաղադրամասերը հնարավոր է առանձնացնել բաժանիչ ձագարով:
- 4) Աղաջրից ջուրը հնարավոր է առանձնացնել պարզեցումով:
- 5) Կալիումի նիտրատը նատրիումի քլորիդի խառնուրդից հնարավոր է բաժանել՝ դրա տաք և հազեցած լուծույթը սառեցնելով՝ քյուրեղացումով:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X		X
սխալ է		X		X	
չգիտեմ					

4. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ֆիզիկական երևույթների վերաբերյալ.

- 1) Ապակին կոտրվելիս նոր նյութ չի գոյանում:
- 2) Ջերմաստիճանը 10 °C-ից մինչև 50 °C բարձրացնելիս ջրի խտությունը փոքրանում է:
- 3) Ջերմաստիճանը 20 °C-ից մինչև 40 °C բարձրացնելիս այլումինի ջերմահաղորդականությունը մեծանում է:
- 4) Փայտը մանրացնելիս ընդհանուր զանգվածը չի փոխվում:
- 5) Թուղթը կտրատելիս փոխվում է ձևը:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X		X	X
սխալ է			X		
չգիտեմ					

5. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական ռեակցիաների ընթացքի վերաբերյալ.

- 1) Ելանյութերի և վերջանյութերի գումարային զանգվածը մնում է հաստատուն:
- 2) Ատոմների ընդհանուր թիվը չի փոխվում:
- 3) Մոլեկուլների ընդհանուր թիվը չի փոխվում:
- 4) Անջատվում է ջերմություն:
- 5) Վերօքս ռեակցիաների ընթացքում էլեկտրոնների ընդհանուր թիվը չի փոխվում:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X			X
սխալ է			X	X	
չգիտեմ					

6. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը միացությունում քիմիական տարրի զանգվածային բաժնի վերաբերյալ.

- 1) Ածխածին տարրի զանգվածային բաժինն ալկանում ավելի մեծ է, քան համապատասխան ալկենում:
- 2) Թթվածին տարրի զանգվածային բաժինն ալդեհիդում ավելի փոքր է, քան համապատասխան կարբոնաթթվում:

- 3) Զրածին տարրի զանգվածային բաժինն արդեհիդում ավելի փոքր է, քան համապատասխան սպիրտում:
- 4) Ածխածին տարրի զանգվածային բաժինն ավելի նոսր է, ինչ համապատասխան ակադիենում:
- 5) Ազոտ տարրի զանգվածային բաժինը երկմեթիլամինում երկու անգամ ավելի մեծ է, քան մեթիլամինում:

	1	2	3	4	5
ճիշտ է		X	X	X	
սխալ է	X				X
չգիտեմ					

7. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը $H_2 + Cl_2 \xrightarrow{\lambda\nu} 2HCl$ հավասարմանը համապատասխանող ռեակցիայի վերաբերյալ.

- 1) Մեխանիզմը իոնային է:
- 2) Մեխանիզմը ռադիկալային շղթայական է:
- 3) Լույսի ազդեցությամբ խզվում է կապը H_2 -ի մոլեկուլում:
- 4) Շղթայի հարուցման փուլն է՝ $Cl_2 \rightarrow 2Cl\cdot$:
- 5) Ռեակցիայի ընթացքում մոլեկուլների թիվը կրկնակի մեծանում է:

	1	2	3	4	5
ճիշտ է		X		X	
սխալ է	X		X		X
չգիտեմ					


8. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը Ar^0 , K^+ , Cl^- , ^{39}K , ^{63}Zn , ^{64}Zn մասնիկների վերաբերյալ.

- 1) Ar^0 , K^+ և Cl^- մասնիկներն ունեն հավասար թվով էլեկտրոններ:
- 2) Նեյտրոնների թվերը նույնն են ^{63}Zn և ^{64}Zn իզոտոպներում:
- 3) ^{40}K և ^{40}Ar իզոտոպներն ունեն միևնույն էլեկտրոնային կառուցվածքը:
- 4) Cl^- իոնում էլեկտրոնների թիվը փոքր է պրոտոնների թվից:
- 5) ^{39}K իզոտոպում պրոտոնների, էլեկտրոնների և նեյտրոնների թիվը համապատասխանաբար հավասար է 19, 19 և 20:

	1	2	3	4	5
ճիշտ է	X				X
սխալ է		X	X	X	
չգիտեմ					

9. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը +11 միջուկի լիցքով քիմիական տարրի վերաբերյալ.

- 1) Քիմիական նշանն է Na:
- 2) Ատոմում պարունակում է 10 էլեկտրոն:
- 3) Ատոմի միջուկում պրոտոնների թիվը մեկով մեծ է նեյտրոնների թվից:
- 4) Պարբերական համակարգի 3-րդ պարբերության տարր է:
- 5) Այդ տարրի ատոմը նկարագրվում է հետևյալ գծապատկերով.



	1	2	3	4	5
ճիշտ է	X			X	X
սխալ է		X	X		
չգիտեմ					

10. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^4$ էլեկտրոնային բանաձևն ունեցող տարրի վերաբերյալ.

- 1) Այդ տարրի օքսիդին համապատասխանող հիդրատը թթու է:
- 2) Այդ տարրի օքսիդացման աստիճանը բարձրագույն օքսիդում +4 է:
- 3) Բնության մեջ այդ տարրն առկա է նաև պարզ նյութի ձևով:
- 4) Կենսածին տարրերից մեկն է:
- 5) Այդ տարրի ջրածնային միացությունը սենյակային ջերմաստիճանում պինդ նյութ է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X	X	
սխալ է		X			X
չգիտեմ					

11. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը վալենտային շերտի $2s^2 2p^3$ էլեկտրոնային բանաձևով տարրի ջրածնային միացության վերաբերյալ.

- 1) Սենյակային ջերմաստիճանում գազ է:
- 2) 11,2 լիտրի (ն. պ.) գանգվածը 8,5 գրամ է:
- 3) Մոլեկուլը ոչ բևեռային է:
- 4) Զրում չի լուծվում:
- 5) Նշված տարրը ջրածնային միացության մոլեկուլում գտնվում է sp^3 հիբրիդային վիճակում:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X			
սխալ է			X	X	X
չգիտեմ					

12. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը գլխավոր ենթախմբերի տարրերի հատկությունների վերաբերյալ.

- 1) Մետաղական հատկությունները կարգաթվի անմանը զուգընթաց ուժեղանում են:
- 2) Իոնացման էներգիան կարգաթվի անմանը զուգընթաց աճում է:
- 3) Էլեկտրաբացասականությունը կարգաթվի փոքրացմանը զուգընթաց փոքրանում է:
- 4) Շառավիղները կարգաթվի անմանը զուգընթաց մեծանում են:
- 5) Կարգաթվի անմանը զուգընթաց ոչմետաղական հատկությունները նախ ուժեղանում, ապա թուլանում են:

	1	2	3	4	5
ճիշտ է	X			X	
սխալ է		X	X		X
չգիտեմ					

13. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ազոտ և ֆոսֆոր տարրերի վերաբերյալ.

- 1) Թե՛ն ազոտի, թե՛ ֆոսֆորի նվազագույն օքսիդացման աստիճանը -3 է:
- 2) Ազոտի էլեկտրաբացասականությունը մեծ է ֆոսֆորի էլեկտրաբացասականությունից:
- 3) Թե՛ն ազոտի, թե՛ ֆոսֆորի բարձրագույն օքսիդացման աստիճանը $+5$ է:
- 4) Թե՛ն ազոտի, թե՛ ֆոսֆորի առավելագույն վալենտականությունը 5 է:
- 5) 31 գրամ սպիտակ ֆոսֆորում պարունակվող ատոմների թիվը $9,03 \cdot 10^{24}$ է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		
սխալ է				X	X
չգիտեմ					

14. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը գազային նյութերի որակական ռեակցիաների վերաբերյալ.

- 1) Ածխաթթու գազի խառնուկը թթվածնում հնարավոր է հայտնաբերել կրաջրով:
- 2) Ծծմբային գազի խառնուկը ազոտում հնարավոր է հայտնաբերել բարիտաջրով:
- 3) Ամոնիակի խառնուկն օդում հնարավոր է հայտնաբերել խոնավ լակմուսի թղթով:

- 4) Ծծմբաջրածնի խառնուկը ծծմբային գազում հնարավոր է հայտնաբերել պղնձի սուլֆատի լուծույթով:
- 5) Մնդիկի գոլորշու խառնուկն օդում հնարավոր է հայտնաբերել մետաղական փայլով:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

15. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը նյութերի և իոնների որակական ռեակցիաների վերաբերյալ.

- 1) Կարբոնատ իոնները հնարավոր է հայտնաբերել աղաթթվով:
- 2) Սուլֆատ իոնները հնարավոր է հայտնաբերել բարիումի լուծելի աղով:
- 3) Տարբեր փորձանոթներում լցված բարիումի օքսիդի, կարբոնատի և սուլֆատի սպիտակ փոշիները հնարավոր է տարբերել աղաթթվով:
- 4) Լուծույթում նիտրատ իոնները հնարավոր է հայտնաբերել խիտ ծծմբական թթվով:
- 5) Նիտրատ իոնները հնարավոր է հայտնաբերել խիտ ծծմբական թթվի և պղնձի տաշեղների միջոցով:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		X
սխալ է				X	
չգիտեմ					

16. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ատոմամուլեկուլային ուսմունքի վերաբերյալ.

- 1) Ատոմները գտնվում են բոլոր նյութերի բյուրեղավանդակների հանգույցներում:
- 2) Ատոմները քիմիապես անբաժանելի մասնիկներ են:
- 3) Ատոմները կազմված են մուլեկուլներից:
- 4) Չեզոք ատոմը էլեկտրոն միացնելիս վերածվում է անիոնի:
- 5) Բոլոր ատոմներն ունեն ավելի փոքր զանգված, քան բոլոր մուլեկուլները:

	1	2	3	4	5
ճիշտ է		X		X	
սխալ է	X		X		X
չգիտեմ					

17. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ատոմի կառուցվածքի վերաբերյալ.

- 1) Ատոմի միջուկը կազմված է պրոտոններից և նեյտրոններից:
- 2) Միջուկի շուրջը էներգիական մակարդակների թիվը հավասար է պարբերության համարին:
- 3) Էլեկտրոնների առավելագույն թիվը n -երորդ էներգիական մակարդակում որոշվում է n^2 բանաձևով:
- 4) Միջուկում միշտ պարունակվում են հավասար թվով պրոտոններ և նեյտրոններ:
- 5) Միջուկում պարունակվող պրոտոնների թիվը միշտ հավասար է ատոմի էլեկտրոնային թաղանթում առկա էլեկտրոնների թվին:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X			X
սխալ է			X	X	
չգիտեմ					

18. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը պարբերական համակարգի տվյալ խմբի գլխավոր ենթախմբի տարրերի վերաբերյալ.

- 1) Ատոմներն ունեն հավասար թվով էլեկտրոններ:
- 2) Ատոմներն ունեն միևնույն թվով էներգիական մակարդակներ:
- 3) Ատոմների արտաքին էլեկտրոնային շերտում առկա են նույն թվով էլեկտրոններ:
- 4) Բարձրագույն օքսիդների ընդհանուր բանաձևերը նույնն են:
- 5) Բարձրագույն օքսիդների հիդրատների հիմնային հատկություններն ուժեղանում են կարգաթվի մեծացմանը զուգընթաց:

	1	2	3	4	5
ճիշտ է			X	X	X
սխալ է	X	X			
չգիտեմ					

19. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական կապի տեսության ժամանակակից պատկերացումների վերաբերյալ.

- 1) Քիմիական կապ առաջացնելիս ատոմները ձգտում են ստեղծելու արտաքին էլեկտրոնային շերտի ութ (երբեմն երկու) էլեկտրոնային կառուցվածք:
- 2) Քիմիական կապի տեսակներից են կովալենտային և ջրածնային կապերը:
- 3) Մոլեկուլի տարածական կառուցվածքը պայմանավորված է դրանում առկա քիմիական կապերի բնույթով և փոխդասավորվածությամբ:
- 4) Կովալենտ բեռնային քիմիական կապ առաջանում է տարբեր էլեկտրաբացասականությամբ օժտված ոչմետաղների ատոմների միջև:

5) Կովալենտային քիմիական կապ կարող է առաջանալ միայն դոնորակցեա-
տորային մեխանիզմով:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

20. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական ռեակ-
ցիաների դասակարգման հատկանիշների վերաբերյալ.

- 1) Դասակարգվում են՝ ըստ ելանյութերի և վերջանյութերի թվի և բաղադրու-
թյան փոփոխության:
- 2) Դասակարգվում են՝ ըստ ջերմության կլանման և անջատման:
- 3) Դասակարգվում են՝ ըստ դարձելիության:
- 4) Դասակարգվում են՝ ըստ ելանյութերի և վերջանյութերի մոլային զանգված-
ների տարբերության:
- 5) Դասակարգվում են՝ ըստ ելանյութերի և վերջանյութերի ազրեգատային վի-
ճակների տարբերության:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		
սխալ է				X	X
չգիտեմ					

21. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը թթվածին պարզ
նյութի վերաբերյալ.

- 1) Մասնակցում է բույսերի և կենդանիների շնչառական գործընթացին:
- 2) Ջրի մոլեկուլում զանգվածային բաժինը կազմում է 88,9 %:
- 3) Մտնում է բոլոր օքսիդների բաղադրության մեջ:
- 4) Ստացվում է ջրի քայքայումից:
- 5) Նորմալ պայմաններում 7 լիտրի զանգվածը 10 գրամ է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X			X	X
սխալ է		X	X		
չգիտեմ					

22. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը՝ ըստ նյութի բա-
նաձևի կատարվող տարբեր հաշվարկների վերաբերյալ.

- 1) Ծծմբի(IV) օքսիդի մոլեկուլում տարրերի զանգվածային բաժինները հավա-
սար են:
- 2) Դեգօքսիթիբոզի մոլեկուլում ածխածին և թթվածին տարրերի ատոմների մո-
լային բաժինները *հավասար չեն*:

- 3) Զրածնի պերօքսիդի մոլեկուլում ջրածին և թթվածին տարրերի զանգվածները հավասար են:
- 4) Զրածնի ատոմների քանակը 36 գ ջրում 4 մոլ է:
- 5) 22 գ ածխածնի(IV) օքսիդում պարունակվում է $3,01 \cdot 10^{23}$ թվով թթվածնի ատոմ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X		X	
սխալ է			X		X
չգիտեմ					

23. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական ռեակցիաների վերաբերյալ.

- 1) Ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների հարաբերությունը հավասար է համապատասխան նյութերի քանակների հարաբերությանը:
- 2) Գազային նյութերի միջև ընթացող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների հարաբերությունը հավասար է համապատասխան նյութերի ծավալների հարաբերությանը:
- 3) Ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների հարաբերությունը հավասար է համապատասխան նյութերի զանգվածների հարաբերությանը:
- 4) Տեղակայման ռեակցիաները նաև վերօքս ռեակցիաներ են:
- 5) Բոլոր միացման ռեակցիաները նաև վերօքս ռեակցիաներ են:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X		X	
սխալ է			X		X
չգիտեմ					

24. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ձախից աջ $Cl_2 - Br_2 - I_2$ շարքի մոլեկուլների վերաբերյալ.

- 1) Կովալենտային կապի երկարությունը մեծանում է:
- 2) Կովալենտային կապի էներգիան փոքրանում է:
- 3) Օքսիդիչ ուժը փոքրանում է:
- 4) Մեկական մոլեկուլների զանգվածները հավասար են 71, 160 և 254 գ.ա.մ.:
- 5) Քիմիական ակտիվությունը նվազում է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X		X	X
սխալ է			X		
չգիտեմ					

25. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ճախից աջ $F_2 - Cl_2 - Br_2 - I_2$ պարզ նյութերի շարքի վերաբերյալ.

- 1) Խտությունը մեծանում է:
- 2) Հալման ջերմաստիճանը նվազում է:
- 3) Միջմոլեկուլային փոխազդեցության ուժերն աճում են:
- 4) Ագրեգատային վիճակը փոխվում է գազ-գազ-գազ-հեղուկ կարգով:
- 5) Ագրեգատային վիճակը փոխվում է գազ-գազ-հեղուկ-պինդ կարգով:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X		
սխալ է		X		X	X
չգիտեմ					

26. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը տարրի ատոմի կառուցվածքի և հատկությունների վերաբերյալ.

- 1) Na, K, Rb շարքում ուժեղանում են տարրերի մետաղական հատկությունները:
- 2) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 3d^{10} 4s^2$ էլեկտրոնային բանաձևը համապատասխանում է հիմնական վիճակում ցինկի ատոմին:
- 3) 3-րդ էներգիական մակարդակում օրբիտալների ընդհանուր թիվը 6 է:
- 4) Al, Si, P, S շարքում էլեկտրաբացասականությունն աճում է:
- 5) ${}_{93}^{235}\text{Np} \rightarrow {}_{94}^{235}\text{Pu} + \dots$ միջուկային ռեակցիայում բաց թողած մասնիկը պրոտոնն է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X		X	
սխալ է			X		X
չգիտեմ					

27. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական գործընթացների վերաբերյալ.

- 1) Պարզ նյութերից ամոնիակի սինթեզը օքսիդացման-վերականգնման ռեակցիա է:
- 2) $4\text{NH}_3 + 5\text{O}_2 = 4\text{NO} + 6\text{H}_2\text{O}$ կատալիտիկ ռեակցիայի հավասարում է:
- 3) Ալկալու հետ փոխազդելիս Cl_2 -ը դրսևորում է վերօքս երկակիություն:
- 4) $\text{CaCO}_3 \rightarrow \text{CaO} + \text{CO}_2$ ն օքսիդացման-վերականգնման, ն քայքայման ռեակցիայի հավասարում է:
- 5) $\text{N}_2^0 + 6e = 2\text{N}^{-3}$ վերականգնման գործընթացի ուրվագիր է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		X
սխալ է				X	
չգիտեմ					

28. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը թթվահիմնային հայտանյութերի վերաբերյալ.

- 1) Նատրիումի սուլֆատի և հիդրոսուլֆատի ջրային լուծույթները հնարավոր է տարբերել լակմուսով:
- 2) Կալիումի քլորիդի, հիդրոսուլֆատի և կարբոնատի ջրային լուծույթները հնարավոր է տարբերել լակմուսով:
- 3) Ամոնիումի քլորիդի, բարիումի նիտրատի և կալիումի ֆոսֆատի ջրային լուծույթները հնարավոր է տարբերել լակմուսով:
- 4) Ալյումինի քլորիդի, նիտրատի և սուլֆատի ջրային լուծույթները հնարավոր է տարբերել ֆենոլֆտալեին հայտանյութով:
- 5) Ծծմբական թթվի, նատրիումի սուլֆատի և սուլֆիտի ջրային լուծույթները հնարավոր է տարբերել մեթիլնարնջագույնով:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		
սխալ է				X	X
չգիտեմ					

29. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը օքսիդների վերաբերյալ.

- 1) Թթվածին պարունակող երկտարր միացություններ են, որոնցում թթվածնի օքսիդացման աստիճանը -2 է:
- 2) Բոլոր օքսիդները ջրում լուծելի են:
- 3) Բոլոր օքսիդները փոխազդում են թթուների հետ:
- 4) Հիմնային օքսիդները, փոխազդելով թթուների հետ, առաջացնում են աղ և ջուր:
- 5) Ըստ $\text{CaCO}_3 \rightarrow \text{CaO} + \text{CO}_2$ ռեակցիայի հավասարման ստացված թթվային օքսիդի զանգվածը ելային աղի զանգվածի 56% -ն է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X			X	
սխալ է		X	X		X
չգիտեմ					

30. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը օքսիդացման-վերականգնման ռեակցիաների վերաբերյալ.

- 1) Կրաքարի թրծումը օքսիդացման-վերականգնման ռեակցիա է:
- 2) 612 գ ջրածնի պերօքսիդի քայքայումից ստացված թթվածնի քանակը երկու անգամ մեծ է 3 մոլ կալիումի քլորատի քայքայումից ստացված թթվածնի քանակից:
- 3) $\text{CO} + \text{Fe}_2\text{O}_3 \rightarrow \text{Fe} + \text{CO}_2$ ռեակցիայում ածխածնի օքսիդացման աստիճանը փոքրանում է:

- 4) $\text{CuS}_{(\text{պինդ})} + \text{O}_{2(\text{գազ})} \rightarrow \text{SO}_{2(\text{գազ})} + \text{CuO}_{(\text{պինդ})}$ տարասեռ օքսիդացման-վերականգնման ռեակցիա է:
- 5) Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներում MnO_4^- անիոնը միայն օքսիդիչ է:

	1	2	3	4	5
ճիշտ է		X		X	X
սխալ է	X		X		
չգիտեմ					

31. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը նյութերի հատկությունների վերաբերյալ.

1) Cu , H_2O , SO_2 նյութերը կարող են ենթարկվել ինքնաօքսիդացման-ինքնավերականգնման:

- 2) Թթվածին, ֆտոր, ազոտ, քլոր նյութերից ամենամոծեղ օքսիդիչն է ֆտորը:
- 3) MnO_2 -ի առկայությամբ 490 գ կալիումի քլորատի քայքայումից ստացվում է 134,4 լ (ն. պ.) թթվածին:
- 4) PbO_2 , $\text{H}_2\text{SO}_{4(\text{տիտ})}$ նյութերը օքսիդացման-վերականգնման ռեակցիաներում հանդես են գալիս միայն որպես օքսիդիչ:
- 5) Ամոնիակի և քլորաջրածնի փոխազդեցությունը և՛ համասեռ, և՛ օքսիդացման-վերականգնման ռեակցիա է:

	1	2	3	4	5
ճիշտ է		X	X	X	
սխալ է	X				X
չգիտեմ					

32. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը տարրերի էլեկտրաբացասականության վերաբերյալ.

- 1) Ամենամեծ էլեկտրաբացասականությունն ունեն ալկալիական մետաղները:
- 2) Փոքր պարբերություններում կարգաթվի աճմանը զուգընթաց տարրերի էլեկտրաբացասականությունը նվազում է:
- 3) Be, B, C շարքում էլեկտրաբացասականությունն աճում է:
- 4) Si, P, S շարքում էլեկտրաբացասականությունը նվազում է:
- 5) Գլխավոր ենթախմբերում կարգաթվի աճմանը զուգընթաց տարրերի էլեկտրաբացասականությունը նվազում է:

	1	2	3	4	5
ճիշտ է			X		X
սխալ է	X	X		X	
չգիտեմ					

33. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ածխածին տարրի պլուտոպ ձևափոխությունների վերաբերյալ.

- 1) Տարբերվում են բյուրեղավանդակի կառուցվածքով:
- 2) Ունեն նույն խտությունը:
- 3) Տարբերվում են քիմիական ակտիվությամբ:
- 4) Համարվում են օրգանական պարզ նյութեր:
- 5) Ունեն նույն կարծրությունը:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X		
սխալ է		X		X	X
չգիտեմ					

34. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական կապերի վերաբերյալ.

- 1) Կովալենտային կապը հագեցված չէ:
- 2) Կովալենտային կապը ուղղորդված է:
- 3) SO_2 , NaCl , Br_2 , K_2SO_4 միացությունների մոլեկուլներում առկա են միայն իոնային կապեր:
- 4) Քլորային թթվում σ -կապերի թիվը երկուսով մեծ է π -կապերի թվից:
- 5) CO_2 -ի մոլեկուլում առկա է դոնորակցեպտորային եղանակով առաջացած կովալենտային կապ:

	1	2	3	4	5
ճիշտ է		X		X	
սխալ է	X		X		X
չգիտեմ					

35. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը հավասարակշռության տեղաշարժի վերաբերյալ.

- 1) Ջրածնի կոնցենտրացիայի մեծացումը կնպաստի $\text{N}_{2(\text{g})} + 3\text{H}_{2(\text{g})} \rightleftharpoons 2\text{NH}_{3(\text{g})}$ հավասարակշռության տեղաշարժին դեպի աջ:
- 2) Ջրածնի կոնցենտրացիայի փոքրացումը կնպաստի $\text{Fe}_{(\text{u})} + \text{H}_2\text{O}_{(\text{g})} \rightleftharpoons \text{FeO}_{(\text{u})} + \text{H}_{2(\text{g})}$ հավասարակշռության տեղաշարժին դեպի աջ:
- 3) Ընչման բարձրացումը կնպաստի $2\text{H}_2\text{O}_{(\text{h})} \rightleftharpoons 2\text{H}_{2(\text{g})} + \text{O}_{2(\text{g})}$ հավասարակշռության տեղաշարժին դեպի ձախ:
- 4) Ընչման բարձրացումը կնպաստի $\text{H}_{2(\text{g})} + \text{I}_{2(\text{g})} \rightleftharpoons 2\text{HI}_{(\text{g})}$ հավասարակշռության տեղաշարժին դեպի աջ:
- 5) Ջերմաստիճանի բարձրացումը կնպաստի $\text{FeO}_{(\text{u})} + \text{H}_{2(\text{g})} \rightleftharpoons \text{Fe}_{(\text{u})} + \text{H}_2\text{O}_{(\text{g})} - Q$ հավասարակշռության տեղաշարժին դեպի ձախ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		X
սխալ է				X	
չգիտեմ					

36. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ռեակցիաների հավասարումների վերաբերյալ.

- 1) $4\text{NO}_2 + \text{O}_2 + 2\text{H}_2\text{O} = 4\text{HNO}_3$ և միացման, և վերօքս ռեակցիայի հավասարում է:
- 2) $2\text{KMnO}_4 = \text{K}_2\text{MnO}_4 + \text{MnO}_2 + \text{O}_2$ -Q դարձելի ռեակցիայի հավասարում է:
- 3) $2\text{CO} + \text{O}_2 = 2\text{CO}_2$ և միացման, և վերօքս ռեակցիայի հավասարում է:
- 4) $\text{Fe} + \text{CuSO}_4 = \text{FeSO}_4 + \text{Cu}$ և փոխանակման, և վերօքս ռեակցիայի հավասարում է:
- 5) $3\text{NaOH} + \text{AlCl}_3 = 3\text{NaCl} + \text{Al(OH)}_3$ և փոխանակման, և վերօքս ռեակցիայի հավասարում է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X		
սխալ է		X		X	X
չգիտեմ					

37. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ռեակցիաների ջերմաքիմիական հավասարումների վերաբերյալ.

- 1) Մի քանի փուլերով ընթացող ռեակցիայի ջերմային էֆեկտը հավասար է բոլոր փուլերի ջերմէֆեկտների հանրահաշվական գումարին:
- 2) Ջերմաքիմիական հավասարումներում քանակաչափական գործակիցները կարող են լինել նաև ոչ ամբողջական թվեր:
- 3) Ջերմաքիմիական հավասարումներում քանակաչափական գործակիցներն արտահայտում են միայն մոլային հարաբերակցություն:
- 4) Ըստ $\text{C} + \text{O}_2 = \text{CO}_2 + 394$ կՋ ջերմաքիմիական հավասարման, երբ $m(\text{C}) = 3$ գ, ապա $Q = 98,5$ կՋ:
- 5) Ըստ $\text{C} + \text{O}_2 = \text{CO}_2 + 394$ կՋ ջերմաքիմիական հավասարման, երբ $n(\text{C}) = 3$ մոլ, ապա $Q = 98,5$ կՋ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

38. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը էլեկտրոլիզի վերաբերյալ.

- 1) Քիմիական էներգիան վերածվում է էլեկտրական էներգիայի:
- 2) Էլեկտրական էներգիան վերածվում է քիմիական էներգիայի:

- 3) Օքսիդացման–վերականգնման ռեակցիա է:
- 4) Կաթոդի վրա կատիոններն օքսիդանում են:
- 5) Կաթոդի վրա կատիոնները վերականգնվում են:

	1	2	3	4	5
ճիշտ է		X	X		X
սխալ է	X			X	
չգիտեմ					

39. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը պղնձի(II) սուլֆատի ջրային լուծույթի էլեկտրոլիզի վերաբերյալ.

- 1) Լուծույթի զանգվածը փոքրանում է:
- 2) Սուլֆատ իոնների նյութաքանակը փոքրանում է:
- 3) Աղի կոնցենտրացիան փոքրանում է:
- 4) Կաթոդի զանգվածը փոքրանում է:
- 5) Լուծույթի զանգվածը մեծանում է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X		
սխալ է		X		X	X
չգիտեմ					

40. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը $\text{SO}_2 + \text{O}_2 \rightarrow \text{SO}_3$ ուրվագրի վերաբերյալ.

- 1) Այն համապատասխանում է վերօքս ռեակցիայի:
- 2) Համապատասխան հավասարման բոլոր գործակիցների գումարը 3 է:
- 3) Օքսիդիչ նյութի քանակը կրկնակի մեծ է վերականգնիչ նյութի քանակից:
- 4) Երբ $m_{\text{փոխազդած}}(\text{SO}_2) = 4$ գ, ապա $m_{\text{գոյացած}}(\text{SO}_3) \leq 5$ գ:
- 5) Օքսիդիչ նյութի մեկ մոլի ձեռք բերած էլեկտրոնների թիվը $2,408 \cdot 10^{24}$ է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X			X	X
սխալ է		X	X		
չգիտեմ					

41. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը գազի մոլային ծավալի վերաբերյալ.

- 1) Գազի ծավալի հարաբերությունն է նրա նյութաքանակին:
- 2) Գազի զանգվածի հարաբերությունն է նրա նյութաքանակին:
- 3) Գազի ծավալի և մոլային զանգվածի արտադրյալի հարաբերությունն է նրա զանգվածին:

- 4) Նորմալ պայմաններում 6 գ ջրածնի ծավալը 67,2 լիտր է:
 5) Բոլոր պայմաններում գազի մոլային ծավալը՝ $V_m = 22,4$ լ/մոլ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X	X	
սխալ է		X			X
չգիտեմ					

42. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը հետևյալ ռեակցիայի հավասարման՝ $4NH_3 + 5O_2 = 4NO + 6H_2O$ վերաբերյալ.

- 1) Համապատասխանում է օքսիդացման-վերականգնման ռեակցիայի:
- 2) Համապատասխանում է կատալիտիկ ռեակցիայի:
- 3) Այրման ռեակցիայի հավասարում է:
- 4) Վերականգնիչ նյութի գործակիցը 5 է:
- 5) Մեկ մոլ վերականգնիչի տրամադրած էլեկտրոնների քանակը 5 մոլ է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X			X
սխալ է			X	X	
չգիտեմ					

43. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը հետևյալ ուրվագրի՝ $CuS_{(պինդ)} + O_{2(գազ)} \rightarrow SO_{2(գազ)} + CuO_{(պինդ)}$ վերաբերյալ.

- 1) Համապատասխանում է օքսիդացման-վերականգնման ռեակցիայի:
- 2) Համապատասխան հավասարման գործակիցների գումարը 9 է:
- 3) Համասեռ ռեակցիայի ուրվագիր է:
- 4) Տարասեռ ռեակցիայի ուրվագիր է:
- 5) Մեկ մոլ վերականգնիչի տրամադրած էլեկտրոնների քանակը 4 մոլ է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X		X	
սխալ է			X		X
չգիտեմ					

44. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը H_2O մոլեկուլի և նյութի վերաբերյալ.

- 1) H_2O մոլեկուլում H-O կապերը կովալենտ բևեռային են:
- 2) H_2O մոլեկուլը բևեռային է:
- 3) H_2O նյութի բյուրեղավանդակը մոլեկուլային է:
- 4) H_2O մոլեկուլների միջև առաջանում են ջրածնային կապեր:
- 5) H_2O նյութի 4,5 գրամը պարունակում է 0,25 մոլ ջրածնի ատոմ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

45. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ակալիական մետաղների վերաբերյալ.

- 1) Առաջին խմբի գլխավոր ենթախմբի տարրեր են:
- 2) Կարգահամարի մեծացման հետ իոնացման էներգիան մեծանում է:
- 3) 4,6 գ նատրիումը ջրից դուրս է մղում 2,24 լ (ն. պ.) ջրածին:
- 4) Ունեն արտաքին էլեկտրոնային շերտի ns^1 կառուցվածք:
- 5) Միացություններում դրսևորում են +1 և -1 օքսիդացման աստիճան:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X	X	
սխալ է		X			X
չգիտեմ					

46. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ալյումինի հատկությունների վերաբերյալ.

- 1) Արծաթասպիտակավուն, թեթև մետաղ է:
- 2) 5,4 գ ալյումինն աղաթթվից դուրս է մղում 0,3 մոլ ջրածին:
- 3) 5,4 գ ալյումինն ակալու ջրային լուծույթից դուրս է մղում 0,2 մոլ ջրածին:
- 4) Առաջացնում է ջրում լուծվող հիդրօքսիդ:
- 5) Ստացվում է ալյումինի օքսիդի ջերմային քայքայումով:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		
սխալ է				X	X
չգիտեմ					

47. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը երկաթի և իր միացությունների հատկությունների վերաբերյալ.

- 1) Երկաթի(III) աղերը ավելի մեծ չափով են հիդրոլիզվում, քան երկաթի(II) աղերը:
- 2) Մորի աղի բանաձևն է $FeSO_4 \cdot 7H_2O$:
- 3) Fe^{2+} իոնը հեշտությամբ օքսիդանում է մինչև Fe^{3+} :
- 4) Երկաթը չի ձգվում մագնիսի կողմից:
- 5) Fe^{3+} իոնը հայտաբերում են կալիումի ռոդանիդով:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X		X
սխալ է		X		X	
չգիտեմ					

48. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ծծմբի(IV) օքսիդի վերօքս հատկությունների վերաբերյալ.

- 1) $\text{SO}_2 + 2\text{NaOH} = \text{Na}_2\text{SO}_3 + 2\text{H}_2\text{O}$ ռեակցիայում այն օքսիդիչ է:
- 2) $5\text{SO}_2 + 2\text{KMnO}_4 + 2\text{H}_2\text{O} = \text{K}_2\text{SO}_4 + 2\text{MnSO}_4 + 2\text{H}_2\text{SO}_4$ ռեակցիայում այն վերականգնիչ է:
- 3) $\text{SO}_2 + 2\text{H}_2\text{S} = 3\text{S} + 2\text{H}_2\text{O}$ ռեակցիայում ամբողջ ծծումբը ստացվում է ծծմբի(IV) օքսիդի վերականգնումից:
- 4) $2\text{SO}_2 + \text{O}_2 = 2\text{SO}_3$ ռեակցիայի 80 % ելքի դեպքում $m_{\text{գոյացած}}(\text{SO}_3) = m_{\text{փոխազդած}}(\text{SO}_2)$:
- 5) $\text{SO}_2 + 2\text{H}_2\text{O} + \text{Cl}_2 = \text{H}_2\text{SO}_4 + 2\text{HCl}$ ռեակցիայում օքսիդացման արդյունքում ստացված նյութի գործակիցը 1 է:

	1	2	3	4	5
ճիշտ է		X		X	X
սխալ է	X		X		
չգիտեմ					

49. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ածխածնի(IV) և սիլիցիումի(IV) օքսիդների հատկությունների համեմատության վերաբերյալ.

- 1) Սենյակային ջերմաստիճանում նման են ազրեգատային վիճակով:
- 2) Երկու օքսիդներն էլ ունեն մոլեկուլային բյուրեղավանդակ:
- 3) Երկու օքսիդներն էլ փոխազդում են ալկալիների հետ:
- 4) Եթե $m(\text{CO}_2) = m(\text{SiO}_2)$, ապա $n(\text{CO}_2) = n(\text{SiO}_2)$:
- 5) Այդ օքսիդներում երկու տարրերի օքսիդացման աստիճաններն էլ +4 են:

	1	2	3	4	5
ճիշտ է			X		X
սխալ է	X	X		X	
չգիտեմ					

50. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ալկանների վերաբերյալ.

- 1) Հոմոլոգիական շարքի ընդհանուր բանաձևն է $\text{C}_n\text{H}_{2n-2}$:
- 2) Մոլային զանգվածը միշտ գույգ թիվ է $14n + 2$:

- 3) Առաջին տասը անդամները 298 Կ ջերմաստիճանում և մթնոլորտային ճնշման տակ գազեր են:
- 4) Զրի հետ փոխազդում են՝ առաջացնելով սպիրտ:
- 5) n-թվով ածխածնի ատոմներ պարունակող 1 մոլ ավանի լրիվ այրումից առաջանում է n+1 մոլ ջուր:


	1	2	3	4	5
ճիշտ է		X			X
սխալ է	X		X	X	
չգիտեմ					

51. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը մեթանի հնարավոր բանաձևերի վերաբերյալ.

- 1) $^{12}\text{C}^4\text{H}_4$ մոլեկուլում ջրածին և ածխածին տարրերի զանգվածային հարաբերությունը 1 : 3 է:
- 2) $^{13}\text{C}^2\text{H}_4$ մոլեկուլում պրոտոնների թիվը հավասար է նեյտրոնների թվին:
- 3) $^{12}\text{C}^2\text{H}_4$ մոլեկուլում ջրածնի ատոմների մոլային բաժինը 40 % է:
- 4) $^{14}\text{C}^2\text{H}_4$ մոլեկուլի զանգվածը 22 գ.ա.մ. է:
- 5) $^{13}\text{C}^1\text{H}_4$ -ի $6,02 \cdot 10^{23}$ թվով մոլեկուլների զանգվածը 17 գրամ է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X			X	X
սխալ է		X	X		
չգիտեմ					

52. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը փոխարկումների հետևյալ շղթայի վերաբերյալ.



- 1) X_1 -ը ցիկլոպրոպան է՝ ցիկլոպրոպան:
- 2) X_2 -ը ստացվում է տեղակալման ռեակցիայի արդյունքում:
- 3) X_3 -ը ավելն է՝ պրոպեն:
- 4) X_4 -ը առաջնային սպիրտ է՝ պրոպանոլ-1:
- 5) X_5 -ը ավելն է՝ պրոպեն-2:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X		X
սխալ է		X		X	
չգիտեմ					

53. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը էթենի բնութագրական հատկությունների վերաբերյալ.

- 1) Մոլեկուլն ունի գծային կառուցվածք:
- 2) Ածխածնի ատոմները գտնվում են sp^2 հիբրիդային վիճակում:
- 3) Մեկ մոլ էթենը կարող է գունազրկել 160 գ բրոմ պարունակող բրոմաջուրը:
- 4) Ածխածնի զանգվածային բաժինը էթենում 0,857 է:
- 5) $KMnO_4$ -ի ջրային լուծույթի հետ փոխազդելիս գոյանում է պարզագույն երկատոմ սպիրտ:

	1	2	3	4	5
ճիշտ է		X	X	X	X
սխալ է	X				
չգիտեմ					

54. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը մրջնալեռնիդի վերաբերյալ.

- 1) Սովորական պայմաններում հեղուկ է:
- 2) Ածխածնի մոլային բաժինը մրջնալեռնիդում 25 % է:
- 3) Ածխածնի օքսիդացման աստիճանը 0 է:
- 4) Ստացվում է էթանոլը պղնձի(II) օքսիդով օքսիդացնելիս:
- 5) Բնորոշ է արծաթահայելու ռեակցիան:

	1	2	3	4	5
ճիշտ է		X	X		X
սխալ է	X				
չգիտեմ				X	

55. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը գլիցերինի վերաբերյալ.

- 1) Ստացվում է 1,2,3-տրիպրոպանի հիմնային հիդրոլիզով:
- 2) 9,2 գ գլիցերինի և մետաղական նատրիումի փոխազդեցությունից ստացվում է 2,24 լ (ն. պ.) ջրածին:
- 3) Փոխազդում է մետաղական պղնձի հետ:
- 4) Ստացվում է ճարպերի հիդրոլիզով:
- 5) Մեկ մոլեկուլի զանգվածը 2 անգամ մեծ է էթանոլի մեկ մոլեկուլի զանգվածից:

	1	2	3	4	5
ճիշտ է	X			X	X
սխալ է		X	X		
չգիտեմ					

56. Հաստատե՞ք պնդումների ճշմարտացիությունը քացախաթթվի քիմիական հատկությունների վերաբերյալ.

- 1) Փոխազդում է մագնեզիումի հետ՝ առաջացնելով մագնեզիումի սցետատ և ջրածին:
- 2) Փոխազդում է պղնձի հետ՝ առաջացնելով պղնձի սցետատ և ջրածին:
- 3) Նատրիումի քլորիդի հետ փոխազդում է տաքացնելիս:
- 4) Նատրիումի կարբոնատի 5,3 գ նմուշի և ավելցուկով քացախաթթվի փոխազդեցությունից անջատվում է 1,12 լ (ն. պ.) գազ:
- 5) Քացախաթթուն նատրիումի հիդրօքսիդի հետ փոխազդում է 3 : 2 զանգվածային հարաբերությամբ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X			X	X
սխալ է		X	X		
չգիտեմ					

57. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը մալթոզի վերաբերյալ.

- 1) Վերականգնիչ երկշաքար է:
- 2) Սախարոզի իզոմերն է:
- 3) Հարաբերական մոլեկուլային զանգվածն է 180:
- 4) Ստացվում է թաղանթանյութի լրիվ հիդրոլիզի արդյունքում:
- 5) Ունի $C_{12}H_{22}O_{11}$ քիմիական բանաձևը:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X			X
սխալ է			X	X	
չգիտեմ					

58. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը $C_6H_{12}O_2$ բանաձևով էսթերի հիդրոլիզի հնարավոր արգասիքների վերաբերյալ.

- 1) Պրոպիլոնաթթու և պրոպանոլ:
- 2) Քացախաթթու և բութանալ:
- 3) Քացախաթթու և բութանոլ:
- 4) Բութան և մեթիլացետատ:
- 5) Վալերիանաթթու և մեթանոլ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X		X
սխալ է		X		X	
չգիտեմ					

59. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը սպիտակուցների վերաբերյալ.

- 1) Կազմված են ամինների մնացորդներից:
- 2) Դրանց բնորոշ են առաջնային, երկրորդային, երրորդային, չորրորդային կառուցվածքները:
- 3) Առաջացնում են ներմոլեկուլային ջրածնային կապեր:
- 4) Ենթարկվում են բնափոխման:
- 5) Հիդրոլիզվում են՝ առաջացնելով կարբոնաթթուներ:

	1	2	3	4	5
ճիշտ է		X	X	X	
սխալ է	X				X
չգիտեմ					

60. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունն ըստ օգոնի X հարաբերական խտություն ունեցող A գազի վերաբերյալ.

- 1) A գազի հարաբերական խտությունն ըստ հելիումի $1/X$ է:
- 2) CH_4 -ի ծավալը պետք է $3X$ անգամ մեծ լինի A գազի ծավալից (ն. պ.), որպեսզի դրանք ունենան նույն զանգվածը:
- 3) A գազի 1 դմ^3 ծավալում պարունակվում են $2,69 \cdot 10^{23}$ մոլեկուլներ:
- 4) A գազի հարաբերական խտությունն ըստ թթվածնի $(3/2) X$ է:
- 5) Հավասար ծավալներով (ն. պ.) թթվածնից և A գազից կազմված խառնուրդի միջին մոլային զանգվածը $8(3X + 2)$ գ/մոլ է:

	1	2	3	4	5
ճիշտ է		X		X	X
սխալ է	X		X		
չգիտեմ					

61. Մարդու օրգանիզմի քիմիայի վերաբերյալ ստուգե՞ք պնդումների ճշմարտացիությունը.

- 1) Կենսածին տարրերի՝ C, H, O, N, P, S պարունակությունը կենդանի օրգանիզմում հասնում է մինչև 97 % ըստ զանգվածի:
- 2) Կենսածին տարրերի ատոմներն ունեն փոքր շառավիղ և էլեկտրաբացասականության միջանկյալ արժեքներ, որոնցով պայմանավորված է ամուր կովալենտային կապերի առաջացումը:
- 3) Ֆերմենտները գլոբուլային բնույթի սպիտակուցներ են և կենդանի օրգանիզմներում կատարում են կենսաբանական կատալիզատորների դեր:

- 4) Ֆերմենտի մեկ մոլեկուլը կարող է խթանել ածխաթթվի 600 000 մոլեկուլի քայքայումը մեկ վայրկյանում:
- 5) Մեկ վայրկյանում թռքերն արտաշնչում են ածխաթթու գազի 1200 000 մոլեկուլներ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

ԲԱԺԻՆ 1

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻՄԻԱ 5

1.1. ՔԻՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5

1.1.1. Ատոմամոլեկուլային ուսմունք 5

1.1.2. Ատոմի կառուցվածքը: Միջուկ: Էլեկտրոն 22

1.1.3. Քիմիական տարրերի հատկությունների փոփոխության պարբերական բնույթը 32

1.1.4. Քիմիական կապ և մոլեկուլի կառուցվածք 36

1.2. ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ 42

1.2.1. Քիմիական ռեակցիաների դասակարգումը 42

1.2.2. Գաղափար քիմիական ռեակցիայի արագության մասին 47

1.2.3. Քիմիական հավասարակշռություն: Լե Շատելյեի սկզբունքը 50

1.2.4. Քիմիական ռեակցիայի ջերմէֆեկտ: Ջերմանջատիչ և ջերմակլանիչ ռեակցիաներ: Ջերմաքիմիական հավասարումներ 54

1.2.5. Էլեկտրոլիտային դիսոցիան տեսություն 58

1.2.6. Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ 69

1.2.7. Հալույթների և լուծույթների էլեկտրոլիզը 73

1.2.8. Նյութերի գազային վիճակը: Ավոգադրոյի օրենքը: Մենդելեև-Կլապերոնի հավասարումը 80

1.2.9. Լուծույթներ 86

1.2.10. Պինդ նյութեր: Բյուրեղային և ամորֆ նյութեր: Բյուրեղավանդակների տեսակներ 92

1.2.11. Անօրգանական միացությունների հիմնական դասերը, դրանց ստացումը, դասակարգումը, անվանումը, հատկությունները և կիրառումը: Աղերի հիդրոլիզը 96

ԳԼՈՒԽ 2. ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ 104

2.1. ՄԵՏԱԴՆԵՐ 104

2.1.1. Մետաղական կապ: Մետաղներ: I-III խմբի գլխավոր ենթախմբի և բոլոր երկրորդական ենթախմբերի մետաղների բնութագիրը 104

2.1.2. Ալկալիական մետաղներ, ֆիզիկական և քիմիական հատկությունները	109
2.1.3. Հողալկալիական մետաղներ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները: Զրի կոշտությունը և դրա վերացման եղանակները.....	116
2.1.4. Ալյումին և երկաթ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները	122
2.1.5. Մետաղների ստացման եղանակները: Կոռոզիա: Համաձուլվածքներ: Չուգուն և պողպատ	128
2.2. ՈՉՄԵՏԱՂՆԵՐ.....	132
2.2.1. Ոչմետաղներ: Զրածին, ջուր, հալոգեններ.....	132
2.2.2. Թթվածնի ենթախումբ: Թթվածին և ծծումբ	143
2.2.3. Ազոտի ենթախումբ: Ազոտ և ֆոսֆոր	153
2.2.4. Ածխածնի ենթախումբ: Ածխածին և սիլիցիում	162
ԳԼՈՒԽ 3. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ	172
3.1. ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	172
3.2. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ. ԱԼԿԱՆՆԵՐ ԵՎ ՑԻԿԼՈԱԼԿԱՆՆԵՐ.....	177
3.3. ՉՀԱԳԵՑԱԾ (ԱԼԿԵՆՆԵՐ, ԱԼԿԻՆՆԵՐ, ԱԼԿԱԴԻԵՆՆԵՐ) ԵՎ ԱՐՈՄԱՏԻԿ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ	184
3.4. ՍՊԻՐՏՆԵՐ ԵՎ ՖԵՆՈԼՆԵՐ.....	194
3.5. ԱԼԴԵՀԻԴՆԵՐ ԵՎ ԿԱՐԲՈՆԱԹԹՈՒՆԵՐ	203
3.6. ԷՍԹԵՐՆԵՐ, ՃԱՐՊԵՐ, ԱԾԽԱԶՐԵՐ	212
3.7. ԱՋՈՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՄԻՆԱԹԹՈՒՆԵՐ	220
3.8. ԲՆԱԿԱՆ ԳԱԶ: ՆԱՎԹ: ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐ	228
3.9. ՔԻՄԻԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԸ	232

ԲԱԾԻՆ 2

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻՄԻԱ	240
1.1. ՔԻՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	240
1.1.1. Ատոմամոլեկուլային ուսմունք.....	240
1.1.2. Ատոմի կառուցվածքը: Միջուկ: Էլեկտրոն	250
1.1.3. Քիմիական տարրերի հատկությունների փոփոխության պարբերական բնույթը: Քիմիական կապ և մոլեկուլի կառուցվածք	256

1.1.4. Պինդ, հեղուկ, գազային նյութեր: Մաքուր նյութեր և խառնուրդներ: Նյութերի գազային վիճակը: Մենդելև-Կլապեյրոնի հավասարումը: Ավոգադրոյի օրենքը: Պինդ նյութեր: Բյուրեղային և ամորֆ նյութեր	260
1.2. ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ	264
1.2.1. Քիմիական ռեակցիաների դասակարգումը.....	264
1.2.2. Գաղափար քիմիական ռեակցիայի արագության մասին: Քիմիական հավասարակշռություն	267
1.2.3. Քիմիական ռեակցիայի ջերմէֆեկտ: Ջերմանջատիչ և ջերմակլանիչ ռեակցիաներ: Ջերմաքիմիական հավասարումներ.....	272
1.2.4. Լուծույթներ: Դիսպերս համակարգեր, կոլոիդ համակարգեր, սուսպենզիաներ և իսկական լուծույթներ: Լուծույթների քանակական բաղադրության արտահայտման ձևերը. լուծված նյութի զանգվածային բաժին, մոլային կոնցենտրացիա	277
1.2.5. Էլեկտրոլիտներ և ոչ էլեկտրոլիտներ: Իոնների հատկությունները: Դիսոցման աստիճան: Իոնափոխանակային ռեակցիաներ: Հիմքերի, թթուների և աղերի դիսոցումը: Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ	283
1.2.6. Էլեկտրոլիզ: Հալույթների և լուծույթների էլեկտրոլիզը: Էլեկտրոլիզի գործնական նշանակությունը.....	291
1.2.7. Անօրգանական միացությունների դասերը, դրանց ստացումը, դասակարգումը, անվանումը, հատկությունները և կիրառումը: Հիմքերի, թթուների, աղերի և օքսիդների քիմիական հատկությունները	297
ԳԼՈՒԽ 2. ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ	301
2.1. ՄԵՏԱՂՆԵՐ	301
2.1.1. Մետաղային կապ: I-III գլխավոր ենթախմբերի և բոլոր երկրորդական ենթախմբերի մետաղների բնութագիրը.....	301
2.1.2. Ալկալիական մետաղներ. ֆիզիկական և քիմիական հատկությունները	304
2.1.3. Հողալկալիական մետաղներ. ֆիզիկական և քիմիական հատկությունները	308
2.1.4. Ալյումին և երկաթ. դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները	311
2.1.5. Մետաղների ստացման եղանակները: Կոռոզիա: Համաձուլվածքներ: Թուջ և պողպատ	315

2.2. ՈՉՄԵՏԱՂՆԵՐ	318
2.2.1. Զրածին, ջուր: Հալոգենների ընդհանուր բնութագիրը: Հալոգենաջրածիններ: Շրթայական ռեակցիաներ: Հալոգենների և դրանց կարևորագույն միացությունների կիրառությունն ու կենսաբանական նշանակությունը	318
2.2.2. Թթվածնի ենթախումբը: Թթվածին և ծծումբ	324
2.2.3. Ազոտ, ֆոսֆոր	331
2.2.4. Ածխածին, սիլիցիում	338

ԳԼՈՒԽ 3. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ 343

3.1. ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ, ՑԻԿԼՈԱԼԿԱՆՆԵՐ	343
3.2. ՈՉ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ	348
3.3. ՍՊԻՐՏՆԵՐ ԵՎ ՖԵՆՈԼՆԵՐ	354
3.4. ԱԼԴԵՀԻԴՆԵՐ, ԹԹՈՒՆՆԵՐ	360
3.5. ԷՍԹԵՐՆԵՐ	366
3.6. ԱԶՈՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՄԻՆԱԹԹՈՒՆՆԵՐ	372
3.7. ԲՆԱԿԱՆ ԳԱԶ, ՆԱՎԹ, ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐ	377
3.8. ՔԻՄԻԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԸ	380

ՔԱԾԻՆ 3

ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՓՈՒՆԶ	386
------------------------	-----

ՔԻՄԻԱՅԻ
ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ
ՇՏԵՄԱՐԱՆ

I
ՄԱՍ

Հրատարակչության տնօրեն՝
ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝
ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Մրբագրիչ՝
ԼԻԱՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

www.zangak.am

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 70 × 100 1/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 26 տպ. մանուկ



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, հեռապատճեն՝ (+37410) 23 25 95
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am
Էլ. փոստ՝ info@zangak.am

www.zangak.am

www.zangak.am